ՄՈՒՇ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11 1893 — ՆՈՅԵՄԲԵՐ — 1893 № 11

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

		էջ	
1	ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ	1617	Տաճկա-Հայկական խնդիր։
2	ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	1622	Լոյս-գաղափար (քանաստ.)։
3	» »	1623	Գիշեր (քանաստ.)։
4	ՊՈՒՇԿԻՆԻՑ՝—Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ	1624	Բաղձանք (քանաստ.)։
5	ԱՐԳԱՀԱՏԵԱՆՑ, ԱՐՇԱԼՈՑՍ	1625	Ովատաւորը։
6	ԱՂԱՑԵԱՆՑ, ՂԱԶԱՐՈՍ	1640	Իմ կեանքի գլխաւոր դէպքերը։
7	ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	1655	N. N.-ին (ոտանաւոր)
8	ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ	1656	Աւանց Դաւանանքի (վէպ)։
9	ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ	1686	Կենդանիների հասարակ. կեանքը։
10	ԹԱՀՄԱԿՆԵԱՆ, ԴԱՐԵԳԻՆ	1703	Նաւթաչրջանի բանուորները։
11	ՖԻԼԻՔՍ	1714	Նաատրալիսմը և Զոլան։
12	Ն.	1738	Տաշեան, Դալէմքեարեան՝ ձեռագիրների մալր-ցուցակ։
13	Ա. Տ.	1741	Կանաչեանցի՝ ձեռագիրն. ցուցակ։
14	ԼՈՒՍԻՆԻ	1747	Ժամանակակից Տեսութիւն։
15	ՄԱՐԳԱՆԵԱՆ, ՖՐԻԴՈՆ	1753	Նաւթարդիւնաբեր. նիրկալ վիճակը։
16	Մ. Գ.	1763	Շարլ Գունօ։
17	ՇԽԵԱՆՑ, Ս.	1768	Շւեցարիայից՝ Դաշնակցական ոճն։
18	Զ.	1773	Քաղաքական Տեսութիւն։
19	ԽՄԲ.	1780	Զանազան լուրեր։

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. №41.
1893

ՄՈՒՐԱՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 11 1893 ՆՈՅԵՄԲԵՐ 1893 № 11

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.
1893

I.

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Ноября, 1893 г.

VI ՏԱՐԻ

„ՄՈՒՇ“

ՏԱՐԻ VI

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1894

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ Է

«ՄՈՒՇ» *ամսագիրը կը հրատարակուի* **1894** *թուականին նոյն ծրագրով, որպէս և նախկին հինգ տարիներուն:*

«ՄՈՒՇ»-Ը *կը հրատարակուի ամեն ամիս* 8—10 *թերթ մեծութեամբ:*

«ՄՈՒՇ»-Ը, *որպէս անցեալում, այնպէս և ապագայում կը տայ* 1) *Յօդուածներ կեանքի հիմնական խնդիրների մասին (առաջնորդողներ),* 2) *Յօդուածներ մեր հասարակական կեանքի ընթացիկ խնդիրների և երևոյթների մասին (ժամանակակից տեսութիւն),* 3) *Հետազօտութիւններ տնտեսական և սոցիալական կեանքից,* 4) *Յօդուածներ քաղաքական անցքերի և ընդհանուր քաղաքական դրութեան մասին (քաղաքական տեսութիւն),* 5) *Գրական ընդարձակ քննադատութիւններ,* 6) *Նոր լոյս տեսած գրքերի քննութիւններ,* 7) *Ընդհանուր կրթական յօդուածներ գիտութիւններից,* 8) *Գիտական քրոնիկ,* 9) *Ձա-*

նապարհորդական նկարագրութիւններ, 10) Թղթակցութիւններ գաւառներից, 11) Տեղեկութիւններ Ռուսաստանից, 12) Նամակներ Արեւմտեան Եւրոպայից, 13) Վէպեր, վէպիկներ ինքնուրոյն և թարգմանական, 14) Ոտանաւոր բանաստեղծութիւններ, 15) Երաժշտութիւն, 16) Կարեւորագոյն լուրեր, 17) Յայտարարութիւններ։

«ՄՈՒՐՃ»-ի ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ **1894** թուականին կը բաղկանայ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական վիպական գրուածներից։

»ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ է **10** ռուբլի։ Ուսուցիչները և ուսանողները կարող են վճարել **8** ռուբլի։

ԲԱԺԱՆՈՐԴ դրելու համար դիմել կամ խմբագրատունը (Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“) կամ մեր գործակալներին։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Արդէն անցել են աւելի քան տասնուհինգ տարիներ այն օրից, երբ, նորագոյն պատմութեան տարեգրութիւնների համար առաջին անգամ՝ հայի քաղաքացիական դրութիւնը առարկայ եղաւ մեծ պետութիւններից ստորագրած մի մեծ քաղաքական պայմագրի։

Բերլինի վեհաժողովում 1878 թուականի ամռանը ստորագրած պայմագրութեան 61-րդ յօդուածը հետեւանք էր աւելի ևս ընդարձակ պահանջների, որ իրաւացի էին գտնում անել Ներսէս պատրիարքը և նորա պատուիրակները — որոնք ամենայն իրաւունքով Տաճկա-Հայ ամբողջ ազգաբնակութեան ներկայացուցիչ էին համարում իրանց։ Եւ որպէս այդպիսիներին ընդունեցին նոցա Եւրոպայի բոլոր վեց մեծ պետութիւնները, չնայած որ նոցա պահանջները սահմանափակեցին մինչ ամենածայրայեղ minimum-ը։ Եւ իրօք, Բերլինի պայմագրութեան յօդուած 61-րդ որոշեց բառ առ բառ հետեւեալը.

«Բարձրագոյն Դուռը պարտաւորւում է, առանց այլ ևս յետաձգելու, իրագործել այն բարեփոխութիւնները և վերանորոգութիւնները, որ պահանջում են Հայկրով բնակեցրած նահանգների տեղական կարիքները, և երաշխաւորել նոցա ապահովութիւնը Չերքէզների և Քուրդերի դէմ։ Նա պարբերաբար պիտի տեղեկացնէ այդ նպատակով ձեռնարկած միջոցների մասին Պետութիւններին, որոնք պիտի վերահսկեն նոցա գործադրութեան վրայ»։

Բարեփոխութիւններ և վերանորոգութիւններ, երաշխաւորութիւն ապահովութեան մասին — սոքա խօսքեր են, որոնք այլ գաղափար չեն յայտնում քան եթէ լաւ կառավարութիւն, լաւ վարչական մարմին, արդար դատաստան։ Դորանով 1878 թուականին Բարձրա-

դոյն Դուռը սահմանեց իր տարադրութեամբ խոստովանելէ, որ ոչ միայն բուն Տաճկա-Հայաստանում, այլ և առհասարակ Թիւրքիայի Հայերով բնակեցրած տեղերում, չկար լաւ կառավարութիւն, լաւ վարչական մարմին, արդար դատաստան — ամենատարրական պայմանները առողջ կազմակերպուած մի պետութեան համար, հետևապէս և յառաջադիմական կեանքի համար առհասարակ։

Բայց Բարձրագոյն Դուռը ոչ մի քայլ չարաւ այդ յօդուածի պահանջները լրացնելու համար։ Ընդհակառակը. այդ յօդուածը դրդեց տաճկական կառավարութիւնը դէպի վրէժխնդրութիւն՝ հայկական տարրից, հարկաւ ոչ բոլոր անհատների դէմ, իբր հպատակների, այլ իբր մի տարրի դէմ, որը իւր անունից որ և է պահանջներ արել է և որը դրանով հող է պատրաստում ապագայում տաճկական կառավարութեանը դժուարութիւններ անելու և իւր ազգային դատը ունենալու։

Վրէժխնդրութեան այդ գործը մարմնացաւ մի քաղաքականութեան մէջ, որի արտայայտութիւնները յարատև եղան և սիստեմատիկական։ Հայ պատուիրակները իրանց դատի պաշտպանութեան համար մատնանշել էին լինում Տաճկա-Հայաստանի հայ ազգաբնակութեան խոստութեան և սուտութեան վրայ։ Դորա համապատասխան Բարձրագոյն Դուռը աշխատեց պաշտպանութեան այդ զէնքը խլել հայերից՝ թէ պաշտօնական թուերը ազգաբնակութեան մասին կազմելով և ցնաս հայերին, և թէ, որ աւելի մեծ դժբաղդութիւն էր՝ բնակեցնելով Տաճկա-Հայաստանը նոր մահմեդական գաղթականներով նոյն այն ներքէզներով, որոնց դէմ արդէն իսկ բողոք կար Եւրոպան վերաժողովում։ Ձիշդ է ամէն չանք չպակասեց պիտաւորուած աջողութեամբ, բայց և այնպէս եղածի վրայ նոր չարիքներ աւելացնելու չանքերը չխնայեցին։

Ապա Բարձրագոյն Դուռն նոյն այդ վրէժխնդրական քաղաքականութիւնը արտայայտեց հայ եկեղեցականների նկատմամբ, որոնց ձեռքումն էր, որ տաճկա-հայկական դատը Եւրոպայի կաբինէտները հասաւ։ Առաջնակարգ թեմական առաջնորդների Կ. Պոլիս քշելը և այնտեղ նոցա կենարոնացնելը — սիստեմ դառաւ։ Այդ նոյն քաղաքականութիւնը դրդեց Բարձրագոյն Դուռը դէպի ոտնահարումը եկեղեցական առանձնաշնորհումների, որ ընդունել էին, Ց-

վակիմ պատրիարքի օրօք, կ. Պոլսի նահանգապետ Մոհամէդ Բ.-ը և նորա ցաղօրդները և որ մեր գարուն վերահաստատել էին ու ընդարձակել Յակոբ պատրիարքի օրօք, սուլթան Աբդ-ուլ-Մեճիդ 1853-ին և 1856-ին, Աբդ-ուլ-Ազիզը՝ 1875-ին և վերջապէս նոյն այժմեան սուլթան Աբդ-ուլ-Համիդ՝ իւր հրատարակած quasi-պետական սահմանադրութեան 11-րդ յօդուածում:

Այդ առանձնաշնորհումների անհրաժեշտութիւնը այն աստիճան աշքարաց էր, որ 11/23 դեկտ. 1889 թ. Հայոց կրօնական ժողովի բոլոր անդամներից ստորագրած մի խնդրագիր, միանգամայն նաև բողոքագիր տուեց սրբ. Պատրիարքին՝ բարձրագոյն Դուռը ներկայացնելու համար:

Բերլինի դաշնագրութեան կէտերից մէկն էր՝ Բաբերդի վիճ հայ ազգաբնակութիւնը պաշտպանելու պարտականութիւնը: Յօդուածի այդ կէտը այնքան լաւ իրականացից, որ նոյն այդ առաջնակարգ քրդերից Բարձրագոյն Դուռը զինուորական առանձին գունդ կազմակերպեց 1891 թուականին, ապրով նոցա ձեռքը կատարելագործուած հրացան և, ի նշան կատարուղ ակտի մեծ կարևորութ՛ան՝ կնքելով այդ գունդը—իբրև՝ պահակալ սուլթանի անունով—իբր Համիդեան գունդ, բայց միւս կողմից շարունակելով պահպանել հայ ազգաբնակութիւնը դուրս զինուորական ծառայութիւնից, հեռաւորապէս և զինուորական վարժութիւններից:

Դա մի վերին աստիճանի բողոքող անարդարութիւն էր. աւելի քան անարդարութիւն՝—դա մի բացարձակ թշնամութիւն էր պետութեան հայկական տարրի դէմ, հակառակ ոչ միայն Բերլինի դաշնագրութեան ոգուն, այլ նոյն իսկ այն սկզբունքների, որոնք դրած են Օսմանեան պետութեան իբր թէ հիմնական օրէնքների հիմքում, հռչակաւոր Գիւլհանէի Խաաո-ի-շերիֆի աս 3 նոյեմբեր 1839 թ. և Խաաո-ի-Հումայունի աս 18 փետր. 1856 թուականի, որոնց նպատակն էր կայսերութեան ոչ-մահմեդական հպատակների իրաւունքները հաւասարեցնել մահմեդականների իրաւունքների հետ:

Ներկայումս հանգամանքները և գաղափարները այնպէս են փոխուել, որ նոյն իսկ այդ ենթադրուած հաւասարութիւնը չի կարող հրապոյր ներկայացնել ոչ-մահմեդականների համար: Քրիստոնէական ազգաբնակութիւնները բառիսկանչական առողջ զգացմունք-

ներ են կարողացել զարթեցնել իրանց մէջ, բաւականաչափ բարձր մտաւոր ու բարոյական նպատակներ են կարողացել մշակել իրանց համար, բաւականաչափ բարձր դիտակցութեան են եղել ընդունակ հասնելու, որպէս զի մի այսպիսի անշնորհակալ գործ նպատակի չձգտէին, ինչպիսին կը լիներ՝ իրանց պատմական զարգացումը հասցնել միայն մինչ հաւասարութիւնը մուսուլմանների հետ, որ ապա նոյն մուսուլմանների քայլերով առաջ գնային...

Եթէ տաճկական կառավարութիւնը կարողացաւ Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածը վրէժխնդրութեան հիմունք գործ ածել այդ նորանից էր, որ նա շատ լաւ գիտէր թէ ինչպէս է հասկանում ինքը Եւրոպան Թիւրքիայի պարտաւորութիւնը՝ առ ղեկացնել մեծ պետութիւններին ձեռնարկած միջոցների մասին յիշեալ բաներորոգումների վերաբերմամբ։ Այս տասնևհինգ երկար տարիներում ոչ մի անգամ Թիւրքիան իրան պարտաւոր չհամարեց իւր ձեռնարկած միջոցների մասին տեղեկացնել մեծ պետութիւններին։ Եւ ինչ կար տեղեկացնելու, քանի որ եղածը ծածկելու միայն խնդրի էր գոնում։

Իսկ եւրոպական պետութիւնները, հաւաքական կերպով, որպէս հատուցում յայտնի էին այդ խնդրի համար միայն մի միակ անգամ քայլ են արել Բարձրագոյն Դուռն առաջ. այն որ եղաւ, նախաձեռնութեամբ ուժեղ պետական և համաձայնութեամբ նորա միւս պաշտօնակիցների, նոր տոմարով 7-ն սեպտեմբերի 1880 թուականին, ուրեմն ամբողջ տասներեք տարի առաջ։

Բայց եթէ ամբողջ մեց պետութիւնների հանդիսաւոր վճիռը չկարողացաւ Բարձրագոյն Դուռը Հայերի դիմաց լուսագոյն զգացմունքների բերել, ապրի ևս նուազ նշանակութիւն պիտի ունենար հասարակական զգուշացումը. իսկ ևս առաւել նուազ ներգործութիւն պիտի անէին մի-միակ պետութեան միջամտութիւնները, ինչպէս այդ անում է Անգլիան, այդ լրջագոյն հետամտողը արևելեան գործերի, որը մի-մի լսեցնել է տալիս իւր ձայնը թէ անգլիական պարլամէնտում և թէ Պոլսի իւր դեսպանի միջոցով։

Ահա այդպիսի միջամտութիւններից էր անգլիական դեսպան սըր Կլար-Ֆորդի նոյն այս տարւայ հոկտեմբեր ամսին Բարձրագոյն Դռան մեծ արած քայլը, որով նորա ուշադրութիւնը հրաւիրեց

հայկական խնդրի վրայ և բացատրեց Հայաստանի մէջ բարենորոգումներուն դործադրութեան անհրաժեշտութիւնը։

Մենք հեռու ենք անոնցմէ՝ այսպիսի միջամտութիւններուն ոչինչ նշանակութիւն չտալ։ Լուսաւորեալ ազգերն խղճմտանքը և նոցա կարծիքը Տաճկա-Հայ ազգութեան կարևորութեան մասին՝ այդ պաշտօնական միջամտութիւններով արտայայտուած է և վկայուած։ Իսկ իմանալ, որ ձեր պաշտպանած դատը նեցուկ է գտնում հանրամարդկային կարծիքի կողմից—այդ մի մխիթարութիւն է, որը այժ է տալիս լքեալներին՝ աւելի մեծ հաւատով վերաբերել դէպի յաջողութիւնը ապագայում։

Ներկայումս Տաճկա-Հայաստանում հացի թանկութիւն է, շատ տեղ սով է կամ մօտ են դորան։ Հայրենիքից դուրս եկողները բազմացել են։ Սա երևութին՝ եղանակների մի խաղն արդիւնք է այդ բոլորը։ Բայց միայն լուսաւորուած ազգերը գիտեն մարդկանց սեղքերը երկնքի վրայ չբարդել։ Տաճկա-Հայաստանը մի երկիր է, ուր տասնեակ միլիոններ լաւ ապրելու տեղ պիտի գտնեն։ Հայկական խնդրի բաւարար լուծումը կը հեշտացնի նաև այդ խնդրի լուծումը։

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։

ԼՈՅՍ-ԳԱՂԱՓԱՐԸ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԿԼԵԱՆՑԻ

Ո՛չ մի արտասուք! Եկած խաւարը
Թող օրըստօրէ աճի, թանձրանայ.
Մրթմրթման միջին լոյս-գաղափարը
Աւելի հզօր կը պայծառանայ:

Անհատատուն է չարի յաղթանակ
Եւ վայրկենական նորա ցընծութիւն.
Մեր ձեռքումն է լուսոյ վառ ճրագ,
Մեր ձեռքումն է լուսաւորութիւն!

Էջմիածին, 1893 թ. Հոկտեմբեր

ԳԻՇԵՐ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԿԼԵԱՆՑԻ

Ա՛հ, ինչ ցուվ է այս գիշերը,
Ինչ զեփիւռ է մեղմ փըչում!
Սօսաւում են բարկինները
Եւ օրօր են ինձ ասում։

Ես ուրախ եմ, հոգիս բարձր,
Ես սուրում եմ և երգում,
Կեանքը—թեթեւ, կեանքը—քաղցր.
Ես ապրել եմ կամենում!

Ծանըր հոգս, կասկած ու ցաւ,
Մարդկային կեանքի թախիծ—
Ողջ գընաց, ողջ հեռացաւ.
Ընկաւ քարըն իմ կրծքից!

Լըմփածին, 1893 թ. սեպտեմբեր

ՊՈՒՇԿԻՆԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԲԱՂՁԱՆՔ

Դանդաղ սահում են հէգ կեանքիս օրերը,
Եւ ամեն վայրկեանն իմ թոշնած սրտում
Լցնում է դժբախտ և՛ սիրոյ ցաւերը,
Ե՛ւ անմոռնթեամբ խելքս վրդովում։
Բայց ես անարատնչ լալիս եմ լռիկ...
Լացն աւելի է ինձ մխիթարում.
Հոգիս պաշարած վշտի փոթորիկ,
Լացի մէջ նա գտն հրճուանք է զգում։
Օ՛, կեանքի երազ, դու գաւառկ տեսիլ,
Քեզ չեմ ափսոսում, չքացիր շուտով.
Թանկ է ինձ համար սիրել ու տանջվիլ...
Փոչթ չէ, թող մեռնեմ... միայն սիրելով։

2 փետրուարի, 1893 թ.

ՈՒԽՏԱՒՈՐԸ

(ՄԻ ՀԱՏՒԱԾ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐՊԱՃԱՏԵԱՆ

Ես և նա՝ Յարութիւն քահանայ Մանուկեանցը, նստած էինք Սևանի կղզու արևելահարաւային ծայրում, այնտեղ, ուր այդ կղզու ապառաժոտ ափերը համարեա ուղղահայեաց մտնում են լիճը և ուր ներքևում երևում է Մելքոն ճգնաւորի քարաժայռը՝ առանձնակի բարձրացած ջրի մակերևոյթից։

Արևը նոր էր ծագել. պարզ և հանդարտ եղանակ էր։ Լճի կապուտակ ալիքները մեղմ ծփում և փայլում էին առաւօտեան արևի առաջին ճառագայթների ներքոյ. տեղ տեղ երևում էին երբեմն նեղ, երբեմն լայն հոսանքներ, որոնք, իրանց բաց-կապոյտ գոյնով գանազանւելով լճի մուգ կապտութիւնից, երկայն ժապաւէնների նման, անցնում կորչում էին ջրի ընդարձակ տարածութեան մէջ. հարթ կապոյտ դաշտի վերայ, կարծես, գետեր լինէին գոքա, որոշ ափերով և ուղղութեամբ։ Հանդիսական արևելեան լեռները, որոնց վերայից արդէն բարձրացել էր առաւօտեան մշուշը, պարզ ցոյց էին տալիս իրանց լերկ, ժայռոտ կուրծքը, իսկ հեռաւոր հարաւայիններն երը դեռ ևս ծածկւած էին սպիտակ անթափանցելի շղարշով։ Խորին լռութիւն էր տիրում. միայն երբեմն լսելի էին լինում ներքևից ալիքների մեղմ զարկերն ափերին և չարաճճի ծիծեռնների ծլւծլւոց, որոնք մեր ոտների տակ ճախրում էին ջրի ականակիր հայելու վերայ։ Հիւսիսից փայփայող զեփիւռ էր փչում. որպէս բիւրեղ յստակ էր օդը։ Բայց այս պարզ և խա-

զաղ բնութեան նման հարկաւոր էր պարզ և խաղաղ հոգի՝ անձայն պիտելու և զարձանալու դեղեցիկ տեսարանով...

Տէր-Յարութիւնն, աչքերը սևևած դէպի հիւսիս՝ անթարթ նայում էր Վիլիչան տանող ճանապարհի վերայ, որ, քանի մի պտոյտ կազմելով ձորամիջում, կորչում էր սարերի ետևը։ Ես լուռ պիտում էի նորան։ Բարձրահասակ, թիկնաւէտ, թէև մաշած ու վտիտ, դլուխը զարդարած սպիտակ երկայն մազերով, որոնք խառն ի խուռն թափթփուած էին ուսերի վերայ, նիհար, դալկացած դէմքով, աչքերի տխուր և իմաստալից նայուածքով՝ Տէր-Յարութիւնը մեր այն սակաւաթիւ քահանաներից մէկն էր, որի վերայ նայելիս մարդ ակամայ պատկառանք է զդում։ Ինձ ասել էին կղզու վերայ, թէ նա երեք տարի առաջ աքսորուած է Սևան և դեռ պատժի ժամանակամիջոցը չէ լրացել։

Բայց ինչ յանցանք կարող էր գործած լինել այդ քահանան, ինչու ծերութեան օրերում, երբ աւելի կարօտութիւն ունի նա ընտանիքի հոգածողութեան, դատապարտուած է տարիներով ապրելու այս մենաւոր կղզու վերայ, ուր մարդ հազիւ քանի մի օր կարող է դիմանալ միայնասէր անապատականների շրջանում։ Չէմ կարող արդեօք որ և է բանով օգնել նորան, չունի՞ արդեօք նա մի իդձ, որի կատարումն կախուած լինի նաև ինձ նման նորան անծանօթ մարդուց։ Այս մտածմունքներն ինձ ակամայ տանջում էին։

Տէր Յարութիւնը կամաց հառաչեց. արտասուքն երբեմն երբեմն թափւում էր նորա ձիւնի նման սպիտակ մօրուքի վերայ, հազիւ տեսանելի կերպով դողում էին նորա շրթերը։ Ես չէի համարձակւում խզել լռութիւնը. դուցէ անհաճոյ թւին նորան իմ հարցերս, մտածում էի ես, մանաւանդ այնպիսի ժամանակ, երբ մարդ, խորասուզած իւր ներքին աշխարհի մէջ, քրքրում է սրտի խորին վէրքերը։ Սակայն նորան օգնելու ցանկութիւնը յաղթեց ամօթանքս և ես, յանկարծ բռնելով նորա ձեռքը, հարցրի.

—Տէր հայր, խնդրեմ մի՛ թագցնէք ինձանից ձեր վիշտը. ես սատնասրտութեամբ չեմ կարող տեսնել ձեր արտասուքը. չգիտեմ դուք որքի ունէք թէ ոչ, բայց հաւատացէք ինձ, որպէս ձեր որդուն, որ ձեռքիցս եկած օգնութիւնը չեմ խնայիլ ձեզ։

—Ինչո՞վ կարող էք դուք ինձ օգնել, որդի, ասաց ծերունին

հանելով գրպանից մի հին ցնցոտի, թաշկինակի փոխարէն, և սրբելով արտասուքը։

Ես նայում էի նորա կարմրած աչքերին. սիրտս ճմլւում էր։

—Գուցէ կարողանամ, ով գիտէ. ես ունեմ ծանօթներ այն մարդկանց մէջ, որոնց ձեռքին է ձեր բաղդը, թերևս յաջողւի ինձ, գոնէ, մասամբ թեթևացնել ձեր վիճակը, գոնէ որ և է բանով մխիթարել ձեզ։

Քահանան մի րոպէ նայեց ինձ վերայ շարժմունքով։

—Ձէ, որդի, գուք ինձ օգնել չէք կարող. այնպիսի մարդիկ չեն նորա... Ինչո՞վ էք պարապում գուք, տէրութեան պաշտօնեայ էք, հարցրեց նա վայրկենական լուռթիւնից յետոյ։

Ես ասացի նորան պաշտօնս։

—Ո՛չ, չէք կարող. բայց այդ ոչինչ, շնորհակալ եմ ձեր կարեկցութեան համար. այս երէք տարւայ մէջ գուք առաջինն եղաք, որ հետաքրքրւեցաք ինձանով. ով է ճանաչում կամ մարդատեղ գնում ինձ այս կղզու վերայ. ինձ վերայ նայում են այնտեղ, որպէս մի անշունչ առարկայի վերայ, որ որոշեալ ժամանակամիջոց պիտի ընկած լինի իւր ճամբում։ Բայց ես սովոր եմ տալրել մարդկանց շրջանում... ես գիտեմ թէ ո՛րքան գնահատելի է կարեկցութիւնը դժբաղտութեան օրերում և ո՛րքան թեթևացնում է մարդու սիրտը, երբ կարելի է մէկին պատմել տանջող մտքերն ու վշտերը։ Ձէ որ ինքս խոստովանահայր եմ եղել...

Քահանայի աչքերը կրկին արտասուակալեցան։

—Պատմեցէք, պատմեցէք, տէր-հայր, Աստուած ողորմած է։

II

Իմ պատմութիւնս երկար չի լինիլ, սկսեց քահանան։ Ես հիւսիսային Կովկասի N քաղաքից եմ։ Այս քաղաքում բազմաթիւ ռուս բնակիչների հետ ապրում են նաև 75—80 տուն դաղիստանեան հայեր, որոնք պարապում են վաճառականութեամբ և այգեգործութեամբ։ Պէտք է ասեմ ձեզ, որ հայերը բաւականաչափ յաջողակ են իրանց պարապմունքների մէջ. աղքատ կամ կարօտ ծխականներ ես շատ քիչ ունէի։ Ընդելով իրանց սակաւաթուութեանը՝ մեր հայրենակիցները շինել են այնտեղ մի փառաւոր եկեղեցի՝

զարդարած ամեն տեսակ եկեղեցական սպասներով. նոքա ունին նաև մի ուսումնարան, ուր սկզբնական կրթութիւն է մատակարարւում նոյն մանուկներին։ Ապրելով եկեղեցասէր և ջերմեռանդ ժողովրդի մէջ՝ ես նիւթական կարօտութիւն չէի զգացել երբէք. իմ սեպհական տունն իւր ամենայն սարք ու կարգով, ուր ապրում էի կնոջս և միակ զաւակիս՝ աղջկանս հետ, լի էր և առատ։ Ես ամեն կերպ աշխատում էի գոհութիւն տալ իմ ժողովրդի հոգևոր պէտքերին, նոքա գոհացնում էին ինձ նիւթապէս։ Անչափ գոհ և շնորհակալ էի ես նոցանից, նոքա էլ դժգոհ չէին ինձանից։ Ձեր առաջ, որպէս պարծենալու կարիք չկայ, ուստի պարզապէս ասում եմ, որ մենք սիրում էինք իրար։ Եւ այսպէս մենք չէինք էլ կարող վարւել՝ ապրելով, որպէս պանդուխտ, հեռու մեր հայրենիքից, օտար ազգաբնակութեան մէջ։

Երկար տարիներ ես խաղաղ և հանգիստ հոգով պաշտօն եմ մատուցել իմ սիրած եկեղեցու և ժողովրդի մէջ. ոչ մի ծանրութիւն չէր ճնշում իմ սիրտս։ Ինձ չանձնւած հօտը միշտ հոգեպէս մխիթարւած էր և միակ զաւակիս բաղդաւորութիւնը տեսնել ցանկալուց զատ՝ կեանքիս մէջ ես մի իղձ, մի փափագ ունէի, որ քաղցր երազի նման փայփայում էի սրտիս խորքում։ և այդ իղձն էր մի օր ուխտ գնալ դէպի հեռաւոր հայրենիք, դէպի Էջմիածին, կարօտով փարիլ նորա սուրբ քարերին, տեսնել մեր նախնիների հաշակաւոր կիսավայրերը, վանքերը, աւերակները, համբուրել սրբակրօն հայրերի ձեռներն և ապա թէ խաղաղ հոգով մնալ գերեզման։ Տարուց տարի յետաձգելով՝ ինձ չէր յաջողւում իրագործել իմ այս ցանկութիւնը—երբեմն այս, երբեմն այն հանգամանքն արգելք էր լինում նորան։

Վերջապէս իմ երազս կատարւեց...

III

Սորանից չորս տարի առաջ՝ մի երեկոյ, երբ ես ու կինս միայնակ նստած սենեակում թէյ էինք խմում—այդ ժամանակ աղջիկս ուսանում էր մերձակայ Ռ. քաղաքի իգական գիմնազիօնում—մեր դրան առաջ կառքի դղրդիւն լսեց։ Պատուհանից դուրս նայելով տեսայ մի անծանօթ հոգևորական. իսկոյն դուրս գնացի և հրա-

ւիրեցի ներս։ Երեւաց, որ դա այն վարպապետն էր, որի ստորագրութիւնն ես յաճախ կարդում էի N քաղաքի հոգեւոր առենից ինձ ուղարկուած հրամանների տակ։ Թէ ինչու նա այդպէս յանկարծահաս կերպով էր եկել մեր քաղաքը, առանց ինձ նախապէս իմաց տալու, ես չիտուչ միայն հասկացայ։

Հայր-սուրբի այցելութիւնն ուրախացրեց ինձ։ Դէպի մեր հեռաւոր հայրենիքն ես այնպիսի կարօտ էի զգում, որ շատ անգամ այնտեղից մեր քաղաքը ժողովարարութեան եկած աղքատներին շաբաթներով պահում էի ինձ մօտ, խօսեցնում, պատմել էի տալիս նոցա այն երկրի մասին, ուր Թէև ես չէի եղել, սակայն միշտ մի ներքին ձգտումն էի զգում դէպի նա, մի տեսակ պահանջ էի զգում կենդանի պատմուածք լսել նոցա մասին։ Այս տեսակ պահանջ զգում էին և ժողովրդականներից շատերը։ Հայր-սուրբն այդ կողմից ամենայարմար մարդն էր, որ լիովին կարող էր գոհացումն տալ մեր հետաքրքրութեանը։ Ուրախ էի և նորա համար, որ մտածում էի Թէ հայր-սուրբը քարոզներ կը խօսի եկեղեցում, խրատներ կը տայ և կը վերթարէ ժողովրդին։

Ես ամեն կերպ աշխատում էի պատւասիրել նորան. ոչ մի ծախքի առաջ ես չէի կանգ առնում։ Հազարից մէկ օր այցելութեան է եկել, հազարից մէկ անգամ այնպիսի մարդու երես ենք տեսնում, մտածում էի ես, թող պժգոհ չգնայ։

Մեր քաղաքում հայր-սուրբը մնաց տասն օր։ Նա ծանօթացաւ իմ ծխականներիս հետ, որոնցից մի քանիսը ձոխ սեղաններ սարքեցին նորան հիւրասիրելու համար։ Ժողովրդականներս խնդրեցին նորան պատարագ անել և առատ աջահամբոյրներ տւին։ Նորա բաղդից այդ օրերում պատահեց և մի հարսանիք. հարուստներից մէկը պսակում էր իւր որդուն։ Հայր-սուրբին հրաւիրեցին պսակադրութեան կարգը կատարելու. այստեղ էս նորա աջահամբոյրը պակաս չէր. բացի սորանից նորապսակների ղոյդն, ի յիշատակ այդ իրանց համար երջանիկ օրւայ, նւիրեցին հայր-սուրբին մի արծաթապատ աւետարան և մի ձեռք շքեղ հագուստ։

Այսուամենայնիւ ես նկատում էի, որ ինչքան առատ էր լինում տուրքը ժողովրդի կողմից, այնքան աւելի գլգռւում էր հայր-սուրբի ախորժակը։ Նա շարունակ գանգատւում էր ինձ իւր

նիւթական անձուկ վիճակից, հաշւում էր, թէ որքան թանկ էր նաստում նշանաւոր պաշտօն ունեցող հոգևորականին քաղաքի ապրուստը, թւում էր իւր պարտքերն և միշտ նախանձում էր իմ պրուիեանս և ապրուստիս: Սենեակումս, սեղանիս վերայ կամ հանպատրաստից ընդունելութեանց մէջ մի լաւ բան տեսնելիս՝ նա չէր կարող չնաւեւլացնել. «ինչ գեղեցիկ բան է, շատ հաւանում եմ, հարկաւոր կը լինի մի այսպիսին առնել...» վերջապէս գնալու նախընթաց երեկոյին հայր-սուրբը կանչեց ինձ և ասաց.

Սրհնեալ լինի ժողովուրդդ, տէր-հայր, ջերմեռանդ մարդիկ են, լաւ հարուստ են երևում: Կարծեմ դու շատ գոհ ես վիճակիցդ:

—Այո. ես գոհ եմ, լաւ ժողովուրդ է:

—Ի հարկէ, ի հարկէ գոհ կը լինես. փառաւոր տուն ունիս, սարք, կարգ, ու քահանայ տեղովդ եպիսկոպոսներից էլ լաւ ես ապրում:

—Փառք Աստուծոյ, գանգատելու տեղիք չունիմ:

—Ես լսել եմ, տէր-հայր, որ դու բանկում էլ բաւական փող ունիս, ճշմարիտ է:

-Ո՛չ, հայր-սուրբ, ես բանկում փող չունիմ. ուղիղ է, ես անկարօտ ապրում եմ, բայց չէ կարելի այսչափ ժողովրդով և ապրել և փող ձեռ ձգել. և ինչ կարիք կայ փող ձեռ ձգելու, քանի որ ինձ մի կտոր հաց պակաս չի լինիլ մինչև կեանքիս վերջը:

—Ինչպէս, աւելորդ մնալը փոր լսամ չի ծակիլ, օրհնած, աղջկանդ կը մնայ:

—Աղջկանս ապագայի մասին ես հանդիստ եմ, հայր-սուրբ. նա կրթութիւն է ստանում հիմա. յոյս ունիմ, որ նորան առանց օժիտի էլ առնող կը լինի:

—Չէ, չեմ հաւատում, տէր-հայր, որ դու ձեռ ձգած փող չունենաս. առանց այդ չի լինիլ. գուցէ այս կամ այն վաճառականի մօտ...

—Ո՛չ, հայր սուրբ, երդւում եմ կարգովս:

—Լաւ, ինչ ամօթ բան է, ընդհատեց նա իմ խօսքս, ինչպէս ծածկել. ով յափշտակեց քեզանից: Բայց բանն այդ չէ. լսիր ինչ եմ ասում, տէր հայր. դու լաւ քահանայ ես, ժողովուրդ լաւ ես կառավարում. պարտաւորու թիւններդ գիտես, մի պարտաւորու-

թիւն միայն մոռացել ես — այն էլ, երևի, կը կատարես։ Ես ուզում եմ միջնորդել, խորհրդաւոր ձայնով շարունակեց հայր-սուրբը, որ քեզ որ և է վարձատրութիւն տան — խաչ, ևսարայ փիլոն կամ գուցէ նոյն իսկ կամիլաւկայ։

— Շատ շնորհակալ եմ։

Հայր-սուրբը լուռ պիտում էր ինձ։

— Է՛հ, օրհնած, շնորհակալ կը լինես ու կը լինես, բայց ի՞նչ պատարկ շնորհակալութիւն կը լինի։

— Հապա ինչպէս, պատասխանեցի ես։ Մի մուխ կասկած անցաւ մտքովս այդ րոպէին։

— Մի՛թէ միտքս չհասկացար, տէր-հայր։

Ես մտածմանն մէջ ընկայ։

— Լաւ, յետոյ կը հասկանաս, շատ մի՛ մտածիր, ասաց հայր-սուրբը ժպտալով. դու խելացի քահանայ ես, դու կը հասկանաս. դու չես սիսիլն, որ քեզ ուսուցչութեան ուղարկենք...

Ձշմարիտ որ ես այդ խօսակցութեան միտքը լաւ չհասկացայ այն ժամանակ։ Հետևեալ օրը հայր-սուրբը գնաց։ Ես և ժողովրդականներից շատերը գնացինք նորան ճանապարհ ձգելու. մենք վարձեցինք նորա համար փառաւոր կառք և ուինք ամբողջ ճանապարհածախքը։

IV

Ձանցաւ մի ամիս հայր-սուրբի գնալու օրից, և ահա ես մի գրութեամբ կանչեցայ անյապաղ ներկայանալու N քաղաքի հոգևոր առաջնորդ։ Այդ խիստ «առաջնորդութիւնը» — որպէս կոչւում է մեզանում իշխանաւորի հրամանը — զարմացրեց ինձ։ «Ի՞նչ կայ, ինչ կարող է լինել արդեօք. ես յանցանք չունիմ, իմ դէմ բողոք չկայ, որ կանչեն ինձ պատժելու. իսկ եթէ ուզում են որ և է գործի մասին բացատրութիւն պահանջել կամ մի այլ բան հաղորդել՝ թող ուղղակի գրէին — ի՞նչ չգիտեն, որ ես մենակ քահանայ եմ այս տեղ և բացակայել քաղաքից չեմ կարող։ Աստուած մի՛ արասցէ, եթէ ննջեցեալ պատահի կամ մի ուրիշ եկեղեցական անյետաձգելի կարգ. ո՞ւմ կարող են պիտի ծխականներս. ամենամօտիկ քաղաքը, ուր կարելի է հայ քահանայ գտնել, հարիւր յիսուն վերստ հեռու

է մեզանից...» Այսպէս մոլորած և մտատանջելով՝ ես մի-երկու օրեայ մէջ, ըստ կարելոյն, կարգի դրի գործերս և ճանապարհ ընկայ։

Երբ ես մնաս բարով էի ասում կնոջս և բարեկամներիս՝ արտասուքը խեղդում էր ինձ. մի ախուր նախազգացումն, ծանր քարի նման, ճնշում էր սիրտս—ինձ թուում էր, թէ ես ընդ միշտ հեռանում էի սիրելիներից։

Շ քաղաքը, ուր ես գնում էի, մերից երկու հարիւր վերստ հեռու է։ Ճանապարհը մտատմբ երկաթուղով է և մնացմբ էլ փոստով։ Երկաթուղու կայարանում ես հանդիպեցայ Ծանօթ քահանաներից մէկին, որ Շ քաղաքից էր վերադառնում։ Նա լսելով իմ պատմաբանը ճանապարհորդութեանս մասին, ժպտալով հարցրեց.

—Տէր-հայր, բաւականաչափ դրամ վերցրել էք։

—Ունիմ, որքան ինձ համար հարկաւոր է։

—Ո՛չ, ոչ միայն ձեզ համար... Քահանան խօսքը չվերջացրեց։ Երկաթուղու գնացքն արդէն շարժւում էր. ես յուսահատ նաեցայ ուղեսենեակի անկիւններից մէկում։ Այն թոյլ կասկածը, որ կար իմ մէջ առաջ էլ և որ ես աշխատում էի խեղդել անհիմն համարելով նորան, աւելի և աւելի հզօրանում և պաշարում էր ինձ։

Մխիթ, յիրաւի, ինձ կանչում են խաչելու։

V

Փիշեր էր արդէն, երբ ես հասայ Շ քաղաքը։ Փողոցներում խորին լուռթիւն էր տիրում. պատուհաններում լոյսի նշոյլ չէր երևում, միայն տեղ տեղ, իրարից հեռու հեռու, վայելվելում էին փողոցային լապտերներն և լուսաւորում ցեխոտ սայլայատակը։ Անձրևը բարակ մաղում էր։ Շ-ում ես բարեկամներ չունէի. ծանր իջևանէի։ Երկար տատանմունքից յետոյ՝ ես վճռեցի գնալ մի քահանայի տուն, որի հետ շատ տարիներ առաջ պատահմամբ ծանօթացել էի. Կառապանի օգնութեամբ այս և այն տան դուռը բաղխելուց, երկար հարց ու փորձ անելուց յետոյ, վերջապէս գտայ Տէր-Մովսէսի տունը։ Թէև նա ուրախութեամբ ընդունեց ինձ և փափուկ, հանգիստ անկողին պատրաստել տւեց ինձ համար, բայց ես չկարողացայ քնել այդ գիշեր, չնայելով որ ճանապարհին սատիկ

յոդնել էի։ Ես ատնչւում էի մկկը միւսից աւելի վատ ենթադրութիւններով։ Լուսաբացին միայն աչքերս փակւեցան, սակայն այդ կարճատև քունն ևս լի էր խռան ի խուռն երազներով։

Առաւօտեան ժամը տասնին ես կառավարութեան դիւանումն էի։ Մի ամբողջ ժամ սպասեցնել տալուց յետոյ՝ ինձ ներս հրաւիրեցին։

—Բարով էք եկել, պրիմ թեթև շարժմամբ պատասխանեց հայր-սուրբը իմ խոնարհ ողջունին։ Նա սկսեց թերթել սեղանի վերայ դրած «դործը». ապա խստութեամբ նայելով ինձ վերայ՝ ասաց.

—Ձեզ կանչել ենք, ատր-Հայր, բացատրութիւն պահանջելու այն ապօրինի պահկի մասին, որ դուք կատարել էք այս տարւոյ յունիսի 24-ին։

—Այդ օրւայ պահւածներին ես շատ լաւ եմ յիշում, պատասխանեցի ես փոքր ինչ մտածելուց յետոյ. նոցա մէջ ազգակցական կամ խնամիական կապ չկայ։ Ի՞նչն է այդտեղ ապօրինի։

—Շատ համարձակ էք խօսում, ատր-Հայր, խստութեամբ նկատեց ինձ հայր-սուրբը. մի՞թէ կարծում էք, թէ իմ օրով էլ կարող էք ծածկել ձեր զեղծումները, ինչպէս ծածկել էք իմ նախորդների օրով։ Նոքա թոյլ մարդիկ էին, նոքա չգիտէին հակել եկեղեցական կանոնների ճիշտ գործադրութեան վերայ, բայց ինձանից դժւար կացէք, ես չեմ թոյլ տայ, որ խաբէք ինձ։

—Հայր-սուրբ, խնայեցէք իմ կարդիս և հասակիս, մինչև այսօր ես ոչ ոքի չեմ խաբել, ոչ ձեր նախորդներին և ոչ ձեզ։ Ինչով արժանացայ ես այդ յանդիմանութեանը, վշտացած պատասխանեցի ես։

—Ի՞նչպէս. հապա խաբէութիւն և ուրացութիւն չէ այն, ինչ որ անում էք դուք այս բոպէիս։

—Ենդրեմ բացատրէք, թէ ո՞ր գործի մէջ էք բռնել խաբէութիւնս։

—Բացատրեմ, ես բացատրեմ. դուք ինձ բացատրութիւն տալու փոխանակ, ինձանից էք բացատրութիւն պահանջում. շատ լաւ, ահա։

Հայր-սուրբը նորից սկսեց թերթել «գործը»։ Ըմբռնաց, լսելի ձայնով բացականչեց նա։ Այդ վիրաւորանքները ինձ այժ տւին, ես

պատրաստում էի, առանց մտածելու հետևանքների մասին, յանդուգն լինել, միայն թէ պաշտպանեի իմ պատիւս։ Սիրտս արագ-արագ բաբախում էր, գլուխս այրւում էր։

—Դուք պատկէլ էք յունիսի 24-ին Մկրտիչ Գէորգեան Ահարոնեանցին Աննա Յարութիւնեան Սոբոլեանցի հետ, հարցրեց հայր-սուրբը դաժան հայեացքով։

—Այո, պատկել եմ։ Բայց ես ասացի, որ այդ պատկին ազգակցական կամ ընտանեական կապի արգելք չկար—փեսան քսան և եօթն տարեկան էր, իսկ հարսը տասն և ութ։

—Մի՛թէ դուք չգիտէիք, տէր-հայր, որ բացի այդ արգելքներից կար նաև մի ուրիշ արգելք, որ չպէտք է թոյլ տար ձեզ պսակելու երիտասարդ Ահարոնեանցին Աննա կուսի հետ։

—Ո՛չ, չգիտէի և այժմ էլ չգիտեմ։

—Չգիտէիք, անմե՛ղ, հեգնեց հայր-սուրբը. չէ, շատ լաւ գիտէիք, բայց... Նա աչ ձեռքի բթամատով որորեց նոյն ձեռքի ցուցամատի ծայրը։ Քահանաներդ ամե՛ն զեղծումի ընդունակ էք կատարելու փողի համար. ձեմ էք խաբում, ես ձեր կարծածներից չեմ։

—Հայր-սուրբ, ինչո՞ւ առանց ապացոյցների...

—Շատ մի՛ խօսէք, կարեց խօսքս հայր-սուրբը, շպռտելով իմ առաջ մի մատեան. բայց արէք 1869 թուականի ապրիլի 15-ը։ Ճանաչո՞ւմ էք, դա ձեր եկեղեցու չափաբերական մատեանն է։

Դողդոջուն մատներով երեք-չորս րոպէ քրքրելուց յետոյ՝ ես բացի արի 1869 թ-ի ապրիլի 15-ը։

—Բարձր կարդացէք, դուռաց հայր-սուրբը։

—«Աննա, յօրինաւոր ամուսնութենէ Յարութիւնի Սոբոլեան ընդ Սոֆիայի Յովհաննիսեան, կնքահայր Մկրտիչ Ահարոնեան...»։

Վերջին անունը կարդալիս մի յանկարծական սարսուռ անցաւ ամբողջ մարմնովս, ձեռներս թուլացան, ոտքերս սկսեցին դողդողալ. ես վայր կ'ընկնէի, եթէ քահանաներից մէկն աթոռ չտար ինձ։ Ես պատկել էի կնքահօրն իւր սանիկի հետ...

—Հիմա պատասխանէք։ Դէ, հիմա պատասխանէք։ Ի՞նչ, կարծում ես թէ ես անգործ էի ձեր քաղաքում, միայն ուտում, խմում ու քէֆ էի անում. ա՛չ, ես տեղեկութիւններ էր ժողովում, հարց

ու փորձ էի անում ամենին քո արածների մասին. հէնց դորա համար էլ ես յանկարծակի եկայ ձեր քաղաքը, որ դու չկարողանաս զեղծումներիդ հետքը կորցնել. ես դեռ շատ մեղադրանքներ ունիմ հատաքած քո դէմ։

Հայր-սուրբն երկար զոռզոռում էր, բայց ես այլ ևս չէի հասկանում նորա խօսքերը։

VI

Մրսել էի արդէօք ճանապարհին, թէ այդ ինձ համար անմոռանալի դէպքն ազդել էր ինձ վերայ՝ չգիտեմ, միայն զգում էի, որ առողջութիւնս տեղը չէ։ Գլուխս այրւում էր, մարմինս կոտրատւում, իսկ կրծքիս վերայ, կարծես, մի ծանրութիւն լիներ դրած։ Ջնայելով տանուտիրոջս թախանձանքին՝ ամբողջ օրն ես ոչինչ ուտել չկարողացայ. բերանս չէր բացւում ոչ կերակրի և ոչ խօսելու համար։ Ծամերով ես շրջում էի սենեակի մի անկիւնից դէպի միւսն և մտածում այն բանի մասին, թէ ինչպէս է պատահել, որ ես չեմ յիշել Մկրտչի կնքահայր լինելն Աննային. ուրիշները կարող էին և՛ մոռանալ, կարող էին և՛ չիմանալ այդ կանոնը, բայց ինչպէս ես, ես—երեսուն տարւայ պաշտօնավարութեամբ փորձւած քահանայ—առանց հարց ու փորձի, առանց մանրազննին տեղեկութիւնների, կատարել եմ այդ պսակը։ Ես կատարելապէս յանցաւոր էի զգում ինձ. և ահա այդ զգացումն էր, որ հանգիստ չէր տալիս ինձ, չէր թողնում քաջալերելու հիւրընկալ քահանային մխիթարական խօսքերով, որոնց ես մի բառով էի պատասխանում. յանցաւոր եմ, յանցաւոր...

Ամենևին ես չէի էլ մտածում գլխիս եկած փորձանքից ազատւելու հնարքների մասին, թէև երբեմն-երբեմն, գիշերւայ մթութեան մէջ, երևում էր աչքիս առաջին կնոջս պատկերը՝ տխուր, արտասուքն աչքերին, միայնակ կուչ եկած սենեակիս անկիւնում, թէև երևակայում էի միակ զաւակիս դրութիւնն, եթէ նա զրկւեր հայրական հոգատարութիւնից. բայց և այնպէս իսկոյն հեռանում էին մտքիցս այն մտածմունքները, երբ խլիզմս բարձրացնում էր իւր ձայնն և հարիւրերորդ անգամ կրկնում ականջիս՝ «ախ, ինչու, ինչու կատարեցիր դու այդ պսակը»։

1636

Ես պատրաստուում էի զղջմամբ և համբերութեամբ տանել այն պատիժը, որ նշանակելու էին և որին ես կատարելապէս արժանի էի զգում ինձ։ Ձայրոյթն հայր-սուրբի դէմ, ինձ հասցրած վիրաւորանքների համար, անցել էր արդէն, երբ հետևեալ առաւօտեան նա ինձ կանչեց իւր բնակարանը։ Հիւանդ-հիւանդ ես վերկացայ անկողնից և գնացի նորա մօտ։

Հայր-սուրբը քաղաքավարութեամբ, ժպիտն երեսին ընդունեց ինձ և նստեցրեց իւր մօտ, բազմոցի վերայ։ Նա հարցրեց առողջութեանս մասին, խորհուրդներ տուեց, պատուիրեց ծառային սուրճ բերել և ամեն կերպ աշխատում էր ցոյց տալ, իբր նախընթաց օրւայ դէպքը չէ պատահել։ Վերջապէս նա ասաց.

— Անշուշտ նեղացած կը լինէք ինձանից, աէր-հայր, երեկւայ բարկանալուս համար. բայց այդ ոչինչ, մոռացէք. մենք, որպէս հոգևորական, պէտք է իմանանք և բարկանալ և ներողամիտ լինել։

— Ես զգում եմ իմ յանցանքը, հայր-սուրբ, պատժեցէք ինչպէս կամենաք։

— Է՛հ, Տէր-հայր, ինչո՞ւ իսկոյն պատժի մասին խօսել. դուք լաւ գիտէք, որ պատիժը խիստ կարող է լինել. աւելի լաւ չի՞ լինիլ խօսանք այն բանի մասին, թէ ինչպէս մի կերպ ազատենք ձեզ այդ պատժից։ Հաւատացէք, որ ես բարեկամ եմ ձեզ. մի՞թէ ձեր աղ ու հացը կը մոռանամ ես։

— Այլ է աղ ու հացը և այլ է պաշտօնական գործը, նկատեցի ես։

— Չէ, ինչո՞ւ. բարեկամը բարեկամին պաշտօնական գործում էլ կարող է օգնել։ Եւ ինչ վնաս գորանից. ո՞ւմ օգուտ կը հասնի, եթէ դուք պատժւիք։ Հէր օրհնած, այդպիսի յանցանքներ են ծածկւում. թէ այս և այլ վիճակներում ոչ թէ կնքահայր ու սանիկ, այլ ամենամօտ ազգականներ են պահել, ամեն տեսակ կանոնազանցութիւններ են գործել, բայց ամեն ինչ ծածկւել, անցել, գնացել է։ Ինչո՞ւ, որովհետև քահանաները խելացի մարդիկ են եղել։ Ձեր արածը լոկ ձևական կանոնազանցութիւն է. սանիկին կնքահօր հետ պատկելու արգելքը, ճշմարիտ է, շատ առաջ ունեցել է նշանակութիւն. այս ես լսել եմ մի եպիսկոպոսից. նա ասում էր, որ քրիստոնէութեան առաջին դարերում շատ անգամ սանիկին յանձնում էին կըն-

քահօր խնամատարութեանը, որ իւր մօտ պահում էր սանիկին քրիստոնէական ուսումը նորան սովորեցնելու համար։ Բայց այժմ ձվ է տալիս սանիկին կնքահօրը... Վերջապէս, եթէ ուզում էք, ձեր գործածն իսկապէս մի յանցանք չէ, այնու ամենայնիւ նա խիստ պատժի է ենթարկւում մեր եկեղեցական կանոններով։ Այդ պատժից կարողէք ազատուել, եթէ կամենաք...

Հայր-սուրբը նայում էր ինձ վերայ սուր, դիտողական հայեացքով. նորա խօսքերը կրկին գրգռեցին զայրոյթս. ես սկսում էի հասկանալ, թէ ինչու է նա կանչել ինձ իւր մօտ։

— Կամենում էք, որ ես ձեզ ազատեմ պատժից, վճռողաբար պիտեց նա ինձ։

Ես լուռ էի, սակայն նա այլ կերպ հասկացաւ իմ լռութիւնս։

—Դուք բաղմաթիւ ընտանիք չունիք, Տէր-Հայր, շարունակեց Հայր-սուրբը մեղմութեամբ, իսկ արդիւնքը շատ. ինչու այդքան երկար էք մտածում, եթէ ձեր ունեցածից հազար մանէթ պակասի – մեծ կորուստ կունենաք. դա կազատէ ձեզ պատժից։

—Ի՞նչ հազար մանէթ, զուտացի ես ինքնամոռացութեան մէջ տեղից վեր կենալով, դուք ուզում էք, որ ես արծաթով քաւեմ իմ մեղքս, ուրեմն այդպէս էք հասկում եկեղեցական կանոնների ճիշդ գործադրութեան վերայ—ով փող տայ, չպատժւի, իսկ ով չտայ՝ պատժւի. ամօթէ, ամօթ, Հայր-սուրբ։

Բարկութիւնից դողդողալով ես հազիւ կարողացայ տունն հասնել։

Այդ օրից մի ամիս անցած, երբ ես նոր սկսել էի կազդուրել ծանր հիւանդութիւնից յետոյ՝ ինձ ուղարկեցին նախ Էջմիածին և ապա այս կողմերը...

Իմ ուխտս, պարոն, կատարւեց. ես տեսայ հայրենիքս, տեսայ նորա գեղեցիկ դաշտերը, լեռները, խմեցի նորա կաթնահամ աղբիւրների ջուրը, կարօտով համբուրեցի նորա հողը, նորա սըրբավայրերը, թէև բաղդի տարօրինակ բերմամբ այդ իմ հրաշագեղ հայրենիքը դարձաւ ինձ համար աքսորանքի տեղ...

VII

Տէր-Յարութիւնը լուեց։ Ես ևս ախուր, մտախոհ նայում էի դէպի ի վայր, դէպ ի լիճը։ Վաղուց բարձրացած արևը սփռում էր մեզ վերայ մի պիւրեկան ջերմութիւն. այդ երջանիկ աշխարհում մարդիկ չգիտեն ամարային արևի տապը։ Լճի անհուն տարածութիւնը, միայն հեռաւոր հազիւ տեսանելի լեռները, շողշողում էր, որպէս ոսկի։ Ժժւար էր նայել այդ աչք շլացնող փայլմանը։ Երբեմն այս ալիքների վերայ երևում էին վայրի սպիտակափայլ բադերի խմբեր, որոնք, նազանքով բաւականի տեղ լողալուց յետոյ, անյայտանում էին այնպէս անսպասելի կերպով, որպես երևացել էին։ Երբեմն ձուկ էր թռչում ջրի միջից դէպ ի վեր և մի վայրկեան արևի տակ փայլելով, կրկին ընկղմում լճի մէջ—իւր այդ լայն, ազատ, ապահով բնակավայրը։ Ամեն կողմից լսւում էին թռչունների պայլալիկներ. բայց օրը, օրը—օհ, այդքան քաղցր, այդքան անուշ օդ հազիւ թէ մի այլ աշխարհում կարելի լինի շնչել։ Ճշմարիտ որ դեղեցիկ էր աքսորական հայրենիքը։ Մենք վեր կացանք և անխօս վերադառնում էինք դէպ ի վանքը։ Ճանապարհին, ամեն մի քայլափոխում, մեզ հանդիպում էին գիւղացի երիտասարդներ, հարս ու աղջիկների խմբեր, որոնք բարձրացել էին լեռան գագաթը զբօսնելու և հինաւուրց տաճարները տեսնելու։ Այդ ուրախ զարդարած ուխտաւորների բազմութեան մէջ տարօրինակ տպաւորութիւն էր անում իւր ախուր դէմքով, իւր ցնցոտիներով ակամայ ուխտաւորը։

—Բայց ինչպէս է հիմա ձեր ընտանիքը. նամակ ստանում էք, հեռաքրքրուեցայ ես։

—Նամակ. կնոջից ինձ նամակ հարկաւոր չէ. նորա գերեզմանն ամեն օր իմ աչքիս առաջն է, ախրաձայն պատասխանեց քահանան։ Տեսնում էք այն գիւղը՝ Յամաքաբերդը. այնտեղ է նորա գերեզմանը։ Տարաբաղդ կինը—չկարողացաւ դիմանալ այն հոգեկան տանջանքներին, որոնք վիճակուեցան նորան վերջին տարիներս. նա տուն տեղ ծախել եկել էր ինձ տեսնելու և... փրկելու... բայց այդ ոչինչ. ախ, պարոն, աղջիկս, աղջիկս. ամբողջ մի տարի է ես նորանից ոչ մի նամակ, ոչ մի լուր չունիմ. արդեօք կենդանի

է, առիղ է, ունի հոգացող, առաջնորդող. նա երխտասարդ է և... և անտէր...

Քահանան սկսեց հեկեկալ։

VIII

Այդ իսկ երեկոյեան ես ճանապարհ ընկայ։ Մի ամբողջ շաբաթ ես բաղխում էի այն մարդկանց դռները, որոնց ձեռքին էր քահանայի բաղդը։ Ես լանդրում, ազաչում էի բաւական համարել Ծերունի քահանայի տանջանքը, խնայել անտէրունչ աղջկանը, բայց իզուր. ինձ չյաջողեց կարեկցութեան մի կայծ անգամ զարթեցնել նոցա մէջ։

ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ

ՄԱՆՍՆ ԵՐԿՐՈՐԴ [1]

IV

1870 թուականն է։ Այս թուականի սեպտեմբերին է սկսում իմ գործունէութիւնս ուսուցչական ասպարիզում։

Սարից որ իջանք գիւղ, ես գնացի քաղաք, յուսալով՝ որ Մակար սրբազանը կը կատարէ իր ուած խոստումը։ Գնացի մօտը, բայց ընդունելութեան մէջ մի տեսակ սառնութիւն և զգուշութիւն գտայ։

Երբ որ պատմեցի էջմիածնի բոլոր անցքերը և վերջումը չիշեցրի իր խոստումը,—այդ մասին կը խորհենք, ասաց։

Ինձանից յետոյ Մանկունին զօրեղացաւ, Մուշեղ քահ. հեռացնել ուեց իր պարանոցից, ընկերներիս սիրաշահեց։ Մի տարուց յետոյ Միքայէլին քահանայ ձեռնադրել ուեց և ուղարկեց իրանց գիւղը։ Նա այլ ևս չէր կարող մնալ էջմիածնում տկարութեան պատճառով։ Մովսէսը (Վարդանեան) մնաց իբրև պարանոցակտ, այդպէս էլ ամուսնացաւ։ Տպարանից մեծ աշխատանք չունեցաւ Մովսէսը, բայց յարմարութիւն ունեցաւ վերջին պատերազմի ժամանակ մի քանի օգտաւէտ կապալներ վերցնել, որից այնքան վաստակ ունեցաւ, որ կարողացաւ իր սեփական պարանը բանալ Թիֆլիսում։

---

[1] Տես մասն առաջին «Մուրճ» 1893 թ. № 4, 5, 6, 7-8, 9 և 10։

Ինձ առաջարկեցին գնալ Ափալլիա ուսուցչութեան, և ես էլ յանձն առայ։

Այդ ժամանակ մենք չունէինք աւանդելի առարկաների համար դասագրքեր, չունէինք մի որ և է օրինակելի և կարգին պլրոց, ամեն ինչ նոր էր սկսւում բոլանել այս ու այնտեղ։ Պատասուութեան համար ինձ ուրիչ չորս առարկայ՝ աշխարհագրութիւն, թուաբանութիւն, ազգային և ընդհանուր պատմութիւն։ Գիտութեան առարկաներն էլ սրանք էին, միացածը լեզուներ էին՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն, այլ և կրօն, երգեցողութիւն և վայելչագրութիւն։ Ուսուցչական ժողովներ չէին լինում, ոչ էլ ուսման ծրագիր ունէին։ Տեսուչը Վարդան Աբովեանցն էր, մի շատ ազնիւ և պատուական հայ, բայց իր պաշտօնին շատ անյարմար։

Շորս առարկան շատ շատ էր գործը նոր սկսող ուսուցչի համար, բայց ես ստիպուած էի վերցնել, որովհետև ուրիշ յանձն առնող չկար։ Ես պէտք է սովորածս նորից սովորէի, այն ևս ոչ թէ ինձ համար, այլ ուրիշներին նոյնը հաղորդելու համար պիւրին եղանակով։ Այս նախապատրաստութիւնը ինձանից շատ ժամանակ էր խլում, այլ ևս ազատ ժամանակ չէի ունենում, որ տեսնեմ ինչ են անում և ինչպէս են պատասխում իմ միւս պաշտօնակիցները։

Երբ որ իմ նախորոշած չափովն անցայ առարկաներըս, սկսեցի հրկնել, և այլ ևս դաս պատրաստելու կարիքութիւն չունէի. այնուհետև ազատ ժամերս նւիրեցի միւսների դասերի այցելութեանը աւելի նրա համար, որ ինձ համեմատ նրանց հետ, որովհետև վախենում էի, թէ մի գուցէ իբրև նոր ուսուցիչ՝ թոյլ լինեմ գտնուած և չեմ միացած փորձառու վարժապետներից։

Եւ ինչ տեսայ, Տէր իմ Աստուած... Հիմա էլ որ միտս է գալիս միտս սարսում, մազերս փշաքաղւում են։ Այցելութիւնս սկսեցի նախակրթարանից։ Այդ դասարանը բուն ուսումնարանի շէնքից անջատուած էր, ինչպէս անջատուած է լինում գոմը լաւ շէնքերից։ Եւ հէնց գոմի էլ նման էր արտաքուստ, իսկ ներքուստ նման էր խոզանոցի, երբ բազմաթիւ մեծ և փոքր խոզուկներ իրար պլխով ընկնելով՝ որը բրթբրթում է, որը խռխռկում, որը մրթմրթում է և որն էլ ճղատում, ճչում։ Անկարգ, անկանոն, ամեն մէկի ձեռ ին մի առանձին գիրք կամ տետրակ, իսկ վարժապետը մի տարեալ

վայրենի, իսկ և իսկ խոզաբաճ, մի երկայն ճիպոտ ձեռին մէկի գլխին էր խփում, միւսի ձեռներին։ Ինքը սարկաւագ էր, տէրտէրի հագուստով, երկայն հասակով ու մօրուքով և մի երկայն գլանաձև դուխաբորի գդակ էլ գլխին, որ դասի ժամանակ ևս չէր վերցնում, վախենալով, որ դատարկ գագաթը ճանճով չլցնուի։

Այս պատկերն ունէր ուսումնարանի կրթութեան արմատը, նրա օրօրոցը կամ բոյնը, որտեղ պիտի թևաւորուէին, որ կարողանային թռչել դասարանից դասարան և ոչ թէ խեղդուէին նոյն իսկ բնի մէջ, նոյն իսկ օրօրոցումը։ Այդտեղ պէտք էր սիրագորով մօր յատկութիւն և նրա նման անդադար կամքով լիքը սիրտ ունեցող մէկ դաստիարակ կամ դոնէ այդ գաղափարին մերձաւոր մի բան, այլ ոչ երբէք մի հրէշ։

Այս արմատից սկսած դէպի վեր բարձրանալով՝ ես հանդիպեցայ նորանոր հրէշների։ Ֆրանսերէնի ուսուցիչը շարունակ հարբած էր լինում և գլուխը կորցրած նոյն իսկ դասատան մէջ։ Ինչ օչխիններ և կատակներ ասես, որ աշակերտները չէին խաղում նրա գլխին։ Երբ որ ներս էի մտնում ես, իսկոյն թողում էին վարժապետին խաղացողները և շուտով իրանց տեղերում նստում սուս ու փուս, որ ես չտեսնեմ, բայց երեխան ինչպէս կարող է խաբել իրանից մեծին, եթէ նա խելքը գլխին մի մարդ է։ Մանկավարժի բնազդում, հոտառութիւն ունեցող ուսուցիչը կարող է նկատել և իր առջև չերևող բաները, իսկ երեցածի ամենախորին խորշերը թափանցել։ Բոլոր վարժապետների էլ դասատանդութեան մէջ չկար ոչ հնութիւն և ոչ նորութիւն, այլ մի այլանդակութիւն։ Ո՞վ է լսած կամ տեսած, օրինակ, այսպէս բան։ — Իմ ներկայութեան ժամանակ, ռուսաց լեզուի ուսուցիչը դասն սկսեց բառահարցութեամբ, թէ ռուսաց այս ինչ բառը ինչպէս պէտք է ասել հայերէն։ Աշակերտը մի քանի բառ ասեց ենթադրութեամբ, իսկ վարժապետը պահանջեց, որ նա իմանար։ Բայց որտեղից իմանար խեղճը, բոլոր լմացածն էլ մոռացաւ և ծնաց ապուշ կորած։ Բոլորն էլ ծնացել են սառած. ոչ ով իրաւունք չունի ասելու, որ ինքը գիտէ։ Այս վարժապետը միևնոյն ժամանակ և տեսուչ է, աշակերտները նրա իրաւունքից վախենում են և պատկառում։ Աշակերտը լուեց, վարժապետը նոյնպէս և այս տևեց մի ամբողջ ժամ, ամբողջ դասը։

Զանգը ուին և խեղճ աշակերտները այլ մտաւոր բանտարկութիւնից դուրս թռչան որ մի փոքր ազատ օդ շնչեն։

Դպրոցի բարոյական կողմը ուզես չուզես պէտք է ներդաշնակ լինի մտաւորին։ Մտաւոր կրթութիւն չեզած տեղը ինչ բարոյական կրթութիւն կարող է լինել։ Անկարգութիւն, կեղտոտութիւն, ստախօսութիւն, սահակութիւն, ափեղջփեղ գրւածներ զանազան խորշերում և բոլորն էլ ըստ այսմ...

*Այս բոլորը տեսնելուց յետոյ ես զարմացած էի մնացել, որ այսպիսի մի շրջանում իմ դասերի ժամանակ աշակերտներիս մէջ չէի նշմարում որ և է անուշադրութեան նշան, որ և է չարութիւն, ոչ մէկ անգամ չէր պատահում, որ բարկանամ մէկի վրայ, մինչեռ միւս դասարաններում վարժապետների ահռ ու դրըմփոցի ձայնը մինչև իմ դասարանն էր հասնում և իմ աշակերտների դէմքի վրա՝ նշմարում էի խուլ բողոքի արտայայտութիւն, կարծես ասում էինչ լսում էք, վարժապետ, պաշտպանեցէք մեզ, ազատեցէք մեզ այդ բարբարոսներից, մեր յոյսը ձեզ վրայ է, տեսէք մենք այնքան չարգում ենք ձեզ, որքան պատուում, ուրեմն մենք 'վատ աշակերտներ չենք, այլ մեր վարժապետներն են վատ... Ես կարմրում և սպրթնում էի այդպիսի րոպէներում, իմ ներքին յուզմունքն անցնում էր աշակերտներիս, որոնց մէջ կայծն բաւական չափահաս պատանիք և ընդունակ։ Ամենայն օր զգում էի, որ ինձանից մի բան անցնում էր նրանց, նրանց վարակիլը, նրանց աճելն ու զարգանալը շօշափելի և զգալի էր ինձ համար և ես դրանով մխիթարւած էի։ Ուրախ էի շատ, որ պատմութեան և թւաբանութեան դասերն իմ ձեռքս էին, մէկով ներշնչում էի նրանց մէջ իդէալական ձգտումներ, իսկ միւսով զարդացնում նրանց մէջ տրամաբանօրէն մտածել։ Իմ և աշակերտներիս մէջ եղած հոգեկցութիւնն ամուր էր, բնական, սրտանց և անկեղծ։ Մինչդեռ միւս վարժապետները իրանց դասարաններից դուրս էին գալիս պատժած և պատժուած, մաղձերը խառնուած, ունքերը կիտած, ես իմ աշակերտներիս հետ դուրս էինք գալիս մեր հոգու ամենալաւ տրամադրութեամբը։ Դասամիջոցին անգամ չէին ուզում դժլութել ինձանից, ուզում էին, որ իրանց հետ զբօսնեմ և զրոյց անեմ, ի հարկէ մեծերը միայն։ Տգէտ և անկիրթ ծնողաց զաւակները մի ասուածային պատիժ են իրանց ծնո-

գաց համար։ Մնողները այն կարող են հնձել, ինչ որ ցանել են, գանգատելու իրաւունք չունին։ Այս մի և նոյնը կարելի է ասել և վարժապետների համար։ Նրանք էլ ինչ որ ցանեն՝ այն կը հնձեն։ Աշակերտի անկարգութիւնը, անուշադրութիւնը, բթամտութիւնը և այլ շատ թերութիւնների հարիւրից 99-ը վարժապետի ուսածն է։

Ես մի յօդուած ունիմ գրած պատժի մասին և տպուած է «Ծըպրոց» ամսագրում։ Նրա մէջ պարզ ի պարզոյ ասած եմ, որ աշակերտի յանցանքը մեծ մասամբ վարժապետինն է. եթէ պէտք է պատժել աշակերտին, ապա նախ պէտք է պատժել վարժապետին, իսկ սրան էլ պատժելուց առաջ պէտք է պատժել տեսչին կամ հոգաբարձուին, որ յանցալից վարժապետներ է ուել անմեղ մանուկներին։

Ախալցխայում ես զղացի, որ կուշած եմ խարազանով սրբել, մաքրել մեր կրթութեան տաճարները բարոյական աւազակներից։ Այս ձգտումը իմ մէջ մինչև ծանոթութիւն հասաւ։

Այդ ժամանակ Ախլցխայի ցաչորդը Պարզեան Սուքիաս վարպետն էր։ Սա ուզենալով ուսուերէնից դասեր առնել ինձանից, առաջնորդարանում սենեակ ուաւ ինձ և սեղանակից արաւ իրան իբրև վարձատրութիւն իմ աշխատութեան համար։ Ինքն արդէն քաջ հայկաբան լինելով հեշտ էր ինձ համար համեմատական մեթոդով նրա ուշադրութիւնը դարձնել ղլխաւորապէս երկու լեզւի մէջ եղած քերականական տարբերութեան վրայ, որ ինչքան շատ է մեր աշխարհիկ լեզւի վերաբերմամբ, այնքան քիչ է գրաբառի հետ համեմատած։ Արդիւնքը հիանալի դուրս եկաւ։ Վերջերումս ասում էր, որ մի բան է թարգմանել և ինձ է նւիրել ի նշան երախտագիտութեան։ Այդ երախտագիտութեան հատատիքը ցայսօր դուրս չեկաւ, բայց ես հաւատում եմ, որ կարող է և դուրս գալ։

Շատ մօտիկ լինել ի Սուքիասին և յարգելով նրանից, ես պատմում էի դպրոցի թերութիւնները և յորդորում, որ նրա բարեկարգութեանը հոգ տանէ։ Նա ինձ յուսադրում էր, բայց ի զուր։ Վարժապետները կոպտած էին այնպիսի աղաների հետ, որ դուրս վռնդել ոչ ոք չէր կարող։ Իսկ աղաների հոգ չէր, որ ուսուցիչները անկարգ էն, իրանք այնտեղ զաւակ չունէին։ Կային հոգաբարձուներ, որոնց որդիքը նոյն դպրոցումն էին ուսանում, սրանք շատ էին ցանկանում դպրոցի բարեկարգութիւնը, բայց առևտրական և այլ կապեր

ունենալով ազանների հետ, չէին կարող ձայն հանել։ Աղայութեան մասին ես գաղափար չունէի։ այդ գաղափարը ես առաջին անգամ Սխալեխայումն առացայ քանի մի անգամ հիւրասիրելով ազանների տանը և տեսնելով նրանց տան նահապետին։ Այդտեղ միայն ես տեսայ ասիական ազայի տիպը։ Երևակայեցէք ձեզ մի ծայրայեղ սամադու բ, և կըսատանանք ասիացի ազայի տիպը։ Ազան պէտք է լինի մի կուռք, միայն խօսուն, և պէտք է խօսի՝ ինչպէս կը խօսէր կուռքը իր խորամանկ և գործին շատ հմուտ մի քուրմ, առանձին ձայնով և ոճով։ Բոլոր ներկայ եղողները միայն լուռնկ պէտք է ծխեն և զանազան վառաբանութիւններ անեն ձեռները սրտին դրած։ Պէտք է նայեն նրա աչք և ունքին, ունքերի սրտոտելու հետ պէտք է խոր տխրութեան մէջ ընկնեն, և նրա ժպտելու հետ՝ պէտք է քմհքմհ ինդան բարձրաձայն, և այլն և այլն և այլն։ Նա մի անմատչելի և անազորոյն բանակալ է և իր տան մէջ. ով կարող է նրա կամքի դէմ ոչ թէ մի բան ասել, այլ անգամ մտածել։ Սխալեխացոց ազայապաշտութիւնը մինչև անգամ վայրենութեան էր հասնում։ Առաջին քարը ես ձգեցի այդ հոտած լճի մէջ, լիճն սկսեց ալիքներ բարձրացնել և փոքր ինչ հովհարել։ Այս բանը պատահեց այսպէս։

Մէկ անգամ ինձ մօտիկ մի մարդ հարցրեց.

—Պարոն Աղայեանց, ինչպէս էք գանում մեր ուսումնարանը։

—Շատ վատ, պատասխանեցի կարճան։

—Ինչպէս թէ «շատ վատ», այդ ինչ էք ասում։

—Այո, շատ և շատ վատ, մի կատարեալ խոզանոց է։

—Իսկ մեր վարժապետները։

—Խոզեր են։

Իմ այս ասածը մի գունդ թթխմոր էր։ Բրանից շաղախեցին մի ահագին խմոր, որից թխեցին զանազան կարկանդակներ և ուտեցրին ժողովրդին։ Եթէ ես ինքն էի ասել, լսողներն աւելացրել էին հարիւրը, բոլորն էլ իմ անունից։ Այս բանը այնպէս մեծացաւ, ինչպէս գլորուող ձեռնագունդը, որից ահագին կոյտ շինելով՝ վերջումը մի հրէշի կերպարանք են տալիս վրան պոչ ու գլուխներ աւելցնելով։

Հոգաբարձուները տակն ու վրայ եղան իրանց նախագահի հետ,

կանչեցին տեսչին, որ անյապաղ մի ժողով կազմէ և սակայն ինձ, որ ես իմ ասածներս յետ առնեմ և ներողութիւն խնդրեմ։

Ժողովը կազմուեց. ներկայ էին բոլոր ուսուցիչները, ամենքն էլ միաձայն և միախորհուրդ, բացի մէկից, որ իմ կողմն էր։ Դա մի հայ-կաթոլիկ երիտասարդ էր, բայց մտաւորապէս աւելի լուսաւորչական էր, քան բուն լուսաւորչական վարժապետները։ Մի յառաջաբանով տեսուչը յայտնեց ժողովի նպատակը»։—Ժողովուրդը յուզուած է ասաց, որովհետև դպրոցի վարկը վայր են ձգել նրա աչքումը։ Տարաբաղդաբար մեզանից մէկն է արել այդ, և յատկապէս պ. Ազայեանցը։ Հոգաբարձութիւնը ցանկանում է, որ պ. Ազայեանցը յետ առնէ իր ասածները, եթէ իրաւ ինքն է ասել, իսկ եթէ ոչ՝ արդարանայ, ցոյց տայ, որ ինքն այդպէս բան ասած չէ, որ այդ բոլորը զրպարտութիւն է։ Հիմա խօսքը ձերն է, պ. Ազայեանց»։

—Շատ ուշ էք խօսք տալիս ինձ, պ. Աբովեանց։ Եթէ նախ քան այս ժողովը՝ կանչած լինէիք ինձ առանձին, ես ձեզ խորհուրդ կը տայի, որ ժողով չկազմէք, քանի որ ամբողջ տարին ոչ մի ժողով կազմած չէք։ Դուք գիտէք, որ քննութիւններն սկսում ենք և արդէն մէկ շաբաթից կը վերջանայ։ Քննութիւններից յետոյ՝ սուս ու փուս ինձ կը հեռացնէիք իբրև մի խռովարար մարդու, և ձեր գործը կը շարունակէիք ձեր ասածի պէս։ Իսկ հիմա ինչ ասեմ։ Ինչ որ դուք լսել էք, ես էլ եմ լսել։ Այնպէս բաներ են ասում, որ ես նոր եմ իմանում և ինքս չըգիտեմ նրանց սուտն ու ճշմարիտը, բայց այդ հրպետն ես ինքս եմ գցել, ես եմ վառել։

—Ուրեմն պէտք է յետ առնէք ձեր խօսքը, ձեր ասածը, որովհետև դուք անպատուել էք բոլոր վարժապետներին, վայր էք գցել սրանց վարկը ժողովրդի աչքում, պէտք է այս պարոններից ներողութիւն խնդրէք։

Այս վարժապետներն սկսեցին գանգատուել, թէ ինչ և ինչ եմ ասել իրանց, որին սրտիսկ մեղանում եմ ուել...

—Այո, այո, ասել եմ, ասացի և պատրաստ եմ ասածներս մի առ մի ապացուցանել, որովհետև, ձեր երեսին եմ ասում, ես ձեզ վարժապետ չեմ հնամարում, այլ որին ապուշ և որին պահիճ։

Եւ սկսեցի մէկ-մէկ նկարագրել ամենքին էլ։ Երբ հերթը հասաւ Ֆրանսերէնի ուսուցչին, նրան այնպէս ողողեցի, որ ամենքն էլ մռռա-

ցան իրանց սուացած հարուածները։ Մինչեւ ամէնքն էլ չափից դուրս բարկանում էին երբ նկարագրում էի, բողոքում էին, թէ սուտ է բոլորը զրպարտութիւն է, սա միայն բերանն էր ղնճռտում և իբրև մի թքամանի լուռ ու մունջ սեղաւորում էր իր գլխին բոլոր թուքս ու մաղձս։

—Դուք ասացէք, պարոններ, շարունակեցի ես, սա մնարդ է, ձնի արդեօք մարդկային պատուի նշան, եթէ ունի, թողկենայ և ապրած զարկէ ինձ, թող գոնէ բողոքէ, բայց սա մի վատահոտ միջատ է, մի բաղէտ, մի ճիճու ամենավատթար տեսակից... Կարող էք ասել, որ սուտ է ասածս։ Ձեր չանցանքը այն է միայն, որ չափից դուրս ոգեւ էք և բթամիտ, չըգիտէք, թէ ինչ է ուսուցումը. իսկ այս թշուառ արարածը եղել է Խալիպեան ուսումնարանում, այնտեղ որպէս թէ աւարտել է իր ուսումը և նրա անունով էլ մտել այստեղ, որ բարոյապէս ապականէ մեր ուսումնարանը։ Սրանից կարող էք դուշակել, թէ ոքպիսի հրէշներ է ուել մեզ Խալիպեան ուսումնարանը։

Տեսչին չընկարագրեցի, բայց նա տիպեց, որ իր մասին էլ յայտնեմ իմ կարծիքս, գիտէր, որ իր մասին ես վատ կարծիք չունեմ, մինչեւ անդամ մի առանձին սէր էի տածում դէպի ինքը ի պատիւ իր անմահ հօր։

—Դուք ինձ էլ չէք հաւանել, ասել էք, որ ես տեսչութեան անյարմար եմ։ Եթէ այդպէս է, հապա ինչո՞ւ են տուել ինձ այս վկայականները, նայեցէք, և քանիս են, տեսէք։ Այս ասելով վկայականները փռեց սեղանի վրայ, որոնցից շլացան վարժապետները և այնպիսի մի պիրք ցոյց տուին, որ երեւում էր, թէ իբր անհնարին էր դրանց դէմ մի բան ասել։

—Ինչո՞ւ ես ձեզ թողած՝ ձեր թղթերին պէտք է նայեմ, քանի դրեշով կառնեմ ես այդ թղթերը։ Ամենայետին առաքինաբոյժը դրանից շատ վկայականներ ունի։ Այդ թղթերը կարող են արդեօք տեսչութիւն անել։ Թլեթմ արդեօք ձեր պակասութիւնը իբրև տեսչի, և իբրև ուսուցչի։ Ահա ձեր տեսչութեան պատուհները՝ սրանք չեն արդեօք ձեր վարժապետները։ Երբ որ սրանց հաւանում և պաշտպանում էք, ձեռացածն ինքն լաւ ինքեան հասկանալի է։ Դուք բարի էք չափից դուրս, բայց անհոգ էք վերին աստիճանի։ Ձեր

սրտումը կրակ չըկայ, զուրկ էք ձեր հօր եւանդից, այնու ամենայնիւ, ես կը ցանկայի, որ Հայոց ազգը ոչ թէ ձեզ մանուկներ սար կրթելու, այլ թոշակ սար եւ վերակացութիւն մի որ եւ է պարոցում: Ձեր բարի վարք եւ բարքով դուք կարողէք բարի օրինակ լինել աշակերտաց համար, իսկ կառավարիչ լինել եւ այն՝ վերանորոգող, բարեկարգող կառավարիչ, դուք չէք կարող: Եթէ իմ մէջ այրող կրակից դէթ մի կայծ լինէր ձեր սրտում, դուք երկու ձեռքով կը գրկէիք ինձ, իսկոյն կը նկատէիք իմ ձգտումը եւ կաջակցէիք ինձ: Դուք հաշուում էք եղածի հետ, թէկուզ վատ լինի, իսկ ես եթէ հաշուէի եղածի հետ՝ այսօր վարժապետ չէի լինիլ եւ այսպիսի վարժապետներին անպէտք չէի համարիլ: Դուք ձեզ լոհեմ էք համարում, իսկ ինձ՝ անլոհեմ, ձեզ խաղաղասէր էք համարում, իսկ ինձ խռովարար: Ես այդ ընդունում եմ, բայց ընդունում եմ ոչ որպէս յանցանք կամ թերութիւն, այլ մեծ արժանաւորութիւն: Մեր ուսումնարանը ախոռ է, ինչո՞ւ, որովհետեւ վարժապետներն իրանց գործին հմուտ չեն, դասախարակի կոչում չունին, տեսուչն անընդունակ է, հոգաբարձուք հոգեբարձ են, իսկ այդ կարող է այդպէս չը լինել, կարող է անհամեմատ լաւ լինել, որովհետեւ նիւթական պակասութիւն չըկայ, հարկաւոր է միայն որ ժողովուրդն իմանայ եղածի վատութիւնը եւ լաւագունին ունենալու ցանկութիւն յայտնէ: Եթէ ժողովուրդը հաւատացել է իմ ասածին եւ պահանջում է, որ ուսումնարանը բարեկարգուի, փառք եւ պարծանք նրան, այդ գաղափար աւազին: Ես խռովարար չեմ, այլ ժողովրդի բարեկամ, մանուկ սերունդի կրթութեան պաշտպան, եւ յանուն այդ սուրբ գաղափարին ես բողոքում եմ իմ դէմ կազմած քո այս ժողովի դէմ:

Այս ասելուց յետոյ ես դուրս եկայ ժողովից...

Միւս օրը ժողովրդի իրարանցումը սաստկացաւ: Լսել էին, թէկին և ինչ եմ ասել ժողովում և մէկը սասը չինելով՝ հաղորդել էին միւսանց: Այդ ժամանակ քաղաքում էր և Յովակիմ Վեզաւեանցը: Ժողովրդի մէջ սա ինձ_էր պաշտպանում և ուրիշ կերպ էլ կարելի չէր: Սա դրում էր զանազան շարադրութիւններ և բերում ճշաս, որ ես քննադատում և մի ուղղութիւն սամ իրան: Երբ մի որ և է դրածի չէի հաւանում, նորից դրում էր ահագին սեւագիրներ և բերում իմ ուզածիս համեմատ դրած: Շտկելով իր դրածները մի և նոյն ժա-

մանակ աշխատում էի վարակել իմ գաղափարներով և դիտումներովս և իր մէջ ինքնագործունէութեան և յառաջ դնալու վստահութիւն էի ջրթեցնում։ Սա էլ էր եղել Խալիպեան ուսումնարանումը, բայց արտաքսել էր իրրև ըմբոստ աշակերտ։ Այս վիճակը նրան բարձրացրել էր աչքումը և ոչ թէ սոորացրել։ Ըմբոստ լինել Խալիպեան ուսումնարանում կը նշանակէ հակուած լինել դէպի լաւը։ Բայց որքան լաւ կը լինէր, որ նա այդ ուսումնարանում երբէք եղած չը լինէր։ Այսօր դա իր թերի կողմերի համար Խալիպեան ուսումնարանին է պարտական։

Հարցաքննութիւնները սկսեցին։ Ես լանգրիցի տեսչին, որ իմ առարկաներս առաջ դրի, որ շուտ հեռանամ և աղմուկներից ազատուեմ։ Նա յօժարութիւն ցոյց աւաւ և իմ դէմ չեզոք դիրք բռնեց։ Բայց վատահամբաւ ուսուցիչները իրանց բոլոր ազդականներով լնաժիններով և քաւորներով միացան, որ քննութեան ժամանակ շշկլեցնեն աշակերտներին, աշխատեն բանը այնպէս բերել, որ երևայ թէ ես ամենևին ոչինչ չեմ սովրեցրել, որ ես մի շառլատան եմ եղել, և ուրիշներին վայր դնելով ինձ եմ ուզել բարձրացնել, իմ թերութիւնները եմ ուզեցել ծածկել։ Այս բանն ինձ համար կեանքի և մահու խնդիր էր, հացից պիտի զրկուէին, եթէ չըկարողանային իմ վարկը ժողովրդի աչքում գցել։ Սրանք, ժողովրդի հոգսը քաշելով, բանի տեղ չէին դրել աշակերտներին, որոնք իմ քաջամարտիկ և անվեհեր գինուորներս էին։ Վրանցում կային ոչ միայն շատ ընդունակ, այլ բուսական խոշոր և ուժեղ ազգաք։ Սրանք երբոր իմացան, թէ իրանց վրայ մի արշաւանք պիտի լինի, մի ասպատակութիւն, թէ այդ բանին յօժար են նոյն իսկ տեսուչն և յաջորդը, երբ տեսան վերջապէս իմ յուզած և վրդոված լինելս, եկան ինձ միամտաբրին, ասելով՝

—Վարժապետ, դուք բոլորովին անհոգ եղէք, բնաւ չըվրդովուիք, մենք ձեր գասերն այնպէս գիտենք, որ մեզ չեն կարող շփոթել, մանաւանդ որ այդ դատիճները ձեր ոչ մի առարկայի հոտն անգամ առած չունին, ինչ գիտեն, որ ինչ հարցնեն։ Բայց մենք դրանց աւելի լաւ կը պատժենք, իրանց գասերի հարցաքննութեան

ժամանակ կարող ենք ասել՝ ինչ ենք սովորել, որ ինչ պատասխան տանք. «հէչ բան մ'ալ չիյտենք»...

—Ո՛չ, ասացի, այդպէս բան չըպէտք է անէք, դուք չըպէտք է հետևիք դրանց չարութեանը։

Այս յառաջագէմ աշակերտներից էր Սահման Մալխասեանը։ Երբ որ ամեն կողմից յարձակուեցին սրա վրայ, դեռ մէկին չըպատասխանած միւսն էր հարցնում, միւս կողմից երրորդը, չորրորդը, սա իրան չըկորցրեց և մի այնպիսի պաշտպանողական դիրք բռնեց, ինչպէս մարդ բռնում է մէջքը մի պատի դէմ տալով, երբ վրան յարձակւում են մի խումբ կծոտողներ։

—Պատասեցէք, պարոններ, ասաց, ես ձեզ ամենքիդ էլ պէտք է պատասխան տամ, որ չասէք, թէ չըկարաց պատասխանել. միայն թոյլ տէք, որ նախ մէկին պատասխան տամ, յետոյ միւսին։

—Այո, այո, գոչեց ժողովուրդը, ձեզ ոմ է հարցաքննիչ նշանակել, ինչո՞ւ չէք թոյլ տալիս, որ ինքը վարժապետը հարցաքննէ։

Ես, տեսնելով, որ աւելորդ եմ իբրև հարցաքննող, վեր կացայ տեղիցս և գնացի հարցաքննուող աշակերտների վերջին նստարանի վրայ նստեցի, ասելով ժողովրդին՝—Ահա ես և մանկունք իմ, քննեցէք, ինչպէս պիտէք։

Հակառակորդներս իրանք պլորւեցին ինձ համար փորած հորի մէջ, խայտառակուելով թէ ժողովրդի և թէ աշակերտների առջև։

Վրդովմունք բարձրացաւ քաղաքացոց մէջ, որոնք կարծես մի առիթի էին սպասում։ Հաւաքուեցին պրն. Պատղեհանցի տանը, ինձ էլ հրաւիրեցին այնտեղ, շնորհակալութիւն յայտնեցին, և խնդրեցին որ ես չըհեռանամ։

—Մենք կարձակենք, ասացին, բոլոր վարժապետներին էլ, հոգաբարձուներին էլ, տեսչին և յաչորդին էլ։ Դուք կազմեցէք ձեր ուզած խումբը և բարեկարգեցէք մեր դպրոցները։

—Շնորհակալ եմ, ասացի, ձեր համակրութեան համար, բայց ընդունել ձեր առաջարկութիւնը՝ չեմ կարող։ Այստեղ կայ մի գործ ոչ, որի տակ ընկճած էք դուք, և թէև այսօր ոտքի էք կանգնել, բայց վաղը պարձեալ կընկճուիք։ Իմ հոգսը դուք մի քաշէք. ես հէնց այսօր հեռագիր տուացայ Ալէքսանդրապոլից, ուր հրաւիրում են ինձ ուսուցչութեան։

Յոյդ սըբի Աբեռիքիոս (Բաբայեանց) ստացած հեռագիրը, որից առել յուզեցին և յորդորեցին ինձ Ճնալ, բայց ես Ճնալ չէի կարող, որովհետև այդ կընշանակէր կեանքս ու պատիւս վտանգի տակ դնել։

Այստեղ միջանկեալ ասեմ, որ այս դէպքից տասը տարի անցած՝ ես կրկին գնացի Ալաչկա, և այս անգամ ոչ իբրև հասարակ ուսուցիչ, այլ իբրև Թեմական վերատեսուչ։ Տասը տարւայ մէջ դըպրոցները մասամբ բարեկարգւել էին, բայց ժողովուրդը դարձեալ գոհ չէր ոչ հոգաբարձուներից և ոչ ուսուցչական խմբից։ Մի բողքագիր սըբին ինձ խուռն բազմութեամբ։ Յիշեցնում էին շատ տարի առաջ իմ արած պահանջներս, և հիմա իրանք էին պահանջում, որ ի կատար ածեմ նոյնը։ Ես խաղաղացրի դրգռւած խնդրատուներին, ասելով.

—Այն ժամանակ ես միայն քանդում էի, իմ հոգսը չէր թէ ով պէտք է շինէ, բայց որովհետև այժմ ես պէտք է լինեմ շինողը, ուստի խնդրում եմ ինձ ժամանակ տաք, որ տեսնեմ ինչ կայ շինելու։

Եւ ես շինեցի, ինչքան հնարաւոր էր. բայց մի տարի միայն անցած Հ. Խորէն Ստեփանէն նշանակւեց 'յաջորդ' միաբանակից նաև տեսուչ ուսումնարանների, Թեմական տեսչից անկախ, և նա փոխեց, փոփոխեց ամեն ինչ։

Ալաչկայից հեռացայ ես 1871 Թւականի ամառը։ Վերջ գալիս բոլոր աշակերտները եռևիցս ընկան երգելով տխուր երգեր։ Յաջորդի տան մօտով անցնելիս ահագին աղմուկ բարձրացրին և ցոյցեր արին, որ իմ կամքիցս դուրս էր։ Պատահմամբ այդտեղ գտնւեց և Ալէքսանդրապոլի դպրոցների հոգաբարձու Զիլիծողցոնց Պետրոս աղան, որ ախալցխացոց բարկացնելու համար ասել էր. «Ձեզի համար դեռ վաղ է լաւ վարժապետներ ունենալը, դա մեզի կը վայելի»։

Յիրաւի Ախալցխայի աղաները սովոր էին հին խալֆաներին, որոնք պէտք է լինէին իրանց չիբուխչին, ղահւէչին, միմոսը, շողոքորթը, լրտեան ու կաւատը։ Իրանց շնորհքը պէտք է ցոյց տային իրանց տէրերի համար ուղերձներ գրելով, իսկ նրանց հակառակորդների վրայ պարսաւանք և երգիծանք։ Խալֆաների այս տիպը շարունակում է գոյութիւն ունենալ այժմ մեր գրականութեան մէջ։

Էջմիածնի և Ախալցխայի անցքերից յետոյ ինձ այլևս ոչ մի տեղ չէին ընդունիլ՝ համարելով խռովարար, բայց իմ բախտից Ալէքսանդրապոլ հրաւիրողը Աւետիք Բաբայեանցն էր, որ շատ լաւ էր իմանում, թէ ինչ է իմ ուզածը։ Այս հանգամանքն արժանի է ուշադրութեան, և ես ուզում եմ հետևեալ գլուխը նուիրել այս խնդրի պարզաբանութեան։

VI

Մեր մտաւոր վերածնութեան առաջին կարապետները Կոստանդնուպոլսի համալսարանի հայ ուսանողներն էին։ Սրանց յաջորդեցին Պետերբուրգի հայ ուսանողները։ Պետերբուրգի մտաւոր յեղափոխութեան շրջանում զարգացած հայ ուսանողութեան մի տուար մասը հայրենիք վերադառնալով՝ անկախ գիրք բռնեց և հասարակական գործունէութեան նուիրուեց։ Մարտիրոս Սիմէոնեանցը մտաւ երախեան դպրոց, այնտեղից էլ ձեմարան. Ռուբէն Զալալեանցը գնաց Ագուլիս ուսուցչութեան, յետոյ եկաւ Թիֆլիս հիւանդոց բաց արաւ, որ մի տեսակ կլուբ դարձաւ ժամանակակից երիտասարդութեան համար. Զաքարիայ Կրիգորեանցը դրախտութեան բաց արաւ և մի և նոյն ժամանակ Գայլանեան ուսումնարանի հիմնադիրներից և ուսուցիչներից մէկը դարձաւ. Կէորգ Եւանդուլեանցն ձգտում էր ամենքի մեծարը դառնալ. Սենեքերիմ Արծրունին «Մեղու» վերանորոգներից մէկը դարձաւ և Գ. Արծրունու ախոյեանը հանդիսացաւ. Գ. Արծրունին «Մշակը» հիմնեց և Մեղուական խմբի դէմ պարզեց իր դրոշակը։ Գաւառներում ցրուածներն էլ իրանց շրջանում հասարակական գործունէութեան նուիրեցին։ Սրանցից մէկն էր ահա և Աւետիք Բաբայեանց, որ Ալէքսանդրապոլի դպրոցական գործի գլուխն անցաւ։

Սոյն այս խումբը պետք ևս Պետերբուրգում ունէր իր ապագայ գործունէութեան ձգտումը։ Այնտեղ դասադրքեր պատրաստելու հոգս էին քաշում, յօրինում և թարգմանում էին. հետևում էին կրթական գործին, ուխտում էին ծառայել ազգի մտաւոր և բարոյական զարգացմանը վոխադարձ ձեռնտուութեամբ։ Ա. Բաբայեանցը գնաց ուսանող ժամանակ ձգտումն ունէր դառնալ բժիշկ-մանկավարժ։ Նա իր ազատ ժամերի մի մասը նուիրել էր դաստիարակչական գրքածների ուսումնասիրութեան։ Բայց յետոյ այս բաժինն իր ամուսնուն

յառկացրեց, տալով նրան ամենալաւ կրթութիւն, որից յետոյ նա դարձաւ մեր մէջ մանկական անդրանիկ պատրիզպանուհին, որ իր լայն նախագիծը չկարողացաւ ի կատար ածել իրանից անկախ պատճառով:

Ես ևս՝ դեռ Պետերբուրգում՝ սեր ձգեցի մանկավարժութեան վրայ ու մանաւորապէս այդ նորաձիլ ու թարմ գրականութեանը նախրեցի: Այդ գրականութիւնը իմ հայեացքների մէջ ահագին յեղափոխութիւն ձգեց, ամեն բանի վրայ ես սկսեցի նայել բարոյակրթական տեսակէտից, որով իմ վիպական գրածներս անգամ սասան այդ դրոշմը: Նոր էին դուրս գալիս մին մինի հետևից Ֆրեոբելի, Պեստալոցցու, Դիստերվեգի, Բէհրի թարգմանութիւնները և ուրիշ մանկավարժների ինքնուրոյն գրածները: «Ուչիտել» (ուսուցիչ) պարբերական թերթը կարդում էինք ամենայն սիրով և հետաքրքրութեամբ, մանաւանդ նրա մանկական դասերը զանազան առարկաներից: Աւետիքը թարգմանում էր Մեծ-պապի թուաբանութիւնը ամենափոքր մանուկների համար, և այդ մեկ լաւ առիթ էր, որ փոքրերի մտածողութեան աշխարհը լաւ ուսումնասիրենք: Եւ ինչքան նորանոր հոգեբանական դիտեր էինք տնում, որոնք սակայն շատ հետաքրքրական էին լինում, ինչպես ստուգում էինք յետոյ: Բայց սրանով մեր գիտի արժանաւորութիւնը չէր պակասում, ընդհակառակը՝ աւելի ևս բարձրանում էր, երբ տեսնում էինք, որ նոյն նկատողութիւնն արել են աւելի նշանաւոր հեղինակներ: Պէտք է գիտենալ սակայն, որ այլ է մտածելը և այլ՝ ձևակերպել և մարմնացնել մտածածդ: Մենք կարող ենք նոյն իսկ Գոեթէի և Շիլլերի պէս մտածել, այսինքն նրանց հայեացքներն ունենալ, բայց չկարողանալ մեր մտածածները, մեր զգացածները, մեր ստացած տպաւորութիւնները նրանց պէս ձևակերպել, պատկերացնել, հեղինակել, վիպասանել, բանաստեղծել, մի նկարչական յօրինուածք շինել: Ամենայն յօրինուածք պահանջում է յայտնի չափով տաղանդ: Կեանքի պատկերներն ամենքս ենք տեսնում, բայց միայն տաղանդաւոր նկարիչն է կարողանում նոյնը պատատի վրայ պատկերացնել:

Երկար ժամանակ ևս չէի խոստովանում տաղանդ ասած բանի գոյութիւնը: Պիսերևն և նմանիք՝ այդ բանը չէին ընդունում, ես էլ հաւատում էի: Բեռլը չէր ընդունում յատկութիւնների ժառան-

գականութիւնը, ես էլ ինձ իրաւունք չէի համարում չընդհատել, բայց յետոյ այդ խնդիրը շատ արծարծուեց և պարզուեց այնպէս, որ եթէ Բնօքլը ողջ մնար, կը խոստովանէր իր սխալը։ Սրա պատճառն այն էր, որ բնական գիտութիւնները դեռ նոր էին ծլում և ծաղկում։ Համալսարանի բնական պատմութեան բաժնի ուսանողները ոչ մի մտաւոր մնունդ չէին ստանում, այժմեան գիտութիւնը չըկար։ Վարուին, Ֆոխտ, Հել՛հոլց և ուրիշ շատերը նոր էին ծանօթացուում ուսում դրականութեան մէջ և այն էլ ոչ ամբողջապէս, այլ քաղուածքով միայն կամ կատր-կատր, իսկ այդ կտորները կուլ էինք տալիս հում-հում։ Մեր մտաւոր պաշարը ճոխանում էր գրականութեան հետ ձեռք ձեռքի ուած։ Մանկավարժութիւնն էս դեռ մի մշակուած սիստեմ չունէր։ Ամեն ոք ինքը պէտք է շինէր մի ամբողջութիւն, ցրուած նիւթերից մի շէնք շինելով։ Բայց մէկի շինած շէնքը միւսի համար պիտանի չէր։ Որ և է սիստեմի կուրօրէն հետևողները սովորաբար զուրկ են լինում ինքնուրոյն մտաւոր գործունէութիւնից, որովհետև սիստեմի տակ ընկած մանկավարժութիւնը մասնաւոր աղանդի կերպարանք է ստանում, քարանում է և աճելութիւնից զրկուում։ Մանկավարժական ասպարիզում ինձ վիճակուեց երկու իրարից տարբեր ուղղութեան դէմ պատերազմել—մի կողմից խալխիայականի և միւս կողմից կաթոլիկ հետևողների և թարգմանողների։ Այս ակնարկութիւնս կը պարզի հետևեալ գլուխներում։ այժմ թողնենք այս և երթանք Ալէքսանդրապոլ։

(Կը շարունակուի)

ՏԻԿԻՆ Ն. Ն.-ԻՆ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Ձեմ նվիրում ձեզ ոսկեզօծած
Թանգագին գարդեր,
Ո՛չ թառամող խնամքով փնջած
Մայիսեան վարդեր.
Ձեմ նվիրում ձեզ, աչքեր գրաւող
Գոհարեայ ակներ,
Որ երփներանգ ճաճանչը շող-շող
Ձեր կրծքին փայլեր,
Այլ նվիրում եմ անմահ Րաֆֆիի
«Խենթ, Ջալալէդդին»
Ահա, ձեզ շո՛ւտ գոհարների
Մի աշխարհ անգին.
Թող նորա լոյսը թափանցէ ձեր կուրծք
Ապրելու յոյսով,
Դուք առաչնորդուեք նորա ասպետի
Կենսատու լոյսով.
Եւ այն աշխարհը, որին կո՛չում եմ
«Խենթ-Ջալալէդդին»,
Թողնել իբր առանց ես ցանկանում եմ
Գալոցդ սերնդին։

Մարտի 29-ին, 1892 թ.

ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ

Ժամանակակիցց վէպ Հէնրիկ Սենկևիչի

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

(Շարունակութիւն [1])

30 յուլիսի.

Երկու շաբաթ կը լինի, ինչ յիշատակարանիս երեսը չեմ նայել։ Կրոմիցկու հետ դործով վիճենա դնացինք, յետոյ նա էլի երեք օր մնաց Գաշտէյնում, իսկ դրանից յետոյ գլուխս այնպէս սաստիկ ցաւում էր, որ անկարող էի գրիչ ձեռք վեր առնել։ Պանի Յելինայի բժշկութիւնը վերջացել է սրանից մօտ երկու շաբաթ առաջ, բայց մենք դեռ մնում ենք այստեղ, որովհետև ներքևում՝ դաշտավայրում այրող շոգեր են անում։ Կրոմիցկու գնալը մեծ թեթևութիւն պատճառեց ինձ, պանի Յելինային (եթէ նա պանի Յելինայի փեսան չլիներ, վերջինս նրան տանել չէր կարող), Հօրաքրոջս և գուցէ և Անելկային։ Անելկան չի կարողանում նրան ներել, որ նա ինձ խառնեց իւր գործերի մէջ, իսկ Կրոմիցկին, որ ամենևին չի գուշակում, թէ իմ ու իւր կնոջ մէջ, բացի սովորական ազգականական յարաբերութիւններից, կարող է և մի ուրիշ բան լինել, իւր փոխադարձութիւնը գաղտնիք չի պահում։ Դժւար է ասել, թէ

[1]) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1—12, 1893 թ. № 1, 2, 6 և 7—8։

որքան զզելի է այս փոխառութիւնը Անելկայի համար, բայց այդ ուղղակի Կրոմիցկու երեսին ասել նա չէր համարձակում։ Կրոմիցկին դրանից յետոյ էլ կարող էր թողնել նրան հօրաքրոջս մօտ, իսկ այդ կը ջնջէր Անելկայի սրտից մոլորութեան վերջին նշոյլը, որով նա ինքն իրան խաբում է։ Մէկ-մէկ մտքովս անցնում է, որ թէ Անելկան և թէ պանի Յելինան առանց իրար լոյս ընկնելու, նրան մի մազաչափ անգամ չեն հաւատում Գլուխովը ծախելուց յետոյ, և իրանց սրտի խորքում նրան աւելի վատ են համարում, քան նա իրօք է։ Իմ կարծիքով նախ և առաջ Կրոմիցկին իւր հոգով ու սրտով մի տեսակ նորելուկ է չոր ու ցամաք բնաւորութեամբ, որ անընդունակ է նուրբ բաներ հասկանալու։ Նրա հոգին զուրկ է բոլորովին մեծահոգութիւնից ու ողբազգացութիւնից, բայց բաւիս սովորական հասարակօրէն ընդունած նշանակութեամբ նա այնու ամենայնիւ կարգին մարդ է։ Այդ բանում նրան օգնում է բնածին պերճանութիւնը, որ նրա մէջ տարօրինակ կերպով միացած է դրամական նեւրոզի հետ, իսկ նրա նեւրոզը ոչ այլ ինչ է, եթէ ոչ խանգարուած երևակայութիւն, որ այդ ձևն է ընդունել նրա մէջ։

Ընդհանրապէս ասած նա ինձ այն աստիճան անտանելի ու տեսելի է իւր մոնոկլով, շիլ աչքերով, երկար ոտներով և գլխին ու անմազ երեսով, որ զարմանում եմ, թէ ինչպէս եմ կարողանում նրա մասին օբեկտիւ կերպով դատել։

Եթէ նա իւր բոլոր ունեցած-չունեցածը չկորցնի, իմ փողերս էլ չեն կորչի։ Բայց չեմ ծածկում, որ աւելի կը գերադասէի, որ նա կորցնէր թէ փող, թէ խելք, թէ կեանք և միանգամ ընդ միշտ չքանար։

Ես հիւանդ եմ։ Անելկային վերջին օրերը սակաւ եմ տեսնում։ Ինձ վերևում պահողը մասամբ գլխացաւս էր, մասամբ էլ դիտմամբ չէի ուզում նրան պատահեմ, որ նրան զգացնել տամ, թէ ինչքան բարկացած եմ իրա վրայ ու վիրաւորուած իրանից։ Իսկ այդ ինձ վրայ արժան չէր նատում, որովհետև նա իմ աչքերիս համար նոյնքան անհրաժեշտ է, որքան ցերեկուայ լոյսը։ Արդէն գրել եմ, որ չնայելով իւր անպղտոզդ բնաւորութեան, նա երկչոտ է։ Նա ուղղակի չի կարողանում տանել, երբ մէկը իւր վրայ բարկանում է, վախենում է այդ բանից և աշխատում է շահել բարկացողի սիրտը։

Այդ ժամանակ նա քաղցրանում ու հեզանում է ու այնպէս է նայում մարդու աչքերին, ինչպէս պատաժից վախեցող երեխայ։

Այդ ինձ միշտ սաստիկ յուզել է, բայց միևնոյն ժամանակ և մեծ բաւականութիւն պատճառել. ինքս ինձ խաբում էի այն հնարագրութեամբ, որ հէնց որ զիրկս բաց անեմ, նա իսկոյն կընկնի զիրկս և գլուխը կը խոնարհեցնի կրծքիս թէկուզ նրա համար, որ մեղմացնի բարկութիւնս։ Չեմ կարողանում թողնել այդ մոլորութիւններըս, և թէև գիտեմ, որ ապագան նրանց անշուշտ ցիր ու ցան կանի, էլի սրտիս խորքում մնում է մի յոյս, որ երբ մենք հաշուենք, դրանից մի բան դուրս կը գայ,—նա ինձ որ և է զիջում կանի ու ուրիշ կը մօտենայ ինձ։ Միւս կողմից այդ փոխադարձ անբաւականութեան մէջ տեսնում եմ Անելկայի կարծես թէ մի տեսակ ակամայ խոստովանութիւնը, թէ ես իրաւունք ունեմ իրան սիրելու։ Եթէ նա ընդունում է սիրուց յառաջացած վիրաւորանքը, ուրեմն պէտք է ընդունի և նոյն ինքը սէրը։ Սենք այդ իրաւունքները անըմբռնելի են, ինչպէս երազ, չունեն ոչ մարմին, ոչ արիւն, բայց ես դրանցով եմ պատասխարում լիակատար անզգայութեան դէմ, դրանցով եմ ապրում։

2 օգոստոսի.

Վարձեալ կլարայից նամակ ստացայ։ Զլինի նա մի բան է կասկածում։ Այնքան քնքշութիւն կայ նրա նամակի մէջ, այնքան կարեկցութիւն կայ նրա խօսքերի մէջ, որ կարծես թէ նրան յայտնի լինի, թէ ինչ ասիճան վատ է դրութիւնս։ Զգիտեմ և չեմ էլ ուզում իմանալ, արդեօք սիրում է նա ինձ իբրև քոյր թէ ուրիշ կերպ, բայց զգում եմ, որ նա սիրում է ինձ սաստիկ։ Պատասխանեցի նրան այնքան սրտանց, որքան կարող է սրտանց պատասխանել անբախտ մարդը իւր միակ կարեկիցից բարեկամին նամակ գրելիս։ Կլարան ուզում է գալ Բերլին, իսկ ձմեռայ սկզբին Վարշաւա։ Ինձ էլ յորդորում է, որ Բերլին գնամ, գոնէ երկու օրով։ Ես չեմ գնայ, որովհետև չեմ կարող անջատուել այն բանից, որ տանջում է ինձ, բայց ուրախ կը լինեմ տեսնել նրան Վարշաւայում։

Անելկայի հետ խօսում ենք միայն ընթացիկ գործերի մասին, որ հօրաքրոջս ու պանի Յելինայի ուշադրութիւնը չդարձնենք մեր

մէջ ծագած սառնութեան վրայ։ Երբ միայն ենք լինում, լռում ենք. նկատեցի, որ նա մի քանի անգամ ուզում էր հետս խօսել, բայց երկչոտութիւնից բերանը չէր բացւում, իսկ ես միայն մի խօսք կարող եմ ասել՝ սիրում եմ, բայց այդ խօսքը այնքան թոյլ է արտայայտում իմ զգացածը, որ չարժի նրան գործ անել։ Այժմ սէրիս հետ խառնել է և որոշ ատելութիւն։ Ինձ միշտ մաշում է այն միտքը, որ Աստուած նրան նեղ սիրտ է տուել և հէնց այդ է նրա անյողդողդ լինելու բուն պատճառը։ Այսօր ուելի հանդիստ եմ մտածում ամեն բանի մասին և էլի գալիս եմ այն համոզման, որ Անելկան դէպի ինձ պէտք է զգալիս լինի մի բան, որ բաղկացած է շնորհակալութիւնից, անցեալի յիշողութիւնից. բայց այդ զգացմունքի մէջ չկայ գործունեայ ոյժ, նա ոչ մի վճռողական բան չի կարող անել, անկարող է անգամ խոստովանել իւր դոյութիւնը։ Այդ զգայմունքը չունի յարգանք դէպի ինքը, ինքն իրան չարիք է համարում, ինքն իրանից ամաչում է, ծածկւում է, և իմ զգացմունքի համեմատութեամբ երևում է իբրև մանանեխի մի հատիկ Ալպեան լեռների դիմաց, որ այժմ շրջապատում են մեզ։ Անելկայից կարելի է սպասել, որ նա ուելի շուտ ամեն բան կանի ապահմանափակելու քան թէ զարգացնելու համար այդ զգացմունքը։ Ես ոչ սպասում եմ նրանից մի բան ստանալու և ոչ էլ ցոյս ունեմ թէ կը ստանամ, և ինչքան անտանելի է դարձնում դրութեան այդ համոզումը։

4 օգոստոսի։

Մի ժամանակ սրտիս խորքում յոյս էի տածում, որ Անելկան մարդու վրայ ունեցած զայրոյթի ազդեցութեան տակ կը գայ ինձ մօտ ու կասի. «Դու իմ փոխարէն վճարել ես... ահա ես»։ Նոր յուսախաբութիւն։ Կարելի է այսպէս վարուէին տաք-գլուխ կանայք, որ սնած են Ֆրանսիական ռոմաններով, այսպէս կը վարուէր անշուշտ ամեն կին, որ գազանի ցանկութիւն ունի ընկնելու սիրեկանի գիրկը և միայն յարմար ատիթի է սպասում։ Չէ, Անելկան այդ բանը չի անի. մինչդեռ ես անել եմ կեղծ դրամների ընթերցանութեամբ, դրամների, որոնք կատարում են այն կանանց սրտում, որոնք ոտից մինչև գլուխ լիքն են իրանց պատիւը քամուն տալու ցան-

կութեամբ։ Անելիային կարող էր իմ դերկը գցել միայն սիրալը, բայց ոչ շինծու դրամանդ, ոչ ֆրազներըդ. ոչ, կեղծ յուզմունքներըդ այդ չեն կարող անել։ Անկարելի բանէ, որ այդպէս պատահի։

Մեծ անբախտութիւն է անկեղծ ու խորը ուրիշի կնոջ սիրել, թէկուզ լինի նա ամենահասարակ, ամենաողորմելի մարդու կին, բայց առաքինի կնոջ սիրելուց աւելի մեծ դժբախտութիւն չկայ։ Իմ և Անելիայի յարաբերութիւնների մէջ կայ մի բան, որի մասին ես երբէք ոչ լսել եմ և ոչ կարդացել, այդ՝ որ և է ելքի, որ և է վախճանի անհնարութիւնն է։ Որ և է վախճանը—լինի նա ազէտալի վախճան թէ մարդկային իղձերի պսակումն—էլի մի բան է, իսկ այժմ մի սարսափելի կախարդած շրջան է միայն։ Եթէ նա ինձ այնպէս, ինչպէս որ է, իսկ ես չպաշարեմ նրան սիրելուց, դրա հետևանքը կը լինի միայն տանջանք և տանջանք—և ուրիշ ոչինչ։ Իսկ ես յուսահատ կերպով համոզուած եմ, որ նա մինչև վերջը կը տանի—ես էլ նոյնպէս։

Նրա համար, եթէ չիրաւի նա փոքր սրտի տէր է, այդ ծանր չի լինի։ Շատ անգամ եմ ուզել դէն գցել վրայիցս այդ լուծը, բայց չեմ կարողանում։ Շատ անգամ եմ ինձ ու. ինձ կրկնել, թէ այդ հարկաւոր է, շատ անգամ եմ ճիգ գործ դրել, ինչպէս խեղդուող մարդը գործ է դնում ազատուելու համար, շատ անգամ է ինձ թուացել, թէ հասել եմ մի հետևանքի, բայց բաւական է եղել նրան լուսամուտից տեսնեմ, աչքերով ընդգրկեմ, որ այնպէս յուզումն ղգամ, որից իսկոյն ղգացմունքիս ամբողջ անտեսանելի խորութիւնը բացուում է աչքերիս առաջ, ինչպէս որ դիշերը որոտի ժամանակ կայծակը պատառոտում է խաւարը։

Օ՛հ, ինչ մեծ տանջանք է, երբ մարդ գործ է ունենում սառը ու անողոք առաքինութեան հետ, ինչպէս օրէնքի տառը։

Բայց էթէ Անելկան բոլորովին անսիրտ լինէր, ես էլի կը սիրէի նրան, ինչպէս կը սիրէի իմ մին ու ճար երեխային, եթէ նա հրէշ լինէր անգամ։

Այդպիսի դէպքերում մարդ աւելի է զութ ունենում և աւելի է տանջւում։

5 օգոստոսի.

Ինչ անպէտք ու ողորմելի չափս է խելքը, երբ հարկէ լինում նրանով չափել կամ շատ մեծ, կամ հանճարեղ և կամ ահռելի բաներ: Խելքը, որ այնքան լաւ ծառայում է կեանքի սովորական պայմաններում, այդ ժամանակ Պոլոնիոսի պէս ծերացած միմոս է դառնում: Ինձ թւում է, որ շինական բարոյագիտութիւնը հաւատար կերպով չի կարող ծառայել իբրև չափս բարձր զգացմունքների համար: Տեսնել այդպիսի բացառիկ, այդպիսի անհուն զգացմունքի մէջ, ինչպէս որ իմս է, միայն այս ինչ ու այն ինչ յօդուածների խախտումն և ուրիշ ոչինչ, չտեսնել, որ այդ մի ոյժ է, մի մասը այն մեծ ոյժի, որ բարձր է բոլոր մանր-մունր պատուիրաններից, այն աստուածայինն, ստեղծագործող ու անեզր ոյժի, որի վրայ է հիմնուած ամեն բան, ինչ որ գոյութիւն ունի, չտեսնել այդ բոլորը՝ մի տեսակ կուրութեան ու ոչնչութեան նշան է... Աւաղ, Անելկան հէնց այդ աչքով է կարողանում նայել իմ սէրիս վրայ: Կարծում եմ, որ նա երևի ինքն իրան մտածելիս կը լինի, թէ ինչ կուզի լինի, ես դրա համար պէտք է իրան յարգեմ, մինչդեռ Աստուած յայտնի է, որ այս նրա համար չմտասում, որ գործը ինձ է վերաբերում, այլ գործի վրայ ամենաօբյեկտիւ կերպով նայելուց յետոյ էլ, տխրւած եմ լինում ի բաց վանել ինձնից դէպի Անելկան զգացած արհամարհանքս ու սրտիս խորքում ասել նրան. «Մի ուրիշ չափս վերցրու, – ունեցածդ քեզ վայել չէ»: Ես նրան կը յարգէի ու կը պատուէի հարիւր անգամ աւելի, եթէ որ նա կարողանար ուրիշ աչքով նայել եթէ ոչ մեր յարաբերութեան, գոնէ ընդհանրապէս սիրոյ վրայ:

6 օգոստոսի.

Սակայն Գաշտէյնը լաւ վերականգնում է մարդու: Այսօր նկատեցի, որ այսուհետ, լեռնային օդում, Անելկայի երեսի գոյնը կարմրել ու այրւել է և նա առողջ է երևում: Այդ զարմանալի է, մանաւանդ որ նա էլ քիչ հոգսեր ու նեղութիւններ չի քաշել: Մարդու հետ ունեցած անհամաձայնութիւնը նրան մաշում էր. նա իւր պատուին չէր կարողանում կերցնել, որ մարդը ինձ դրամական գործերի մէջ խառնեց. իմ սէրը նոյնպէս խանգարում է նրա հոգու ներդաշնակութիւնը ու վրդովում է նրա խաղաղութիւնը: Զնայելով այդ բո-

լորին, նրա քնքուշիկ երեսը փայլում է առողջութեամբ և թշերը վարդ են կարել։ Յիշում եմ, ՝ինչպես ամառւայ սկզբին իմ աչքերիս առաջ նա հալ ու մաշ էր լինում, յիշում եմ, ինչպես մազերս փշաքաղւում էին, երբ մոտենում էի, որ նրա առողջութիւնը, գուցէ և կեանքը վտանգի մէջ է, այժմ գոնէ այդ երկիւղը անցել պըրծել է։ Եթէ ես իմանայի, որ ապագայում նա աւելի քիչ կը ցաւի ինձ վրայ, աւելի քիչ ուշադրութեան կառնի թէ ինձ ու թէ իմ զգացմունքը, բայց դրա փոխարէն առողջ կը լինի, այն ժամանակ կասէի նրան. «Թող ինձ բանի տեղ չդի, Թող վարձայ ինձ, միայն թէ ինքը առողջ լինի»։ Անկեղծ սէրը բաղկացած է ինչպես երջանիկ լինելու փափագից, նոյնպէս և ցաւակցութիւնից, հոգացողութիւնից ու ջերմ սրտակցութիւնից։

Երէկ Անելկան հագել էր իւր աղջիկ ժամանակւայ շորերից մէկը. ես այդ նկատեցի, և մեր ամբողջ անցեալը կենդանի կերպով պատկերացաւ աչքերիս առաջ։ Միայն Աստծուն է յայտնի, թէ ինչ էր զգում սիրտս։

7 օգոստոսի.

Հօրաքրոջս բարկութիւնը Անելկայի վրայ վաղուց անցել է։ Նա Անելկային այնքան սիրում է, որ իմ մահից յետոյ էլ կեանքի մէջ մի կապելու բան կունենայ, եթէ Անելկան նրա մօտ մնայ։ Այսօր նա շատ զարդ էր անում, որ Անելկայի սիրտը սկի չի բացւում, մինչև վերջը տանը նստած է և այտեղ ոչինչ չի տեսել բացի Վիլդբադից Հոֆգաշտէյն տանող ճանապարհից։

Եթէ ոտներս ոյժ լինէր,—ասաց հօրաքոյրս,—ես քեզ ամեն տեղ կը տանէի մատս կածէի, բայց այդ քո մարդի պարտականութիւնն էր քեզ այտեղի շրջակայքը ցոյց տալ,—առանց այն էլ նա առաւօտից մինչև երեկոյ այտեղից այնտեղ էր վազվզում։

Անելկան սկսեց հաւատացնել, որ տանն էլ շատ լաւ է և որ ինքը կարիք չի զգում ուրիշ տեղ գնալու։ Այդ որ լսեցի, ասացի անտարբեր տոնով.

Ես ոչ մի գործ չունեմ, միշտ մնում եմ գալիս, այնպէս որ կարող եմ Անելկային ամեն տեղ տանել մատ ածել և գոնէ մօտերքումս ինչքան հետաքրքիր բան կայ՝ ցոյց տալ։

Մի քիչ անցնելուց յետոյ աւելացրի աւելի ևս անտարբեր կերպով.

—Վրանում սովորութեան դէմ ոչինչ չեմ տեսնում։ Հանքային ջրերում մինչև անգամ ծանօթները միմեանց հետ ամեն տեղ գնում են, ուր մնաց ազգականները։

Անելկան ոչինչ չպատասխանեց, բայց պառաւ տիկիններըը երկուսն էլ ատածիս հաւանեցին, յիմնաւանդ որ իսկապէս ատածս ճշմարտութեան դէմ չէր։

Վաղը մենք պէտք է միասին Երեկբրիւկէ գնանք։

8 օգոստոսի.

Մեր մէջ դաշնադրութիւնը հաստատուած է և այսօրւանից մեզ համար նոր կեանք պէտք է սկսի։ Այդ բոլորը այն ձևը չունի, ինչպէս ես էի երևակայում, բայց իմ ապագան պէտք է ամփոփւի նրա մէջ։ Այսօրւանից ամեն բան կը լինի պարզ ու որոշ։ Նոր ոչինչ չի լինի, յոյս դնել ոչ մի բանի վրայ չեմ կարող, բայց դրա փոխարէն և անապատան մարդու դրութեան մէջ չեմ լինի։

9 օգոստոսի.

Երեկ երեկոյեան մօտ մենք Երեկբրիւկէում էինք։

Պառաւ տիկինները քիչ տեղ հետները եկան, բայց ջրվէժը որ անցանք, նրանք խոկոյն նատեցին նստարանի վրայ և մենք երկուսով առաջ գնացինք։ Ինձ թւում է երկուսս էլ զգում էինք, որ մեր մէջ կարևոր խօսակցութիւն պէտք է տեղի ունենայ։ Ես մէկ ուզում էի Անելկային մի քանի դեղեցիկ տեղեր ցոյց տալ, ասել նրանց անունները, բայց հազիւ միայն Շարէկի անունն ասացի. այդպէս խօսքը կտրեը գցեը և լռեը այն բանի մասին, որ քարի պէս ձնշում էր մեր սիրտը, ինձ այնքան օտարոտի և անհեթեթ երևաց, որ ես լռեցի։ Մենք կարող էինք միայն մեր մասին խօսել կամ լռել։ Եւ մենք երկար ժամանակ գնում էինք լուռ, որ պէտք է ատած ինձ շատ ձեռնտու էր։ Այդ ժամանակ որքան կարող էի ուշքս հաւաքեցի և զսպեցի այն նեարպային յուզումը, որ տիրում է մարդուս կեանքի մէջ նշանաւոր րոպէներից առաջ, և որքան կարող էի աշխատեցի առնասիրտ լինել։ Առնասրտութիւնս գոնէ այնքան տեղն եկաւ,

որ վճռեցի խօսել սէրիս մասին և այնպէս հանգիստ, այնպէս բնական կերպով, ինչպէս բոլորին յայտնի ու բոլորից ընդունուած մի բանի մասին։ Փորձն ինձ սովորեցրել է, որ աղամարդը կանանց հետ ունեցած յարաբերութեանը ինչ տեն ուզենայ կը տայ։ Իսկ կնոջ վրայ ոչինչ այնպէս չի ազդում, ինչպէս խօսալու տենը։ Եթէ աղամարդը իւր խոստովանութիւնը այնպէս է անում, որ կարծես թէ դրանից յետոյ պէտք է ամբողջ աշխարհը փուլ գայ, այսինքն յուզուած, վախվխելով ու այն համոզմունքով, թէ մի չտեսնուած ու չը լսուած գործ է կատարում, այն ժամանակ նոյն երկիւղն ու համոզմունքը հաղորդւում են նաև կնոջը։ Հակառակ դէպքում լինում են և հակառակ հետևանքներ.—խոստովանութիւնը կորցնում է իւր բոլոր ոյժն ու նշանակութիւնը, բայց աւելի հեշտ է ընդունւում և աւելի քիչ դիմադրութեան հանդիպում։ Ասենք ես արդէն խոստովանել եմ նրան իմ սէրս, իսկ այժմ պէտք է միայն աշխատէի այնպէս անել, որ Անելկայի հոգին չխորանի սիրոյ անունը լսելիս։ Եթէ բանն այնպէս վերջանայ, ինչպէս մինչև այժմ է վերջացել, այնժամանակ որ և է խօսակցութիւն մեր մէջ անկարելի կը դառնայ, իսկ խօսել հարկաւոր է, անհրաժեշտ է, որ գոնէ մի կերպ մեր յարաբերութիւնները պարզենք։ Այդ բոլորը ինկատի ունենալով, ասացի որքան կարողէի հանգիստ կերպով.

— Դու կարելի է քեզ հաշիւ չես տալիս, Անելկա, որքան ինձ բարկացրել ես դու քո այստեղից գնալու պիտակորութեամբ։ Շատ լաւ գիտեմ, որ քո բերած բոլոր պատճառաբանութիւնները այդ բանում ոչ մի պեր չեն խաղում և որ դրա գլխաւոր պատճառը ես չեմ։ Մի բան ես միայն մոռացել եմ, թէ ինչ կը լինի իմ օրը, երբ դու մօտս չլինես։ Այդ իսկի ինկատի չես առել։ Դիտէս, քո գնալը սիրոս այնպէս չէր ցաւացնի, ինչպէս այն միտքը, որ ես եղած-չեղած՝ քեզ համար մի և նոյն է։ Կարելի է ասես թէ իմ լաւս ուզելով էիր այդպէս անում, որ ինձ բժշկած լինես։ Ձէ, թող ինձ հանգիստ։ Ինձ այդ ձևով մի բժշկիր, որովհետև քո դեղը ինձ աւելի վնաս կը պատճառի, քան թէ կարծում ես։

Մի վայրկեան Անելկայի թշերի վրայ երևացին կարմիր բծեր։ Ակներև է խօսքերս նրա սրտի ամենազգայուն լարերին դիպան։ Չգիտեմ, ինչ կը պատասխաներ այդ րոպէին, եթէ չպատահէր մի դէպք, որ ան-

ակնկալ կերպով խանգարեց նրա մտքի ընթացքը։ Ձանապարհի մօտ բարձր խոտի միջից չանկարծ երեւաց մի ապուշ, որոնցից այնքան շատ կայ Պաշտէյնի շրջակայքում, ահագին գլխով, խլերով ծածկւած վզով, գազանական հայեացքով, և մատները շարժելով սկսեց ողորմութիւն խնդրել։ Նա այնպէս չանկարծ դուրս պրծաւ առաջներս, որ Անելկան վախից ճչաց։ Մինչև որ նա ուշքը ժողովեց ու սև փող փնտռեց (ինձ մօտ փող չկար), անցաւ մի քանի րոպէ։ Այդ ժամանակամիջոցում իմ խօսքերի արած ազդեցութիւնը այնքան թուլացաւ, որ երբ մենք վերջապէս այդտեղից հեռացանք, նա մի րոպէ-չափ լռելուց յետոյ պատասխանեց ինձ արտում, բայց քաղցր կերպով.

—Դու շատ անգամ ես դէպի ինձ անարդար եղել, բայց այս անգամուայ պէս ոչ երբէք։ Դու կարծում ես ինձ համար շատ հեշտ է այդ բոլորը տանել, որ ես սիրտ չունեմ. իսկ իմ դրութիւնը ամենևին, ամենևին աւելի լաւ չէ, քան թէ քոնը...

Այս խօսքի վրայ նրա ձայնը կտրուեց, իսկ իմ երակը կատաղի ոյժով սկսեց բաբախել։ Թուում էր թէ մի վերջին ճիգ էլ որ գործ դնեմ—նրա բերնից խլած կը լինեմ անկեղծ խոստովանութիւնը։

—Աղաչում, պաղատում եմ քեզ յանուն այն ամենի, ինչ որ թանգ է քեզ համար,—գոչեցի ես,—ասա ինչումն է բանը։

—Նրանում, որ եթէ ես անբախտ եմ, թող ինձ դոնէ անպատուի մնամ։ Լէոն, աչքիս լոյս, աղաչում եմ քեզ, խղճա ինձ։ Դու չգիտես, որքան ես անբախտ եմ։ Ես քեզ համար պատրաստ եմ ամեն բան զոհել, բացի պատուից։ Մի պահանջիր, որ փրկութեանս այդ վերջին շուքն էլ քեզ տամ... այդ չի կարելի, անհնար է զոհել։ Օ՛հ, Լէոն ջան...

Եւ նա ձեռքերը խաչած, դողդողալով ու արտասուալից աչքերով նայում էր երեսիս։ Զգիտեմ, եթէ այդ րոպէին նրան սեղմէի կրծքիս, գուցէ նա յետոյ ամօթից ու վշտից մեռնէր, բայց այժմ ոյժ չէր ունենայ դիմադրելու։

Բայց ես վարւեցի այնպիսի մարդու պէս, որին սէրը սիրում է իրան զոհել,—մոռացայ ինձ և միայն նրան էլ տեսնում։ Եւ ես իսկոյն և եթ նրա ոտների տակ շպրտեցի թէ սէրս թէ եսականութիւնս։ Այդ ինչքան ինձ համար աւելի ծանր էր նրա հետ համեմատած։ Երբ սիրած կինը պաշտպանում է սրտի խոր-

քից բղխող արտասուքով, որ քամւում է անկեղծ ցաւից,—նա անյաղթելի է լինում։ Ես բռնեցի Անելկայի ձեռքը, համբուրեցի ակնածութեամբ ու հիացմամբ և ասացի.

—Կը լինի այնպէս, ինչպէս սիրած ուզում է, երբ ուզում եմ սիրով, որ ճշմարիտ եմ ասում։

Երկուսս էլ ուրիշ ոչինչ չկարողացանք խօսել։ Ճիշտն ասած այդ րոպէին ինքս իմ աչքին երևում էի համ աւելի լաւ, համ աւելի ազնիւ, քան երբ և իցէ եղել եմ։ Ես ինձ զգում էի այն մարդու պէս, որ ծանր հիւանդութեան ճգնաժամը քաշելուց յետոյ զգում է սաստիկ թուլութիւն, բայց միևնոյն ժամանակ և մեծ ուրախութիւն, որ վերադառնում է դէպի կեանքը։ Քիչ ժամանակ անցնելուց յետոյ ես խօսեցի, և խօսեցի հանդիստ ու մեղմ կերպով, ոչ միայն իբրև սիրող մարդ, այլ և ինչպէս ամենամօտ բարեկամ, որ ամենից առաջ ինկատի ունի իւր սրտին մօտ էակի բախտաւորութիւնը։

—Դու չես ուզում գնալ քեզ անծանօթ ճանապարհով,—ասացի ես,—ես էլ ջանք չեմ անի քեզ քո ճանապարհից շեղելու։ Քո շնորհիւ ես էլ եմ փոխւել, և այն սանձանքները, որոնց միջով անցայ, վերածնել են ինձ։ Քո շնորհիւ հասկացայ, որ այլ է ցանկանալը և այլ՝ սիրելը։ Ձեմ խոստանում, որ կը դադարեմ քեզ սիրելուց, որովհետև չեմ կարող, և հաւաստիապէս խաբած կը լինէի թէ քեզ, թէ ինձ, եթէ այդպիսի խոստումն անէի։ Քո միջն է իմ ամբողջ կեանքը։ Ասում եմ այս առանց ամենաչնչին ցաւիշտակութեան, այլ իբրև մի մարդ, որ կարողանում է նայել իւր ներսը և լաւ գիտէ, թէ ինչն է ճշմարիտ և ինչը՝ մոլորութիւն։ Բայց ես կը սիրեմ քեզ այնպէս, ինչպէս եթէ դու մեռած լինէիր և ես սիրելիս լինէի քո հոգին։ Համաձայն ես դրան, Անելկա ջան։ Այդ մի անասելի սխալ սէր է, բայց հրեշտակային սէր է։ Դու կարող ես ընդունել այդ սէրը և ինձ սիրել նոյն սիրով։ Երդւում եմ, որ կը սիրեմ քեզ այդ սիրով, և այդ երդումը ինձ համար նոյնքան սուրբ է, որքան սուրբ կը լինէր, եթէ ես սեղանի առաջ անէի։ Ես երբէք ուրիշ կնոջ վրայ չեմ պսակւի, կապրեմ միայն քեզ համար և իմ հոգիս քոնը կը լինի։ Դու էլ ինձ սիրի այնպէս, ինչպէս թէ ես մեռած լինեմ։ Գեզանից աւելի ոչինչ չեմ խնդրում, բայց այդ

ինձ մի՛ մերժի, որովհետեւ դրանում ոչ մի մեղք չկայ։ Եթէ կասկածում ես, կուզես խոստովանութեան ժամանակ հարցրու։ Դու հօ կարդացել ես Դանտը։ Յիշում ես, որ նա էլ պատկաւած էր, սակայն սիրում էր Բէատրիչէին նոյնպիսի սիրով, ինչպիսի սէր ես եմ քեզանից պահանջում։ Նա բացարձակ յայտնում էր իւր սէրը, և չնայելով դրան, եկեղեցին նրա պօէման համարեա սուրբ է ընդունում։ Եթէ քո հոգու մէջ կայ նոյնպիսի զգացում դէպի ինձ, այն ժամանակ տւր ինձ քո ձեռքը և թող այսուհետեւ մեր մէջ թագաւորի յաւիտենական համաձայնութիւն ու խաղաղութիւն։

Անելկան մի քիչ լուռ մնաց ու տւեց ինձ իւր ձեռքը։

—Այդպիսի բարեկամական զգացում,—ասաց նա,—ես միշտ գործել եմ դէպի քեզ և բոլոր հոգով ու սրտով խոստանում եմ քեզ նոյնը։

«Բարեկամական զգացում» խօսքը սիրտս շատ վատ ծակեց։ Այդ ինձ համար շատ քիչ էր, քիչ էր և այդ րոպէի համար։ Բայց ձայն չհանեցի։ «Սէր» խօսքը նրան դեռ վախեցնում է,—մտածեցի ես,—նա պէտք է սովորի դրան։ Ասենք բանը հոգեբիւնն է և ոչ անունը. չարժի մի խօսքի համար խանգարել այն համաձայնութիւնն ու բախտաւորութիւնը, որ մենք վերջապէս ձեռք բերեցինք հազար ու մի տարաձայնութիւնների, դառնութիւնների ու տանջանքների միջից։ Առանց այն էլ մենք երկուսս շատ ենք տանջւած. երկուսիս համար էլ այնքան անհրաժեշտ է հանգստութիւնը, որ արժի նրա համար թէկուզ մի բան էլ զոհած լինել։

Այդ մտերը անհետացաւ այն մռայլ լոյսից, թէ Անելկան ինձ է պատկանում, իմ հաւատարիմ հոգեւոր կինն է։ Աստւած գիտէ, թէ ինչ կը տալի, որ կարողանայի նրանից ուղղակի հարցնել՝ «ինձ ես արդեօք» և ստանայի նրանից դրական պատասխան։ Եւ ես կը հարցնէի նրանից օրը հարիւր անգամ և երբէք չէի կշտանայ նրա պատասխաններից, բայց այդ րոպէին վախենում էի նրան խրտնեցնեմ։ Ես որ ամեն բան հասկանում եմ, չպէտք է հասկանայի նոյնպէս, որ կան խօսքեր, որոնք թէև արտայայտում են կատարւած և ընդունւած իրողութիւնը, բայց մեծ դժւարութեամբ են դուրս գալիս կնոջ բերանից, այն էլ այնպիսի կնոջ, ինչպէս Անելկան է։ Ջէ որ նրա բոլոր ասածը խոստովանութիւն էր, որ

նա համաձայնեց, որ մեր հոգիները պատկանեն միմեանց,—էլ ինչ եմ ուզում ասելիս։

Հասանք մինչև Երեկբրիւկէ ու տուն վերադարձանք։ Ճանապարհին մենք մեր նոր դրութեան մէջ մեզ այնպէս էինք զգում, ինչպէս մարդ զգում է իրան նոր բնակարանի մէջ, և փորձ էինք անում ընտելանալ մեր նոր դրութեանը։ Այդ չէր կարելի ասանց որոշ չանքերի, որոնք որոշ չափով կաշկանդում էին մեր ազատութիւնը։ Բայց ինձ այդ էլ միխիթարութիւն էր պատճառում, ինձ շարունակ թւում էր, որ այդպէս է լինում պատկից յետոյ առաջին ժամերին, երբ նորապսակները զգում են իրանց յաւիտեանս կապուած, բայց դեռ չեն ընտելացել միմեանց։ Սակայն ես շատ խօսեցի Անելկայի հետ մեր երկուսիս մասին, բացատրում էի նրան, որքան սուրբ ու անարատ է այնպիսի կապակցութիւնը, ինչպէս որ մերը պէտք է լինի, աշխատում էի ներշնչել նրա մէջ հաւատ ու սրտի անպորրութիւն։ Նա լսում էր ինձ պայծառ երեսով և համարեա ամեն րոպէ իւր նազելի աչքերը դարձնում էր դէպի ինձ։ Եղանակի պարզութիւնը համապատասխանում էր մեր հոգիների պարզութեանը։ Արեգակը արդէն մայր էր մտել, Ալպերը ըստ սովորականին շառագունել էին և նրանցից ընկած շողքը լուսաւորում էր Անելկայի երեսը։

Կուտս տեղի Անելկային, և մենք գնացինք միմեանց կողքից։ Յանկարծ նկատեցի, որ նա քայլերը դանդաղեցնում է, կարծես վախենում է առաջ գնալ, գոյնը գցել է գաճի պէս։ Այդ տեւեց մի րոպէաչափ, բայց ես սաստիկ վախեցայ ու սկսեցի հարց ու փորձ անել, թէ ինչ է պատահել։

Անելկան առաջ չէր ուզում ասել, բայց երբ շատ ստիպեցի, խոստովանեց, որ յանկարծ միտն եկաւ այն ողորմելի ապուշը և մի րոպէ հաւատացած էր, որ նա որտեղից որ է դարձեալ մի տեղից դուրս կը պրծնի։

—Ինքս էլ չգիտեմ ինչու.—ասաց նա,—բայց նա ինձ վրայ սարսափելի ազդեցութիւն գործեց... ամաչում եմ խոստովանել, որ այդքան յիմար նեարդեր ունեմ։ Չեմ կարողանում մոռանալ նրան և ոչ մի կերպ չէի ցանկանայ մեկ էլ նրան պատահել։

Ես նրան հանգստացնում էի, ասում էի, որ իմ մօտ նրան ոչ

ժամագ չի կարող սպառնալ։ Նա իւր կամքին հակառակ անհանգիստ կերպով հանապարհի այս ու այն կողմն էր նայում, բայց շատով մեր խօսակցութիւնը չնչեց նրա սրտից այդ զգուելի տպաւորութիւնը։ Երբ մենք մտանում էինք չրվիժներին, արդէն մթնել էր, բայց զարմանալի տաք երեկոյ էր։ Շարաւբինդերի առաջ հրապարակի վրայ ահագին բազմութիւն լսում էր թափառաշրջիկ նւագածուհիների։ Զգիտեմ ինչու, այդ լեռնային կիրճը այդ օր ինձ վրայ խանգիայի տպաւորութիւնն էր գործում։ Յիշեցի ինչպէս երբեմն Հռոմում գիշերները մեզ էին գալիս Մոնտէ-Պինչիում և երգում էին այն բախտաւոր օրւայ մասին, երբ Անելկան էլ կողքիցս մեզ կը կայ։ Այժմ զգում էի, ինչպէս նրա կուռը չեզուում է իմ կռան վրայ, զգում էի նրա հոգին իմ հոգու կողքին։

Մենք ներս մտանք մեր ամարանոցի գարպասից հանգիստ սըրտով, մեղմ ու անխռով ուրախութեամբ լի հոգով։

10 օգոստոսի.

Այսօր առաջ օրը մտածում էի Անելկայի խօսքերի մասին, որ նա ասաց ինձ ճանապարհին՝ Երկիբրիկ գնալիս։ Առանձնապէս սրտիս վրայ շատ խորը ազդեց նրա մի բացականչութիւնը, որ գուրս թռաւ նրա բերանից թէ՝ «Դու չգիտես, ես որքան անբախտ եմ։ Որքան խորը վիշտ կար այդ ազազակի մէջ, ինչպէս ակամայ խոստովանութիւն էր զգացում, որ նա իւր մարդուն չի սիրում, չի կարող սիրել և որ վերջապէս հակառակ իւր կամքին ու գործ դրած բոլոր ջանքերին նրա սիրտը պատկանում է ինձ։ Եթէ այդ ճիշտ է, կը նշանակի նա նոյնքան անբախտ էր, որքան և ես։ Ասում եմ «էր», որովհետև այլ ևս անբախտ չէ։ Այժմ նա կարող է ինքն իրան ասել՝ «ես նրան հաւատարիմ կը լինեմ ու անարատ կը մնամ», խակ միայնծը թողնել Աստծու անօրէնութեանը։

11 օգոստոսի.

Մտածեցի, որ չիրաւի իրաւունք չունէի պահանջել Անելկայից ու ապաւել, որ նա ինձ համար ամեն բան զոհի։ Սուտ է, թէ սիրոյ համար զոհում են ամեն բան։ Եթէ օրինակի համար իմ ու Կրոմիկու մէջ բնդհարում լինէր և Անելկան յանուն մեր սիրոյ ինձ-

նից պահանջէր, որ ծնկաչոք նրանից ներողութիւն խնդրեմ, ես այդ չէի անի։ Անմիտ ու ֆանտաստիկական բան է ենթադրածս, բայց դրա մասին միտք անելիս անգամ արիւնը գլուխս է խփում։ Ձէ, Անելկա, ճշմարիտ է ասածդ, կան բաներ, որ ոչ ոք չի կարող ու իրաւունք չունի զոհել յանուն սիրոյ։

12 օգոստոսի.

Այս առաւօտ գնացել էինք Վինդիշգրեօցհեօհէ։ Ուրթով մինչև այնտեղ երեք քառորդ ժամուայ ճանապարհ է, այդ պատճառով ձի վարձեցի Անելկայի համար և տանում էի ձիուն սանձիցը բռնած։ Գնալիս մի ձեռքս դրել էի ձիու բաշին, այնպէս որ կուռս քաշում էր Անելկայի շորին։ Ձիու վրայ բարձրանալիս Անելկան յենուեց ուսիս վրայ և իմ մէջ մի ակնթարթում յարութիւն առաւ հին մարդը։ Նրան իմ մէջ ոչնչացրած լինելու համար պէտք է սպանեմ մարմինս, մարդ չլինեմ, այլ միայն հոգի։ Ես պարտաւորուել եմ իմ կրքերս ու խանդերս կապած պահել—և կը պահեմ, բայց յանձն չեմ առել ամենևին չունենալ, ինչպէս չէի կարող յանձն առնել ամենևին շունչ չքաշել։ Եթէ ես Անելկայի ձեռքի կպչելուց աւելի չցնցուէի, քան մի փայտի կտորի կպչելուց, այդ նշան կը լինէր, որ նրան չեմ սիրում, և այն ժամանակ ոչ մի պարտաւորութիւն հարկաւոր չէր լինի։ Անելկային որ ասում էի, թէ նրա ազգեցութեան շնորհիւ ես վերածնել իմ, սուտ չէի ուզում ասել, բայց պարզ չորոշեցի այն, ինչ որ կատարուել էր մէջս։ Իրօք՝ ես միայն ինքս լինձ զգեցի։ Ես հրաժարուեցի լիակատար բախտաւորութիւնից, որ գոնէ կէսը ստանամ։ Ես գերազասում եմ սիրանալ Անելկային գոնէ այդ ձևով, քան ամենևին չսիրանալ, և կարծում եմ, որ ով գիտէ, թէ ինչ է նշանակում սիրել կնոջ, նա հեշտ կը հասկանայ ինձ։ Եթէ կրքերը, ինչպէս ասում են բանաստեղծները, կարելի է համեմատել շների հետ, ես այդ շներին կապել եմ և սովամահ կանեմ, բայց իմ ոյժից վեր է արգելել նրանց, որ չորնան ու չթափահարեն իրանց շղթաները։

Լաւ գիտեմ, թէ ինչ եմ խոստացել, և կը պահեմ խոստումս, որովհետև պարտական եմ պահելու։ Անելկայի անյողդողդուբիւնը իմ բարի կամ չար կամքի արտայայտութեանը ամենևին տեղ չի

թողնում։ Ինձ համար լաւ սահձ է և իմ երկիւղը, որ քիչ տաւջ տաւծն էլ չանկարծ ձեռքից չվլինու։ Այժմ մինչև անգամ չափազանցնում եմ իմ զգուշութիւնը, որ չխրանեցնեմ այն թռչունին, որ ինձ համար «հոգեկան սէր» անունն է կրում, իսկ Անելկայի համար բարեկամական զգացում է կոչում։ Յիշում եմ նրա այդ խօսքը, որ, ինչպէս փոքրիկ փշի ծակոց, սկզբում ցաւ չի պատճառում, իսկ յետոյ սկսում է մրմնջալ։ Այդ խօսքը իմ աչքին տաւջ աննշան բան էր երեւում, իսկ այժմ տեսնում եմ, որ տաւջուց մտածած և լաւ կշռած է եղել։ Ինչ տարօրինակ է կանանց այն յատկութիւնը, որ նրանք վախենում են ամեն բան կոչել ըստ իւր էութեան։ Ես հօ պարզ ասացի Անելկային, թէ ինչ եմ խնդրում իրանից, նա նոյնպէս պարզ հասկացաւ, բայց այդ զգացումը բարեկամութիւն անուանեց, կարծես թէ այդ դէպքում պատապարել էր ուզում թէ ինձանից, թէ իրանից և թէ Աստուածանից։

Միւս կողմից ճիշտ է և այն, որ իրականութիւնից այդ տպաւորութեան կարւած մի զգացման ինչ անուն տալս կարելի է տալ։ Որքան վիշտ ու դառնութիւն կայ այդ մասքի մէջ։ Այդ նախազգուշութիւնը յատուկ է անպայման կերպով տարատ կանանց և անկասկած յատւաջանում է նրանց տատիկ տոմթխատութիւնից, բայց միևնոյն ժամանակ նոյն այդ տոմթխատութիւնը թոյլ չի տալիս նրանց մեծահոգի լինելու։ Ես կարող էի գալ Անելկայի մօտ ու տսել.— «ինչ ուզում է լինի, ես քեզ համար հրաժարւել եմ իմ էութեանս կէսից, իսկ դու ինձ համար տեսք չափում կշռում ես, մի՞թէ այդ խիղճ է։ Եւ սրտիս խորքում նրան այդ տսում եմ նախատական ձայնով։ Սկիզբ դժւար է հասկանալ տանց մեծահոգութեան, տանց ցանկութեան մի որ և է բան զոհել սիրած էակի համար։

Այսօր Վինդիշգրեցհեօհէի վրայ մենք խօսում էինք, ինչպէս երկու մտա ու սրտակից մարդիկ, բայց իսկ և իսկ այդպէս կարող էին խօսել և երկու մտ ազգականներ։ Եթէ մեր զրոյցին անէինք Շրէկբրիւկում կապած պայմանից տաւջ, ես կը փորձէի Անելկայի ձեռքերը, տաքերը համբուրել, գէթ մի րոպէ նրան իմ գիրկն տանել, բայց այժմ գնում էի հանդիսաց, աչքս նրա աչքերից չէի հեռացնում, ինչպէս տմեն մի խիստ արտայայտութիւնից վախեցող

մարդ։ Մինչև անգամ ասելին կասեմ, համարեա ոչինչ չկի խօսում մեր հոգևկան սիրոյ մասին։ Առաջ ինձ դիտմամբ կի զգում, մտածելով որ այդ ձևով ասելի կը հատուցեմ նրա հաւասար դէպի ինձ։ Բայց այդպէս լուա՝ աչքերովս ասում կի նրան. «Դու չես սխալւիլ իմ վերաբերմամբ,—ասելի լաւ կ՚ես չեմ օգտուի ինձ ուած բոլոր իրաւունքներից, քան կը խախտեմ մեր պայմանադրութիւնը»։

Բայց կի մարդ իրան մի քիչ վիրաւորուած կ՚զգում, եթէ նրա զոհը ընդունում են նոյն սիրով ու պատրաստականութեամբ, ինչ սիրով ու պատրաստականութեամբ նա անում կ՚ իւր զոհը։ Այդ ժամանակ մարդ ակամայ օրսի մէջ ասում կ՚ սիրելի հակին. «Մի թողնի որ քեզ գերազանցեն»։

Եւ ես ասում կի այդ, բայց իզուր։

Ինչ դուրս կը գայ դրանից։ Բացի յուսախաբութիւնից ուրիշ ոչինչ։ Կարծում կի պայմանը կապելուց կ՚ասայ ես այդ պայմանի սահմաններում ազատ կը լինեմ, ինչպէս թուշուն, կը կարողանամ առաւօտից մինչև երեկոյ կրկնել «սիրում եմ» խօսքը և առաւօտից մինչև երեկոյ կը լսեմ նոյնը, որ ինձ վարձատրած կը լինեմ բոլոր ժանդանքներիս ու երկար ժամանակ կրած անկեզծ նեղութիւններիս համար, որ կը լինեմ մի տեսակ թագաւոր իմ թագաւորութեան մէջ. իսկ այժմ գործերը այնպէս են դառնում, որ իմ սահմաններս գնալով աւելի նեղանում են, իսկ օրիս մէջ ծագում կ՚ կասկած, որ այս հարցումն կ՚ արտայայտում՝ «ինչ կ՚ շահածդ»։

Բայց ես աշխատում եմ հեռացնել օրիցս այդ կասկածը։ Չէ, ես կի մի բան ձեռք եմ բերել։ Ձեռք եմ բերել իրաւունք զմայլել նրա բախտաւոր ու փայլուն երեսով, նրա ժպիտով, ձեռք եմ բերել այն, որ նրա պայծառ աչքերը համարձակ կարողէն իմ աչքերիս նայել։ Եթէ մինչև այժմ նեղածք ու անյարմարութիւն եմ զգում այդ նոր բնակարանիս մէջ, դրա պատճառն այն է, որ չեմ կարողանում ինչպէս հարկն է սովրել նրա մէջ։

Ի վերջոյ առաջ ես բոլորովին անապահով կի, և եթէ պարզ չեմ տեսնում իմ ձեռք բերածը, գոնէ շատ լաւ գիտեմ, որ ոչինչ չկի կարող կորցնել։ Այդ ոչ մի ժամանակ չպէտք է մոռանամ։

14 օգոստոսի.

Հօրաքոյրս սկսում է խօսք գցել տուն վերադառնալու մասին։ Օր օրի վրայ նա Պլոշովը աւելի է կարօտում։ Հարցրեցի Անելկային, ուրթէ կը լինի որ վերադառնայ։ Ասաց այո... և իմ սիրտս էլ ուզեց շուտով այստեղից գնալ։ Առաջ ես միշտ տարօրինակ ու անբացատրելի յոյսեր էի դնում ապագայութեան վրայ։ Այժմ ոչ մի բանի վրայ յոյս չեմ դնում, բայց այնքան քաղցր յիշողութիւններ են կապած Պլոշովի հետ, որ ուրախութեամբ նորից կը տեսնեմ նրան։

16 օգոստոսի

Օրերս սկսում են միատեսակ ընթանալ։ Մտածում ու հանգստանում եմ։ Մտածմունքներս յաճախ տխուր են լինում, երբեմն և դառը, բայց հոգիս այն ատաիճան տանջած է, որ ես զարթնութիւն եմ զգում այդ թէկուզ պայմանական հանգստութիւնից։ Դրա շնորհիւ այժմ զգում եմ, որքան աւելի լաւ եմ հիմա առաջուայ հանեմատութեամբ։ Այժմ ես ու Անելկան շատ ժամանակ ենք անցնում միասին, կարդում ենք ու խօսում ենք կարդացածի մասին։ Ինչ որ ասում եմ, բոլորը ծառայում է սիրոյ որոշմանը, սիրոյ զարգացմանը, բոլորը սէրին է վերաբերում։ Բայց զարմանալի բան է, նկատեցի, որ ես երբէք սիրոյ մասին ուղղակի չեմ խօսում, կանանց երկիւղը՝ ամեն բանի իւր անունը տալ՝ ինձ էլ է հաղորդել։ Բացատրել թէ ինչ է դրա պատճառը, ես չեմ կարող, բայց այդ բարկութիւնս բերում է, երբեմն մինչև անգամ ատելի է բերում և միևնոյն ժամանակ ինձ ուրախութիւն է պատճառում, որովհետև անմտում եմ, որ Անելկան պահ է դրանից, որ գլխաւորն է—զգում եմ, որ նա սիրում է ինձ դրա համար։ Մեր հոգեկան կապը աւելի ամրացած լինելու համար սկսեցի նրա հետ իմ մասին խօսել. մտածում էի որ մեր պայմանից յետոյ նրանից ոչ մի գաղանիք պէտք է չունենամ։ Նստում էի միայն այնպիսի բանների մասին, որ նրա սրտի ու մտքի անարատութեան կարող էին անախորժ լինել, բայց փորձ էի անում ծանօթացնել նրան իմ ներքին դրամայի հետ, որ յառաջանում է սկեպտիկականութիւնից և կենսական որ և է նեցուկ չունենալուց։ Նրան պարզ ասացի, որ

աշխարհիս մէջ ինձ համար ոչինչ չի մնացել, բացի նրա հոգուց, նկարագրեցի, ինչ են անցել գլխովս նրա մարդու գնալուց յետոյ, ինչ փոփոխութիւնների ու ցնցումների միջով է անցել սիրտս ու հոգիս Պլշով վերադառնալուս օրից սկսած. մանաւանդ մեծ սիրով էի նկարագրում նրա համար, որ պատմութեանս ձևով նրան իսկապէս խոստովանութիւն էի անում, և այդ բոլորը մի բան էր միայն նշանակում.—քեզ սիրում եմ ու սիրել եմ միշտ աշխարհիս երեսին ամեն բանից առաւել: Նրան խաբում էր խոստովանութեան ձևը, նա լսում էր խոստովանութիւնս այնպէս, կարծես խօսքս ուրիշի մասին լինէր և ոչ իր մասին, լսում էր յուզած, կարեկցաբար և գուցէ և անդիմակցաբար զարմութիւն դէալով: Տեսնում էի, ինչպէս քանի-քանի անգամ նրա աչքերը արտասուքով լցեցին, ինչպէս ալեկոծւում էր նրա կուրծքը, ինչպէս նրա հոգու ամբողջ էութիւնը դրկարծաց ձգտում էր դէպի ինձ, կարծես ուզում էր ինձ ասել՝ «արի մօտս, դու էլ իրաւունք ունես բախտաւորութեան մի մանրիկ ունենալու»: Եւ ես պատասխանում էի արտասուալից աչքերով. «ինչքա՛ փեզ ոչինչ չեմ ասում, և յոյսս միայն քո մեծահոգութեան վրայ է»:

Խոստովանութիւններս մէկ էլ նրա համար էի անում, որ այդ մեր մէջ սովորութիւն դարձնեմ և Անելկայի մէջ այն հասկացողութիւնը հաստատեմ, որ մեր մէջ հէնց այդպէս էլ պէտք է լինի: Ուզում էի նրան սոխակել, որ նա էլ որոշ չափով փոխարէնը ինձ նոյնը հաստուցանի, պատմի այդ նոյն ժամանակ իր գլխին եկածը ու սրտի զգացածը. բայց նպատակիս չհասայ: Փորձեցի հարց ու փորձ անել, բայց խօսքերը նրա բերնից այնպիսի դժւարութեամբ էին դուրս գալիս, որ հարց ու փորձս պատարեցրի: Անկեղծ լինելու համար նա պէտք է պարզէր, թէ ինչ էր զգում դէպի ինձ և ինչպէս էին նրա յարաբերութիւնները դէպի մարդը: Ես էլ հէնց այդ էի ուզում ասել տալ նրան, բայց այդ թոյլ չէին տալիս առաջինը ամօթխածութիւնը, երկրորդը՝ նրա հասկացողութիւնը ամուսնական պարտաւորութիւնների մասին: Այդ բոլորը շատ լաւ եմ հասկանում, բայց մի անախորժ զգացումից չեմ կարողանում ազատւել: Իմ պեսիմիզմը ինձ ասում է. «բոլոր ծախսերը միմիայն քո վրայ են լինում, դու տալիս ես ամեն ինչ, իսկ փոխարէնը չես ստա-

նում համարեա ոչինչ. դու ինքդ քեզ խաբում ես, թէ նրա հոգին քեզ է պատկանում, մինչդեռ այդ հոգու դռները քեզ համար փակ են մնում, ուրեմն էլ ինչի՞ տէր ես»։

Ընդունում եմ, որ այդ ձայնի արած նկատողութիւնը իրաւացի է, և յոյսս միայն ապագայի վրայ է։

17 օգոստոսի.

Յաճախ միտս են գալիս Միքիևիչի այս խօսքերը՝ «աւազ, ես միայն փրկութեան կէսը տեսայ»։ Բայց եթէ այդ կէս փրկութեան մէջ չլինէին և այն պակասները, որ նրա մէջ նկատում են, միթոս դարձեալ չէր հանգստանայ։ Հանգստութիւնը հնարաւոր կը լինէր միայն այն դէպքում, երբ ես ազատից աւելի ոչինչ չուզենայի, այսինքն դադարէի սիրելուց։ Գնալով աւելի և աւելի յաճախ են պատահում անզգայութեան րոպէներ, երբ ինձ և ինձ կրկնում եմ, թէ նոր կախարդած շրջանի մէջ եմ ընկել։ Ճշմարիտ է, որ իմ անասնլի ատնջանքներս մի քիչ մեղմացել են։ Բայց ցաւը միայն քչացել է և ոչ բոլորովին անցել։ Երբ Ծարաւից պապակած արաբը անապատում ջրի տեղ բերանը քար է լեցնում, այդ չի յագեցնում նրա ծարաւը, այլ միայն խաբում է նրան։ Հարց է՝ արդեօք ես էլ ինձ չե՞մ խաբում։ Իմ մէջ դարձեալ երկու մարդ կայ՝ հանդիսատես ու դերասատար, դարձեալ առաջինը քննադատում է երկրորդին և յաճախ ծիծաղում նրա վրայ։ Սկեպտիկ Պլոշովսկին, այն Պլոշովսկին, որը հասատատ ու աներկբայ կերպով չի հաւատում հոգու գոյութեանը և որը սիրահարւած է Անելկայի հոգու վրայ, —աչքիս ծիծաղելի է երևում։ Ի՞նչ բան են մեր յարաբերութիւնները։ Երբեմն նայում եմ նրանց վրայ, իբրև լոկ իմ հիւանդոտ տաք-գլխութեան արտադրութեան վրայ։ Հիմա որ անկասկած նման եմ այն թուչունին, որ մի թել քարշ է տալիս գետնի երեսին։ Ես ընդարմացրել եմ իմ էութեանս կէսը, տպրում եմ կէս կեանքով և հրամայում եմ ինձ սիրել միայն կէս սիրով։ Ջուր հլամանն։

Փափագելը բաժանել սէրից նոյնքան անհնար է, որքան մտածելը բաժանել գոյութիւնից։ Ես միայն իբրև մարդ կարող եմ մտածել և իբրև մարդ սիրել։ Մինչև անգամ կրծնական զգացումը, բոլոր զգացումներից ամենախիզախականը, արտայայտում է խօսքե-

բով, ծնրադրութեամբ ու սրբազան առարկաները համբուրելով, իսկ ես ուզում էի, որ սերը դեպի կինը զուրկ լինի բոլորովին արատաւոր յայտութիւնից, կտրած լինի երկրից և երկրի վրայ գոյութիւն ունենայ զերերկրային ձևով։

Ի՞նչ է սերը—փափագ ու ձգտումն։ Ի՞նչ էի ուզում խլել սիրից—փափագ ու ձգտումն։ Այդ նոյնն էր, որ դայի Անելկայի մօտ ու ասէի. «որովհետև քեզ աշխարհի երեսին ամեն բանից աւելի եմ սիրում, խոստանում եմ, որ քեզ չեմ սիրի»։

Այդ բոլորի մէջ մի ահագին սխալ կայ։ Ես յիրաւի նմանում էի անապատի մէջ մոլորուածի, ուրիմն ինչ զարմանալի բան կայ, որ աչքիս մերաժներ են երեւում։

18 օգոստոսի

Երկկ ինձ տանջում ու մաշում էին զանազան մաքեր։ Քունս չէր տանում, և որպէսզի ինձ շատ չզրգռեմ, թողեցի պեսսիմիզմի խորքերը խորասուզելս, սկսեցի մտածել Անելկայի մասին ու պատկերացնել նրան աչքերիս առաջ։ Այդ ինձ միշտ թեթեւութիւն է պատճառում։ Լարուած երեւակայութիւնս պատկերացնում էր Անելկային աչքերիս առաջ բոլորովին կենդանի կերպով, այնպէս որ քիչ էր մնում հեռու խօսեմ։ Յիշեցի այն պարահանդէսը, երբ առաջին անգամ տեսայ նրան մեծ աղջկայ հագուստով։ Յիշողութեանս մէջ այնպէս վառ կերպով նկարուեց այդ նազելի պատկերը, որ կարծես այդ երկկ լինէր։ Յիշում էի նրա մանուշակագարդ սպիտակ շորը, մերկ ուսերը, նրա թեւի փոքրիկ, բայց դարնանային առատօսի թարմ երեսը, որ մի հատիկ էր յօնքերի համարձակ դծագրութեամբ, արեւմտեանների չափից դուրս երկարութեամբ և աղումազի առատութեամբ, որ ծածկում էր նրա թշերը։ Կարծես դեռ լսում եմ նրա հարցը՝ «ինձ չե՞ս ճանաչում, Լէօն»։ Այն ժամանակ ես գրեցի, որ նրա երեսը ազդում է ինձ վրայ այնպէս, ինչպէս երաժշտութիւնը, որ փոխարկուած է մարդկային դիմագծերի։ Նրա մէջ միաժամանակ կար թէ օրիորդական հրապոյր և թէ կանացի գրաւչութիւն։ Ոչ մի ժամանակ և ոչ մի կին ինձ այդպէս սաստիկ չէր գրաւել դեպի ինքը, և պէտք էր Լաուրայի պէս մի Յիրցէա, որ Թոյլ տայի ձեռքից խլէին իմ սրտիս հաւանածին, համարեա իմ նշանածին։

Ոչ ոք աշխարհիս երեսին ինձնից լաւ չի հասկանում, որ «քո կախարդանքը ծանրանում է ինձ վրայ» խօսքերը միայն բանաստեղծական ցնորք չեն, այլ և պառն իրականութիւն: Անելկայի կախարդանքը ծանրանում է ինձ վրայ: Ես միայն սիրահաբաճ չեմ նրա վրայ, միայն փափագ չեմ զգում նրան սիրանալ, այլ և սաստիկ սիրում եմ նրան: Նա աւելի քան իրականացնում է այն իդէալը, որ ես ունեմ կանացի հրապոյրի ու գրաւչութեան մասին, նա ինձ ձգում է դէպի ինքը այնպիսի մի անբացատրելի այժով, ինչպէս մագնիսը ձգում երկաթը: Այլապէս չի էլ կարող լինել.—չէ որ այդ նոյն Անելկան է, նա ամենևին չի փոխուել: Նոյն օրիորդական դէմքն է կանացի գրաւչութեան հետ միասին, նոյն հայեացքն է, նոյն արտահայտութիւնները, նոյն յօնքերը, բերանը, նոյն գեղանի իրանի: Այժմ այդ բոլորի վրայ աւելացել է և մի նոր հրապոյր—կորցրած դրախտի հրապոյրը:

Բայց ինչ մեծ անդունդ կայ մեր առաջւայ և հիմակւայ յարաբերութիւնների մէջ: Երբ մտաբերում եմ առաջւայ Անելկային, որը սպասում էր ինչպէս փրկութեան, որ գամ իրան ասեմ՝ «իմն եղիր,—համարեա հաւատովս չի գալիս, որ այդպիսի ժամանակ երբ և իցէ եղել է: Այդ մտածելիս զգում եմ այն, ինչ որ զգում է անհնկատած մեծատունը, որ իւր ճոխութեան օրերում փողը աջ ու ձախ էր շպրտում, իւր առատաձեռնութեամբ աշխարհ էր զարմացնում, իսկ այժմ սոխլատած է ողորմութեամբ ապրել:

Դիշերը, երբ մտածում էի Անելկայի մասին և հոգուս հայեացքը բևեռել էի նրա վրայ, չանկարծ միտս եկաւ, որ ես նրա կենդանագիրը չունեմ, և իսկոյն բուռն ցանկութիւն զգացի ունենալ նրա պատկերը: Երկու ձեռքով պինդ բռնեցի այդ մտքից, և նա ինձ այնքան ուրախացրեց, որ քունս անմիջապէս փախաւ: «Ես քեզ կունենամ,—ասում էի ես,—կը կարոզանամ գալ քո մօտ, համբուրել քո ձեռքերը, ոտքերը, և դու ինձ չես հեռացնի քեզնից»: Եւ սկսեցի մտածել թէ այդ ինչպէս իրագործեմ: Հօ չէի կարող գալ Անելկայի մօտ ու ասել. «Թոյլ տուր պատկերդ նկարեն, գինը ես կը վճարեմ, բայց հօրաքրոջս միջոցով միշտ ինչ ուզում էի, ասում էի, և կարող էի նրան սովորեցնել, որ նա ցանկութիւն յայտնի Անելկայի կենդանագիրն ունենալու: Պլոշովում մեր գերդաստանի

կենդանագիրների մի մեծ պատկերադարան կայ, որ հօրաքրոջս պարծանքն է, իսկ իմ խայտառակութիւնը (որովհետեւ կենդանագիրներից մի քանիսը խայտառակ բան են),—եւ հօրաքոյրս ամեն կերպ աշխատում է պատկերադարանը լրացնել։ Ի նկատի ունենալով, որ նա Անելկայի սաստիկ սիրում է, հասատացած էի, որ նա կը հիանայ, հէնց որ խօսք բաց անեմ Անելկայի պատկերի մասին։ Գործի յաջողութեան համար բաւական էր մի հինգ րոպէ հեռը խօսէի։ Դրանում ամենևին կասկած չունէի, եւ մոռացում էի միայն, թէ կենդանագրի նկարելը ումը պատւի իրենք։ Ախտոս, որ, ինչ անում եմ՝ յաւաւ սիկիններըը չեն համոզւում Պարիզ գնալ, ուր ուզածիս պէս կարող էի ընտրութիւն անել Բոննատի ճիշտ ու օբյեկտիւ նկարելու, Կարոլիւս Վիւրանի վրձինի համարձակութեան եւ Շասլէնի գողտրիկութեան մէջ։ Աչքերս խփած երեւակայում էի, ինչպէս նրանցից իւրաքանչիւրը այդ գործը գլուխ կը բերէր, բայց ինչ օգուտ մոռածել այն բանի մասին, որ չի կարելի իրագործել։ Գուշակում էի, որ հօրաքոյրս կը ցանկանայ Անելկայի պատկերը մի լհացի նկարիչ նկարի։ Վնաս չունի, ոչինչ չունեմ դրա դէմ։ Վարշաւայի ու Կրակովի պատկերահանդէսներում մի քանի նկարներ տեսայ, որոնք ոչնչով յետ չէին մնայ արուսատհմանեան նկարներից։ Վախենում էի միայն որ գործը շատ չձգձգւի։ Ինաւորութեանս մէջը մի իսկը կանացի յատկութիւն կայ,—ինչ որ այսօր ուզում եմ, անպատճառ պէտք է վաղը կատարուի։ Եւ որովհետեւ մենք Գերմանիայումն էինք, Միւնխէնին ու Վիէննային մօտ, մրցքիս մէջ սկսեցի ընտրութիւն անել գերմանացի նկարիչների մէջ, եւ վերջը կանգ առայ երկու անուան վրայ՝ Լէմբախի ու Անջէլիի։ Ես տեսել եմ Լէմբախի հիանալի կենդանագիրները (ասենք միմիայն աղամարդկանց), բայց իմ չիզրը բերում է նրա անձնատրութիւնն ու թեթեւակի նկարելու եղանակը, որը ես, իբրեւ Ֆրանսիական նկարչութեան սիրահար, միայն Ֆրանսիացիներին եմ թոյլ տալիս։ Անջէլիի նկարած կանանց դէմքերը ինձ նոյնպէս լիովին բաւականութիւն չէին տալիս, բայց եւ այնպէս չի կարելի չխօստովանել, որ նա շատ քնքոյշ վրձին ունի, որ Անելկայի պատկերը նկարելու համար միանգամայն անհրաժեշտ է։ Մէկ էլ Լէմբախի համար պէտք է ճանապարհներս շեղէինք, իսկ Անջէլին մեր ճանա-

պարհին է,—մի հանգամանք, որի չիշելը ամօթէ ազն մարդու համար, որ չի ուզում փիլիսոփայ անունը ժառանգել։ Բայց այդ ժամանակը ինձ համար նշանակութիւն ունէր։ «Մեռածները արագ են գնում,—ասում է բանաստեղծը, բայց սիրահարւածները աւելի արագ են գնում։ Ի վերջոյ այդ էլ որ չլինէր՝ ես էլի Անջէլին կընտրէի, այդ պատճառով հաստատ վճռեցի, որ նա նկարի Անելկայի պատկերը պարահանդէսի հագուստով, բայց վճռեցի Անելկային հագցնել տալ նրա մանուշակագարդ սպիտակ շորը։ Ուզում եմ նրան նայած ժամանակ մոլորւեմ ու կարծեմ, թէ դա իմ առաջւայ Անելկան է։ Թող ինձ ոչ մի բան չչիշեցնի պանի Կրոմիդկային։ Մէկ էլ այդ հագուստը ինձ համար թանկ է իբրև չիշողութիւն։

Համբերութիւնս չէր տալիս մինչև առաւօտ սպասեմ,—այնպէս սիրտս ուզում էր ժամ առաջ գործի ձեռնարկել։ Սակայն առաջւայ ծրագիրս փոխեցի։ Մտածեցի, որ եթէ նկարելու պատւէրը հօրաքրոջս տայ, նա անպատճառ պիտք է պնդի, որ լուռնայինն նկարի, այդ պատճառով որոշեցի Անելկայի պատկերը ընծայեմ հօրաքրոջս նրա ծնդի օրը, որ հոկտեմբերի վերջերին է ընկնում։ Այդպէս որ լինի, Անելկան էլ դէմ չի լինի։ Պարզ բան է մի օրինակ էլ ինձ համար կը պատրիեմ։

Համարեա ամբողջ գիշերը քունս չի տարել, բայց չնայելով դրան, այդ գիշերը ամենալաւ գիշերներից մէկն էր ինձ համար, որովհետև ամբողջ ժամանակս անց եմ կացրել այդ տեսակ ծրագիրներ կազմելով։ Քունս տարաւ միայն առաւօտեան դէմ ժամը հնգին, բայց ուրիշն արդէն ոտքի վրայ էին։ Գնացի Շրառւնբին գերի մօտ, այնտեղից հեռագրով հարցրեցի Կիւնսլէրհառւզի գրասենեակից՝ Վիէննայում են Անջելին թէ ոչ, յետոյ վերադարձայ տուն, տեսայ բոլորին թէյ խմելիս և ուղղակի ձեռնարկեցի գործին։

—Անելկա,—ասացի ես,—մեզքս պէտք է քեզ խոստովանեմ. այս գիշեր քնելու փոխարէն քո վիճակն էի որոշում, և այժմ խնդրում եմ քեզ, հաւանութիւն տուս իմ վճիռներին։

Անելկան վախեցած նայեց ինձ։ Երևի մտածեց թէ խելքս կորցրել եմ կամ թէ գժւածի պէս ուզում եմ ամեն բան խոստովանել պատահական ներկայութեամբ, բայց իմ երեսը հանդիստ էր, համարեա անտարբեր, և նա հարցրեց.

—Ի՞նչ ես վճռել իմ մասին։

Պարձայ հօրաքրոջս։

—Ես ուզում էի մի սիւրպրիզ անել, բայց տեսնում եմ, որ չեմ կարող ծածուկ պահել, այդ պատճառով ձեզ ուղիղը կասեմ, ինչ ընծայ եմ ուզում պատրաստել ձեր ծնեի համար։

Եւ ես ամեն բան մանրամասն պատմեցի։ Աւելի լաւ ընծայ հօրաքրոջս համար չէի կարող մտածել (իմ կենսագիրը, և շատ լաւ, նա արդէն ունէր), և նա անչափ շնորհակալ եղաւ ինձնից։ Տեսայ, որ Անելկան էլ ուրախացաւ, իսկ իմ ուզածն էլ հէնց այդ էր։ Իսկոյն սկսեցինք խորհել, թէ երբ և ով նկարի պատկերը, Անելկան ինչ շոր հագնի, որ լաւ լինի և այլն։ Կանայք սաստիկ հետաքրքրւում են այդ տեսակ բաներով։ Բոլոր հարցերի պատասխանը պատրաստ ունէի. բացի այդ տեսնում էի, որ կենդանագրի պատրաստով կարող էի մի ուրիշ բան էլ սանձալ։

—Այդ քիչ ժամանակ կը լինի,—ասացի ես։ Հեռագիրը Անջէլիի մասին արդէն խփւած է, ես չեմ կարծում, որ մեր Պլոշով վերադառնալը դրա պատճառով շատ ուշանայ։ Բաւական կը լինի, որ Անելկան չորս կամ հինգ անգամ գնայ նկարչի մօտ, և որովհետև մենք առանց այն էլ մի քանի օր պէտք է ծնանք Վիեննայում բժիշկ Նոանադելի հետ խորհրդակցելու համար, ուրեմն այդ ժամանակ համ մէկը կարելի է անել, համ միւսը։ Երբ յետոյ էլ կարելի է օրինակին նայելով նկարել, իսկ երեսի համար հինգ սէանսը բաւական կը լինի։ Պէտք է միայն առաջուց ուղարկել Անելկայի լուսանկարը, օրինակ Յելինա մօրաքրոջ մօտ եղածը, և մազերից մի փունջ։ Մազերը խնդրում եմ, Անելկայ, իսկոյն տաս։ Մինչև մեր գնալը Անջէլին ընդհանուր ուրւագիծը կազմած կը լինի, գոյները քսած, կը ծնայ միայն վերջացնելը։

Այդ բոլորը կարող էր և այնպէս լինել, ինչպէս ասում էի, բայց մազերի փունջը խնդրելիս գիտէի, որ իմ խօսակիցներից ոչ մէկը լաւ հասկացողութիւն չունի կենդանագիրներ նկարելու մասին։ Այդ փունջը խնդրում էի ինձ համար և ոչ Անջէլիի համար, որին նրա մազերը հարկաւոր կը գային միայն այն դէպքում, եթէ նա կենդանագիրը նկարելիս լինէր լուսանկարից, որ նա յանձն չէր առնի անել։ Բայց ես գործը այնպէս նկարագրեցի, որ կարելի էր կար-

ձև, թէ միայն այդ վնջից է կախած գործի յաջողելը կամ չյաջողելը։

Նախաճաշից երկու ժամ յետոյ առացայ հետագրիս պատասխանը. Անջէլին Վիեննայումն է, ուր վերցնում է Ն. իշխանուհու կենդանագիրը։ Խակոյն նրան նամակ գրեցի, գրեցի նամակի մէջ պանի Յելինայից առացած լուսանկարը, յետոյ տեսնելով, որ Անելկան պարտէզումն է, գնացի նրա մօտ։

—Մազերդ պատրաստ է,—հարցրեցի ես։—Նամակը ժամը երկուսին պէտք է ուղարկեմ։

Նա նեբա վազից և մի բոպէից յետոյ վերադարձաւ մազերի փունջը ձեռքին։ Մազերն առնելիս ձեռքս մի քիչ դողաց, բայց ես նայում էի ուղիղ նրա աչքերին ու հայեացքովս հարցնում.

—Մի թէ դլխի չես ընկնում, որ այդ մազերը ինձ համար եմ ուզում, և իմ բոլոր ունեցածի մէջ նրանք ամենաթանկագին բանը չէ լինին։

Անելկան ոչինչ չհասկաց, բայց արտևանունքը վար թողեց և կարմրեց այնպէս, ինչպէս կարմրում է աղջիկը առաջին անգամ սիրոյ խոստովանութիւնը լսելիս։ Նա՝ դլխի ընկաւ... Այո, միայն մի անգամ նրա շրթունքը համբուրելու համար արժի ամբողջ կեանքը զոհել։ Իմ սէրս պէտի նա երբեմն այն աստիճան սառականում է, որ ինձ կսկիծ է պատճառում։ Այժմ նրա վիպիքական էութեան մի մասն էլ կայ ինձ մօտ։ Խորամանկութեամբ հասայ նպատակիս։ Ես, սկեպտիկս, որ ամեն բոպե քննում ու տեսնում եմ իմ հինդ մատս պէս, խորամանկութիւն եմ բանացնում, այնպէս եմ վարւում ու զրում, ինչպէս Գէօթէի Զիբելը։

Բայց ինձ ու ինձ ասում եմ. ամենավատը՝ ես սենտիմենտալ ու ծիծաղելի եմ։ Մի պիսի, արդիօք հարիւր անգամ աւելի յիմար, ծիծաղելի ու ողորմելի չէ իմ մէջ այն միւս, ոչ-սենտիմենտալ մարդը, որը ամեն բան քննում ու գիտակցութեան է վերածում։ Քննել՝ միևնոյն է թէ ծաղիկ վետրել։ Քննադատութիւնը փչացնում է կեանքի գեղեցկութիւնը, հետևապէս և բարոյականութիւնը, այսինքն այն միակ բանը, որ իսկապէս մի գին ունի։

22 օգոստոսի.

Պանի Յելինայի բժշկութիւնը վերջացել է, բայց մենք մի քանի շաբաթ ապասեցինք, մինչև որ պաշտաւայրում ոտքերն անցնեն, և այդ ժամանակ եղանակը փոխուից դէպի վատը։ Այժմ պարձեալ սպասում ենք եղանակի լաւանալուն, որ իսկոյն ճանապարհ ընկնենք Վիեննա։ Ահա երեք օր է արդէն, որ այստեղ եգիպտական խաւար է տիրում։ Ամպերը, որ սրանից մի շաբաթ առաջ կուտակուում էին լեռների գագաթներին ու նրանց ձիւնով ծածկում, դած սողացին իրանց բարձրաբերձ ապաստաններից, իջան Պաշտկինի վրայ և իրանց թանձրախիտ քօղով ծածկեցին ամբողջ հովիտը։ Այսպիսի խաւարում ենք ապրում, որ կէսօրին անկարելի է լինում մեր ամարանոցից մինչև Շարաւբինգերը տանող ճանապարհը գլուխնել։ Ամեն բան՝ տուն, ծառ, սար ու ջրվէժ կարծես շղարշով ծածկուած լինի։ Բոլոր իրերի եզրագծերը ձուլուել ու կորել են միատարդ թանձր ու սպիտակաւուն մշուշի մէջ, որ քարի պէս ճնշում է ամեն բան, մինչև անգամ մարդու հոգին։ Ժամը երկուսին կէսօրից յետոյ ճրագ ենք վառում։ Իմ ուկկիները ամեն բան կապել պատրաստել են։ Մենք եղանակին չէինք նայի, ճանապարհ կընկնէինք, եթէ լեռնային գետակները բարձրացած ու Հօֆգաշտէյնից դուրս ճանապարհը փչացրած չլինէին։ Պանի Յելինայի հին գլխացաւը էլի նորոգուել է. հօրաքոյրս Ծերունի Խւաստովսկուց նամակ է ստացել, որ շոքից հացերը փչացել են, այդ պատճառով նա քայլերը մեծ-մեծ դցելով գան է գալիս ճաշարանում և էլ բան չի թողնում, որ Խւաստովսկուն չասի։ Անելկան այսօր առաւօտեանից կարծես հիւանդ լինի։ Նա խոստովանուեց, որ գիշերը երազում տեսել է այն ապուշին, որը մեզ պատահեց Երկկբրիւկէի ճանապարհին և նրան սաստիկ վախեցրեց։ Զարմանալի բան է, թէ ինչ տպաւորութիւն է թողել նրա վրայ այդ ողորմելի արարածը։ Աշխատում էի քաջալերել նրան ուրախ խօսակցութեամբ, որ ինձ բաւական յաջողեց, որովհետև մեր պայմանագրութեան օրից սկսած Անելկան անհամեմատ աւելի հանգիստ, ուրախ ու բախտաւոր է։

Այդ որ տեսնում եմ քաջութիւն չեմ ունենում անգամ տրտնջալու, թէպետև յաճախ մտքովս անցնում է, որ մեր կատակութիւնը իսկապէս ոչ մի կատակութիւն չէ։ Պայման կապելիս լաւ

գիտէի թէ ինչ է իմ ուզածը և ինչ ձև կընդունեն մեր զգացումները, իսկ այժմ գնալով ամեն ձև կորչում է, անըմբռնելի ու անորոշ է պառնում, կարծես նա էլ ծածկուած լինի այն մշուշով, որ ծածկել է ամբողջ Գաշտէյնը։ Ես միշտ զգում եմ, որ Անելկան չի ընդունում իմ իրաւունքները և չեմ համարձակում նրանց մասին յիշեցնել։ Կարելի է նրա համար չեմ համարձակում, որ ամեն կռիւ, մանաւանդ սիրելի էակի համար մղած կռիւը, մարդու յոգնեցնում է, իսկ ես ամբողջ կէս տարի է, որ մղում եմ այդ կռիւը, ոչնչից ոչինչ չեմ շահել, միայն այն աստիճան ուժասպառ եմ եղել որ այժմ ինչ տեսակ հանգիստ էլ որ լինի, ես աւելի կը զերադասեմ, քան առաջուայ ապարդիւն ջանքերը։

Սակայն կարելի է ուրիշ պատճառ էլ կայ։ Եթէ մի կողմից իրերի դրութիւնը չի համապատասխանում իմ ասածին, միւս կողմից նա մօտեցնում է ինձ Անելկային։ Նրան թւում է թէ ես իրան այժմ աւելի բարձր սիրով եմ սիրում... և ահա դրա համար նա ինձ աւելի է գնահատում (չեմ համարձակում ասել սիրում)։ Թէպետև արտաքին ոչ մի նշան չկայ, բայց զգում եմ, որ այդպէս պէտք է լինի։ Այդ ինձ ոյժ է տալիս և ես ինձ ու ինձ ասում եմ։—«Նրա զգացմունքը գնալով աճում է, ուրեմն մոքիդ վրայ հաստատ կաց, ոտդ պինդ դիր, և կարելի է մի ժամանակ գայ, երբ նրա զգացմունքը աւելի զօրեղ լինի, քան դի Հադրութեան ոյժը»։

Առ հասարակ մարդիկ և մանաւանդ կանայք կարծում են, թէ այսպէս անուանուած պլատոնական սէրը մի առանձին, շատ հազուագիւտ ու վերին աստիճանի բարձր սէր է։ Այդ միայն հասկացողութիւնների շփոթութիւն է։ Կարող են լինել պլատոնական յարաբերութիւններ, բայց պլատոնական սէրը նոյնքան անմիտ բան է, որքան օրինակ անլոյս լոյսը։ Մինչև անգամ դէպի մեռածները զգացած սէրը բաղկացած է լինում նրանց թէ հոգու և թէ մարմնի կարօտից։ Կենդանի մարդկանց մէջ պլատոնական յարաբերութիւնները հնարաւոր են միայն այն ժամանակ, երբ նրանք բոլորովին հրաժարւում են իրանց մարդկային էութիւնից։ Սուտ չէի ասում, երբ ասում էի Անելկային.—«Ես քեզ այնպէս կը սիրեմ, ինչպէս եթէ դու մեռած լինէիր»։ Բայց հրաժարուել չի նշանակում չյուսալ։ Ընայելով այնքան յուսահատութիւններիս, այնքան փորձերիս,

որ ամեն փորձ զուր է, սրտիս խորքում պարձեալ սաճել ու սաճում եմ մի յոյս, որ մեր այժմեան յարաբերութիւնները միայն մի պատար են մեր սիրոյ ճանապարհի վրայ: Օրը հարիւր անգամ կարող եմ ինձ ու ինձ կրկնել՝ «մոլորութիւն, մոլորութիւն»,—բայց յուսալուս չեմ ազատուի այնքան, մինչև որ ազատուած չլինեմ իմ ձգտումներից: Այդ երկու բաները միմեանցից անբաժան են: Ես հաւանութիւն ուեցի այս յարաբերութիւններին, որովհետև ուրիշ ճար չունէի, որովհետև գերադասում էի այդ տեսակ յարաբերութիւններ լինեն, քան ոչ մի յարաբերութիւն չլինի, բայց չնայելով իմ բոլոր անկեղծութեանը, համոզուած ակամայ այդ յարաբերութիւնները համարում եմ իմ կողմից մի տեսակ զերակատարութիւն, մի տեսակ դիւանագիտութիւն, որի նպատակն է ձեռք բերել լիակատար՝ և ոչ կիսատ-պռատ բախտաւորութիւն:

Բայց մի բան որ ինձ զարմացնում է ու բարկութիւնս շարժում, որ մի կերպ հասկանալ չեմ կարողանում,—այդ այն է, որ ես այդ բանում էլ յաղթուած եմ: Իմ յաղթութիւնները թաղնուած են ապագայի մշուշի մէջ (և այն էլ նման են հեռաւոր փարոսի լոյսի և կամ միրաժի), իսկ այժմ, չնայելով իմ բոլոր ճարպիկութեան, կեանքի, մարդկային զգացումների ու նրանց զիպլոմատական հմտութեան, յաղթուած եմ մի հակից, որ ինձնից անհամեմատ աւելի քիչ է փորձուած, խելքով աւելի աստր է, ինձ պէս ամեն մի քայլը չի հաշուում ու աւելի պակաս հմուտ է կեանքի տակտիկային: Թէ ես յաղթուած եմ, դրանում խօսք չի կարող լինել: Ի՞նչ են մեր այժմեան յարաբերութիւնները: Երկու միմեանց մօտ ազգականների յարաբերութիւն, ուրիմն այն, ինչ ուզում էր նա և ինչ չէի ուզում ես: Առաջ ես լողում էի մրրկալից ծովում, շուռ-շուռ նաւաբեկութեան էի ենթարկուում, բայց դոնէ իմ նաւակը ես ինքս էի կառավարում, մենք աւելի հանգիստ ու հաւասար ենք լողում, միայն զգում եմ, որ դնում ենք այնտեղ, ուր որ չեմ ցանկանում դնանք: Հիմա եմ հասկանում, թէ ինչու նա, հէնց որ Վանոի ու Եկատերինէի սիրոյ անուն ուեմի, երկու ձեռքը մեկնեց.—նրա համար, որ ինձ ուզած տեղը տանի: Մի թէ ամեն բան ինձնից աւելի խոր ու աւելի լաւ է կարողանում հաշուել:

Չէ, ինձ յայտնի չէ մի ուրիշ էակ, որ աւելի քիչ ընդունակ

լինի այդպիսի հաշիւներ անելու, կը նշանակի այդ սկի խելքի մօտ բան չէ, բայց միևնոյն ժամանակ չեմ կարողանում ազատուել մի մտքից, որ շատ մօտ է միամիկականութեան.—ինձ թուում է, որ մեկը նրա տեղ ամեն բան չափում կշռում էր։ Ինձ շրջապատող ամեն բան նոյնպէս մի տեսակ տարօրինակ է։ Տարօրինակ է և այն, որ թոյլ եմ տալիս ինձ տանջանափակին, որ ինքս եմ հնարել այն դրութիւնը, որ այդքան հակառակ է իմ բնաւորութեանը, իմ հայեացքներին, իմ ամենաջերմ ձգտումներին։ Եթէ մինչև Անելկայի հետ ծանօթանալս մեկն ինձ ասէր, որ մի ժամանակ այդպիսի մտքեր են գալու գլուխս, ես այդ ասողին խելագար կը համարէի և ամբողջ սիրտ կը ծիծաղէի թէ այդ մարգարէի և թէ ինձ վրայ։ Հիմա էլ ծիծաղս գալիս է ու ինքս իմ աչքին ծիծաղելի եմ երեւում։ Սակայն կարիքը սոսկաց...

(Վերջը յաջորդ համարում)

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՊԱՆՅԱՆ

I

Կենդանիների հասարակութիւնները և դոցա կազմակերպութիւնները պատկանում են այն երևոյթների թւին, որոնք մեծ հետաքրքրութեամբ ուսումնասիրւում են այժմեան գիտնականների կողմից։ Դժւար չէ բացատրել, թէ ինչու այդպիսի մեծ ուշադրութեան արժանացել է կենդանիների հասարակական կեանքը. բանը նրանումն է, որ հասարակական երևոյթները կենդանիների շրջանում նշանաւոր են ոչ միայն իբրև լոկ մանրագիտական-կենդանաբանական երևոյթներ։

Այժմ այդ երևոյթների ուսումնասիրութեան վրայ ուրիշ յոյսեր են դնւում։ Ենթադրւում է, որ կենդանիների հասարակութիւնների ուսումնասիրութիւնը կարող է լոյս սփռել նաև մարդկային հասարակութեան երևոյթների վրայ։ Այդ պատճառով կենդանիների հասարակական կեանքով հետաքրքրւում են ոչ միայն կենդանաբանները, այլ և նոքա, որոնք պարապում են հասարակական գիտութիւններով։

Սակայն ձրքան իրաւացի են այդ տեսակ յոյսերը։

Ի՞նչ յարաբերութիւն կայ կենդանական և մարդկային հասարակութիւնների մէջ։ Արդեօք կարող են համանման համարւել այդ երկու տեսակի հասարակական երևոյթները, թէ ընդհակառակը նրանց մէջ ոչինչ նմանութիւն կամ կապ չկայ։

Այդ հարցին զանազան ժամանակներ տարբեր պատասխաններ

են առել գիտնականները և փիլիսոփաները։ Արիստոտելը՝ գրաղելով մարդկանց հասարակական կազմակերպութեան խնդրով՝ թէև ուղղակի չէ պատասխանում մեզ բերած հարցին, բայց մարդկային հասարակութեան վերաբերմամբ նրա արտայայտած մտքերը ցոյց են տալիս, որ նա առելի հակած էր մարդկային և կենդանական հասարակական երևոյթները համեմատել՝ մի ուսումի երևոյթներ՝ համարելու։

Սակայն յետագայ ժամանակներում այդ հայեացքը մի շարք նշանաւոր հակառակորդներ ունեցաւ, օրինակ Լոկկը, Հոբբսը։ Ըստ այդ փիլիսոփաների ոչինչ նմանութիւն չկայ կենդանիների և մարդկանց հասարակութիւնների մէջ. մարդկանց հասարակութիւնը փոխադարձ համաձայնութեան կամ պայմանի հետևանք է, ուրիմն մի սեռակ արհեստական բան է, մինչդեռ մեղուների, կուզիների (бобръ), մրջիւնների և միւս կեն անիների հասարակութիւնները կազմուում են բոլորովին տարբեր կերպով՝ անգիտակցաբար, ուստի նրանց վերաբերմամբ խօսք էլ չի կարող լինել որ և է պայմանի մասին։

«Համերաշխութիւնը կամ միաբանութիւնը կենդանիների շրջանում ինքն ըստ ինքեան, բնական է, մինչդեռ նոյն միաբանութիւնը մարդկանց շրջանում հետևանք է համաձայնութեան, ուստի և արհեստական է»—ասում է Հոբբսը [1]։

Այդ փիլիսոփայութիւնը առելի ևս հիմնաւորուեց դիտութեան մէջ շնորհիւ հռչակաւոր Ռուսսոյին, որը, ինչպէս յայտնի է, նոյնպէս համարում էր մարդկային հասարակութիւնը արդիւնք փոխադարձ համաձայնութեան կամ պայմանի։

Հակադասելով կենդանական հասարակութիւնը մարդկային հասարակութեանը, Հոբբսը, Լոքքը և Ռուսսոն նաև հակառակ մեթոդներ էին առաջարկում նրանց ուսումնասիրութեան համար։ Կենդանական հասարակական երևոյթները պէտք է ուսումնասիրուեն ինչպէս բոլոր բնական երևոյթները, մինչդեռ մարդկային հասարակութիւնները, ոչինչ կապ չունենալով բնական երևոյթների հետ, չեն էլ կարող հետազօտուել այդ վերջիններիս նման։ Ահա այդ մտածողների հայեացքը։

---

[1]) Հոբբսի վերն բերած խօսքերը վերցրած են Լոպիտալից։

Իմ նպատակներից դուրս է մանրամասը կերպով առաջ բերել բոլոր դիանականներն և փիլիսոփաների կարծիքները վերոյիշեալ հարցի վերաբերմամբ, այլ պատճառով ևս կանգ չեմ առնել Հեգելի, Կոնդորսէի, Օգիւստ Կոնտի, Սպենսերի և միւսների հայեացքների վրայ, միմիայն կը նկատեմ, որ շնորհիւ դոցա ջանքերին՝ նորից փոխուեց մեծաւոր հոսանքը վերաբերեալ մեզ հետաքրքրող հարցին։

Նախ և առաջ ապացուցուեց, որ մարդկային հասարակութիւնը ամենևին չի կազմուում այնպէս, ինչպէս երևակայում էին Հոբբսը, Լոքքը և Ռուսսօն, այսինքն փոխադարձ համաձայնութեան կամ պայմանի շնորհիւ. ամեն մի մարդկային հասարակութիւն կազմուել է դեռ այն ժամանակները, երբ հասարակութիւնը կազմող անհատները այնքան ոգէտ ու մուքն էին, որ անկարող կը լինէին գիտակցաբար միութիւն առեղծել՝ կապելով իրար հետ ընդհանուր պայմանով։ Մարդկային հասարակութիւնը սկզբում եղել է շատ հասարակ՝ ինչպէս շատ կենդանական հասարակութիւններ. յետոյ դարերի ընթացքում ենթարկուել է բազմաթիւ փոփոխութիւնների, որոնց շնորհիւ աւելի ու աւելի բարդացել է։

Բայց որովհետև նոյն դէպքով արտայայտում է նաև կենդանիների հասարակութիւնը, ուստի անհնարին է մարդկանց և կենդանիների հասարակութիւնների մէջ երևակայել անանցնելի անդունդ. դրանք համմանման, մի տեսակի, երևոյթներ են։ Այդպիսով փոքր առ փոքր ոչնչացաւ այն չինական պարիսպը, որ դրել էին Հոբբսը և նրա համախոհները կենդանիների և մարդկանց հասարակութեան միջև։

Թուղկ ընթերցողը կարծի, թէ այդ պարապի ոչնչանալը առանձին նշանակութիւն չունի։ Սակայն այդպէս դատելը սխալ է հետևեալ պատճառով։

Բանը նրանում է, որ եթէ հնար չլինէր հերքել Ռուսսօյի, Հոբբսի և Լոքքի կարծիքները, եթէ վերջնականապէս ապացուցէր այն միտքը՝ թէ կենդանիների և մարդկանց հասարակական երևոյթները կատարելապէս տարբեր, նոյն իսկ հակառակ երևոյթներ են, այն ժամանակ կենդանիների հասարակական կեանքի ուսումնասիրութիւնը ոչինչ լոյս չի կարող սփռել մարդկային հասարակութիւնների վրայ։ Մարդկային և կենդանական հասարակութիւնները կը

լինին ընդմիշտ իրարից անջատած և իրար հետ ոչինչ յարաբերութիւն չունեցող երևոյթներ։

Այժմ ուրեմն, ինչպէս վերև նկատեցի, գիտնականների և փիլիսոփաների մեծամասնութիւնը անանցնելի անդունդ չի գնում կենդանիների և հասարակական երևոյթների միջև, այլ համարում է նրանց մի տեսակի երևոյթներ, որոնց մէջ կայ միայն այն զանազանութիւնը, որ հասարակական երևոյթները կենդանիների շրջանում անհամեմատ աւելի պարզ և հասարակ են քան նոյն երևոյթները մարդկանց շրջանում։

Նախորդ յօդուածներիս մէկի մէջ, խօսելով կենդանիների մտաւոր և բարոյական ընդունակութիւնների մասին, ես աշխատեցի ծանօթացնել ընթերցողին այն դազափարների հետ, որոնք իշխում են գիտութեան մէջ վերաբերեալ այդ ընդունակութիւններին։ Մենք տեսանք այն յօդուածից, որ մարդկանց և կենդանիների մտաւոր ու բարոյական ընդունակութիւնների միջև շատ էլ մեծ տարբերութիւն չկայ, ընդհակառակը դրանք կատարելապէս նման են իրանց հիմնական գծերով։ Զանազանութիւնը նրանում է միայն, որ կենդանիների մտաւոր ու բարոյական ընդունակութիւնները անհամեմատ աւելի հասարակ են ու պարզ քան մարդկանցը։ Առաջ գոյութիւն ունէր միայն մարդկային հոգեբանութիւնը, իսկ այժմ ծագել է նոր գիտութիւն՝ այն է կենդանիների հոգեբանութիւնը, որը, պարունակելով իր մէջ հոգեբանական պարզ ճշմարտութիւններ, պէտք է ուսումնասիրւի մարդկային հոգեբանութիւնից առաջ։ Պարզ է, որ մարդկային հոգեբանութիւնից շատ երևոյթներ կը մնան մեզ համար անբացատրելի եթէ առաջ մենք չծանօթանանք նոյն երևոյթների հետ կենդանիների շրջանում։ և այդ հասկանալի է, որովհետև մարդկանց հոգեկան երևոյթների արմատները երևան են գալիս կենդանիների շրջանում։

Ինչ որ ասացի մտաւոր ու բարոյական ընդունակութիւնների մասին, նոյնը կարելի է կրկնել նաև կենդանիների ու մարդկանց հասարակական երևոյթների մասին. այստեղ նոյնպէս մեծ նշանակութիւն ունի նախ ծանօթանալ կենդանիների հասարակական կեանքի հետ, որը ընդունակ է մեծ ծառայութիւն անել նոցա, որոնք ձեռնարկում են մարդկային հասարակութեան ուսումնասիրութեանը։

Ահա ինչ է ասում այս մասին պրոֆեսոր Մենզբիրը.

«Այժմ սոցիոլոգիան (հասարակական գիտությունն) մենք պետք է համարենք բնագիտության մի բաժին, որի նպատակն է ուսումնասիրել ու հետազոտել այն օրէնքները, որոնց շնորհիւ ծագում են հասարակութիւնները առհասարակ. և եթէ սոցիոլոգները չը մտցնեն իրանց հետազոտութիւնների շրջանը նաև կենդանիներին, այն ժամանակ նրանք չեն գտնիլ մարդու հասարակական կեանքի շատ երեւոյթների արմատները...» [1]։

II

Առաջ, քան սկսեմ նկարագրել կենդանիների հասարակութիւնների կազմակերպութիւնը, ասելտրդ չի լինիլ մի քանի խօսք ասել այն կարգի մասին, որին պետք է հետեւեմ նպատակիս հասնելու համար։ Հասկանալի բան է, որ հասարակական կեանքը միևնոյն ձևերով չէ արտայայտում զանազան կենդանիների շրջանում։ Կան կենդանիներ, որոնց հասարակութիւնը վերին աստիճան բարդ է կազմակերպուած և զարմանում է մարդուն իր զարդացման բարձր աստիճաններով։ Կան և ասելի պարզ հասարակութիւն ունեցող կենդանիներ. վերջապէս կան և այնպիսի կենդանիներ, որոնց հասարակական կեանքը արտայայտում է գեռ չափազանց անորոշ գծերով, այնպէս որ դժուար է լինում այդ տեսակ կազմակերպութեանը իսկական անուն տալ։

Ահա այդ վերջին երևոյթներից՝ իբրև ամենահասարակներից՝ ես կըսկսեմ իմ նկարագրութիւնը, յետոյ կանցնեմ ասելի և ասելի բարդ կազմուած հասարակութիւններին և կը վերջացնեմ յօդուածս ամենաբարդ կազմութիւն ունեցող հասարակութիւններով։

Յաճախ պատահում է, որ մի որ և է տեսակ կենդանու բազմաթիւ անհատները կամ նոյն իսկ զանազան տեսակների անհատներ՝ խմբուում են միասին, երևի նրա համար, որ ասելի հեշտու-

---

[1]) Проф. Мензбиръ—Дарвинизмъ въ біологіи и близкихъ къ ней наукахъ, էջ 51։

թեամբ կարողանան դիմադրել անընպատ արտաքին պայմաններին։ Օրինակ ամեն տարի որոշ ժամանակ ծովային ձկները սկսում են ժողովել մի տեղ՝ կազմելով ահագին հօտեր։ Այդ խմբակների նպատակն է ձեռնարկել միասին մի հետաքրքիր ճանապարհորդութիւն. երբ խումբը կազմած պատրաստ է լինում՝ ձկները շարժւում են ուղղելով իրանց ճանապարհը դէպի մեծ գետերի բերանքը. հասնելով իրանց ցանկացած տեղը՝ հօտերը զբաղւում են ձկնկիթ արտադրելով։ Վերջին գործողութիւնը կատարելուց յետոյ՝ հօտերը վերադառնում են ու շուտով ցրւում։

Այստեղ՝ ինչպէս տեսնում է ընթերցողը՝ բազմաթիւ անհատներ միանում են միայն ժամանակաւորապէս մի որ և է մասնաւոր նպատակի հասնելու համար, որից յետոյ նորից ցրւում են։ Պարզ է, որ այստեսակ խմբւած անհատների մէջ չի կարող լինել ամուր կապ։

Թռչունների շրջանում աւելի յաճախ են լինում այդ տեսակ խմբումներ։ Լինում են դէպքեր, երբ թռչունները կազմում են խմբեր ընդհանուր ոյժերով մնունդ ճարելու նպատակով, կամ թէ ընդհանուր թշնամիներից իրար պաշտպանելու համար։

«Ամեն մի թռչուն, ասում է պրոֆեսոր Մենզբիրը, լաւ գիտէ, որ անհամեմատ աւելի հեշտ է թշնամուն նկատել, երբ ինքը (թռչունը) մենակ չէ, այլ ընկերներով։ Այն ինչ որ կարող է աննկատելի մնալ մի անհատից, հազիւ թէ կարողանայ չնկատուել նաև այն դէպքում, երբ անհատներ շատ կան։ Մի անհատ կարող է յոգնել, նրան հանգստութիւն է հարկաւոր, նա չի կարող անդադար նայել իր շուրջը և այն ժամանակ, երբ մննդունդ է ընդունում։ Ընդհակառակը՝ երբ ժողովւում են մի քանի անհատներ, նրանք կարող են հերթով կատարել պահապանի դերը... Այստեղ իսկական հասարակութիւն ասած բան չկայ. ամեն մի անհատ մնում է միւսների հետ իր յօժար կամքով և ամեն ժամանակ կարող է թողնել մէկերին ու միանալ միւսների հետ։ Շատ հեշտ է համոզւել, որ այդ տեսակ խմբումների կազմելը հետևանք է դիտակցութեան կամ այն համոզմունքի, որ աւելի քիչ վտանգ կայ խմբովին ապրելու ժամանակ։ Ամ ծանօթ է թռչունների կեանքը, գիտէք լաւ դիտէն, որ բաւական է, եթէ չարդը (чайка), կաչաղակը կամ կռունկը

(дрозд) նկատեն մօտեցող ազէսին և ձիչ հանեն, իսկոյն այդտեղ գտնուղ բոլոր թռչունները հասկանում են այդ ձիչը. իսկոյն ամենքը իմանում են, որ մօտենում է թշնամին ու միջոցներ են գործ դնում նրա դէմ։ Վրանով վտանգը անհետանում է։ Այդպիսով մի թռչունի անհանգիստ ձիչը լսելիս՝ ամենքին տիրապետում է սպառնացող վտանգի զգացմունքը...» [1]։

Աֆրիկայում կան սուաճ թռչունը նախազգուշում է միւս թռչուններին օձերից և սահատարակ թշնամիներից։ Նոյն դերը յաճախ կատարում է նաև ջայլամը։

Ահա ինչ է պատմում կառնիների մասին Ակակովը։ Այդ թռչունները դիշերելու համար ընտրում են մի որ և է բաց տեղ, մի քանի տեղերում դնում են իրանցից պահապաններ ու իրանք հանգիստ քնում՝ թագցնելով դլուխները թևի տակ։ Պահապանները չեն թագցնում թևերի տակ իրանց դլուխները, այլ նայում են իրանց չորս կողմը։ Հէնց որ պահապանները նկատում են որ և է կասկածելի առարկայ՝ իսկոյն ձիչ են հանում, զարթեցնում են ընկերներին և բոլորը միասին թռչում են։

Հիւսիսային երկիրներում՝ մանաւանդ մի քանի կղզիների վրայ՝ խմբւում են միասին զանազան տեսակների թռչուններ ահագին երամներ կազմելով։ Պատահում է, որ ամեն մի երամը կազմող թռչունների թիւը հասնում է տասնեակ հազարների։ Այդ թռչունների խառմբը այնքան մեծ է լինում, որ նրան անւանում են թռչունների սար։

Հէնց որ «թռչունների սարին» մօտենում է մի որ և է անցանկալի հիւր, իսկոյն նրա վրայ թափւում են բազմաթիւ անհամներ առանց խորհրդեան. մինչև անգամ այն ժամանակ, երբ թշնամին ընդհանուր չէ այլ վտանգաւոր է միայն մի տեսակի թռչունների համար, միւս տեսակի թռչունները նոյնպէս օգնութեան են գալիս՝ կռւելով թշնամու հետ։

Այս տեսակ անորոշ խմբումներին նման է կոմմենսալիզմը։ Երբեմ մի քանի օրինակներ ցոյց տալու համար, թէ որպիսի երևոյթներն են անւանւում «կոմմենսալիզմ»։

---

[1]) Проф. Мензбиръ—նոյն տեղը, էջ 34։

Նկատած է, որ Pagophil, eburnea ծովային թռչունները սովորութիւն ունին միշտ հետևել ծովակովերին (моржъ)։ Այս պատճառը՝ ինչպես յայտնեց՝ կարծում է Նրանում, որ այդ թռչունները սիրում են հեշտ կերպով կերակրել ծովակովերի անուռպի մնացորդներով։

Առհասարակ կոմմենսալիստներ կոչում են այն կենդանիները, որոնք, համբելով իրանցից աւելի ուժեղների շուրջը, աշխատում են թեթևացնել իրանց համար անուռպ ճարելը։ Կոմմենսալիստները՝ կերակրելով իրանցից աւելի ուժեղ կամ ճարպիկ կենդանիների օգնութեամբ՝ ըստ մեծի մասին ատամնձին ձեռս չեն տալիս իրանց բարերարներին, դեռ շատ անգամ նոյն իսկ օգուտներ էլ են հասցնում։

Օրինակ կարելի է բերել Buphago Africa անուանուղ թռչուններին, որոնք սատիկ սիրում են փղերի հասարակութիւնը. 15 կամ 20 հատ այդ թռչուններից նստում են փղի մէջքին և հաւաքում ու ուտում են փղի մարմնի վերայ գտնուղ պարազիտներին։ Արովհետև այդ ծառայութիւնը օգտաւէտ է ոչ միայն թռչունների այլ և փղերի համար, ուստի այդ վերջինները ամենևին չեն բարկանում Buphago Africa-ի բազմաթիւ անհատների համարձակութեան համար։ Օգտուելով այդ տեսակ ներողամտութիւնից, թռչունները նոյն իսկ խաղեր են սարքում փղերի մէջքերին։

Այսպիսով թէ կոմմենսալիզմը և թէ անորոշ համբաւածքները ըստ երևութին նման են իսկական հասարակութեանը, սակայն դորա միջև կայ նաև խորը տարբերութիւն։ Իսկական հասարակութեան անդամները միացած են լինում ամուր կերպով և երկար ժամանակով, մինչդեռ կոմմենսալիզմում և համբաւածքներում անդամները միանում են ժամանակաւորապես, և նրանց միջի կապը այնքան թոյլ է լինում, որ անդամներից շատերը, երբ ցանկանան, կարող են դուրս գալ մի համբից և միանալ միւս համբերին։

Բացի դրանից, ամեն մի իսկական հասարակութեան մէջ լինում է աշխատանքի բաժանումը, այսինքն բոլոր անդամները էլ չեն պարապում միևնոյն աշխատանքով. անդամների մի մասը զբաղւում է, օրինակ, անուռպ ճարելով, միւսը պահապանների վեր է կատարում, երրորդը բուն է շինում և այլն։ Այդ տե-

սակ աշխատանքի բաժանումն գոյութիւն չունի անորոշ խմբաձեռներում և կոմունալիստների շրջանում։

Անցնենք այժմ իսկական հասարակութիւններին։

III

ՊԻԾԱԿՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Այդ միջատները իրանց կեանքով արդէն թողնում են որոշ կերպով կազմակերպուած համայնքի տպաւորութիւն։ Ընդհանուր ոյժերով դրքա շինում են ընդհանուրի համար բոյն, որը և կպցնում են ծառերին կամ տներին։

Այստեղ մենք առաջին անգամ նկատում ենք աշխատանքի բաժանումը։ Օրինակ նոր սերունդներ արտադրելով զբաղւում են ոչ թէ բոլոր էգերը, այլ միայն դրա մի մասը, միւսները պարապւած են լինում բազմաթիւ հասարակական աշխատանքներով։ Պիծակների մի տեսակը ընդհանուր պաշտպանութեան համար ունենում է պահապաններ, «որոնք կանգնում են մուտքի մօտ և իսկոյն իմացնում են վտանգի մասին։ Դորանից յետոյ ամբողջ համայնքը կատաղում է և դուրս թռչելով կծոտում է նրան, ով խանգարել է նրանց հանգստութիւնը» [1]։

Չպէտք է կարծել, թէ պիծակների պահապանները ունին առանձին լեզու իրանց միտքը ընկերներին յայտնելու համար. համայնքը իմանում է վտանգի մասին ոչ թէ շնորհիւ որ և է ձայնի պահապանների կողմից, այլ ուղղակի տեսնելով յուզւած պահապաններին։ Երբ այս վերջիններս՝ նկատելով թշնամուն՝ կատաղում են ու ներս վազում, իսկոյն յուզմունքը և կատաղութիւնը տարածւում է հասարակութեան մի ծայրից մինչև միւսը։

Հասարակական կեանքը միևնոյն զարգացման աստիճանին չէ հասած պիծակների (oca) զանազան տեսակներում։ Կան պիծակներ, որոնց հասարակութիւնը բաղկացած է առանձին առանձին ընտանիքներից առանց որ և է ամուր ներքին կապի։ Մի բան միայն ցոյց է տալիս, որ այդ ընտանիքները պատկանում են մի հասարակութեան. նրանք

---

[1]) Эспинасъ – Соціальная жизнь животныхъ, էջ 202։

ունենում են ընդհանուր պահապաններ բոլոր ընտանիքները պաշտպանելու համար։ Ուրիմն հասարակական կեանքը այդ պիծակների շրջանում դանւում է դեռ սաղմային դրութեան մէջ։ Մի բան եւս ապացուցանում է այդ միտքը. քար մեծի մասին դրանց հասարակութիւնը տևում է ընդամենը մի տարի։

Աւելի բարդ է կազմւած տաք երկիրների պիծակների հասարակութիւնը։ Նախ նրանց շրջանում ամեն մի հասարակութեան կեանքը տևում է աւելի երկար ժամանակ։ Յետոյ սերունդ արտադրելու պաշտօնը կատարում է ամբողջ համայնքում միմիայն մի անհատ, մնացածները զբաղւում են առօրեայ աշխատանքներով։ Կը նշանակի, որ այնտեղ աշխատանքի բաժանումը աւելի եւս սաստիկ է արտայայտւում։ Ինչպէս երևում է՝ մայր պիծակը, որի միակ գործը սերունդներ արտադրելն է, խաղում է մի տեսակ իշխանատուրի դեր հասարակութեան մէջ, որովհետև, ինչպէս պատմում է Ուոլժէն, երբ սպանւում կամ պատահմամբ մեռնում է նա (մայր-պիծակը) համայնքը սկսում է արագ կերպով նւազել, իսկ բնի բնակիչները այդ կորստի պատճառով իրանց եռանդի մեծ մասը կորցնում են ու ցրւում...

Պիծակներին սաստիկ նման են՝ թէ մարմնի կազմւածքով և թէ հասարակական կեանքի կազմակերպութեամբ՝ իշա մեղուները, ուստի առանձին հետաքրքրութիւն չի ունենալ դրանց վրայ երկար կանգ առնելը։

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ։

Թէև բաւական մեծ նմանութիւն կայ մեղուների և պիծակների հասարակութիւնների մէջ, սակայն անվիճելի փաստ է այն, որ մեղուները մի քանի քայլ աւելի առաջ են գնացել՝ համեմատելով պիծակների հետ։ Բայց դրա մասին աւելի լաւ կը լինի խօսել մի փոքր ուշ, իսկ այժմ ծանօթանանք մեղուների հասարակական կազմակերպութեան հետ։

Մեղուների ամեն մի համայնք պարունակում է իր մէջ բազմաթիւ անհատներ, մօտ 20,000, որոնք բաժանւում են մի քանի դասակարգերի. ա) բանւորների, բ) դայեակների, գ) որձերի։

Այդ բոլոր դասակարգերը հպատակում են մի անհատի, այն է

թագուհուն, որը կազմում է համայնքի կենդրոնը, իշխանաւորը։ Թագուհին ոչ մի աշխատանքի չի մասնակցում, նրա միակ գործը ձու ածելն է։ Մի թագուհի ընդունակ է մի քանի ամսում ածելու մօտ 12,000 ձուաներ։ Ինչպէս երևում է, ամբողջ համայնքը համարում է թագուհու պաշտօնը ամենանշանաւորը, որովհետև ամենքը նրան պահպանում են, հոգատարութեամբ կատարում են նրա ցանկութիւնը և ազատում են ամեն տեսակ աշխատանքներից։ Համայնքի կազմակերպելու ժամանակ սկզբում լինում են մի քանի թագուհիներ, որոնք սակայն անկարող են լինում ապրել միասին մի համայնքում։ Նրանց մէջ առաջանում է կռիւ և կենդանի է մնում միայն ամենաուժեղ թագուհին, մնացածները կոտորւում են։

Բանւորների պատակարգը բաղկացած է լինում նոյնպէս էգերից, որոնք սակայն բոլորովին անբնդունակ են ձու ածելու։ Դրանց վրայ դրած են ամենաճանր հասարակական աշխատանքները. դրանց գործն է շինել բնակարան համայնքի համար։ Բայի դրանից բանւոր-մեղուները անդադար թռչում են մի ծաղկից միւսին՝ ամեն տեղ հաւաքելով մեղր և ծաղիկների փոշին, որից յետոյ պատրաստում են մնունդ ձագերի համար և մոմ՝ բնակարանների համար։ Այն հրաշալի շինուածքը, որին մենք անւանում ենք խորիսխ (cora), բանւորների աշխատութեան արդիւնքն է։ Մի խորիսխ կառուցանելու համար աշխատում են բազմաթիւ բանւորներ. մի անհատ շինում է խորիսխի մի մասը, միւսները տանջւում են խորիսխի միւս մասերի վրայ։

Դայեակները բոլորովին նման են բանւորներին, միայն նրանց գործը կայանում է ձագուկների խնամելում. նրանք են ձագերին մնունդ տւողները, մաքրողները։

Որձերը (трутни) համայնքի ամենածոյլ անպատիները են, նրանք ոչ մի աշխատանքում չեն մասնակցում։ «Դրանք՝ ասում է պրոֆ. Մենզբիրը՝ մի տեսակ արիստոկրատիա են կազմում. ուտում են, թրև են գալիս թագուհու հետից, նրա հետ միասին ձագեր են արտադրում և ոչինչ չեն անում։ Կէսօրին սրանք դուրս են թռչում զբօսնելու, թռչկոտում են տերևների, ծաղիկների շուրջը, իսկ օրւայ մնացած մասը անց են կացնում փեթակում։ Նրանք շատ են քնում,

զարթնելով՝ թրև են գալիս թագուհու եւից կամ ուտում են: Նրանց ինչ, որ բանւորները սարսափելի աշխատում, ամենքս եւ դրկանքներ են կրում: Այդ որձերի գործը չէ: Բանւորները պէտք է նրանց կերակրեն, նրանց համար բնակարան շինեն, որովհետեւ առանց նրանց՝ համայնքը չի կարող կատարելագործուել, առանց նրանց չեն կարող ծնուել նոր մեղուներ»:

Բայց որձերի ձրիակերութիւնը անվերջ չի, շարունակւում: Աշնանը՝ երբ թագուհին այլ եւս ձու չի ածում, երբ ուրիշ որձերը այլ եւս անհրաժեշտ չեն լինում՝ հասարակութեան գործունեայ անդամները յարձակւում են նրանց վրայ. մի մասը կոտորում են, միւսներին դուրս են խուզում փեթակներից: Հասարակութենից դուրս դուսած որձերն էլ շուտով կոտորւում են անունդ չլինելու պատճառով: Այդպիսով համայնքը մաքրւում է անպէտք եւ ձրիակեր անհատներից:

Համայնքի պաշտպանումը: Մեղուները սիճակների նման ունենում են պահապաններ, որոնք, կանգնած փեթակի մուտքի մօտ՝ պաշտպանում են հասարակութիւնը թշնամիներից: Խոչընդոտները են մեղուների թշնամիները: Տարաբաղդաբար մեղուները շատ թշնամիներ ունեն: Նրանց թշնամիների թուին պատկանում են օրինակ մի ահագին թիթեռներ (Acherontia atropos—«мертвая голова»), խխունջները (улитки), մկները... Բացի դրանցից մեղուների ամեն մի համայնքի համար թշնամի են լինում քսան մեծի մասին միւս համայնքների մեղուները: Այդ պատճառով մի որ եւ է համայնքի մէջ մուտք չեն կարող ունենալ ոչ մի կողմնակի՝ այդ հասարակութեանը չպատկանող՝ մեղու: Իսկ եթէ նա զօրով ցանկանայ ներս պրծնել փեթակի մէջ, նրանց խակոյն կը սպանեն պահապանները: Պատահում է, որ փեթակի մէջ են մտնում մկները կամ խխունջները: Չնայած իրանց մարմնի մեծութեանը, դրանք էլ սպանւում են մեղուների կողմից եւ դուրս են դցւում փեթակից: Սակայն ինչպէս կարող են մեղուները այդ փոքրիկ կենդանիները հեռացնել փեթակից այնպիսի մեծ կենդանիների տեսակները, որպիսիք են մկները եւ խխունջները: Նրանց համար անհնարին կը լիներ բարձրացնել նոյն իսկ խխունջի դիակը, էլ չեմ ասում մկան դիակի մասին: Մեղուները մի վերին աստիճանի արուեստ միջոցի են դիմում, երբ ցանկանում են փե-

ամիից հեռացնել որ և է կոշինակի ծանր կենդանու դիակը. նրանք կծելով պոկում են դիակից փոքրիկ մասեր, որոնց և հեռացնում են փեթակից մինչև որ այդ կենդանիների դիակներից կը մնայ միմիայն կմախքը:

Մեղուները սաստիկ վախենում են վերև յիշած Acherontia atropos թիթեռից, որը մեծ ձլամներ է հասցնում մեղուների հասարակութեանը, երբ յաջողւում է ներս մտնել փեթակի մէջ. Այդ պատճառով մեղուները նրանց դէմ առանձին միջոցներ են գործ դնում: Չէնց որ հեռւից նկատում են մօտեցող ձլամակար թիթեռին, մեղուները իսկոյն փեթակի մուտքը ծածկում են մոմով, որպէս զի թիթեռը չկարողանայ ներս մտնել: Մուտքի միայն մի փոքրիկ մասն է բաց թողնում, այն էլ նրա համար, որ մեղուները կարողանան մտնել փեթակի մէջ կամ դուրս գալ. և այդ բաց թողած ծակը այնքան փոքրիկ է լինում, որ նրա միջով մեղուները ազատ կարող են անցնել, իսկ թիթեռը ոչ:

Գողութեան սովորութիւնը մեղուների շրջանում: Վերև ես պատմեցի, թէ որպիսի գործերով են զբաղած լինում բանւոր-մեղուները: Մենք տեսանք, որ բանւորների մի մասը վաղ առաւօտից սկսած թռչում են ծաղիկներից ծաղիկներին ամեն տեղ ժողովելով մեղր և ծաղկի փոշի: Արդիհաև այդ աշխատանքը սաստիկ ծանր է լինում, ուստի բանւորներից մի քանիսները ձըգտում են մի կերպ թեթեւացնել նրան և իբրև հետևանք այդ ձըգտումի՝ առաջանում է գողութեան սովորութիւնը:

Բանւոր մեղուներից մի քանիսները բարեաք են համարում՝ ամբողջ օր տանջելու տեղ՝ հեշտ կերպով օգտւել ուրիշ հասմնքներին պատկանող մեղուների ժողոված մեղրից:

Գող մեղուները, լաւ իմանալով թէ ինչքան վտանգաւոր է իրանց արեւսը, մեծ զգուշութեամբ են անում իրանց գործը: Մօտենալով ուրիշ հասմնքի փեթակին՝ զգուշութեամբ ներս են մտնում մէջ ու այնտեղից՝ գողանալով մեղրը՝ թռչում տանում են իրանց սեպհական փեթակը:

«Եթէ այդպիսի առանձին անհրաւներին յաջողւում է գողութիւնը, ասում է Ջորջ Ռոմենսը, նրանց վատ օրինակին հետևում են նաև հասմնքի մնացած անպատիները: Այդպէս է լինում, որ մի

որ և է մեզի ամբողջ հասարակութեան մէջ զարգանում են աւազակային սովորութիւնները, և երբ այդ պատահում է՝ այն ժամանակ մեղուները սկսում են կողոպտել միասին... Այս դէպքում օտար փեթակի վրայ յարձակւում է մեղուների ամբողջ մի զօրք: Սկսւում է կռիւ և, եթէ յարձակողներին յաջողւում է ոչնչացնել պահապրուիչը, նրանք իսկոյն որոնում են օտար համայնքի թագուհուն և գտնելով սպանում են նրան: Դրանով կատարեալապէս շփոթեցնում են հիմնադիրներին ու յետոյ կողոպտում են առանց դժուարութեան» [1]:

Մի փեթակ կողոպտելուց յետոյ աւազակները յարձակւում են միւսների վրայ:

«Պատահում է, որ աւազակ-մեղուները յարձակւում են իրանց զոհերի վրայ զաշտում՝ փեթակներից բաւական հեռու: Այդ տեսակ կողոպուտը կատարւում է չորս կամ հինգ մեղուներից բաղկացած խմբերով, մեղուները յարձակւում են մի (օտար) բանւոր մեզի վրայ, բռնում են նրա թաթերից և ձգձգում, մինչև որ նա կը հանի իր լեզուն, որից նրանք հերթով լիզում են մեղրը ու յետոյ բաց են թողնում իրանց զոհ...» [2]:

Օդի նորոգումը (վենտիլացիա) փեթակի մէջ նոյնպէս կազմում է համայնքի ամենագլխաւոր հոգսերից մէկը: Եթէ մտաբերենք, որ մեղուների ամեն մի հասարակութիւն՝ բաղկացած մօտ 20,000 անհատներից՝ ապրում է փեթակում, ուր տեղ և օդ չափազանց քիչ է մի այդպիսի բազմանդամ համայնքի համար, այն ժամանակ մենք կը համոզուենք, որ օդի նորոգելը փեթակում ոչ միայն օգտաւէտ է, այլ միանգամայն անհրաժեշտ:

Այս բանում՝ ինչպէս երևում է՝ իրանք մեղուներն էս հասկացել են. նրանք գիտեն, որ, երբ երկար ժամանակ օդը փեթակում չի մաքրւում, համայնքի մէջ տարածւում են վերին աստիճան վտանգաւոր տարափոխիկ հիւանդութիւններ: Պատահում է, որ չնորհիւ այդ հիւանդութիւնների համայնքի խոշոր մասը ոչնչանում է:

---

[1]) Джоржъ Роменсъ—Умъ животныхъ, էջ 173:
[2]) Джоржъ Роменсъ—նոյն տեղ, նոյն էջը:

Ուրեմն օդի նորոգումն անհրաժեշտ է, զա՝ կարելի է ասել՝ կազմում է հասարակութեան համար կեանքի և մահի հարց։ Բայց մի՞թէ հնարաւոր բան է, որ մեղուների պէս փոքրիկ հակները կարողանան ըմբռնել օդի մաքրութեան անհրաժեշտութեան գաղափարը։

Փակերը ցոյց են տալիս, որ մեղուները կատարելապէս ըմբռնել են այդ գաղափարը։ Թէ ինչպէս է պատահել այդ հանգամանքը՝ ես չգիտեմ, միայն փակը այն է, որ մեղուները պարբերաբար նորոգում են օդը իրանց բնակարանում։

Ահա թէ ինչ է պատմում այդ մասին Ուբանէրը։

«Այն մեղուները, որոնց յանձնուած է օդի մաքրելու պաշտօնը, կանգնում են փեթակի մէջ ուղիղ կանգներով և զանազան բարձրութեան վրայ՝ արագ շարժելով իրանց թեւերը՝ քշում են օդը փոքրիկ հոսանքներով։ Այդ փոքրիկ հոսանքներից գոյանում է մի զօրեղ հոսանք, որը անցնում է ամբողջ փեթակի միջով և նորոգում օդը։ Փեթակի մուտքի մօտ էլ կանգնում են մեղուները և նոյնպէս թափահարում թեւերը, այդ էլ արագացնում է արտաքին օդի մտնելը փեթակի մէջ։ Այդ կերպով գոյացած օդի հոսանքը այնքան զօրեղ է լինում, որ կարողանում է արագ շարժել փեթակի մուտքի առաջ քաշ արած թղթի կտորները։ Մինչև անգամ՝ ինչպէս ասում է Հուբերը՝ փեթակի մէջ գոյացած հոսանքը կարողանում է հանգցնել վառած լուցկին։ Եթէ պահենք մեր ձեռքը փեթակի առաջ՝ պարզ կերպով կը զգանք քամին։

Տարաբաղդաբար մեղուները չեն կարող ամբողջ տարին կատարել այդ օգտաւէտ գործը. օրինակ ձմեռները ցրտի պատճառով օդափոխութիւնը սաստիկ դժուարանում է, երկար ժամանակ փեթակի մէջ մնում է անմաքուր օդը։ Այդ է պատճառը, որ ձմեռները աւելի յաճախ են լինում փեթակում տարափոխիկ հիւանդութիւններ։

Մեղուների ճարտարապետական տաղանդը վաղուց է, որ ապշեցրել է մարդկանց։ Գիտնականների միաձայն կարծիքով՝ մեղուների խորիսխը (cera) պատկանում է բնութեան ամենաերևելի հրաշալիքների թւին։ Մենք արդէն գիտենք, որ խորիսխը կատարւում են մոմից բանւոր-մեղուները։

Ընթերցողին յայտնի է, որ ամեն մի խորիսխ բաղկացած է լի-

նում բազմաթիւ մանր բներից (բջիջներ), որոնց մէջ մեղուները ժողովում են մեղր։ Բները վենտիլեն և շարաճ են կարգով այնպէս, որ նրանց արանքներում չեն մնում բաց տեղեր։

Այժմ տեսնենք թէ ինչով է զարմանալի խորիսխի կազմածքը։ Խորիսխները կառուցանելիս մեղուները ձգտում են երկու նպատակի հասնելու, նախ՝ որովհետև փեթակում տեղ շատ քիչ է լինում, ուստի անհրաժեշտ է կառուցանել խորիսխը այնպէս, որ անպէտք մնացած տեղեր չլինեն։ Ուրիշ խօսքերով՝ խորիսխի բները պէտք է այնպէս լինեն շինուած, որ կարողանան ըստ կարելոյն շատ մեղր պարունակել իրանց մէջ։ Միւս կողմից՝ ինկատի առնելով այն հանգամանքը, որ մոմ արտադրելը շատ ծանր աշխատանք է մեղուների համար, պարզ է, որ մեղուները պէտք է աշխատեն՝ որքան հնարաւոր է՝ տնտեսաբար գործ ածել թանգագին մոմը խորիսխ շինելու ժամանակ։

Ուրեմն մի կողմից պահանջւում է, որ խորիսխի բները ունենան՝ ինչքան կարելի է՝ մեծ ծաւալ. միւս կողմից անհրաժեշտ է՝ ինչքան կարելի է՝ քիչ մոմ գործ ածել շինութեան համար։ Արդ՝ ձրպիսի ձև պէտք է ունենան խորիսխի բները, որպէսզի հնարաւոր լինի երկու նպատակներին էլ հասնել։ Բանից դուրս է գալիս, որ այդ հարցին պատասխանելը այնքան էլ հեշտ բան չէ հեռուհեռու պատճառով։ Այդ հարցին պատասխանելու համար հարկաւոր է իմանալ, ինչէ կարծում ինչ... Բարձրագոյն մաթեմատիկա! Միայն բարձրագոյն մաթեմատիկայի օգնութեամբ կարելի է վճռել այն հարցը, թէ ձրպիսի ձև պէտք է տալ բներին, որպէս զի համ ըստ կարելոյն քիչ մոմ գործ ածւի, համ էլ բները ունենան ըստ կարելոյն մեծ ծաւալ։ Մաթեմատիկոսները արդէն զբաղւել են այդ հարցով. ծանր ու բարակ մտածելուց յետոյ նրանք եկել են այն եզրակացութեան, որ երկու նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է բներին տալ վենտիլեի ձև։ Իսկ մեզ յայտնի է, որ մեղուները տալիս են իրանց բներին իսկ և իսկ այդ ձևը. նրանք շինում են վենտիլեանի բներ։ Ուրեմն մի խնդիր, որի վճռելու համար անհրաժեշտ է իմանալ մաթեմատիկա, վաղուց արդէն վճռել են մեղուները...

«Մեղուները, ասում է դոքտոր Բէյլը, այնպէս ճշտիւ հետեւում են երկրաչափութեան օրէնքներին, որ կարծես թէ իմանում են այդ օրէնքները»։

Այս այն հանգամանքն է, որ զարմացրել ու զարմացնում է գիտնականներին։ Ինչպէս բացատրել, որ մեղուները՝ անընդունակ լինելով ըմբռնել մաթեմատիկայի օրէնքները՝ այնու ամենայնիւ ճշտիւ հետեւում են նրանց։ Ինչ ասել կուզի, որ փորձեր արել են բացատրելու այդ վերին աստիճանի տարօրինակ երեւոյթները և այդ փորձերից ամենայաջողը համարւում է Չարլս Դարբինի հիպոթէզը։ Սակայն ես անյարմար եմ համարում առաջ բերել այստեղ Դարբինի բացատրութիւնը, որովհետեւ գուցէ նա ձանձրացուցիչ թւայ ընթերցողին։

Այժմ, եթէ համեմատենք մեղուների հասարակութիւնը պիծակների հետ, մենք անշուշտ կը գանք այն համոզմունքի, որ թէեւ այդ երկու տեսակ հասարակութիւնները իրար նման են, բայց մեղուների հասարակութիւնը իր զարգացման աստիճանով անհամեմատ աւելի բարձր է պիծակների հասարակութիւնից։

ա) Ներքին կապը մեղուների համայնքում անհամեմատ աւելի ամուր է, քան թէ պիծակների շրջանում։

բ) Աշխատանքի բաժանումը աւելի կատարեալ, աւելի զարգացած է մեղուների շրջանում։

գ) Պիծակների շինութիւնները անհամեմատ աւելի սուղ են քան մեղուներինը և այլն։

(Կը շարունակուի)

ՆԱԻԹԱԾՐՋԱՆԻ ԲԱՆԻՒՐՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵՑԱՆԻ

(Շարունակութիւն [1])

*
* *

Բացի չիշատ առողջապահական պակասութիւններից, կայ և մի ուրիշ դաս պակասութիւններ, որ կրկին բանուորի առողջութեանն է վերաբերում։ Դրանք «վնասումներ» կոչուածներն են։

Վնասումներն այնպիսի շօշափելի և տեսանելի երևոյթներ են, որ չտեսնելու համար պէտք է բոլորովին կոյր լինել։ Ի՞նչպէս չնշմարել, երբ մի մարդու ոտն է կտրուում, միւսի թևն է ճնշուում, երրորդի երեսն է այրուում, չորրորդի մատն է կտրուում, հինգերորդը նաւթի մէջ է խեղդուում, վեցերորդը մազութի մէջ այրուում և այլն և այլն։ Ի հարկէ չնշմարել, չտեսնել անկարելի է։ Դրանք արդէն այնպիսի երևոյթներ են, որոնց նոյն իսկ օրհնքը չի կարողացել աչքից թողնել։ Կան որոշ յօդուածներ, որոնք ճնշուման պատճառ եղածին, պատժում են։ Իսկ առաջին տեսակի դանդաղ, ապտող պայմաններն այնքան ծանր, այնքան անզգալի կերպով են առաջ տանում իրանց գործը, որ նշմարելը և ձեռք մեկնելը պահանջում է աւելի ուշադրութիւն դէպի բանուորը։

Վնասումները առաջանում են երկու պատճառից. առաջին և ամենատարածուած պատճառն է այն, որ մեքենաները և միւս շրջա-

---

[1]) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 10, 11, 12 և 1893 թ. № 3, 4 և 10։

պատող առարկաները հարկաւոր կարգին, հարկաւոր պատրաստութեան և զգուշութեան չենք ենթարկում։ Սրա պատճառն էլ ամենքին յայտնի արծաթասիրութիւնն է։ Տգէտ դրամատէրերը կարծում են, թէ մի քանի մանկէմ մի վինտ, մի պարանի կամ մի ուրիշ բանի համար որ խնայենք, մեծ բան կանենք։ Վնա այնքան զարգացում, այնքան խելք չկայ մեր դրամատէրերի մէջ, որ կարողանան ըմբռնել մի ամենահասարակ ճշմարտութիւն. որքան բանող մարդու պայմաններըդ—թէ ապրուստի, թէ աշխատութեան—լաւ լինեն, այնքան նրա աշխատանքն աւելի արդիւնաւէտ կը լինի։ Տգէտ գիւղացին այդ ճշմարտութիւնը վաղուց է հասկացել. նա իր կռվերին շատ լաւ է պահում, որ շատ կամ քիչ տան։ Պէտք է աւելի արդարասէր լինել. երբեմն դրամատիրոջ մեղքը թեթևանում է, որովհետև կառավարիչների անփորձութիւնից և անհոգութիւնից էլ կարող են առաջանալ շատ վնասումներ։ Բայց կրկին մեղքը դրամ ատրոջն է, եթէ ուզենանք դէպքի վրայ փաստացի նայել. ինչո՞ւ չի վարձում «լաւ» կառավարիչ. որովհետև փողն է խնայւում։ Երկրորդ և քիչ պատահող պատճառն է, բանւորի անփափկան անհոգութիւնը։ Առաջին դէպքում օրէնքը մեղաւոր է ճանաչում հաւատարմատար կառավարչին կամ, եթէ կառավարիչ չկայ, դրամատիրոջը և «պատիժ» նշանակում, իսկ երկրորդ դէպքում բանւորին և այդ դէպքում՝ անհեռանք թողնում գործը։

Կառավարութեան ժամանակ, ի հարկէ, միշտ յաղթողը լինում է դրամատէրը. «հզօրի առաջ անմեղ արդարն էլ է մեղաւոր»։ Խեղճ բանւորը, որ առանց այն էլ զրկւած է իր միքը կանոնաւոր կերպով յայտնելու ընդունակութիւնից, պէտք է պատրաստում ինքն իրան պաշտպանին, պատասխանելով դրամատիրոջ կողմից գործը պաշտպանող «երդւեալ հաւատարմատարներին»։ Բանւոր, և բարեբաղդն կրթութիւն ստացած իրաւաբան—ինչ հաւասար ոյժեր են դատ պաշտպանելու գործում։ Եւ այդ իրաւաբաններից շատերը, առանց խղճահարելու, մեղքը դնում են բանւորների վրայ, որոնք գուցէ, առանց այդ էլ, ահագին վնասներ են տեսել։

1891 թւի օգոստոսի վերջերին էր, որ կառավարչի անհոգութեան և անխղճութեան շնորհով Կալիանպցիների նաւթագործարանում 6—7 սաժէն խորութեան լայն ջրհորի մէջ ընկան և խեղդ-

ւեցան երկու առողջ բանւորներ, որոնց սոիպել էին մնանել նաւթաչին գազով և զօրեղ ածխաթթւով լցւած այդ հորը։ Մտնելը և ուշադնաց լինելն ու ահագին բարձրութիւնից մինչև ջուրն ընկնելը 3—5 րոպէ տագիս տևեց։ Ոչ ոք չէր ուզում հորը մտնել նոյն իսկ 10 մանէթի համար, որ գոնէ այդ ողբալելիների դիակները հանեն։ Երկու ժամ սկզբը միալուց յետոյ տագիս հանւեցան, երբ արդէն ամեն ինչ վերջացել էր։ Եթէ շուտ օգնութիւն հասցնէին, անշուշտ կազատւէին։ Եւ այդ դործարանի հրէայ կառավարիչն ազատւեց օրինքից, արդարացաւ, որովհետև «բանւորներն էին մեղաւոր. սեփական անհոգութեան պատճառով ուշադնաց եղան»։

Նոյն թւի աշնանն էր, որ Նոբել եղբայրների ձուլարանում հալած չուգունը կաթսայից դուրս է թռչում և այրում մի քանի բանւորների ամբողջ երեսները։

Կրկին նոյն աշնանն էր, որ նաւթադաշտում նաւթի ամբարի մէջ խեղդւել, սւացել էր մի բանւոր։

1892 թւի կարծեմ յունւարին էր, որ բանտարկւեցան երկու աչքի ընկնող փիլմանների տէրեր—Արաքելեան և Արէշեան (?), որոնց անզգուշութեան պատճառով մեռան 3 բանւորներ։

Նոյն թւի աշնանն էր, որ կաթսայի շոգին խփեց խաշեց 2 բանւորների Սև-Քաղաքում։

Ափսոս, որ չկան ճիշտ տեղեկութիւններ մանր ու խոշոր վնասուածների և դրանց վերաբերւած դատավարութիւնների մասին։ Յայտնի է միայն այսքանը, որ 1891 թւի ընթացքում դատի են ենթարկւած 20 խոշոր դէպքեր, որոնցից 10-ը վերջացել է անմիջական մահով, իսկ միւս 10-ը ծանր խեղաթիւրութիւններով ու վնասներով։ Իսկ թէ որքան են հասարակ վնասուածների, ուռոյցների, կոտրւածքների, վէրքերի թիւը, որոնց համար բանւորը զրկւում է աշխատելու ընդունակութիւնից ժամանակաւորապէս, որքան է անյայտացածների թիւը, որոնց մրայ ոչ ոք ուշք էլ չի դարձնում և այլն և այլն—այդ միայն Աստուած դիտէ։

Ինչ ասելիանի անհոգութիւն դրամատէրերի կողմից. ամբողջ նաւթադաշտը մինչև օրս միայն երկու կանոնաւոր ճանապարհներ ունի, որոնցով կարելի է ազատով անցնել, իսկ միւս բոլոր բազմաթիւ ճանապարհները ներկայացնում են իսկական պժոխային շա-

ւիղներ։ Այսաեղ պէտք է անգադար պատահող խոզովակների ցանցերի վրայով թռչես, այնտեղ-ջուրը չընկնելու, նաւթակուլ չլինելու համար պէտք է խոզովակների վրայով լարախաղացի նման անցնես, երբորդ տեղ պէտք է ահագին շրջան անես, որ ամեն մի քայլափոխի վրայ դանւած փոսերից մէկը չդլորւես։ Ի՛նչ կայ ասելի հեշտ քան երեսակայել, որ ոտք ակըմում է, նաւթաշաղախ կաւի վրայով և ընկնում ես նաւթամբարը։ Եւ արքան խեղճ, թշւառ բանւորներ խեղդւել, անյայտացել են այդ ամբարների մէջ։ Հապա Սեւ-Քաղաքի մազութի ամբարները. եթէ բանւորի ոտը սայթաքից և ընկաւ՝ կամ կայրւի, եթէ մազութը կսթսաններից նոր է բաց թողած, կամ կը խեղդւի, եթէ հեղուկն արդէն սառել է։ Թէև այդ ամբարները շինւում են զործարանի լաւ մասերում և շատ պատերով շրջապատւում, բայց էլի քիչ չեն դրանց զարհուրելի զոհերը։

Դրամատէրերի ագիտութիւնը և անհոգութիւնը այն աստիճանի է հասնում, որ երկրագնդի համարեա կէս մասը լուսաւորող նաւթաղաշաղը դիշերները ընկնում է խոր խաւարի մէջ։ Այսաեղ և այնտեղ մթութեան մէջ փայլփլում են մանրիկ էլեքտրական ճրագներ, որոնք հազիւ մի քանի քայլ տեղ կարողանում են լուսաւորել և այն էլ դրւած են լինում միայն այն տեղերում, որոնք ծառայում են ազգի անմիջական շահագործութեանը (էկսպլուատացիա), այդ տեղերից մի քանի քայլ այն կողմ դնայիք, կը շարիք, թէ ճիր դնաք, ինչ անէք, որ ձեզ վտանգի չենթարկէք։ Նաւթաշաղախ, սայթաքող, նեղ ճանապարհները և նրանց շրջակայքում ցրւած բազմաթիւ փոսերն, աւտոներն ու նաւթամբարները շինւած են յատկապէս, կարծես, դիշերով մարդկի որսալու համար։

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ արդեւած է, նաւթահորերի մեծերը նաւթի կամ մոմի լապտեր մեն մեծել. անցնողը միայն պէտք է բազդի վրայ յոյս դնի։ Այդ է պատճառը, որ, մուքին ընկնելուն պէս, մշակ թէ ինտելիգենտ բանւորները վախւում են իրանց տներում և, առաջինները, խաղով, ոխուր երգերով ու սազով և հէքիաթներով անցկացնում ժամանակը, իսկ երկրորդները—կամ քամբասելով, կամ հարբելով, կամ անտեսակից անհոգատակ թափառելով։ Շարժւում, մոքերի փոխանակութիւն, ոգեւորութիւն— Աստւած ասաց։ Իսկ իրար պատահած ժամանակ նոյն գոյլը, նոյն

մղիչները, նոյն զգեցիկ նաւթն ու շաղուանը... ոչինչ գաղափարական, ոչինչ բարձր, կոպեկից դուրս...

Հապա հրդեհը. մի՞թէ պա փոքր վնասուածներ է առաջացնում։ Ուզում էք ժողովքի մասին գաղափար կազմել, տեսէք Բալախանում կամ Սև-Քաղաքի մի մեծ հրդեհը. չորս կողմ փայտեայ իրեր, նաւթի ամբարներ ու պահեստաներ, նոյն իսկ գետինը նաւթով լցուցած—ինչպէս կը վառուի Իսկ եթէ շաղուան խփած ժամանակն է հրդեհը բռնկում, ամբողջ նաւթասիւնը կրակ է դառնում և հսկայական ծուխ նման այրուում ու կրակէ անձրև թափում։ Հանգցնել անկարելի է. պիտի այրուի մինչև վերջը։ Այդ դէպքում էլ անվնաս չի մնում խեղճ բանուորը. խանձուել, այրուել, ոսկր, ձեռք կտրել և այլն և այլն։

Վնասուածների մասին բանուորը դիմում է օրէնքին, պատարանին, երբ այդ վնասուածներն զգալի են, խոշոր են. իսկ ո՞ւր դիմէ խեղճը, երբ վնասուածները մանր են, երբ կառավարիչները, այդ բանուորների «խարազաններըե», ապօրինի կերպով տանջանքների են ենթարկում առանց այն էլ զրկուած բանուորին։ Մոսկայի, Վարշաւայի շրջանի բանուորը կարող է դիմել շրջանի գործարանական տեսչին և նոյն իսկ վերատեսչին—իսկ մե՞րն ում դիմէ, ինչ անէ։

* * *

Ինչպէս արդէն մի անգամ ասուած է, նաւթաշրջանի բոլոր բանուորներն եկած են գիւղերից և քաղաքներից։ Գիւղական բանուորները բերել են իրանց հետ բոլոր գիւղական նախապաշարմունքները և տգիտութիւնը, գիւղական մաքրութեան, պարզութեան ու բարոյական ամբողջութեան հետ միասին. իսկ քաղաքներից եկածներն արդէն կրում են իրանց մէջ փչանալու բոլոր սաղմերը, ունենալով դրանց հետ և շատ չնչին թւով լաւ, դրական կողմեր էլ։ Վերջիններիս պակասորդը շատով լրացնում է նաւթաշրջանը, մեծ քաղաքներին յատուկ ճարպկութեամբ։ Իսկ գիւղականների ամբողջ, դեռ ձեռք չկպած, բնաւորութիւնը արագութեամբ սկսում է լուծուել, ոչնչանալ, ընդունելով մեծ քաղաքներին յատուկ բոլոր պակասութիւնները ու առաւելութիւնները։ Բայց ո՛րքան քիչ են այդ առաւելութիւնները, համեմատելով իւրացրած անբարոյակա-

նութեան հետ։ Անվիճելի է, որ գիւղական պանդուխտ կամ դաղթական բանուորը քաղաքում զարգանում է մտաւորապէս. բոլոր մեքենաները, գործարանները, էլէքտրական լուսաւորութիւնը, կուլտուրայի բոլոր արդիւնքները, մեծ քաղաքի նոյն իսկ անունը, դեռ չհաշուած մարդկանց շփումից առաջացած զարգացումը, առաջ են քշում, բայց անում մարդու մտաւոր կարողութիւնները։ Այդ ճանապարհով ձեռք բերած մտքի զարգացումը միշտ դէպի անբարոյականութիւն է տանում անհատին. ոչնչանում են ամէն տեսակ բարոյական հիմքեր, կորչում են նախապաշարմունքները և դեռ չեն արւում՝ բարոյական հիմքեր։ Իսկ այդ բարոյական դատարկութիւնը, այդ ամէն տեսակ սրբութիւնների ոչնչացումը միշտ աւելի զգւելի հետեւանքներ է տալիս, քան նոյն իսկ «նախապաշարմունքները»։ Պէտք է քանդել ամէն տեսակ նախապաշարմունքներ, խախտել ամէն տեսակ հեղինակութիւններ, բայց միշտ դրա հետ միասին պէտք է առաջ քշել դրականը, բարոյական հաստատուն հիմքերը, որոնք արդէն ընդունուած, ճանաչուած են լոգիկայից։ Առաջադիմութեան հաստատուն և անվրէպ ձեւը միշտ եղել է այն, որ կազմակերպել է նոր համոզումներ, նոր հայեցակէտեր, իսկ այդ նորերն առանց մեծ նեղութեան իրանք են քանդել, դուրս քշել հներին։

Ռուս գրականութիւնը, մանաւանդ և հայկականը, տալիս են բազմաթիւ կենդանի տիպեր այդ բարոյական դատարկութեան։ Բաւական է յիշել այդ տիպերից ամենախոսունները—Նիկիտան—և իր մայրը—Մատրիոնան (Л. Толстой—„Власть тьмы“), Արշալոյս Սերդէչը („На заработкахъ“—романъ изъ жизни чернорабочихъ женщинъ—Лейкинъ). բաւական է յիշել մեր «միկիտան Սաքօն» (Պռօշեանց—«Հացի խնդիր»), բաւական է թերթել Գ. Ուսպէնսկու և Շչէգրինի առաջին պատահած յօդուածը, և մեզ համար պարզ կը լինի, թէ ինչ է յաջորդում գիւղական բնաւորութեան ամբողջութեան (цѣльность) քայքայմանը։

Պալիս են անմեղ՝ աշխարհ, մարդիկ չտեսած գիւղացիները և մի քանի ամիսներից կամ տարուց յետոյ նրանց բնաւորութիւնը լուծւում և վարակւում է։ Առաջ գոնէ նա վախենում էր սըրբերից, աժոխքի պատիժներից, Թասիրից ամաչում էր, ուրիշների

կարծիքին նշանակութիւն էր տալիս, մի խօսքով ունէր մի որոշ տեսակէտ, որով քննում էր բոլոր կենսական երևոյթները և իր սեփական «ես»-ը, իսկ այժմ նա կորցրել է իր կեանքի կեսը. չգիտէ ինչպէս նայէ, ինչով չափէ լաւն ու վատը։ Տէքք, շուտով աւէք նորան այդ բարոյական արշինը, այդ բարոյական հիմքերն ու տեսակէտը, որ նա չառաջնորդի բարոյական «անցողական դրութեան» կեդտերը։ Գուցէ ասեն, որ այդ «անցողական», դատարկ դրութիւնն անհրաժեշտ է, սակայն դրան հետևեալ ասիճանն օդի մէջ կախուած կը մնայ։ Ո՛չ, պարոններ, հարկաւոր նախապատրաստութիւն և զարգացում ունեցող առաջնորդները կարող են այդ դատարկութիւնը չստեղծել. հարկաւոր է միայն «հարբանիքի յարմար հագուստով հարթեստուն մտնել»։

Բանւորի բարոյական աշխարհն ամբողջապէս բռնուած է միայն «փողով», որի ձեռք բերելու համար նա ամեն տեսակ միջոցներ գործ կը դնի, եթէ կարողանայ։ Երբ արդէն այդ «կարողանալը» նրա համար հեշտանում է, այլ ևս մնաք բարով գիւղացիական սրբութիւններ... Նա միշտ ձգտում է ազայ դառնալ, կոկիկ հագնուել, շատ փող դիզել. մի խօսքով—նա ճաշակում է դրամագլխի բոլոր թովիչ կողմերը։ Նրա իդէալն է աւելի շատ յեսին «չարչի-ազան», քան ամենաբարոյական մարդիկը,, որոնց նա «խեա» է անւանում։

Այդ դրութեան հասնելու համար շատ երկար ժամանակ չէ հարկաւոր. բաւական է կէս կամ մի տարի, և արդէն ամեն ինչ պատրաստ է. ձգտումները փոխել, բարոյականը քայքայել, սրբութիւնները կորցրել նրանց նշանակութիւնը։ Այդ դրութեան մէջ են բանւորների բոլոր քաղաքացի մասը և գիւղականներից վաղուց եկածները, այդ ճանապարհի վրայ են վերջիններիս նոր եկած խմբերը։

Ամեն բան նպաստում է քայքայելուն—ոչինչ չկայ, որ պիտդրէ, որ յետ պահէ. ոչ մի հասարակական հիմնարկութիւն, բացի «հանրամատչելի գինետներից», քաղաքակրթող կաբակներից, կանանց ոչ մի հասարակութիւն, բացի բազմաթիւ ռուս ու գերմանացի լացարարներից, աղախիններից, պոռնիկ կանանցից և գինետների ու խանութների «էժան սիրաբանութիւններ» անող առևտրական կանանցից։ Այո, շատ վտանգաւոր և հրապուրիչ է ընտանիքից զրկուած, կնոջ հասարակութիւնից բաժանուած բանւորի համար

այդ «ընկած կանանց» դասակարգը։ Ինչ վեներական հիւանդութիւններ ասես չեն տարածւած նաւթաշրջանի բոլոր դասակարգերի մէջ, շնորհիւ այդ դասակարգի կանանց, շնորհիւ իրերի ներկայ դրութեան։ Որքան կոպտանում է, վայրենանում է տղամարդը, երբ բոլորովին կորուում է կանանց հասարակութիւնից։ Պակասում է նաւթաշրջանի բոլոր դասակարգի ծառայողների համար կնոջ փափկացնող և նոյն ինքն ոգի բարձրացնող ազդեցութիւնը։

Վերջացնում է երեկոյեան գործը կամ ոտն օր է, գործ չկայ։ Ո՞ւր գնայ, ինչ անի բանւորը։ Նոր եկածները մխիթարութիւն են գտնում հէքիաթների, երգի և հայրենական թարմ յիշողութիւնների մէջ. իսկ հնները։ Տունն գնան։ Տունը կեղտոտ, խոնաւ, մութ, փոքրիկ. ոչինչ չի քաշում ձգում նրան դէպի տուն։ Հասարակական ոչ մի զբօսավայր, ոչ մի զբաղման, մարզավայել տեղ չկայ, որ գնայ, հիմիքապէս և բարոյապէս տանջւած մարմնին հանգստութիւն տայ, թարմացնի։ Միւս կողմից ճնշում է, ճնշում աղքատութիւնը, մաշում է թախիծը, կարօտը, հալածում է այն միտքը, որ ինքն էլ ուրիշների նման մարդ է, բայց դատապարտւած է տանջւելու, չարչարւելու։ Սարսափելի հոգեկան դրութիւն... Մարմնի յոգնածութիւնն աւելի անտանելի է դարձնում խեղճի մութ կերպով զգացած հալածող մտքերը։ Նա չի կարող պարզ հաշիւ տալ իրան, թէ ինչ է ուզում, բայց դրութիւնը պարզ է։ Ո՞ր ժամանակ ամբոխը կարողացել է գիտակցօրէն վերաբերւել իր դրութեանը։ Եթէ այդ գիտակցութիւնը լինէր, էլ ի՞նչ կարող էր արգելել ամբողջութեանը դուրս գալու այդ դրութիւնից։ Նաւթաշրջանի ամբոխը, բանւոր դասակարգն էլ է գտնում իր գլխի ճարը, բայց այդ միջոցն արդէն վաղուցւայ յայտնի միջոցն է և միակը—նա գնում է միակ փրկատեղին—գինետունը։ Նա խմում է, հարբում է, կարծես զարձանում է, բայց այդ ողորմելի զարձութիւնը զարձութիւն չէ, այլ փորձ՝ ժամանակաւորապէս խեղդելու դլուխ բարձրացրած խուլ, ներքին անորոշ բողոքի և անբաւականութեան ձայնը։ Քիչ քան տարի ն. Տոլստոյը բողոքի ծխախոտի և խմիչքների դէմ և թող դրանից էլ աւելի Աղ. Դիւման բարեհաճի մի քանի յօդւածներ դրել դրանց օգտակարութիւնը ապացուցանելու համար—այդ բոլորը կը մնան միայն իբրև նշան քարոզողների ներքին աշ-

խարհի, զգացմունքների թափառումների, որոնք ելք են փնտրում, միջոց են մտածում հասարակական ցաւերի դէմ, և իրերի ներկայ դրութեան ժամանակ սխալած են լինում կռւել միայն հետևանքների դէմ, մատնանիշ անել միայն որոշ պայմանների անխուսափելի հետևանքները, փոխանակ աշխատելու աւելի արմատական միջոցների դիմելու, փոխանակ դրանց առաջացնող պայմանները կործանելու։ Ամբոխի կեանքը միշտ եղել է կոյր և խուլ այդ տեսակ քարոզների համար։ Ամբոխը միշտ կազմել է և կազմում է աշխարհի ամենադրական և նիւթապաշտ (մատերիալիստ) տարրը, երբ գործը վերաբերւել է նրա երկարժամանակեայ սովորութիւններին. դժւար է նրան յետ կանգնեցնել որ և է բանից կամ մի նոր բան անել տալ, մինչև գործով ցոյց չտաք նրան դրա օգուտը։

Ի՞նչ անի հասարակ բանւորը, երբ նրա առաջած 50 կոպէկը բաւական չէ ապրելու համար, ինչով է մեղաւոր նա, որ ինքն էլ իրրև մարդ ունի այս վերջինիս յատուկ բոլոր պահանջները. նա էլ ուզում է, զւարճանալ, նա էլ է ուզում փոքր ինչ բարձրանալ ամենօրեայ հոգսերից, ուզում է գոնէ մտաւորութեան տալ այդ մաշող դարդերը։ Այդ ամենը նա գտնում է իր ընկերական շրջանում, մի քանի շիշ սպիտակ հեղուկն առաջներին։ Եւ խմում է նա։ Խմում է, որովհետև այդ խմելը նրան տալիս է մի քանի երջանիկ, հոգսերից, ձնշող կարիքներից ազատ վայրկեաններ։ Երբ գլուխն սկսում է տաքանալ, ջղերը դրգռւել, նա իրան զգում է բարձրութեան գագաթնակէտին. նրան թւում է թէ ինչ ուզենայ կարող է անել այդ րոպէին։ Ջղերի դրգռման յաջորդում է ընդհանուր թուլութիւն և եթէ հերոսը բաղդ ունեցաւ՝ մի անկիւն կը գտնի, հանգիստ կը քնի, իսկ հակառակ դէպքում—կընկնի փողոցները, ամէն րոպէ, պատրաստ լինելով ընկնել ձիաքարշի, շոգեկառքի կամ բազմաթիւ կառքերի տակ։ Պատէպատ կպչելով, երերալով լինքն իրան հետ խօսելով, գնում է առաջ ողբալին և շատ յաճախ գւարճութիւնն պատճառում դրան շրջապատող անսիրտ հասարակութեանը։ Ինչ չի պատահել ինձ լսել այդ հարբածների բարքաբանային բողոքը. նրանք բողոքում են Աստծու դէմ, որ իրանց այդ օրին է դրել, բողոքում են կառավարչի դէմ, որ այդ օրերը գրկել է տեղից կամ տուգանք է տւել, վերջապէս բողոքում են, իրանք

էլ չիմանալով ինչի, ձեմ դէմ. դա խուլ կերպով զգացուղ մարդկային, իսկական մարդավայել զգացմունքների բողոքն է, որոնք եղել են բանաւորի մէջ ամենաստոր ստրկութեան, որովհետև երկար, մշտական ֆիզիքական աշխարհքը բթացնում, մի տեսակ անասնացնում է մարդուն, որովհետև շրջապատողների—գրամատէրերի և նրանց արբանեակների—յարաբերութիւնը միացնող, խեղդող է ամեն մի մարդավայել, մաքուր զգացմունքի։ Ազան ու իր հաւատարիմ ծառաները պահանջում են նրանից քծնել, կեղծաւորել, շողոքորթել անպայման «այո» ասել ամեն մի բանի։ Այն աստիճանի է հասել այդ բարոյական ճնշումը, որ բանաւորը մի բոլորովին տարբեր մարդու մէս է նոյն դիրքն է բռնում, ինչ ազայի մօտ. այսինքն արդէն տոքանալը, անասնական դիրք բռնելը սովորութիւն է դառել մեծապատիւ ազանների բարեհամբ ցանկութիւնով։

Բանաւորին ստրկացնելու գործում աւելի մեծ դեր են խաղում կառավարիչները ու միւս ինտիլիգենտ աշխատաւորները, քան նոյն իսկ գրամատէրը, որ երբեմն ամիսներով չի տեսնում նաւթահանքի կամ գործարանների երեսը։ Այդ աշխատաւորի պահանջը ճիշտ ընկնում է ազայի պահանջների հետ, նրանց ձգտումները նոյն են. գարձնել բանաւորին մի անշունչ գործիք, որին ինչ հրամայես, ինչպէս և ինչ ժամանակ ասես, այնպէս և վայրկենական արագութիւնով կատարի, մեռցնել ամեն տեսակ անհատական մարդկային ձգտումներ, որ բանաւորը ոչ մի խօսք, ոչ մի բան չկարողանայ ասել հակառակ իրանց բարեհամբ անօրինութեան։ Երբեմն այդ ինտելիգենտ աշխատաւորներն աւելի «ազայական են» իրանց ձգտումներով, քան նոյն իսկ գրամատէր բուրժուանները։

Ի՞նչ կայ աւելի հեշտ, քան կտրել մի նաւթական խիտ կաբիք ունեցող և ոչ մի որոշ և հիմնաւոր բարոյական հասատատ կերպարանք չունեցող ոգէտ անհատի։ Բանաւորին շրջապատողները բոլորն էլ սիստեմատիքաբար ձգտում են նոյն կէտին, կարծես լաւ մանկավարժներ լինեն։ Ի՞նչպէս կարող է դիմանալ խեղճ բանաւորն այդքան ուժին, այդքան զօրեղ ճնշման։ Եւ նա տեղի է տալիս, ընկնում է, կոտրուում, դառնում նրանց ուզած գործիքը։ Այդ տեսակի գործիքներ են նաւթաշրջանի համարեա բոլոր ծառայողները իրանցից բարձրների մօտ։ Վերջին տարիներս, երբ, հայ ուսուցա-

կան ասպարէզից զգւելով, շատերը Թողնում գալիս էին Բագու գործ գտնելու, դրամատէրերից շատերը ակնյայտնի կերպով խուսափում էին նրանց տեղ տալուց, տեսնելով մարդու կարիք եր լինում, որովհետև ուսուցիչ եղած մարդը էլի քչից-շատից հասկանում է «իրաւունք և պարտականութիւն» բառերը։ Դրամատէրերն ու կառավարիչները լաւ են համարում մի ազգի վրայ գնել երանց գործի վրայ, քան մի հասկացողի։ Բայց այդ դրամագլխի կրծող ոյժն այնքան զօրեղ է, որ նոյն իսկ ամենալաւ երիտասարդների բարոյական աշխարհը մի-երկու տարուց յետոյ սկսում է քայքայւել, ոչնչանալ, տեղի տալով ընդհ անուրի միաձայն պահանջներին։ Նաւթաշրջանում ծառայողի աչքում կապիտալն սկսում է հրեշաւոր արժէք ստանալ, դրա հետ միասին բարձրանում է և կապիտալիստը, ազան։

(Վերջը յաջորդ համարում)

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈԼԱՆ

Ֆ Ե Լ Ի Ք Ս Ի

(Շարունակութիւն [1])

V. ՃԻՇՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԵՐՈՒՆԵՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՒ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ։

Հոգեբանութեան բացակայութիւնը դասական գրականութեան մէջ և դրա պատճառը։ Արդի հայեացքները հոգեբանութեան վրայ։ Սիրոյ ծագումն «Ապրելու ընչաքաղցութիւն» րոմանի մէջ։—Սէրը Զոլայի վէպերում։—«Աբբա Մուրէի մեղքը» և Սերժի հոգեբանութիւնը։—Կրքերի ընդհարումն։—«Երազ» (Le Rève). Անժելիկի օտարոտի հոգեբանութիւնը և նրա մեկնութիւնը։—Ֆլորի սէրը «Գործի» մէջ։—Զոլայի հոգեբանութեան բնորոշումն։—Նրա սուրբ հոգեբանական վէպերը։ L'Oeuvre (Գործ) և կլոդի հիւանդական հոգեբանութիւնը։—La Bête Hamaine և Ժակի հիւանդական հոգեբանութիւնը։—«Le Docteur Pascal» (Բժիշկ Պասկալ) և Պասկալի բարի հոգեբանութիւնը—Անհետանումն։

Dans un psychologue il y a un idéologue et un logicien.

E. Zola

Զորրորդ սկզբունքը, որին հաւատարիմ է մնացել Զոլան իր գրուածներում—հոգեբանութեան մշակումն է։

Հոգեբանական տարրը այնպիսի մեծ տեղ է բռնում րոմանի

---

[1]) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 5, 6, 11, 1893 թ. № 6 և 7—8։

մէջ, որ նրա մանրամասն ուսումնասիրութիւնը չափից դուրս կը ծանրաբեռնէր մեր այս էսքիզը: Մենք խօսացել ենք մի ուսումնասիրութիւն ներկայացնել հոգեբանական գրական ուղղութեան մասին և այն ժամանակ մանրամասն կը քննենք նորագոյն հոգեբանական հայեացքները արդի գիտութեան տեսակէտից:

Առայժմ մենք կը կամենայինք մի թռուցիկ հայեացք գցել Զոլաի րոմանների հոգեբանութեան վրա, որովհետև նա մի առանձին գոյն ունի և գուցէ լաւ ըմբռնած չէ կրիտիկոսներից: Զոլաի հերոսների հոգեկան աշխարհը չափազանց ընդարձակ է: Եւ այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ հեղինակը բոլոր դասակարգերից է վերցրել իր գործող անձերը: Ամենանուրբ արիստոկրատներից սկսած մինչև ամենադեհիկ գիւղացին անցնում են մեր աչքի առաջ հազար ու մէկ հոգեկան յուզմունքների մէջ: Անտեսի դժւարութիւն կայ այսպէս բազմակողմանի հոգեբան լինել: Եւ ամենամեծը, ամենազարմանալին այն է, որ գրողը իր սեփական հոգին չէ դնում համ արիստոկրատի, համ բանւորի, համ ոգեւորչու, համ օրիորդի մէջ: Թոյլ գրողը միշտ և ամեն տեղ իր սեփական հոգեբանութիւնն է նկարագրում, նա եսական է բառիս ամենապարզ նշանակութիւնով:

Յայտնի շւեդացի գրող, Օլա Հանսոնը, խօսելով այն գրքերի մասին, որոնց մէջ նկարագրւում է գիւղացի-հողագործը, ասում է. «Այո, այս բոլոր հեղինակների գրքերը պարունակում են իրանց մէջ գիւղական կեանքի պատկերներ: Բայց իզուր կ'որոնէիք նրանց մէջ գիւղացուն իրան, որովհետև նրանց միջի մի քանի հատ ու կոր վիպասերը կարծես հեռադիտակի միջով են դիտւած»:

Այլապէս չի էլ կարող լինել, այնքան հեռու է գիւղացու հոգեբանութիւնը մի բուրժուա-հեղինակի հոգեբանութիւնից:

Անտարակոյս ոչ մի հեղինակ չի կարող պարծենալ, որ նա իր հոգեբանական էսքիզներում միանգամայն օբյեկտիւ է եղել: Միայն զգացողութիւնների քանակութեան մէջն է տարբերութիւնը: Ով շատ է զգացել, շատ էլ արտադրում է, ով բազմակողմանի զգացմունքներ է ունեցել, նրա հոգեբանութիւնն էլ բազմակողմանի կը լինի: Ընթերցումն, թատրոնը, վերջապէս ընդհանուր զարգա-

ցուցին միջոց են տալիս հեղինակին հարստացնել իր գրածների հոգեբանական մասը։

Գաղափարի գրականությունը, որը չկարողացավ բոլոր տեղերն ել, չտեց նաև լուրջ հոգեբանական հարցեր։ Յուզական և հոգեմտական բանաստեղծությունները զբաղված էին բնությունով և նկարագրում էին նրա, իրանց անհասկանալի, բայց սովորալի երևույթները։ Ընդհարման մարդու ուղեղը դեռ չէր հետազոտել բնական երևույթները. արեգակը ու կայծակը, մրրիկն ու երկրաշարժը, ջուրն ու կրակը, բուսականությունն ու կենդանիները դեռ քննված չէին և մարդուս խորհրդածության միակ նյութերն էին գառնալ։ Ըհասկանալով թե ինչ է կայծակը, ինչ է երկրաշարժը, կամ ծովի ալեկոծումն, հին ոգեա մարդը այդ բոլոր երևույթները վերագրում էր զանազան չաստուածների և չաստուածուհիների։ Այսպիսով երկինքն ու երկիրը լցել էին աստուածներով և դևերով, որոնք մարդուս օգտակար և վնասակար բնության երևույթների ղեկավարողն էին։

Սրանով է բացատրվում, որ դասական մարդկանց ուղեղը, ընկճված լինելով այս անբացատրելի հրաշքային երևույթներից, անպատրաստ նրանցով էր զբաղված։ Սրանով է բացատրվում հին դարերի խորհրդականությունը (միստիցիսմ), որը, կրկնում ենք, ոչ այլ ինչ էր, եթե ոչ մարդուս ուղեղի մանկության պտուղը, եթե ոչ մարդու խոտորվանությունը, որ նա ոգեա է...

Սակայն ուշով դիտելով բնական երևույթները, մարդս կամաց-կամաց սկսեց թափանցել նրա դաղտնիները և քիչ-քիչ այդ գերբնական երևույթները իրանց բացատրությունն ստացան և երկնքի ու երկրի «հրաշքները» գնալով ավելի և ավելի պարզվեցան։ Այն ժամանակ մարդիկ սկսեցին ազատել իրանց սրտի երկիւղը բնական երևույթներից, չաստուածները մի առ մի անհետացան, կուռքերը խորտակվեցան և նրանց փլատակների վրա կամաց-կամաց բարձրացավ դիտության ջօրեղ աստուածը։

Մարդուս խելքը ազատվեց կաշկանդներից և սկսեց զարգանալ ու քննադատության կոնտրոլի ենթարկել բնության երևույթները։ Այն ժամանակ ծնվեցան մեծ յեղափոխիչները մարդկային

խելքին, որոնց անուններըը ոսկեզօծ տառերով փորագրուած են առաջապիմուԹեան արձանի վրայ։ Երբ մարդ մեկնեց նրան երբեմն սարսափեցնող երեւոյԹները, մանաւանդ, երբ նա սկսեց նաեւ սանձել նրանց եւ մինչեւ անգամ օգտուել նրանցից, այն ժամանակ նրա մէջ յարուցուեց յարգանք դէպի իր սեփական հանճարը, եւ այն ժամանակ նա սկսեց արդէն ուսումնասիրել իր սեփական էուԹիւնը, որպէս զի գանի իր մէջ այն ոյժը, որը սանձեց բնուԹիւնը։

Այն ժամանակ մարդուս հանդարտած ուղեղը սկսեց իրանով զբաղուել եւ ուսումնասիրել իր ֆիզիկական եւ հոգեկան յատկուԹիւնները։ Սկսեցին զարգանալ հոգեբանական գիտուԹիւնները, որոնք պիտի կամաց-կամաց մանէին բոմանի մէջ, մինչեւ որ մի օր ամբողջապէս կլանէին նրան, ինչպէս այդ եղել է այսօր։

Մինչեւ վերջին տասնեակ տարիները հոգեբանական գիտուԹիւնը մշակուում էր եւ ուսումնասիրուում առանձնապէս, մետաֆիզիկների գրչի տակ, եւ միայն վերջին կիսադարում, երբ մարդուս կազմուածքը մանրամասն զննուեց, երբ նրա իւրաքանչիւր օրգանին, իւրաքանչիւր մանրիկի ֆունկցիան (կատարած դերը) մանրամասն ուսումնասիրուեց, այն ժամանակ հասկացուեց, որ հոգեբանուԹիւնը ոչ այլ ինչ է, եԹէ ոչ ուղեղի ներքին գործունէուԹիւնը, նրա ֆունկցիան։ Այսպիսով հոգեբանուԹիւնը դադարեց վերացական գիտուԹիւն լինել եւ բնական գիտուԹիւնների շարքն անցաւ։ Մի ֆակտ, որը լուսաբանուեց, զոնէ բացատրուեց, մարդակազմուԹեան եւ ֆիզիոլոգիայի զարգացման շնորհով — այն է, որ մարդուս ֆիզիկական կեանքում կատարած ամենաչնչին փոփոխուԹիւնները անմիջապէս փոփոխուԹիւն են մտցնում նոյնպէս նրա հոգեկան աշխարհը. եւ իրրեւ ամենապարզ ապացոյց կարելի է առաջ բերել սեռական օրգանների զարգացումն, որը աչնպիսի հիմնական փոփոխուԹիւն է մտցնում պատանու հոգեկան կեանքում։

Զոլան La Joie de Vivre (Ապրելու երջանկուԹիւն) բոմանում այս վերջին հոգեբանական երեւոյԹը հիանալի կերպով նկարագրած է։

Ահա մի փոքրիկ աղջիկ, որը տարուում է գիւղը դեռ երեխայական հասակում։ Նա մեծանում է, բնուԹեան գոգում, մի բարոյական ընտանիքի մէջ, հեռու ամեն տեսակ վատ ազդեցուԹիւն-

ներից։ Հիմա հետևեցէք նրա ֆիզիկական զարգացմանը, տեսէք, թէ ինչպէս նրա սեռական օրգանների զարգացումն ձեռնաշրջում է նրա ամբողջ հոգեբանութիւնը։ Տեսէք, թէ ինչպէս կամաց-կամաց փոքրիկ աղջկանից դուրս է գալիս մի կին, բառիս ֆիզիոլոգիական նշանակութիւնով, այսինքն, հասունացած սեռական օրգաններով։ Կարդացէք այն տրփական տեսարանը, որտեղ նա տկլոր հայելու առաջ դիտում է իր հրաշալի կանացի հրապոյրները, աքանչանում է այդ հարուստ մարմնով, կամ այն տեսարանը, երբ նա իր առաջին դաշտանն է տեսնում, երբ նրան թւում է, թէ իր ամբողջ գոյութիւնը արեան հետ վազում է իր ծնկների միջով,—ահա այն ֆիզիոլոգիական երևոյթները, որոնք կամաց-կամաց զարմացման են հասցնում միամիտ երեխային, մինչև որ նա յանկարծ հարց է տալիս իրան, թէ ինչի համար է այս փարթամութիւնը, ինչ նպատակով է բնութիւնը այսքան հեզուկ լցրել նրա մարմնի մէջ։

Իբրև այս հարցի պատասխան, նա սիրահարւում է տան միակ երիտասարդի վրա, և այսպիսով Զոլաի գրչի տակ սիրոյ ծագումն բացատրւում է իբրև արտայայտութիւն օրգանների ֆիզիկական հասունութեան։

Բայց ամեն հոգեկան երևոյթ չի կարելի այսպիսի բնական կերպով բացատրել։ Անտարակոյս, խորը քննելով և հետազօտելով, հնարաւոր է հոգեբանին նոյն ձևի բացատրութիւն տալ և միւս կրքերին, բայց այդ չի կարելի պահանջել բոմանիստից, որը տեխնիկ չէ բնագէտ լինելու։

Բոմանիստը այսպիսի դէպքերում օգտւում է դիտողութիւնից և (գլխաւորապէս) իր սեփական հոգեբանութիւնից։ Այս է պատճառը, որ մի որոշեալ հեղինակի հերոսների հոգեբանութիւնը որոշեալ գոյն ունի, որը և հեղինակի սեփականի գոյնը։

Զոլաի հոգեբանութեան գլխաւոր յատկանիշն այն է, որ նա նիւթական է։ Երբ դէպքը բերում է, հեղինակը աշխատում է կապել սիրոյ ածումն արփանքի աճման հետ։ Նրա աչքը բաց-

ուրար միայն գաղափարական է ծնում, իսկ ընդհանրապես նա մարմնանում է սեռական ակռի մէջ։ Հեղինակը սիրում է ցոյց տալ իր արտիստիկ նկարագրութիւններով, որ մի ահագին տարբերութիւն կայ մարդուս սիրոյ մէջ, նայելով, թէ սիրած առարկան հեռու է, թէ մօտ, տրփանքի մէջ, թէ նրանցից դուրս և այլն։ Նրա բոմանները-ում սեռական յարաբերութիւնների միջոցին սէրը հասնում է իր գագաթնակէտին և փոխում է անտարբերութեան կամ նոյն իսկ զզուանքի՝ յարաբերութիւններից յետոյ։

Զոլան այսպիսով սէրը վերածում է, և միշտ աշխատում է վերածել ֆիզիկական պահանջի, իսկ Լամարթինի, Անդրէ Շէնիէի և այլ բոմանտիկների սէրը նա ընդունում է իբրև հիւանդական երևոյթ։

Սակայն Զոլան էլ զգում էր մի ընդհանուր սէր ստեղծելու անկարելիութիւնը, զգում էր, որ շատ յաճախ սէրը ֆիզիկական բաւականութիւն չի պահանջում և ընդհակառակ խորշում է նրանից, և որ նա կարող է գոյութիւն ունենալ իբրև մի վերացական զգացմունք, որի նկատմամբ մարմնաւորումն խանգարում է նրա մաքրութիւնը։

Անտարակոյս Պոլ և Վիրժինիի, Հերնանիի և Դոնա Սոլի սէրը հասկանալի է մեզ այն ժամանակ միայն, երբ նա անարատ է։ Իսկ այն օրից, երբ այդ սէրը տրփանքի է հասնում, սեռական յարաբերութիւնների է վերածւում, այն օրից նրա զօրութիւնը, իբրև հոգեկան ուժեղ կրքի, հարուած է դիպչում։ Այս լաւ են զգացել բոմանտիկ գրողները, որոնք սպանում են իրանց հերոսներին կամ նախ քան նրանց սիրոյ նկատմամբ յագենալը, կամ անմիջապէս յետոյ։

Զոլայի հոգեբանական հետաքրքրներից, մեր կարծիքով, ամենայայտնին սիրոյ էութիւնն է։ Այս հեղինակի մեծ տաղանդը արտայայտում է այս ուսումնասիրութիւնների մէջ։ Այստեղ տեսնում է խոր հետազօտողը և գրական հեղինակը։

Արհամարհելով փարիսեցի կամ ոգեղ գրողների չափազանցումը, մեծ բոմանիստը, ինչպէս սեռանք, սէրը վերածում է օրգանների ֆիզիքական զարդացման։

Ահա նրա սկզբունքը, որը հիմնուած է արուի հոգեբանութեան ցուցմունքների վրայ։

Սակայն սէրը տարբեր կերպարանք կ՚առնուի, նայելով թէ նիւթական է նա, թէ իդէալական, ազատ է թէ ճնշուած։ Այս զանազան պէպքերը հետազօտուած են Զոլաի վէպերում։

La Joie de Vivre (Ապրելու երջանկութիւն), La Faute de l'Abbé Mouret (Աբբայ Մուրէի մեղքը), Une Page d'Amour (Մի սէր), Le Rève (Երազ), L Oeuvre (Գործ) րոմաններըը նուիրուած են սիրոյ ուսումնասիրութեանը։

«Ապրելու երջանկութիւն», «Աբբայ Մուրէի մեղք» և «Երազ» վէպերում հեղինակը աշխատում է սիրոյ ծագումն սեռական օրգանների զարգացումից դուրս բերել, և տարբերութիւնը միայն այդ զգացմունքի զարգացման մէջն է։

«Ապրելու երջանկութեան» մէջ Զոլան (ինչպէս սեռանք) ուսումնասիրում է մի սէր, որի ծագումն և զարգացումն բնական են։ Այդ սէրը արգելքների չի հանդիպում աղջկայ հոգու մէջ, որը ազատ է ուրիշ կրքերից։

«Աբբայ Մուրէի» և «Գործի» մէջ սէրը ընդհակառակը երկար կռիւ է վարում ուրիշ կրքերի դէմ և միայն ժամանակաւորապէս յաղթում է նրանց։ «Երազի» մէջ Անժելիկը իդէալապէս վերացական սէր է տածում դէպի մի վերացական էակ, որը մի օր կերպարանաւորում է Ֆելիսիենի մէջ։

Զոլաի սիրոյ հետազօտութիւնները այնքան նշանաւոր և այնքան խրատական են, որ մենք օգտաւէտ ենք համարում մի քանիսը առաջ բերել այստեղ, քանի որ, կրկնում ենք, եւրոպական կրիտիկան մի հաւաքական էսթէ չի տալ մինչև այժմ Զոլաի հոգեբանութեան մասին։

Մենք սեռանք, թէ ինչ էր սէրը «Ապրելու երջանկութեան» մէջ։ Ուսումնասիրենք այժմ նոյն սեռակէտից «Աբբայ Մուրէի մեղքը» և «Երազը»։ «La Faute de l'Abbé Mouret» (Աբբայ Մուրէի մեղքը), և այս հրաշալի հոգեբանական էսթէզը, որը միշտ մնանում են կրիտիկոսները։ Մեր կարծիքով, այս րոմանը կարող

է առաջնակարգ հոգեբանական վէպերի շարքն անցնել և, քանի որ մենք այդչափ կարևորութիւն ենք տալիս նրան, թող թոյլ տրւի մեզ մի քանի խօսք ասել նրա մասին։

Աբբայ Մուրէն մի երիտասարդ քահանայ է, որը իր նախնիքներից ժառանգել է սրամտրութիւն դէպի մոլութիւններ (manies)։ Մատաղ հասակում նա հակում է զգում դէպի հոգևորականութիւնը և քահանայ է ձեռնադրւում։ Այնուհետև երկար տարիներ Սերժը աղօթքի և բարեպաշտութեան մէջ է անցկացնում։ Երիտասարդ քահանայի բոլոր հոգեկան ոյժերը կամաց-կամաց ուխտում են Աստուածամօր պաշտութեան, և մոռացնել են տալիս նրան, կամ, աւելի լաւ ասած, սանձում են նրա մէջ նիւթական սիրոյ կայծը։ Նա կրօնամոլ է դառնում բառիս բուն նշանակութիւնով, և իբրև մի ձև կրօնամոլութեան, նրա հոգուն սիրապատում է մի անսահման և, նրա ամբողջ գոյութիւնը լափող, կիրք.—պաշտում Աստուածամօր։ Այո, Սերժը պաշտում է Աստուածամօրը, և այդ զգացմունքը մի հիւանդական զգացմունք է, որը պէտք է լաւ ըմբռնել՝ Զոլաի հոգեվիճակի հանճարի ոյժը հասկանալու համար։

Փիշեր-ցեխեկ, մոռանալով ամբողջ աշխարը, Սերժը ծնկաչոք գիտում է Աստուածամօր մարմարիոնէ արձանը, անսասան սէրը և աքանչացումն սրտում։ Արձանի հրեղէն ճառագայթները թափանցում են նրա ուղեղը, ջերմացնում են նրա հոգին։ Անասելի յուզմունքների մէջ, Սերժը գարգանդով չոքէչոք բարձրանում է տաճարի սանդուխանները, որպէս զի որքան կարելի է մօտենայ անսթար Կոյսին, լիզի նրա ոտների տակի մարմարը, արտասուքով լուանայ քարի փոշին ! Եւ այդ արձանը նրա շլացած աչքերին ոգի է տանում, շունչ է առնում, կենդանանում է, դարձնում է դէպի նա իր աստուածային աչքերը և իր կուսութեան անմեղութեան մէջ ժպտում էր նրա աղօթքին։

—«Մայր անբիծ, մայր անարատ, մայր չարիանան կուսական, աղօթիր ինձ համար։ Դու—իմ ապաստանարանը, դու—իմ հրաշանքի աղբիւրը, դու—իմ մուժկալութեան տաճարը, որին նուիրեցի մաքրութիւնս։ Դու իմ անարատ հոգիս քեզ եմ յանձնում, ազատում եմ, ընդունիր ինձ, քո թոյլ մի փեղկով ծածկիր ինձ, խաղցրու ինձ անմեղութեանդ տակ, որպէս զի ոչ մի մարմնաւոր չկարենայ չհասնի ինձ։ Դու չարիանական անբծութիւն ես։ Քո Որդին, Յիսուս, ծնուեց Աստծու չնչից, դու

ինքզինքս ծանրացար անտարակույս մեղքդ արդանդիցս։ Օ՜ ապրիլ և մեծանալ, չգգալով զգացմունքներուն ամօթը։ Օ՜ լզանալ և բազմանալ, առանց սեռական մօտաւորութեան զարչելի անհրաժեշտութեանը, երկրային համբոյրի զօրութենով մթացեր։...

Ես կը կամենայի պես երեխայ լինել!... Մի ժամանակ ես փոքր էի։ Օրօրոցս սպիտակ էր, մարմինս սպիտակ էր, մտքերս սպիտակ էին։ Ես քեզ պարզ սեանուամ էի, լսում էի քո ձայնը, որով կանչում էիր ինձ, ես քեզ էի գիմում ժպիտս երեսիս... Օ՜, Մարիամ, պաշտելի Կոյս, ինչի՞ ես հինգ տարեկան չեմ։ ինչի՞ երեխայ չմնացի։ Քեզ կրծքիս կը սեղմէի, կը պարկեցնէի կողքիս, կը համբուրէի քեզ իբրև իմ ընկերուհուս, իբրև հասակակից աղջկայս... Ուրեմն կրկին երեխայ դարձուր ինձ, քարի Կոյս, ամենակարող Կոյս, հինգ տարեկան դարձուր ինձ։ Առ ինձանից զգացմունքներս, հասուննութիւնս։ Թող մի հրաշքով վերադառնայ ինձանից իմ մէջ ամօթ ապագայիդ... Ես ալ ես չեմ ուզում զգալ ոչ իմ նեարդերը, ոչ իմ մկաններս, ոչ սրտիս բաբախումն, ոչ ցանկութիւնները... Այո՜, ես ատում եմ կեանքը։ Աւելի լաւ է, թող վերջ լինի մարդկութեան պտղութեանը, քան թէ չարունակի նա դարչելի կրքի չնորհով... Օ՜, մահ, մահ! Պաշտելի Կոյս, մեղքս իմ մէջ ամեն բան!... Կոյս լինել և կոյս մնալ, ամենաքաղցր համբոյրներուն մէջ պահպանել անարատ կուսութիւնը!... Օ՜, Մարիամ, մաչիր իմ մէջ մարդկութիւնը, ներքինի դարձուր ինձ, որպէս զի անվերկիւղ կարողանաս նվիրել ինձ կուսութեանդ դանձը»։

Ահա ինչ բառերով է ազօթում Սերժը հրաշալի Կոյսի արձանի առաջ։ Նա ապաչում է, որ Աստուածածինը մեռցնի նրա մէջ նրա նիւթական սիրոյ պահանջը, որը օրից օր աւելի և աւելի զօրեղանում է։ Նա զղջում է, որ այլ ևս չի կարող խեղդել իր մէջ բնութեան ձայնը։ Եւ ինչ հրաշալի կերպով նա նկարագրում է իր հոգեկան կռիւները այս մի քանի բառերով.—Առ ինձանից զգացմունքներս, հասուննութիւնս!... Եւ այլևս չեմ ուզում զգալ ոչ իմ նեարդերը, ոչ իմ մկաններս, ոչ սրտիս բաբախումն, ոչ ցանկութիւնները»։

Եւ որքան ճշմարիտ է այս զգացմունքը!... Նրա մէջ երկու սոսկալի կրքեր կռւի մէջ են—մէկը, աստուածպաշտութեան կիրքը, միւսը—սիրոյ։ Երկուսն էլ կենդրոնանում են Աստուածննդյ մէջ։ Երբեմն Սերժը չափազանում է այս արձանով, իբրև կուսութեան մարմնացումով, երբեմն այս մարմարիոնի մէջ կանացի

հրապոյրներ է տեսնում։ Եւ այս շփոթմունքը հարուածում է այս մոլեռանդ պաշտողի զգացմունքը և նա ազատում է իր պաշտած կոյսին, որ նշանացնի, մեռցնի նրա մէջ ծնող արփանքը, որպէսզի չխանգարի նրա սիրոյ անբծութիւնը!

Որքան մեծ և որչափ զարհուրելի է այս հոգեկան կռիւը!

Սակայն սէրը թուլանում է և շուտով փոխւում է նիւթականի։

Մեծ բռնանիսաը հեռւոզական է իր հոգեբանական էախւդում։ Սերժը մի վսանդաւոր հիւանդութեան մէջ, երկար ժամանակ առանց ուշքի գալուց յետոյ, բաց է անում աչքերը և տեսնում է իր գլխի վերը նստած մի մատաղահաս օրիորդ, որին երբէք չէր տեսած. և ահա ինչ խօսքերով է դիմաւորում նրան, կարծես շատ տարիների սիրահար լինէր.

«—Դիտեմ, դու իմ սէրն ես, քո մարմինը իմ մարմնի մի մասն է, և դու սպասում ես, որ ես քեզ իմ գիրկս առնեմ, որպէս զի մենք մի անձն կազմենք... Ես երազում էի քո մասին, դու կրծքիս մէջն էիր, ես տալիս էի քեզ իմ արիւնը, իմ մկաններըը, իմ ոսկորներըը... Ես սրսոում էի, թէ ինչ թանկագին բան կայ իմ մէջ, որ քեզ տամ։ Դու դուրս եկար իմ աչքերից, իմ բերանից, ես այդ լաւ զգացի։ Արթնեցայ այն ժամանակ, երբ դուրս եկար իմ մէջից։ Մարմինդ չերմութիւն և բուրմունքներ էր արձակում, դու այնքան քնքուշ էիր, որ մարմնիդ թաւիշը զարթեցրեց ինձ»։

Սերժի մարմնական սէրը ազատւում է կաշկանդանքից և բնորոշւում է։ Սա մի բնական սէր է, որը աւելի բուռն է միայն երկար ճնշւած լինելու պատճառով։ Եւ գլխաւորն այն է, որ այդ սէրը արդէն հասունացած էր Սերժի մէջ, այնպէս որ երիտասարդ քահանան մի անծանօթ աղջկայ այնպիսի խօսքեր է ասում, որ կարելի է ասել միայն մի վաղեմի ծանօթի և վաղուց սիրածի։ Ինչի? Որովհետև Սերժը իր սրտի խորքերում արդէն սիրում էր այն իդէալական աղջկան, որի մարմինը վսփսգում էր նա։ Երկար հիւանդութիւնից յանկարծ սարգում են կարծես նրա զգացմունքերը և մըտքերը։ Հիւանդութեան ճգնաժամը կարծես բժշկել էր նրան կրօնամոլութիւնից և նրա հոգու մէջ միւս կիրքն էր ծնացել, այն է. — մարմնական սէրը։ Եւ այդ սէրը արդէն հասունացած էր, այնպէս որ, երբ նա աչքերը բացելիս տեսնում է Ալբինին՝ ընդունում է նրան, իբրև իր սիրոյ մարմնացումն։

Սերժն ու Ալբինը իրանց սիրով չափշռակւած մի քանի ժամանակ ապրում են Պարադիզի դիւթական այգիում, որի ստւերի տակ թագցնում են իրանց երջանկութիւնը։

Սերժը մոռացել էր իր պաշտած Աստւածածնին։

Բայց մի օր նրանք մօտենում են այգու պարսպին, որի մի ճեղքով Սերժը նկատում է եկեղեցու գմբէթը։

Այս րոպէում նրա հոգու մէջ իր հին մոլութիւնը կենդանանում է և նա փախչում է Ալբինի գգւանքից, կրկին իրան Աստւածամօր պաշտելուն նւիրելու։

„Le Rève“ (Երազ)-ի մէջ Անժելիկը, այսպէս ասած, իդէալէս է սիրում, այսինքն սիրում է մի իդէալական էակի, որը չեռոյ կերպարանաւորւում է Ֆելիսիենի մէջ։

Անժելիկը («Երազի» հերոսուհին) մի փոքրիկ երեխայ է, որին գտնում է մի ցուրտ գիշեր շէմքի վրա Հիւբերի կինը և որին այս անզաւակ կինը և նրա այրը հարազատ զաւակի նման մեծացնում են։ Նրանց գգւանքում Անժելիկը մի գեղեցիկ աղջիկ է դառնում։ Տասն և չորս տարեկան հասակում նա արդէն հասունանում է, մնա կին էր դառնում, ասում է հեղինակը, այսինքն առաջին անգամ տեսնում է իր սեռական հասունութեան ապացոյցը։

Այս րոպէից չեռոյ Անժելիկը դուրս է գալիս մանկութիւնից, և նրա համար մի նոր կենսաշրջան է սկսւում.—սիրոյ շրջանը։

Ուրեմն մինչև այժմ Զոլան միանգամայն հաւատարիմ է մնացել իր թէօրիային, որն այնպէս զօրեղ կերպով արամաբանել էր իր «Ապրելու երջանկութիւն» րոմանի մէջ.—այն է, որ սիրոյ զգացմունքը ծնւում է սեռական օրգանների հասունութեան միջոցին։

Եւ ոչ մի կրիտիկոս չի նկատել Զոլաի այս հետևողութիւնը։

Սակայն ահա փաստեր։

Երբ Անժելիկը 14 տարեկան է և կին է դառել արդէն, նրա հոգում մի առանձին սէր է յարուցւում դէպի կոյսերը, որոնց կենսագրութիւնը յափշտակումով կարդում է, և որոնց անբիծ կուսութիւնը աքանչեցնում է նրան։

Այս աքանչացումն կոյսերի կեանքով բաւականին ապացոյց է,

որ նրա հոգում յարուցել էր արդէն մի ինչ որ սեռական զգացմունք։

«Այս տարի գարունը մի առանձին քաղցրութիւն ունէր։ Նա (Անժելիկը) այժմ տասնուվեց տարեկան էր։ Մինչև այսօր նրա հայեացքն էր միայն զարճանում Կլօ-Մարի (այգու) վերածաղկումն տեսնելով... Իսկ այս տարի ծառերի առաջին բողբոջը բաբախեցրեց նրա սիրտը։ Նրա մէջ մի ինչ որ չփոթ էր աճում բուսականութեան աճման հետ։ Յանկարծակի, առանց պատճառի, յարուցած յուզմունքներ խեղդում էին նրա կոկորդը։ Մի օր նա իրան Հէլբերտինի գիրկը նետեց լալով, բայց առանց որ և իցէ տխրելու պատճառի, ընդհակառակը միանգամայն երջանիկ։ Մանուանդ գիշերները նա քաղցր երազների մէջ էր անցկացնում, նրա աչքին ինչ որ տեսիլներ էին երևում, և նա այնպիսի սքանչացման մէջ էր ընկնում, որ զարթնելիս չէր վստահանում մտաբերել իր երազները, որոնցից զգացած երջանկութիւնը չփոթեցնում էր նրան։ Երբեմն, իր մեծ անկողնու խորքում, վեր էր թռչում քնից, ձեռները միացրած և ամուր կրծքին սեղմած, և այնքան խեղճանում էր նա յուզմունքից, որ տխրած էր լինում վայր ցատկել անկողնուց յատակի վրա և քանալ լուսամուտը, որի առաջ կանգնում էր նա սրտխռով սթափեցնող օդի ստնուելու մէջ»։

Ահա ինչ հոգեբանական յուզմունքներ է առաջացնում սեռական օրգանների հասունութիւնը։

Եւ տեսէք, թէ ինչպէս նոյն բուռն զգացման ազդեցութեան ներքոյ ամեն ինչ փոխւում է Անժելիկի շուրջը։

«Աւտակը խօսում էր անչուշտ, նա մի ինչ որ անորոշ բաներ էր ասում, որոնք չփոթ էին դյում նրա (Անժելիկի) սիրտը։ Միթէ այս առաջւայ գաշտը չէր այլ ևս, ինչի ուրեմն այժմ ամեն բան փոխւել է և նորանոր նշանակութիւն է ստացել, կամ գուցէ ինքն է փոխւել, որ այսպէս ամեն տեղ զգում է, տեսնում է և լսում է, ինչպէս բողբոջում է կեանքը?»։

Այսպէս, ահա մի պատանուհի, որի հոգում սեռական հասունութեան միջոցին յարուցւում են այնպիսի զգացմունքներ, որոնցից նա ամաչում է, բնազդումով ըմբռնելով նրանց ծագումն։ Այս նոյն զգացմունքը չէ արդեօք, որը տիրապետել էր Սերժին (Աբբայ Մուրէի Մեղքը), որը իրան նկարում է Աստւածածնայ պաշտութեանը իր մէջ ծնած արփական սէրը խեղդելու համար։

Արդէն Անժելիկի մէջ սիրելու պահանջը հասունացել է և սոիպոզական է դառել։ Նա երևակայութիւնով արդէն սիրում է մի իդէալական տղամարդու, ինչպէս սիրում են առհասարակ նեարպային արարածները։

Անժելիկի նման էակները սիրահարում են այնպիսի ազամարդկանց վրա, որոնք մի որ և է յատկութիւնով գերազանցում են միւս բոլոր մարդկանց, ինչ և լինէր այդ յատկութիւնը։ Այսպէս Դեզդեմոնան կը սիրէ Օտելլօ-Հրէշին և Դոնա Սոլը՝ Հերնանի-աւազակին։

Եւ նա սիրում է Ֆելիսիանին, որին երբէք չի տեսել, բայց որի մասին Հիւբերտինը ասում էր թէ՝

«Գեղեցիկ է ինչպէս իշխան և հարուստ ինչպէս արքայ»։

—Գեղեցիկ ինչպէս իշխան, հարուստ ինչպէս արքայ» կրկնում է Անժելիկը։ Սա չէր ամրողջ նրա երազածը, այն երիտասարդը, որը պիտի սիրէր նրան, և որին նա արդէն վաղուց սիրում էր իր կուսական ցանկութիւնների ամբողջ ոյժերով։

«Օհ, ես կը ցանկանալի, կը ցանկանալ իշխանի կին լինել... Մի իշխանի, որին երբէք տեսած չեմ, որը կը դար մի երեկոյ, կը բռնէր ձեռքիցս և իր պալատը կը տաներ... Ես կը ցանկանալի, որ նա չատ գեղեցիկ լինէր, չատ հարուստ, օհ! աշխարհիս երեսի ամենահարուստը և ամենագեղեցիկը։ Ես կ'ուզենայի ձիեր, որոնց խրխնջոցի ձայնը կըլսէի լուսամատներիս տակ,—գոհարներ, որոնք կը հասային ծնկներիս վրա, ոսկի, որը անձրևի և հեղեղի նման կը թափէր ձեռներիցս, երբ բաց կ'անէի նրանց»։

Յետոյ կամաց-կամաց այդ զգացմունքը ամբողջովին տիրապետում է աղջկան։ Երբ նա լսում է իր բարերարների պատմութիւնը Ֆելիսիանի բարձր ծագման, հարստութեան, գեղեցկութեան մասին, նրա մէջ, ինքնաներշնչման օրէնքին համաձայն, ցանկութիւնը համոզմունք է դառնում. և այդ խեղճ բանւոր աղջկայ ուղեղում և սրտում արմատանում է այն միտքը, թէ նա սիրում է Ֆելիսիանին և թէ Ֆելիսիանը նրա վիճակն է.

«Երբ սպասածս երիտասարդը կը գայ, մենք իսկոյն միմեանց կը ճանաչենք։ Ես նրան երբէք չեմ տեսած, բայց գիտեմ ինչպէս է։ Նա նեբս կը գայ, կ'ասի՝ ես եկել եմ քեզ հետս տանելու։ Այն ժամանակ ես կ'ասեմ պատրաստ էի քեզ, վերցրու ինձ։ Նա կը վերցնի ինձ և ապրելս ամեն բան կը վերջանայ։ Մենք կ'երթանք պալատը և կը պարկենք ոսկով և ադամանդներով զարդարած մահճակալի վրա։ Օհ! ախ չատ պարզ է»!

Իսկ երբ Հիւբերտինը նրան ցնորած է անւանում՝

—Ես սպասում եմ և նա կը գայ, պատասխանում է Անժելիկը։

Եւ երբ որ Ֆելիսիանը մի օր ներս է մտնում լուսամուտով նրա ննջարանը, նա չի վրդովւում, կարծես վաղուց սպասելիս էր եղել։

—«Մօտ եկէք, ես ձեզ սպասում էի» ասում է Նա։

Անժելիկը մեռնում է Ֆելիսիանի հետ ամուսնանալու ժամանակ և այս բոմանում Զոլան մաքուր է պահել սէրը։ Սիրահարուած Անժելիկը մեռնում է առանց նիւթականացնելու իր զգացմունքը։ Այս է գուցէ, որ այս պեղեցիկ վէպին բոմանական գոյն է տալիս, որը զուր ը արձացրել է մեծ հեղինակի հակառակորդներին, կարծել տալով նրանց, թէ Զոլան հրաժարւել է իր ուղղութիւնից!

L'Oeuvre (Գործ) վէպում (որը մենք մի քիչ յետոյ կ'ուսումնասիրենք մի ուրիշ տեսակէտից) սիրոյ զգացմունքը բոմանի ամբողջ ընթացքում կռիւ է վարում մի ուրիշ կրքի, գեղարուեստամոլութեան հետ։

Կլոդը մի տաղանդաւոր նկարիչ է, որը Կարոլինի սիրականն է դառնում; ամուսնանում է նրա հետ, մի արու զաւակ է ունենում նրանից, սակայն երբէք չի սիրում այդ կնոջը իսկական, ամեն ինչ լափող սիրով։ Միշտ սէրը դէպի գեղարուեստը ճնշւած է պահում նրա մէջ սէրը դէպի Կարոլինը։ Այս վերջինը միշտ զանգատւում է, թէ իր ամուսնու սիրտը ամբողջովին նւիրւած է նկարչութեան, որը նրա ախոյեան է և որին չաղթել նա անկարող է։

Մեր առաջ բերած չորս բոմանները.—«Ապրելու երջանկութիւնը», «Աբբայ Մուրէի մեղքը», «Երազը» և «Գործը»—այս սիրոյ էպիւդները—լրացնում են միմեանց՝ սիրոյ հոգեբանութեան տեսակէտից. 1) Սէր, որը զարգանում է առանց արգելքի, այսպէս ասած, բնական-կենդանական օրէնքների համաձայն (Ապրելու երջանկութիւն)։ 2) Սէր, որը իդէապէս է աճում, հասունանում նոյնպէս տեսական հասունութեան ազդեցութեան ներքոյ և մարմնանում է մի երիտասարդի մէջ, մնալով անարատ և գաղափարական (Երազ)։ 3) Սէր, որը կռւում է մի ուրիշ կրքի՝ կրօնամոլութեան հետ և ժամանակաւորապէս յաղթող է հանդիսանում (Աբբայ Մուրէի մեղքը)։ 4) Վերջապէս սէր, որը նոյնպէս կռւում է մի կրքի—արւեստամոլութեան հետ, բայց յաղթւում է նրանից (Գործ)։

Զոլաի հոգեբանութիւնը ընդհանրապէս, այսպէս ասած, հիւանդական է։

Նրա հերոսների մեծ մասը մոլիներ (մանիակներ), խելագարներ են, որոնց մոլութիւնները սոսկալի վնասներ են հասցնում նրանց շրջապատողներին և հասարակութեանը։ Աչքի առաջ ունենալով հերոսի ժառանգական յատկութիւնները, հետևելով նրա հիւանդական յակումների զարգացման, մենք նկատում ենք, ինչպէս կամաց-կամաց, անզգալի կերպով, յակումը կիրք է դառնում և կիրքը մոլութիւն, որը վերջանում է կամ խելացնորութիւնով կամ մահով։

Այսպէս Զոլաի հոգեբանութիւնը վերցրած է գժանոցներից, որոնց մէջ փակուած են յաճախ աւելի առողջ անձնաւորութիւններ, քան թէ նրա հերոսներից շատերը։

Դժուար է Ռուգոն-Մակկարների շարքից մի րոման գտնել, որի մէջ մի հիւանդ հերոս չլիներ։ Հետևաբար Զոլաի մի քանի վէպերը վատահաբար կարելի է մտցնել անմահ Դոստոեւսկու հրաշալի րոմաններին, որոնք մի հանճարեղ գրողի գործ են և Գի դը Մոպասանի մի քանի գրուածքներին։

Թէև Զոլաի բոլոր վէպերում հոգեբանական տարրը մի շատ խոշոր տեղ է բռնում, այնու ամենայնիւ նրանց մէջ կարելի է գտնել մի քանիսը, որոնց մենք վատահ կարող ենք ընդունել, իբրև հոգեբանական րոմաններ։ Սրանք են, բացի մեր ուսումնասիրած վէպերը. L'Oeuvre, La Bête Humaine, Le Docteur Pascal և ուրիշները։

L' Oeuvre (Գործ) մի խրատական հոգեբանական էսքիզ է մի հիւանդական կրքի—գեղարուեստամոլութեան։

Կլոդը մի երիտասարդ նկարիչ է, որի մտքում բուն է դրել մի կիրք, այն է՝ մի նոր գեղարուեստական դպրոց ստեղծել։

Կլոդի բոլոր միւս զգացմունքները ընկճուած են այս ամէն ինչ լափող կրքի առաջ, որը կամաց-կամաց մի սոսկալի մոլութեան (манія) է հասնում։

Երբ Կարոլինը բաց է անում իր կուրծքը, որպէս զի նա նկա-

բի, Կլոդը մռնանում է, որ նրա պէմ նատած է նրան սիրող մի կին։ Նկարչի ամենացաղթ կիրքը որոնում է միայն այս դեղեցիկ կնոջ կաշու գոյների խաղը, ճառագայթների անդրադարձումն և նրա ամբողջ հոգեկան այժերը նախրած են այս իղձին.—ներշնչել պատկերին այն կեանքը, ջերմութիւնը, որը խաղում է այդ կնոջ կաշու մէջ։

Երբոր նրա միակ գաւակը մեռնում է քաղցածութիւնից և մինչդեռ մայրը չարդում է ձեռները և մազերը պոկում, Կլոդը սառնասրտութիւնով, իր ծնողական կսկիծը մռայած, մերկացնում է երեխայի դեռ չսառած դիակը և վրձինը ձեռին սկսում է նկարել նրան։

Այս երևոյթները արդէն զգուշացնում են մեզ, որ դեղարուեստի փափագը, որը մի բնական յակումն է, Կլոդի մէջ կրքի է փոխուում։ Շմուտ հոգեգէտը հասկանում է արդէն, որ այդ մարդը արագ քայլերով խելագարութեան է դիմում։ Եւ, ճշմարիտ որ, այդ կիրքը շուտով դառնում է idée fixe, որը փոխուում է մոլութեան և հետևաբար խելացնորութեան։ Եւ այս մոլութեան զարգացումն ձիշդ պատմում է բոմանի մէջ, այնպէս որ հիւանդական հոգեբանութեան տեսակէտից չի կարելի չհամաձայնել հեղինակի հետ։

Այսպէս, միանգամայն ճշմարիտ է, որ, այդպիսի հոգեկան անկանութիւնների մէջ, մարդիկ յանկարծ անցողական պատրանքներ (hallucination) և ցնորքներ (hallucinations) են ունենում։ Վերցրէք այն հիանալի տեսարանը, որտեղ նա նատած դիտում է իր դլուխ-գործոցը կիսատ խաւարի մէջ։ Նրա պատկերը, որի վրա ծախսել էր իր ամբողջ հանճարը, յանկարծ ճաքճաքում է, փշրուում է և ատպալուում, ինչպես ինքն է ասում։ Կամ նրա այն օտարոտի պատկերը, որը ներկայացնում է Սենա գետի ջրի երեսին, Պարիզի կենդրոնում կանգնած, ածուխով լի մի մակոյկ և նրա վրա ածուխից սևացած բանուորների բազմութեան մէջ երեք մ ե ր կ կանայք։

Մի օր նա վեր է կենում դիշերը և նոյն ինքնամոռացման մէջ ներկում է զանազան գոյներով իր նկարած կնոջ և, ինչպես Կարոլինն է ասում, նրանից կուռք է շինում կարմիր փորով և կապոյտ մազերով։ Երբ այդ տեսողական ցնորքը անցնում է, երբ այդ հիւանդը սթափւում է և տեսնում է, որ նրա ստեղը խախտած է,

հանճարը խանգարուած, յոյսերը փլատակուած և նա անդունդի ծայրին է կանգնած, այն ժամանակ նա անում է այն, ինչ որ անում են առհասարակ այդ տեսակ խելագարները. — նա կախուում է։

La Bête Humaine (Գազան Մարդիկ) մի ուժեղ վէպ է, իր գործող անձերի հիւանդական հոգեբանութիւնով։ Նա մեզ յիշեցնում է Братья Карамазовы սոսկալի րոմանը։

Թէ գլխաւոր հերոս Ժաքը, թէ նրա սիրուհի Սեւերինը, թէ Միզարը և նրա ամուսինը ու աղջիկը — բոլորը նեւրոպաթիկ հիւանդոտ մարդիկ են, որոնց մոլութիւնները այնքան սարսափելի են, որ հեղինակը ամենայն իրաւունքով կարող էր նրանց գազան մարդիկ կոչումն տալ։

Ժաքը երկաթուղու վրա մեքենիստ է և այնքան է սիրում Սեւերինին, որքան սա ատում է իր ամուսնուն։ Բայց Ժաքը մի սոսկալի մոլութիւն ունի — մարդ սպանելու մոլութիւնը։

Հոգեկան հիւանդութիւնների մէջ նկարագրուած են այդպիսի դէպքեր. — մարդիկ, որոնք մի զարհուրելի անդիմադրելի յակումն ունեն դէպի մարդասպանութիւնը, և որոնք մի աննկարագրելի երջանկութիւն են զգում, երբ որ արիւն են հոսեցնում... Այս սոսկալի ախտը հիանալի կերպով նկարագրում է Զոլան իր «Գազան մարդիկ» րոմանի մէջ։ Ժաքը չի կարող առնաատութիւնով բաց մարմինը տեսնել. իսկոյն «արեան փափագը», արթնանում է նրա մէջ։ Եւ որքան աւելի քնքոյշ է այդ մարմինը, այնքան աւելի պահանջող է այդ փափագը։ Այս սոսկալի կիրքը թունաւորում է Ժաքի ամբողջ կեանքը, նրա ամենաերջանիկ րոպէները...

Ժաքը մի օր մենակ գտնելով մի սիրուն աղջկայ, Ֆլորին, որին վաղուց ճանաչում էր և որը սիրում է նրան, գրկում է այդ աղջկան և, մի փոքր դիմադրութիւնից յետոյ, Ֆլորը յաղթուած է, Ժաքը արդէն գետին է պառկեցրել նրան, պատառում է նրա շորերը, և բացում է նրա հարուստ ու «կաթի պէս սպիտակ կուրծքը»։

«Այն ժամանակ նա չնչասպառ կանգ առաւ և փոխանակ սիրելու այդ աղջկան, նայեց նրա վրա։ Մի ինչ որ կատաղութիւն զգաց նա իր արտում, մի վայրենի կիրք, որը սարսեց նրան աչքերը իր շուրջը դարձնել և մի զէնք, մի քար որոնել նրան սպանելու համար։ Նրա աչքն ըն-

կաւ մկրատին, որը վայր էր ընկել Ֆլորի ձեռքից, և նա չուտ վերցրեց այդ մկրատը և քիչ էր մնացել, որ իրի Ֆլորի մերկ կուրծքը, երկու ծծերի մէջ! Բայց մի մեծ սարսուռ անցաւ նրա մարմնի մէջ, և ուշքի բերեց նրան. նա վէն դրեց մկրատը և պլուխը կորցրած փախաւ»:

Նա վազում է անդադար գիշերաչէ խաւարի մէջ առանց ետ նայելու, զարհուրած իր հիւանդութեան այս սարսափելի արտայայտութիւնից: Պատանեկութիւնից սկսած այդ սարսափելի կիրքը հալածում էր նրան և դադար չէր տալիս: Քանի անգամ, տանջվեց տարեկան հասակից, նա ուզեցել է սպանել մատաղ աղջիկներ, նորապսակ հարսեր, որոնց պարանոցի վրա նա իր դանակի տեղը վաղօրօք որոշել էր...

«Քանի որ նա չէր ճանաչում այլ կանանց, ինչ կատաղի վրէժ ուներ արդեօք առնելու նրանցից», հարցնում է ինքն իրան:

Զոլան այս հիւանդութեանը ժառանգական ծագումն է տալիս և պատասխանում է ժաքի հարցին նոյն րոմանի մի ուրիշ պատկերում: Սեւերինը պատմում է ժաքին, թէ ինչպէս նա իր ամուսնու հետ սպանեցին Գրանմորենին, (որովհետև նա բռնաբարել էր Սեւերինին, երբ սա դեռ օրիորդ էր): Սեւերինը ընկել էր Գրանմորէնի ծնկների վրա, որպէս զի արգելի նրան ոտերով պաշտպանել, այն ինչ նրա ամուսինը տապալել էր նրան և դանակը սիրան էր խրում:

Ժաքը, որը ամբողջ պատմութեան ժամանակ յուզման մէջ էր, հարցնում է շնչատագաւ:

—«Ապասիր, սպասիր... Եւ դու ընկել էիր նրա ոտների վրա, և դու զգացիր, որ նա մեռնում է:

Եւ նրա մէջ մի կատաղի ալիք բարձրացաւ հոգու խորքերից և արեան կատաղութիւնը վերսին տիրեց նրան: Նրա մէջ վերսին յարութիւն առաւ սպանելու հետաքրքրութիւնը:

—Իսկ դանակը? Դու զգացիր, ինչպէս դանակը խրվեց մարմնի մէջ

—Այո, մի խուլ հարուած զգացի:

—Ահ! մի խուլ հարուած... Դու հաւատում ես, որ այդ ձայնը կտրածի ձայն չէր?:

—Ո՛չ, այդ հարուածի ձայն էր:

—Ցեսուչ, նա ցնցուեց, այնպէս չէ՞:

—Այո, երկար ցնցում ունեցաւ, ցնցումներ, որոնք անցան նրա ամբողջ մարմնով և այնքան երկար, որ ես զգացի նրա ոտների ծայրերին:

—Եւ այդ ցնցումները վախացրին նրան, այնպէս չէ արդեօք՝

—Այո, առաջինը չատ սաստիկ կերպով, իսկ միւս երկուաը—աւելի թոյլ։

—Նա մեռաւ, իսկ դու, ինչ ներգործութիւն ունեցար այդ քեզ վրայ, երբ տեսար, որ նա մեռնում է այդպէս, մի դանակի հարուածից։

—Ինձ վրայ՝ ոչ, չգիտեմ։

—Զգիտես, ինչի ես սուտ խօսում? Աւա՛, ասա՛, ինչ զգացիր դու այն ժամանակ, ասա՛, պարզ ասա՛... Վախ?

—Ո՛չ, ոչ, վախ չէր զգացածս՝

—Երճանք?

—Երճանք? Ա՛հ, չէ, երճանք չէր այդ։

—Ինչ ուրեմն, հոգեակս? Ազաչում եմ, ասա, ամեն ինչ ասա... Եթէ գիտենայիր, թէ... Աւա՛, ինչ է զգում մարդ?

—Ծէր Աստած, միթէ կարելի է այդ բացատրել... Այս մի զարհուրելի բան է, մարդ չափչփակտում է... օհ, այնպէս հեռու է թռչում նրա հոգին, այնպէս հեռու! Այս մի րոպէի մէջ ես աւելի ապրեցի, քան թէ ամբողջ կեանքում,

Սեւերինը այս պատմութիւնից յետոյ քնում է Ժաքի գգւանքի մէջ, այն ինչ սա անկարող է աչքերը խփել։ Այս սպանութեան պատկերը իր բոլոր մանրամասնութիւններով անդադար նրա աչքի առաջն էր։

«Ահա դանակը խրւում է կոկորդը, մի խուլ խռոց հանելով, մարմինը երեք անգամ ցնցւում է երկար ցնցումներով, կենդանութիւնը վախչում է տաք արիւնի հետ, և այս արեան հոտանքը Ժաքը զգում էր իր ձեռների վրայ։ Ցետոյ, երեսուն անգամ դանակը մտաւ, մարմինը ցնցւեց։ Այս մի զարհուրելի բան էր, որը խեղդում էր նրան։ Օհ, այդպիսի մի դանակի հարուած տալ, վերջապէս բաւականութիւն տալ այն վաղեմի բաղձանքին՝ իմանալ թէ ինչ է զգում մարդ այդ ժամանակ, տեսնել վերջապէս այն րոպէն, երբ մարդ աւելի է ապրում, քան թէ իր ամբողջ կեանքում»։

Այսպիսով Ջոլան բացատրում է վեց հոգեբանօրէն այս մարութեան իսկութիւնը։ Այդ հիւանդութիւնը մի կատաղի պահանջ է իմանալու, թէ ինչ է զգում մարդ սպանելու րոպէին։

«Ջնաչելով իր ջանքերին որ քնի, մի աներեւոյթ ձեռք բաց էր պատում նրա աչքերը և խաւարի մէջ սպանութիւնը կրկին պատկերացաւ իր արիւնոտ մանրամասնութիւններով. կրկին դանակը խրւեց, մարմինը ցնցւեց։ Մի կարմիր անձրև պատեց մթութիւնը, կոկորդի վերքը բացւեց, լայնացաւ, կարծես կայտնի ճեղքած լինէր»։

Ամբողջ գիշեր այդ պատկերները չթողեցին նրան հանգստանալ։ Երբ աղօթարանը բացուեց, երբ հագիւ սկսեց նա զանազանել սենեակի միջի իրերը, նրա աչքն ընկաւ այն դանակին, որը մոռացել էր ընթրիքից, և այլ ևս չկարողացաւ պոկել իր հայեացքը նրանից։ Երբ լոյսը բացուեց, Սեւերինը դեռ քնած էր հանդարտ քնով, երեխայի նման շնչելով։ Այն ժամանակ փաքը զգում է մի սոսկալի, անդիմադրելի պահանջ.—վայր թռչել, վերցնել այդ դանակը և «խրել մինչև քոքը այս կանացի մարմնի մէջ»։ «Նա լսում էր հարւածի խուլ ձայնը, տեսնում էր, ասա մարմինը ցնցուեց երեք անգամ, յետոյ մահը փայտացրեց նրան, արիւնով չաղաղած»։

Սարսափի մէջ փաքը, երկար ներքին կռւից յետոյ, վայր է յատկում անկողնից, արագ հագնում է և դանակը ձեռին դուրս է վազում, որպէս զի մի ուրիշ կին սպանի, «քանի որ այդ սպանութիւնը մի անդիմադրելի ներքին պահանջ էր»...

Փողոցում նա պատահում է մի երիտասարդ կնոջ, պաշտելու չափ գեղեցիկ, ուրախ և երջանիկ աչքերով։ Նա հետևում է այդ կնոջ, նատում է նրա հետ երկաթուղու վագոնը, դանակի կոթը ձեռքում սեղմելով, պատրաստ յարմար րոպէին դանակը նրա վիզը ցցելու։

Բայց յանկարծ ամեն ինչ խառնւում է փաքի մտքում և նա իրան կրկին այն փոքրիկ սենեակումն է տեսնում, որտեղ հանգիստ քնով դեռ քնած էր Սեւերինը։ Յիշում էր միայն, որ դանակը դուրս էր նետել վագոնի լուսամուտից։

Այսպիսով Ջոլան մի հմուտ հոգեբան է հանդիսանում իր այս հետազոտմ։ Այս մոլութիւնների բնորոշ յատկութիւնը, որը զանազանում է նրանց խելագարութիւնից, այն է որմարդ կարողանում է դեռ կուել և տանձել առաջիններին գոնէ մի որոշեալ ժամանակ։

Ջոլան այս բոմանի մեծ մասը նւիրած է իսկապէս այս կուի նկարագրութեանը։

Բայց վերջապէս մի օր կամքը պիտի ընկճւէր և մոլութիւնը իրն անէր։

Մի գիշեր, երբ փաքն ու Սեւերինը երկաթուղու կայարանի մօտ մի առանձնացած տան մէջ պատրաստւում են սպանել Սեւերինի ամուսնուն, որին խաբելով այստեղ էին կանչել Պարիզից, երբ այս

գեղեցիկ կինը մերկ նրա կողքին, գրկելով նրա պարանոցը, համբոյրներ ու գգւանքներ էր յայտնում նրանից, խեղճ ծաքի կիրքը աւելի ևս անպիմադրելի կերպով յարութիւն է առնում նրա հոգում: Նա սևեռել էր Սեւերինի վրա իր խելացնոր աչքերը: Նա մի պահանջ էր միայն զգում, մահացնել այս իր սիրած կնոջ, այն ինչ խեղճ կինը կրկնում էր.

—Գրկիր ինձ, գրկիր ինձ...

«Նա (Սեւերինը) եա էր գցել գլուխը, մերկացրել կուրծքը: Իսկ սա, տեսնելով այս սպիտակ մարմինը, որը նրա աչքին հրդեհի պէս փայլում էր, բարձրացրեց դանակը: Բայց Սեւերինը նկատեց դանակի փայլը, եա գցեց իրան, ապշած զարմանքից ու սարսափից:

—Ծակ, ծակ... ինձ, Տէր Աստուած! Ինչի, ինչի...

Նա չպատասխանեց և վայր բերեց ձեռը»:

Սոսկալի ոճիրը կատարուեց: Ծաքի հիւանդական կիրքը բաւականութիւն ստացաւ. բայց որքան կուշտ խեղճ մոլին, որքան բնական է այս կուիրը և ինչպէս մարդ զգում էր, որ մի օր կամքը պիտի ընկճի այս անասնի կրքի առաջ!

«Գազան Մարդիկ» րոմանի մէջ, կրկնում ենք, համարեա բոլոր գործող անձերը մոլիներ են (մանիակներ):

Բ ժ իշկ Պ ասկալը (Le Docteur Pascal) մի հիանալի հոգեբանական րոման է, որի գլխաւոր հերոս—բժիշկ Պասկալը և հերոսուհի—Կլոտիլդը յաջող հիւանդական տիպեր են ներկայացնում:

Պասկալը մի յայտնի բժիշկ է իր քաղաքում, միևնոյն ժամանակ նա իր ազատ ժամերը նւիրում է իր սեփական ոհմտաբանութեան ուսումնասիրութեանը, կամենալով ժառանգականութեան օրէնքներ դուրս բերել նրանից: Այս նպատակով նա դիւմենանների ահագին կոյտեր է հաւաքել: Այս կրքի հետ միասին նրա մէջ զարգանում է և մի ուրիշ իղձ.—գտնել մի կենսատու հեղուկ, որի սրսկումը կաշուն տակ պիտի բուժէր մարդու բոլոր հիւանդութիւնները, անդամալոյծներին ոտի կանգնեցնէր, զառամեալներին երիտասարդացնէր:

Այս երկու կրքերը աւելի և աւելի սաստկանում են նրա մէջ, դառնում են մոլութիւններ:

Հետաքրքրական է հետեւել այս երկու մոլութիւնների ընդհարումներին, ինչպէս մէկը աշխատում է խեղդել միւսին Պասկալի հոգու մէջ։

Այս կռիւը արդէն չափազանց դժուար էր լաւ նկարագրելու և չնայելով դրան, Զոլան մի երրորդ կիրք եւս մացնում է իր հերոսի հոգու մէջ։ Այն է.—սէր դէպի իր եղբօր-աղջիկ Կլոտիլդը։

Այսպիսով Պասկալի հոգեբանութիւնը չափազանց բարդւում է այս զօրեղ կրքերի յաճախակի ընդհարումների պատճառով։

Չենք ասում առ այժմ, որքան յաջողուեց Զոլային լուսաբանել այդ բարդ հոգեբանութիւնը։ Կասենք միայն, որ բնականաբար այդ կրքերից մէկը կամ միւսը ժամանակաւորապէս տիրապետում է բժշկի հոգուն և ուղղութիւն է տալիս նրա մտքերին ու գործերին։

Մի քանի ժամանակով այդ նորաթոյս սէրը դէպի մօտաղահաս Կլոտիլդը, որը նրա թոռը կարող էր լինել, կլանում է նրա բոլոր հոգեկան ոյժերը։ Կայ մի ուրիշ շրջան նրա կեանքում, երբ նրա միտքը զբաղւած է կենդանանուշիւ հեղուկի գտնելու խղճով ու այնպէս է անձնատուր լինում Պասկալը այդ մտքին, որ չի սթափւում նոյն իսկ այն ժամանակ, երբ ակներև է դառնում, որ նրա այդ սրսկումները մահ են առաջացնում։

Վերջապէս սրտի հիւանդութիւնը անկողին է գցում Պասկալին։ Զգալով մահուան մօտենալը, նրա հոգին տարուբերւում է երկու մոլութիւնների մէջ։ Մերթ յափշտակւած իր ժառանգականութեան թէօրիայով, նա բացատրում է բժիշկ Ռամոնին իր հայեացքները այդ մասին։ Մերթ, այրելով բացակայ Կլոտիլդին կրկին տեսնելու տենչանքով, նա հաշւում է, թէ դեռ քանի ժամ է մնում իրան ապրելու, երկնչելով, մի գուցէ հոգին աւանդի մինչև իր սիրուհու գալը։ Եւ մերթ իր բժշկելու նոր մեթոդի—սրսկելու—մասին խօսելով։

Այս չիշած մոլութիւններից որն էր ամենազօրեղը? Զոլան իր րոմանի ընթացքում չի որոշում այդ, թողնելով այդ բացատրութիւնը գրքի վերջին,—Պասկալի մեռնելու րոպէին։ Եւ, ճշմարիտ որ այս րոպէին միայն ակներև է լինում, որ Պասկալի իսկական մոլութիւնը ժառանգականութեան օրէնքների որոնումն է։

Վերջին րոպէին, երբ նա գտաց, որ հիւանդութիւնն արդէն

սեղմել է նրա կոկորդը, կորել է շնչառությունը և խեղդում է նրան, բժիշկ Պասկալը։

«Ճանկարծ ցած է պրում իրան անկողնու վրայից կամենալով ոտի կանգնել, բայց վերջին ուժերը ժողովելով։ Մի առանձին պայծառ լույս, օդի, տարածության – առաջ էր մղում նրան. նա չգիտեր նա պատ, որ հարևան սենեակից վերադառնում է նրան իր անցած կեանքը, իր ամբողջ կեանքը։ Նա վազեց այդ սենեակը տարուբերվելով, հնալով, մարմինը ձախ կողքին ծռելով և կարասիները բռնելով։

Բժիշկ Ռամոնը արագ վազում է դեպի նա և ուզում է կանգնեցնել նրան։

Բայց Պասկալը որոշել է տի վրա մեռնել. նա խռխռոցի միջից կրկնում էր.

—Ա՛խ... ա՛խ... այնտեղ... այնտեղ...

Եւ մի հերոսական ճիգ անելով, նա քարշ է տալիս իր կիսամեռ մարմինը մինչև իր սեղանը և խարխափելով, աչքերն արդէն մթնած կոխած, գտնում է վերջապէս թղթերի կոյտերի միջից իր տոհմաբանական ծառը և իր անուան դէմ աւելացնում է դողդոջուն ձեռով այս խօսքերը... «Մեռնում է սրտի հիւանդութիւնից 7-ին նոյեմբերի 1873 թ.»։ Եւ ոտի կլոտիլդի ճիւղի վրա գրում է հեռաւեւալը. «Ծնեց մի որդի իր հօրեղբայր Պասկալից»։

Այսպէս մեռնելու վայրկեանին բոլոր միւս մոլութիւնները անյետանում են այս մեծ ցնորքի դէմ.—լրացնել իր տոհմաբանութեան պատմութիւնը, որից հետագայ գիտնականները ժառանգականութեան մեծ օրէնքները պիտի գուրս բերեն։

Այժմ թող թոյլ տրւի մեզ մի քանի խօսքով ամփոփել մեր տասծները Էմիլ Զոլաի րոմաններուի հոգեբանութեան մասին։

Զոլան իր բոլոր րոմաններում երևան է գալիս, իբրև մի զօրեղ հոգեգէտ, իսկ այդ վէպերից շատերը կարելի է ընդունել համարեա իբրև սոսկ հոգեբանական ելուզներ։ Նրա լայն հանճարը չէր կարող բաւականանալ ժամանակից հեղինակների ներկայացրած անգէտին, իդէալական հոգեբանութիւնով։ Ծանօթ լինելով արդի հոգեբանական գիտութեանը, որը աշխատում է բոլոր հոգեկան շարժուձևերը մարդու օրգանների գերակատար ֆունկցիաներին վերագրել, մեծ վիպագիրը այս գիտական տեղեկութիւն-

ները բոմանի մէջ մացրեց։ Ֆիզիօլոգիան ուսուցանում է մեզ, թէ սէրը արգասիք է սեռական օրգանների հատուկութեան, Զոլան իր մի քանի բոմաններում աշխատում է այս սեռակէսից վեհնել իր հերոսների մէջ սիրոյ ծագումն։

Միւս կողմից գիտութիւնը այսօր ցոյց է տալիս, թէ ինչպէս մարդկային մի որ և է բնական զգացմունք կարող է կամաց-կամաց փոխուել idée-fixe-ի, ժլատութեան և խելագարութեան, նոյնը անում է Զոլան իր բոմաններում։

Զոլաի ուսումնասիրած հոգեկան կրքերը չափազանց բազմակողմանի են։ Ամենից շատ նա ծանրանում է սիրոյ էպիզի վրա, որը կարծեմ առաջին անգամ նրա գրչի տակից դուրս է գալիս իբրև մի բնական և բացատրելի հոգեկան երևոյթ, որը յաճախ հիւանդական բնաւորութիւն է ստանում։

Առհասարակ մեծ նատուրալիստի վէպերում նկատելի է հերոսների զգացմունքների ծայրայեղութիւնը, որը հասցնում է նրանց խելագարութեան։ Այնպէս, որ շատ վէպերում Զոլան սոսկ հոգեկան հիւանդութիւններ է նկարագրում (Պազան-Մարդիկ, Բժիշկ Պասկալ և այլն)։ Նրա վէպերի գլխաւոր հերոսները, որոնք պատկանում են Ռուգոն-Մակարների ծառին,—համարեա բոլորը հոգեպէս հիւանդներ են։ Սրա բացատրութիւնը մենք կը գտնենք մեր առաջիկայ յօդուածում, որը կը նուիրենք ժառանգականութեան ուսումնասիրութեան Զոլաի վէպերում։

(Կը շարունակուի)

ԳՐԱԽՕԱՍԻԹԻՆ

1) ՏԱՇԵԱՆ, Հ. Յակոբոս, Մխիթարեան ուխտէն.—«Յուցակ Հայերէն ձեռագրաց Կայսերական Մատենադարանի ի Վիեննա»։—Վիեննա, 1891 թ., Մխիթարեան տպ., մեծադիր, 49 էջ։

2) ԴԱԼԷՄՔԵՐԵԱՆ, Հ. Գրիգորիս վ. Մխիթարեան ուխտէն.—«Յուցակ Հայերէն ձեռագրաց արքունի Մատենադարանին ի Միւնխէն».—Վիեննա, 1892 թ., Մխիթարեան տպարան։ Մեծադիր, 37 էջ։

Երեք տարի առաջ, 1891 թուականին, Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնը սկիզբ դրեց հայկական ուսմունքների համար մի շատ կարեւոր հրատարակութեան։ Գործը կոչուեմ է «Մայր ցուցակ ձեռագրաց, հրատարակեալ ի Մխիթարեան Միաբանութենէ»։ Վիեննայի միաբանութիւնը այդ նպատակով պիտի դիմէր ծանօթ բոլոր ժողովածուներին, այն մատենադարաններին, ուր հայկական ձեռագիրներ կան և իւրաքանչիւր ժողովածուի ցուցակը առանձին տետրակներով հրատարակէր։ Ամեն մի պետութեան մէջ գտնուած գրադարանների հայկական ձեռագիրների ցուցակները ի մի ժողովուած՝ պէտք է կազմեն հատորներ։ Այսպիսով առաջին հատորի մէջ կը մտնեն Աւստրիայի մէջ գտնուած գրադարանների ցուցակները, երկրորդ հատորի մէջ՝ Գերմանիայի գրադարանները, երկրորդը՝ Իտալիան, ապա Ֆրանսիան, Անգլիան և այլն։

Հրատարակութիւնների այդ չարքի առաջին նմուշը տուեց Յակոբոս վարդապետ Տաշեանի ձեռքով պատրաստած ցուցակով, որ վերաբերում է Վիեննայի կայսերական մատենադարանի հայկական ձեռագիրների ժողովածուին։

Այդ առաջին հրատարակութիւնը պէտք է կազմի առաջին հատորի (Աւստրիա) առաջին տետրը։ Յաջորդ տարին, 1892 թուականին, լոյս տեսաւ երկրորդ հատորի (Գերմանիա) առաջին տետրը, Միւնխէնի արքունի մատենադարանի հայոց ձեռագրերի ցուցակը, գործ Հ. Գրիգորիս վարդապետ Գալէմքէրեանի, նոյն Մխիթարեան ուխտից։ Վորան

պէտք է յաջորդէր Պետերբուրգի համալսարանի հայերէն լեզուի պրոֆեսոր պ. Մառ'ի աշխատութիւնը, որ պիտի ներկայացնէր Պետերբուրգի այլ և այլ հատուածութիւնների մէջ գտնուած հայկական ձեռագիրների ցուցակը։ Անգլիայի բոլոր հայ ձեռագիրների ցանկը կազմելու յանձն է առած Ս. վ. Պարոնեան, Հռոմինը՝ Յովհ. վ. Մխիթեան՝ Հռոմի Ուրբանեան պալրոցի հայերէն հայերէն լեզուի ուսուցչապետը, և այլն։

Վիեննայի Մխիթարեանների յղացած միտքը չատ յաջողակ պէտք է համարել. որ այդ գործը մի նոր զարկ է տալու հայկական ուսմունքներին՝ կասկած չի կարող լինել։

Չպէտք է կարծել, սակայն, թէ բոլոր ցուցակագրած ձեռագիրները ուսումնական կամ գեղարուեստական արժէք ունեն։ Ոչ, քանց ցուցակագրելու համար այդ անպայման չի պահանջուի Յայտնի կացուցանել այն բոլորը ինչ կայ—արժէքաւոր թէ անարժէք—սակա իմդիրը, և Վիեննայի Մխիթարեանները իրանց այդ նոր ձեռնարկութիւնով կը հասնեն առաջադրած նպատակին։ Անկասկած է նաև, որ չատ ձեռագիրներ, որոնք մինչ այժմ մասնաւոր անձերի մօտ պահուած են, անյայտ մնալով ընդհանրութեանը, այժմ լոյս աշխարհ կը բերուեն՝ ցուցակագրութեան արժանանալու համար։ Դորանով ճանապարհ կը հարթի որ այդ մասնաւոր սեփականութիւնները մատենադարաններ մտնեն, որը ձրիքար, որը ժամն և որը թանկ գնով՝ նպատակ բովանդակութեան։

Վիեննայի Մխիթարեանները սկսել են իրանց գործը այն գրատներից, որոնք իրանց մօտիկ են, նախ Վիեննայի կայսերական գրատնից, ապա Միւնխէնից։ Եւ համեմատաբար միւս մեծ քաղաքների հայկական ձեռագիրների ժողովածոների հետ՝ Վիեննայի կայսերականը և Միւնխէնի արքունական գրատունը անհամեմատ չատ աղքատ են։ Եւ ոչ միայն ձեռագիրների թիւով նոքա աղքատ են, այլ և նշանների բովանդակութեամբ։ Վիեննայի կայս. գրադարանի 28 ձեռագիրներից գէթ 13 հատը, ասում է հ. Տաշեան իւր յառաջաբանի մէջ, մատենագրութեան համար աննշան է (Մաշտոցներ, ժամագրքեր, Ձեռնադրութեան գրքեր, ձաշոցներ, Շարակնոց, Սաղմոսարան, Պատարագամատոյց)։ Միւս ցեալներից 5-ը եկեղեցական մատենագրութեան համար մի փոքր կարևորութիւն ունեն, այն է՝ մի Յայսմաւուրք այլ և այլ հետաքրքրական կտորներով», մի ժամագիրք որ հայելեզու քարոզիչների ժամակարգութիւն է, երկուսը Սաղմոսներ են, որոնք թարգմանութիւններ են հայերէնից տաճկերէն և թաթարերէն, թէև տարբեր կատարած. մի Աստուածաչունչ, որ հ. Տաշեան չատ գնահատելի է համարում գլխատորապէս իւր կատարելութեան համար, որով չատ մ'այլ գրութիւնք ալ ունի իւր մէջ, ի մասնաւորի Կատակք Երկոտասան Նահապետաց անվաւերականը լի և անթերի»։

Իսկապէս արժէք ունեցող Վիեննայի կայսերական մատենադարանի մէջ 6 ձեռագիր է հաշուում հ. Տա-

չեան. նոցանից մէկը՝ համեմատութիւն է Աստուածաշնչի տպագրութեան՝ երեսատղեմ գտնուած հայ ձեռագիրների հետ. երկրորդը՝ հաւաքածու է այլ և այլ բառարանների. երրորդը՝ հաւաքածու է շնորհալու, Եփրեմի, Մանդակունու և այլոց գործքերի. չորրորդը՝ ժողովածու է նկարների, ժամանակագրական տեղեկութիւններով և այլն. վերջապէս հինգերորդը՝ Լակրոզի գործքերն են, ընդօրինակութիւններ են, թարգմանութիւններ լատիներէն և ծանօթութիւններ։

Վիեննայի կայսերական մատենադարանի ձեռագրերը աննշանակ են նաև զարդագծերի և մանրանկարների կողմից. հազիւ մի քանին մանրանկարներ ունեն և այն՝ ոչ շատ լաւերը։

Վալով ձեռագրերի հնութեանը, այդ ձեռագրերի մէջ հնագոյնը 1334 թուականից է, իսկ նորագոյնը՝ 1795 թուականից. ամենամեծ մասը 17-րդ դարից է։

Արժանաւորութեան կողմից ևս լաւ կարևոր չեն նաև Միւնխէնի արքունական և պետական գրադարանի հայկական ձեռագրերը, որոնց ցուցակը կազմել է հ. Գ. Գալէմքեարեանը։ Այդ մատենադարանի 30,000 ձեռագրերի մէջ՝ հայկականները միայն 21 հատ են, որոնցից հազիւ մի քանին իսկական ձեռագրեր են, մնացեալը՝ ընդօրինակութիւններ են։ Եւ ժողովոդի վկայութեամբ՝ նոցանից հազիւ մի քանին հին մատենագրութեան և գեղարուեստի համար նշանակութիւն ունին։ Այդ ձեռագրերից հնագոյնը 1278 թուականից է, նորագոյնը 1827 թուականից. մնացածների մէջ հինգը 18 րդ դարից է։ Եւ հ. Գալէմքեարեանի այս ցուցակը՝ երկրորդն է այդ մատենադարանի հայ ձեռագրերի նկատմամբ։ Մինչև այդ մատենադարանի ձեռագրերի ընդհանուր ցուցակի մէջ 1875 թուին Բերլինի հանգուցեալ պրոֆեսոր Պետերման կազմեց քան հայերէն ձեռագրերի ցուցակը, որին չաջորդում է ահա հ. Գալեմքեարեանի այս մանրամասն ցուցակը. այդպէս հաշւի չենք առնում այն, որ այդ ձեռագրերից երեք հատի մասին գեղարուեստական տեսակէտից գրեց 1866 թուին դ-ր Յովակիմ Չիդ հայտ։

Վիեննայի Մխիթարեան միաբանութեան ձեռնարկած այս գործի կարևորութիւնը, սակայն, չի կախուած ցուցակագրած ձեռագրերի մեծ արժէքից. ոչ այդ ասել այն՝ ինչ կայ—խնդիրը գրանում է. թող որ ամենքը կարողանան այդ հեշտ ձեռք բերելի ցուցակներից իմանալ թէ ինչ գրադարանում ինչ բովանդակութեամբ ձեռագիր կայ, ում գրած, և որ ժամանակաւանից—ահա լուծելու խնդիրը։ Աւելացնենք դրա վրայ այն, որ ցուցակները կազմած են եւրոպական մատենադարանների ցուցակների ձեւով, մանրամասն և իմաստով. ամեն ձեռագրի մասին տրած են մանրամասն տեղեկութիւններ, կարևորագոյն կտորների քաղուածներ, զարդերի և դրչագրերի արտանկարներ և այլն, և այդ ամենը հրատարակած լաւագոյն տպարանում, ինչ ունեն հայերը առհասարակ։

Մի նկատողութիւն սակայն. Ամեն ձեռագրի արտաքին նկարագրութեան վերաբերեալ տեղեկութիւնների նկատմամբ նպատակայարմար է որ կատարելապէս միակերպ լայնարտահանութիւն պահպանած լինի Պարզենք. Ամեն ձեռագրի համար տրւում են տեղեկութիւններ՝ մեծութեան մասին, գիրքի, թղթի, թերթերի և էջերի թւի, կազմի, հնութեան, գրութեան, տեղի, գրչի, մաքրութեան աստիճանի մասին և այլն։ Բայց մինչդեռ յուցակի, աւելի ևս հրատարակած երկու յուցակների մէջ, այլ և այլ ձեռագիրների մասին այդ հարցերի պատասխանները լետ ու լառաջ են դրւած։ Մինչդեռ, օրինակ, մի ձեռագրի նկատմամբ ամենից առաջ յայտ է տրւած ձեռագրի մեծութեան չափը, ապա թերթերի թիւը, լետոյ գրութիւնը և այլն, մի այլ ձեռագրի համար հարցերի հերթը այլ է, առաջ յայտ է տրւած թերթերի թիւը, լետոյ մեծութիւնը, ապա գրութիւնը և այլն։

Երկրորդ. բոլոր ձեռագիրների մասին տւած տեղեկութիւնների տեսակները հաւասար թւով չեն. այսպէս, օրինակ, մի ձեռագրի մասին տրւած են 16 տեսակ տեղեկութիւններ, իսկ մի ուրիշ ձեռագրի համար 22 տեսակ տեղեկութիւններ։ Մինչդեռ աւելի նպատակայարմարը այն կը լինէր, եթէ բոլոր ձեռագիրների նկատմամբ ճիշդ միևնոյն հարցերը դրւած և այդ հարցերի պատասխանները էլ ճիշդ միևնոյն հերթով արւած լինէին։

Ն.

---

3) ԿԱՆԱՑԵԱՆՑ, Սահակ.—«Յուցակ հայերէն ձեռագրների Թիֆլիսի Ներսիսեան Հոգևոր Դպրանոցի»։ Թիֆլիս, 1893 թ., տպար. Շարաձէի։ Մեծադիր, 75 էջ։ Հրատարակ.՝ Ներսիսեան Հոգ. Դպրանոցի Հայոց Թիֆլիզում։

Վիճելի Մխիթարեանների ձեռնարկութիւնը, որի յայտմ հրատարակած երկու տետրների հետ ծանօթացրեցինք «Մուրճի» ընթերցողներին, լուսաբեր և պէտք էր սպասել՝ զարկ էր տալու ձեռագրերների յուցակներ հրատարակելու գործին։ Ինչպէս եւրոպական գրադարանների յուցակները օրինակ են ծառայել Մխիթարեաններին, նոյնպէս և Մխիթարեանների այդ կարգի հրատարակութիւնները օրինակ պիտի դառնան Հայերին առհասարակ։ Եւ ահա առաջին հետևողը մեզանում հանդիսանում է Թիֆլիսի Ներսիսեան Հոգևոր դպրանոցը, որի մատենադարանը նոյն ժամ բաւականաչափ ձեռագրերներ ունի, որպէս զի արժեր նոր նոցա յուցակը առանձին տետրակով հրատարակել։

Այդ գրադարանը այժմ ունի 30 ձեռագիր. բայց, ինչպէս վկայում է ցուցակի կազմող պ. Կանապեանցը, «Տաւաստողնից կան որ գրատունը քառատուն և տնդ, իսկ ոմանք թէ մինչև երեք հարիւր ձեռագիր է ուննցել»։ Յիշեալ դպրանոցի վարչութեանը դրանով բնական խնդիր է դնւում թէ ուրքան ատոյգ են այդ վկայութիւնները և ճշդութեան դէպքում՝ ումի ձեռքն են անցել պակասորդները։ Այդ խնդիրը իւր կարգով, բայց ձեռագիրների մանրամասն ցուցակներ հրատարակելը ինքն ըստ ինքեան զօրաւոր միջոցներից մէկն է՝ կողոպուտների դէմն առնելու համար, որովհետև այն, ինչ լոկ գրապարանապետների գաղտնիքն էր՝ այժմ դառնում է ընդհանուրի սեփականի մի բան։

Շնորհաւորելով Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը՝ ցուցակը հրատարակելու գաղափարի համար, մենք սակայն պէտք է ասենք, որ նորա այս հրատարակութիւնը իւր մի հանգամանքով մեզ վրայ անաւորժ տպաւորութիւն գործեց։ Եւ այդ մի հանգամանքը՝ կազմող անձին է վերաբերում։ Կազմողը պ. Ստեփան Կանապեանցն է, որը կցել է իւր աշխատութեանը մի չատ անշնորհք չառաջաբան, բոլորովին տարբեր այն օրինակներից, որոնց ոգուն հետևելը կազմողի միակ արժանաւորութիւնը պիտի կազմէր։

Մինչդեռ Մխիթարեանները չամաչել են իրանց կարճ չառաջաբանների մէջ տաղտկալի և միմիայն այն, ինչ ցուցակագրած ձեռագիրների է վերաբերում, պ. Կանապեանցը ուզենալով անպատճառ գերազանցել նոցա, տարակարծ տեղեկութիւններից դուրս, ուել է նաև մի փոքրիկ տրակտատ, լիքը աւելորդ խորհրդածութիւններով, որոնց մէջ նա իրան ցոյց է տալիս ոչ միայն չափից դուրս մեծ սիրահար ձեռագիրների, այլև նշանքան և թերևս աւելի հաւատարիմ աշխատակից «Արձագանք» լրագրի։ Տեսէք թէ ինչ տեղ է գտել նա մի կաթիլ ևս աւելացնելու թռնատուրման այն գործի վրայ, որ ուրքան սիստեմատիկաբար սկսել և չարունակում են չատ քանակները՝ ընդդէմ Երեմիայի նախկին տեղակալութեան։ Լսեցէք։

«Այս չարեաց (այսինքն ձեռագրերների կորուստի) ինչպէս և մեր այլ չատ ազգային պակասութեանց գարմանը կարող էր անել գլխաւորապէս մեր հոգևոր իշխանութիւնը։ Ս. Էջմիածնայ այժմեան կառավարիչները (չմոռանանք որ գրքի սկզբում տպած է «Ի Հայրապետութեան Տ. Տ. Մկրտիչ Ա. վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց»), երանի թէ առհասարակ հետևելով երջանկայիշատակ Գէորգ դ. (փոքր դ.տառը հեղինակինն է) ուռումնասէր և հայրենասէր հայրապետի չուրջին, ժողովէին մեր վանքերից կարևոր ձեռագրները ս. Էջմիածին՝ փոխանակ 1892-ին դէսից դէնից հարկաւոր վարդապետներ, այժմ էլ վարդապետացուներ հաւաքելու»։

Պարս է գալիս, որ 1892 թուականին դէս-դէն ից վարդապետներ հաւաքեցին Ս. Էջմիածին, որոնք միաձայն ընտրեցին

Թլիմեան Հայրիկին, իսկ այժմ էլ Կաթողիկոս Հայրիկն է դէպի գ-դէն ից վարպետացուները հաւաքում... Եւ կառավարչական ամեն բան թողած՝ ինչ պէտք է անէին 1892 թուականին և այժմ պէտք է անեն էջմիածնի կառավարիչները՝ նրա, ըստ Կանալեանցի, պէտք է վանքերում ցրած ձեռագրները հաւաքէին !!...

Ահա համար չեն անտպասելի այդպիսի տողերը նոյնպիսի անհեթեթութիւններ ու անտեղի տողեր սրբագրում են Ներսիսեան Վարժարանի հոգաբարձութեան կարգադրութեամբ... [1]):

---

[1]) Ահա ձեզ մի այլ բան, այս չնչին, որը սակայն շատ լաւ բնորոշում է հայկական մի մեծ հիմնարկութեան կառավարիչների ոգին և նոցա ունեցած հանգամանքները կարգ ու կանոնի և պատասխանատուութեան մասին։ Յայտնի է որ պ. Կ. Կոստանեանցը Ներսիսեան Վարժարանի ոչ թէ տնօրէնն էր, այլ պաշտօնակատարը տեսչի. Համաձայն ենք, որ լինի մէկը տնօրէն թէ միայն նորա պաշտօնակատարը՝ նա միևնոյն տեսչական պաշտօնն է կատարում։ Բայց մի հարց. ինչպէս է համարձակւում մի պաշտօնական մարմին, ինչպիսին է դպրանոցի հոգաբարձութիւնը, չատկացնել իւր պաշտօնեային մի տիտղոս, որը ձեռք բերելու չանքերը հանդիսել են անձնդողութիւններին, այն էլ այնպիսի չանքեր, որոնք լրագիրների միջոցով յայտնի են ամբողջ ընթերցող հասարակութեան։ Եւ սակայն տեսուչ է կոչում նորան պ. Կանալեանցը, դպրանոցի ծառայողը, և այդպէս էլ տպագրում է դպրոցի հոգաբարձութիւնը (տես չաւաչեան, էջ գ., սիւնեակ երկրորդ)։

Անցնենք սակայն մի այլ կէտի, որ ներկայ դէպքում ամենևին երկրորդական չի կարող համարուել։ Անգամ եթէ այդ հանգամանքը վճռորոշական չհամարուի՝ անկարելի է անուշադիր թողնել։ Ուզում ենք ասել, որ պ. Կանալեանցը դրել չգիտէ։ Ընթերցողը հազիւ կարող է երևակայել քանակութիւնը այն բոլոր սխալների, որ պ. Կանալեանցը կատակել է թէ իւր չառաջաբանում և թէ ցայսկիզ այն բոլոր էջերում, ուր նա որ և է ծանօթութիւն է դրել իւր կողմից։

Սխալները, որ մենք ակնարկում ենք, ոչ միայն բազմաթիւ են, այլ և բազմակողմանի։ Դուք կը գտնէք պարբերութիւնների սխալներ, որոնք ցոյց են տալիս մտածելու սխալ եղանակ. դուք կը գտնէք ներկայ աշխարհաբարից հրէշաւոր չեղումներ, կէտադրութեան սխալներ ամեն քայլափոխում և վերջապէս՝ տպագրական սխալներ, որոնք զժբաղդում ու վիրաւում են գրքի ամեն էջում։

Թէ ինչպէս կարելի է վատ դրել, իբր օրինակ կարելի է բերել այս պարբերութիւնը՝

«Այնպէս չպատահի այլ ևս այն, ինչ կամ այն ձեռագիրը չկամենալով խնդրողին տալ, պատրաստեն թէ՝ պահարանի բանալիքը կորել է, ինչպէս անում են վճռեակի Միխթարեանները, և կամ անհեթեթ պատճառներ պահանջեն, իբրև գրաւական և այն էլ գեսպանատան միջոցով. չգիտեմ թէ երաչխաւորութեամբ, թէ երկուսով էլ տանդերձ, մի աննշան ձեռագրի համար,

հակառակ Եւրոպայի մասնաւոր-բանններում կարգ գարձած սովորութեան» և այլն (այստեղ լրիւ տատում ենք, որովհետև պարբերութիւնը վերջանում է մի սասանակ տողից յետոյ)։ Մտածելիք նոտարդրած խօսքերի վրայ և գտէք թէ «երկուսով էլ հանգերձ» խօսքերը ինչին են վերաբերում։

Եւ կամ նորից կարդացէք վերը առաջ բերած տողերը դէպի ցդէնից հաւաքած վարդապետների մասին։

«Ս. Էջմիածնայ աւժմեան կառավարիչները—(աւժմեան խօսքը բնական է որ վերաբերում է ոչ-տեղակալութեան, քանի որ գիրքը լոյս է տեսած Նալեանների 1893 թ.) երանի թէ առհասարակ հետևելով Գէորգ դ. Հայրապետի չափին ժողովէին... ձեռագրները Ս. Էջմիածին՝ փոխանակ 1892 ին մալխին... (սրբեին տեղակալութեան օրերով) վարդապետներ հաւաքէին»։

Բայց անունդ թէ լեզուի այդ ինչ սխալներ են, որ մենք աշխատասրաւելից հրչատար չեղումներ յայտարարեցինք։ Ինչպէս էք հաւանում օրինակ այն բանը, որ պ. Կանալեանցը հրաժարվելով հրաժարում է գործածել՝ չի օգնիլ, չի դիմանալ, չի ուզիլ քերականական ձևը, այլ մեր հայերէնի նախանձախնդիր դպրանոցի հրատարակութեան մէջ նա չարունակ գործ է ածում՝ չ'օգնիլ, չուզիլ և այլն։ Մթթէ հրչատար չէ այդ գաւառաբանութիւնը ?! Այլ և պ. Կանալեանցը չատ կարճ է կըտրում այն խնդիրը թէ ինչպէս պիտի գրել՝ չի ուենգել, չի կոթել և այլն, թէ՝ չէ ուենգել, չէ կոթել և այլն։ Ոչ այս, ոչ այն, այլ ուղղակի՝ չուենգել։ Օրինակ՝ «Որ ձեռագիրը այս կամ այն մասը չ ուենգել, աւելորդ ենք համարել առանձնակի լիչել»։ (տես յառաջաբան, էջ ն, առաջին սիւնակ)։

Եւ չկարծէք թէ պօքա վրիպակներ են. ոչ, պ. Կանալեանցի հայրենի քերականութենից մի-մի նմոյշներ են, այդ նոյն ձևերը դաւք կը գտնէք կրկնած չատ տեղերում, իսկ ուղիղը՝ ոչ մի տեղ...

Եւ պ. Կանալեանցը ինքն է վկայում (էջ Գ. երկրորդ սիւնակ), որ իւր ուսուցիչը եղել է պ. Կ. Կոստանեանցը։ Անչուչտ չորդորթիչ վկայութիւն!

Պր. Կանալեանցը է բայի գործածութիւնն էլ աւելորդ է դատում այն դէպքերում, ուր մենք անհրաժեշտ ենք համարում։ Օրինակ՝ նա գրում է էջ 41, առաջին սիւնակ՝ «Ներկայորդ գլուխը բաժանած չէ, ինչպէս միւսները, այլ կցած գ-ին, անչուչտ սխալմամբ, որին հետևում թ. գլուխը... Եւ կամ՝ «Այս մեկնութիւնը՝ ոչ թէ նաման գրել է և պատահմամբ կորած արտագրողների անզգուշութիւնից, այլ...»։

Եւ կամ (էջ Բ, 2-րդ սիւնակի վերջը)՝

«Մենք համոզած ենք, որ ստացանից չատերը և նոյն իսկ նէյր կը տան այդ հատուածութիւններից չատերին...»։ Բայց միայն Աստուած է յայտնի թէ ինչին է ծառայում այդպէս եռ չարկապը։

Էջ Գ, սիւնակ 2-րդ՝

«Միայն թէ հատատս կարելի է ասել որ՝ 4 ձեռագիր թ. 4, 7, 17 և 26, որոնց նեթսի կողմերին կպցրած տոմսերի վրայ տպագրած է «Ազգքանդր Վազարեան Փալիրնանց», ինչպէս համեստաչուք կոչ Փալիրնանից իմացանք, իւր հօր, Ազգքանդր Վազարեան Փալիրնանի, մահուանից 1890-ից ի վեր է մնել (չգիտ ձեռագիր, որոնց... և ապա՝ լեռ է մնել) պլրանոցի մատենադարանը...»

Ջհատած արդէն հնդհակալի և բալի անհամաձայնութեան տալին, ականջ ծակելու բան է ասել՝ «հնդրա մահուանից 1890-ից լեռաց», որ նոյն իսկ իւր իմաստով էլ լաւ ըմբռնելի չէ։

Օրինակների թիւը մենք չենք կամենում տատարացնել. բայց միայն ի դէպ է ասել, որ այդքան անպրադէտ պրոյը, ինչպէս այդ կարգի գրոց նեթսին չատ լաւուկ է, սիրում է զարդարել իւր գրած.քը ausgesuchte բառերով, ինչպէս օրինակ՝ «մեր նախնեաց ոսկեծիլ մատենները», և կամ նոյնանիշ բառերի անմիտ կրկնութիւններով, ինչպէս օրինակ՝ «եթէ վաղօրօք չուտափուչի ձար չտեսնեի», «արդէն կարող ենք ակռայ վատահութեամբ դատարձակ ասել...»

Բայց երբ հարկատր է որ այդ ոսկեծիլ մատենների անուշնով երգուղները մի երկու հատարակ մոքեր լայտնեն, մի երկու էջ խեղացի բան գրեն,—ոսկին խակոյն գտնում է արճիճ անագ, և չնայած դրան՝ նոյն այդ զuaնi-հնդհնակները աղուր վատահութեամբ դատարձակ նաև քարոզիչների դեր են տատնձնում, ի տարկէ մեզ դասեր տալու համար թէ ինչպէս պէտք է մտածել և մանաւանդ թէ ինչպէս պէտք է գրել...

Անհնարին է տպատել ամեն ատեակ սխալների այս պանձը. չենք կանգ առնում նաև այն բանի վրայ, որ ձեռագիրները հետազօտողը ամեն քայլափոխում սխալ և անհրատեմ կէտադրութիւն է գտնում. Բայց տակալի է նաև տպագրական սխալների թիւը, որի մասին խոյ գաղափար է տալիս գրքի վերջում տպած չարչ քառանուն վրիպակների ցանկը։ Ձեռագրների հրատարակութիւնը, թէև քաղաքօրէն, պէտք է կատարւի չատ և չատ լրտամքով։ Եւ եթէ տովորական գրքերի տպագրութիւնը պահանջում է 2 և 3 սրբագրութիւն, ձեռագրների տպագրութեան համար չպէտք է խնայել 4—5 սրբագրութեան ջանքն ու ծախքը, ի տարկէ պահպանելով ձեռագրների ուղղագրութիւնը։

Ի դէպ՝ ձեռագիր բառի ցոգնակին մասին, Պրն. Կանալեանցը գրում է՝ ձեռագրներ։ Մենք գոյ ենք ածում երկու ձև ցոգնակի՝ ձեռագրեր կամ ձեռագրիններ։ Ամենևին տարկ չկայ երկուսի վրայ մի երրորդը աւելացնել։ Եթէ ն տառը պէտք է աւելացնել՝ ն տառի կրճատումը անտեղի է. չեն տատմ մատենագրներ, այլ մատենագրիններ, չեն ատում լրագրներ, այլ՝ լրագրիներ և այլն։ Մեր աշխարհաբառը այդպէս է պահանջում. իսկ եթէ կամենում էք այդ բարդ բառի մէջ դէր բառի ցոգնակին պահպանել, այն ժամանակ պէտք է գրէք ձեռագրերն և ոչ

Ձեռագրներ։

Հեղինակելու, չարագրելու անընդհատությունը ընթերցողի աչք է ծակում։ Օրինակ էջ Ի, սիւնակ առաջին, պ. Կանայեանցը մի ծանոթութիւն է դնում, ուր նա լուս է յայտնում, որ իւր կազմած ցուցակի հրատարակելուց յետոյ «այսուհետև այս տեսակ անբարշաւութեանց առաջ կ'առնէ»։ Բայց այդ ծանոթութիւնը դնում է պ. Կ. ոչ թէ այն տողերին կից, ուր նա դպրոցի կտրած ձեռագիրների մասին է ցաւում, այլ այն տողին կից, ուր նա յայտնում է թէ «մի տաղարանի միացորդ էլ վերջը պ. Ա. Մանդինեանից առացանք, որը սակայն պէտք է այսուհետ չեչտել, պատանը չէր պատկանում»։ Եւ դարձ է գալիս այսպիսով, որ պ. Ա. Մանդինեանի առածն էլ անբարշաւութիւն է...

Մի յայտնի չափով անհմտութիւն երևում է ներկայ ցուցակի կազմողի կողմից նաև յատուկ անուանների ցանկը կազմելուում։ Մթթէ նոր սովորելու բան է որ ցանկերի մէջ անուանները դասաւորելիս առաւելութիւն է տրւում ազգանուններին և ոչ մկրտութեան անուանների այբբենական կարգին, երբ խօսքը նոր ժամանակի անձերի մասին է։ Օրինակ ում խելքին կը գայ Թալիրեանցի անունը որոնել Ա տառի ներքոյ, երբ որովհետև նա Ալեքսանդր Թալիրեանց է։ Ջախջախեանի անունը՝ Մ տառի տակ (Մանուէլ), Սալլանթեանցի անունը նոյնտեղ (Միքայէլ)։ Ձիշդ է, պրոցանելից ոմանց կոչումները դրած են նաև ազգանունների սկզբնատառերի ներքոյ, բայց ոմանց համար՝ ոչ։

Մենք մի փոքր երկար կանգ առանք այս հրատարակութեան թերութիւնների վրայ, ի նկատի առնելով, ի միջի այլոց, նաև այն հանգամանքը, որ պ. Կանայեանցը իւր այս տեարի յառաջաբանում մտադրութիւն է յայտնում ցուցակագրել Թիֆլիսում գտնուղ բոլոր ձեռագիրները, որոնց թիւը, նորա ասելով, 600-ի է հասնում, իսկ ըստ ոմանց՝ մինչև 1000-ի։

Արժէ որ այդքան ձեռագիրների ցուցակ կազմելու ձեռնարկողը աւելի հմտօրէն հայերէն գրէ և աւելի հաւատարմաբար հետևի, տրւած լաւագոյն օրինակների ոգուն։

Ա. Տ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներկայ րոպէին եթէ կայ մի խնդիր, որ իւր ծաւալով գերակշռում է բոլոր միացած տեղական խնդիրները, այդ անկասկած՝ հացի թանկութիւնն է, գլխաւորապէս Երևանեան նահանգում և Կարսի շրջանում։ Մասամբ նաև վատ է հունձը եղած Թիֆլիսի և Քութայիսի նահանգների մի քանի գաւառներում։ Այդ ամբողջ ընդարձակ անջրդի տարածութեան վրայ ոչ միայն վատ է յաջողել աշնանացան ցորենը, այլ և գարնանացան գարին, եգիպտացորենը, կորեկը և այլ հացահատիկները։ Նոր-Բայազէդի գաւառում, որպէս նաև Երևանի, Էջմիածնի, Շարուր-Դարալագեազի գաւառների լեռնալանջերի վրայ գիւղացիք մինչև անգամ սերմ չեն հաւաքել։ Աւելի ևս ընդարձակ տարածութիւնների վրայ, ինչպէս Ալեքսանդրապոլի գաւառն է և Կարսի շրջանը, հունձը միջինից շատ սուղ է։ Փոխանակ մէկին 5—7, հաւաքւած է 4—3 և մինչև անգամ մէկին երկու միայն։ Նոյնն է Ախալքալաքում, Ախալցխայում և մի քանի այլ տեղերում։

Ներկայ թւականի վատ հունձի հետևանքը չիշեալ տեղերում նորանով է մանաւանդ ծանր, որ նոյն վատ վիճակի ենթարկւեցին այդ տեղերը նաև անցեալ տարի։ Անցեալ տարւայ վատ հունձերի պատճառով գիւղացիք 1893 թւականի համար շատ տեղ ցանել էին սովորականից աւելի քիչ հող՝ կէսը, երրորդը, քառորդը և այդ քիչն էլ վատ է յաջողւել։

Այժ ունի գիւղացին արդեօք՝ տանել այդ դժբաղդութեան հետևանքները այնպէս, որ կրածը չարտայայտւի զգալապէս գալիք տարիներում, որ երկար տարիներով չխախտւի նորա տնտեսական կեանքը և դորա հետ այն բոլորը, ինչ կապւած է գիւղացու տնտեսականի հետ։

Յամենայն դէպս պէտք է հաստատ ընդունել այն, որ անցեալ տարւայ դժբաղդութիւնը կրելուց յետոյ՝ գիւղացու ոյժը, այս տարւայ ծանրութիւնները կրելու համար՝ շատ աւելի նւազած պիտի լինի, քան նա ոյժ ունէր անցեալ տարի։ Արդէն անցեալ տարի նա ստիպւած էր եղածը մսխել, տաւարի քանակութիւնը նւազեցնել, կամ իսպառ զրկւել նրանից, պարտքերի դիմել մեծ տոկոսներ վճարելով։ Այդ ամենը կատարւում էր նա յոյսը դրած 1893 թւականի վրայ, որը սակայն դաւաճանեց, և չէք դարձնելով աշխատանքի պտուղները։

Եւ ահա, փոխանակ սովորական արտահանութեան, վնասւած տեղերը ստիպւած են հացահատիկ բերել տալ հեռաւոր տեղերից, Տարաւային Ռուսատանից, մանաւանդ որ Տարեան Թիւրքա-Հայաստանն էլ դեռ ևս աւելի ողորմելի վիճակի մէջ է, և այն տեղից, որպէս նաև Պարսկաստանից ցորեն դուրս բերելը արգելւած է նոյն պատճառներով։

Յայտնի է որ Ազատւը երկաթուղու այն կայարանն է, ուր յանձնւում են երկաթուղուն Երևանեան նահանգից և Կարսի շրջանից եկած ապրանքները։ Արդ՝ 1891 թւականին, որ մի նորմալ տարի էր, Ազատւում ընդունել է երկաթուղով ուղարկելու համար 130.000 պուդ ցորեն, 235,000 պուդ գարի։ Մինչդեռ ներկայ 1893 թւականի միմիայն երեք ամիսներում՝ օգոստոսի վերջերից մինչև նոյեմբերի միջերքը ահագին քանակութեամբ հացահատիկ է ուղարկւած նոյն այդ նահանգները, այն է՝ դէպի Երևան, տեղացիների պիտոյքների համար՝ ալիւր 35.000 պուդ, ցորեն՝ 30.000, գարի 24.000 պուդ. զօրքի համար՝ ռոժ 200,000 պուդ, կրատպա 50,000 պուդ։ Դէպի Ալեքսանդրապոլ—Կարս, տեղացիների համար՝ ալիւր 45.000 պուդ, ցորեն 40.000, գարի 40.000, զօրքի համար՝ ռոժ 365.000, կրուպա 65.000։

Հետևապէս Երևանեան նահանգը և Կարսի շրջանը երեք ամսում ուղարկւած է մօտ 900.000 պուդ ալիւր, ցորեն, գարի և այլ հացահատիկներ։

Հացի թանկանալը բնական հետևանք է այդ ամենի։ Մինչդեռ ցորենի սովորական գինը Կարսում էր շուրջ 1 ռ., այժմ է 1 ռ. 70 կոպէկ, 1 ռ. 80 կ., Երևանում 1 ռ. 60 կ., 1 ռ. 70 կոպէկ։

Բայց այդ գները դեռ շատ բան չեն ասում Թշուառութեան աստիճանի մասին, որովհետև պէտք է հաշուի առնել, որ ոչ միայն գիւղացին սոխակած է այդ գներով հաց առնել, այլ և նա զրկուած է մի եկամտի աղբիւրից, ինչպիսին հացահատիկի արտահանութիւնն էր, որ 1891 թուականին 375.000 պուդի էր հասնում, չնայած որ այդ 1891 թուականը միջին տարի էր։ Աւելացրէք այդ բոլորի վրայ որ ներկայ տարին յաջորդում է անցեալ 1892 թուականի նոյնպէս անաջող տարուան, երբ փոխանակ 375 հազարի, միայն 208 հազար պուդ էր արտահանուել Ազաւեի վրայով, ուրեմն երբ արտահանութիւնը նախորդ տարւայ հետ համեմատած՝ կէսից էլ աւելի պակաս էր։

Այս հանգամանքները սոսկում են լրջօրէն մուածել ցաւին դարման գտնելու վրայ։ Բանը սա է որ եթէ հունձի անաջողութիւնը կրկնուող երևոյթներից է, սակայն մի հասարակութիւն կարող է, նախատեսնելով այդ՝ հետևանքների դէմն առնել, մտցնելով իւր մէջ համապատասխան կարգ ու կանոններ։ Ներկայ դէպքում մեր կարծիքով ոչինչ չի մնում անել քան եթէ պետական միջամտութիւն գործել, ինչպէս այդ եղաւ Ռուսաստանի ներքին նահանգների նկատմամբ 1891 և 1892 թուականներին։ Ճիշդ է՝ մեր դէպքում պետական օգնութիւնը հետաւորապէս անգամ այն ծաւալը չի ունենալ, ինչ հարկաւորւեց Ռուսիայի ներքին քսան նահանգների համար։ Այնտեղ աղէտը աշխարհ թնդացրեց, անգամ Ամերիկան օգնութեան հասաւ։ Իսկ այստեղ խնդիրը աւելի փոքր է, բայց օգնութիւնը նոյնպէս անհրաժեշտ։ Հաստատ է նաև որ մեր տեղական գիւղական-հասարակական միջոցները ամենևին չեն կարող բաւել ներկայ չարիքի դէմ զօրեղ կերպով կռւելու համար, մանաւանդ որ չարիքը երկրորդ տարին է, որ սուր կերպով կրկնւում է։

Մեզանում գիւղը վարում է բոլորովին անհատական կեանք. նա ոչնչով չի կապուած միւս գիւղերի հետ, որպէս զի նոքա կարողանան ընդհանուր խնդիրներ ունենալ և կամ եղած խնդիրները ընդհանուր ոյժերով, ընդհանուր միջոցներով լուծել, ընդհանուր

կարիքներին՝ նաև ընդհանուր միջոցներով բաւարարութիւն տալ։ Որովհետև կան կարիքներ, որոնց բաւարարութիւն տալ շատ դժուարին է, երբ ամեն մի դիւղ հարկադրւած է միայն իւր համար մտածել։

Եւրոպական Ռուսաստանում գիւղը այնպէս առանձնակի չէ կանգնած ինչպէս մեզանում։ Այնտեղի բազմաթիւ նահանգներում արդէն հաստատւած է զեմստւօ կոչւած հիմնարկութիւնը, որ նշանակում է նահանգական ինքնավարութիւն։ Ինչպէս որ քաղաքներին տրւած է ինքնավարութիւն, որ նաև մեր քաղաքներից շատերին շնորհւած է, այնպէս էլ նահանգներին է տրւած ինքնավարութեան իրաւունք, որ Կովկասում սակայն բնաւ գոյութիւն չունի [1]։

Զեմստւօի միջոցով է, որ Ռուսաստանում մի նահանգի այլ և այլ բնակութիւններ իրար հետ որքան և իրէ կապւած են, հետեւապէս և զեմստւօն կարող է և ունի միջոցներ ի միջի այլոց նաև օգնութեան հասնել այլ և այլ աղէտների դէպքում, առանց որ ամեն անգամ հարկ լինի պետութեան օգնութեանը դիմելու։

Այդպէս չէ մեզանում, ուր մի նահանգի գիւղերը կապւած են միմիայն գաւառական և նահանգական կառավարչական (ադմինիստրատիւ) հաստատութիւնների հետ, հաստատութիւններ սակայն, որոնք զուտ ոստիկանական-վարչական բնաւորութիւն են կրում։

Ահա ինչու այն բանի համար, ինչ Ռուսաստանում զեմստւօն կարող է անել, մեզանում տրւած են դիմել նահանգական հաստատութիւնների միջոցով անմիջապէս պետութեան։

Եւ ներկայ տարում կրկնւող վատ հունձի չարիքների դէմ առնելու համար այլ զօրաւոր միջոց չկայ քան եթէ պետական միջամտութիւնը, քանի որ նահանգական կառավարութիւններն, որպէս զուտ վարչական-ոստիկանական մարմիններ, իրանք սեփական միջոցներ չունեն նահանգի անտեսական և այլ պիտոյքների համար։

---

[1]) Համեմատ. «Յառաջդիմական պատմանները» առաջնորդող յօդւածը «Մուրճ» 1891 թ. № 1, էջ 9—11։

Ուշադրութեան արժանի հոգացողութեան մի օրինակ, սակայն, մեզ ներկայացնում է Թիֆլիսի նահանգական վարչութիւնը։ Ներկայումս ծրագրւում է այսպէս կոչւած «Փիւ զատնաեւսական դրամագլխի» կազմութիւն Թիֆլիսի նահանգի պիւղերի համար, մի նորութիւն, որ մասամբ արդէն իրագործւած է նախաձեռնութեամբ Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերբաչիձէի, որի շնորհիւ այս վերջին երեք տարիներում նահանգի 326 պիւղերը կամաւոր տուրքով դոյացրել են հացահատիկով և դրամով արդէն իսկ պատկառելի գումարներ, ինչ որ մօտ մի միլիոն տուրլու։ Թէ ինչպէս պէտք է մսխեն այդպիսով ժողովուդ գումարները, այդ մասին ծրագիրը առաջարկւած է կառավարութեան, որովհետև նա պէտք է օրէնսդրական վաւերացումն առնուայ, քանի որ, առեղծելով նոր տուրք և նոր հիմնարկութիւններ, նա պէտք է պետ ընդունւի պետական խորհրդի կողմից։ Ժողոված դրամը պէտք է գործադրւի այնպիսի տեղական պիտոյքների վրայ, ինչպէս անասուն պղելը, չրանցքներ, ճանապարհներ անցկացնելը, անասուններին հիւանդութիւնների դէմ մաքառելը, գիւղատնտեսական մեքենաներ ձեռք բերելը, պիւղի համար նոր հող ձեռք բերելը և այլն և այլն։

Այնպէս, ինչպէս ծրագրւած է գործը (տես նաև «Աշակ» № 15), նա շատ համակրելի կողմեր ունի։ Տուրքը միւսմ է ոչ պարտադիր, այլ կամաւոր, բայց միայն ոչ հատ-հատ պիւղացուց, այլ միայն պիւղի համար, այնպէս որ տուրքը սա միշտ պարտադիր է դառնում, եթէ պիւղի բնակիչները համաձայնական վճռով մի անգամ ընդունում են։ Տուրքը կայանում է նրանում, որ ամեն արական շունչ 12 տարեկան հասակից մինչ 60 տարեկանը՝ վճարում է տարին 20 փունտ ցորեն։ Շեմախանիներում հատաքածից անձեռնմխելի պահում է երկու տարւայ պաշար,, որ, անբերրիութեան դէպքերում, ծախսում է գիւղացիներին էժան գնով, ամեն ծխին առանձին։ Երկու տարւայ պաշարից աւելին ժողովածը ծախսում է հրատարակապէս, աճուրդով, որից գոյացած գումարը յանձնում է խնայողական դրամարկղին պետական բանկի Թիֆլիսի բաժնում։ Իւրաքանչիւր գիւղի անունով կազմւած դրամագլուխը միայն այդ գիւղին է, պատկանում է՝ կարող է մսխել միայն այդ գիւղի պէտքերի համար։ Այդ պատճառով ոչ մանուր անձերի դրամական պահանջների և

ոչ հարկահանութեան պէտքերի համար չի կարելի ձեռնամուխ լինել այդ ղրամագլխին։

Ղրամագլխի մնալուն ընչազուրկ է բաւականաչափ երաշխաւորութիւններով։ Ղրամագլխից փող վերցնելու համար պահանջւում է գիւղի երկու-երրորդ մեծամասնութեան համաձայնական վճիռը, որը արւում է գաւառապետին, իսկ վերջինս իւր պիտոդութիւններով ներկայացնում է նահանգապետին։ Վճռի մէջ անհրաժեշտ կերպով պէտք է որոշած լինի թէ ինչ պիտոյքի համար է փողը վերցնւում։ Շահառուները պահ են տալիս երեք հոգու՝ տանուտէրին, պահեստի հակոդին և գիւղական երեցփոխանին։ Իսկ ամբողջ գործը, այն է՝ ղրամագլխի և հացի պահեստների ու ղրամագլուխը մնալու բարձր հակոդութիւնը պատկանում է Թիֆլիսի նահանգական վարչութեան և Թիֆլիսի նահանգի գիւղական դործերի ատեանի միացած ժողովին՝ նահանգապետի նախագահութեամբ։

Այդ ծրագրով ի հարկէ գիւղերը էլի չեն կապւում իրար հետ. դա ոչ այլ ինչ է եթէ ոչ գիւղի ինքնավարական մի դանձարան։ Բայց և այնպէս դա մի ծրագիր է, որը գիւղական կեանքի վրայ կարող է մի պլիւս աւելացնել։ Իսկ մեզանում գիւղը այնքան զուրկ է կեանքից, որ մեծ ուրախութեամբ պէտք է արձանագրել ամեն մի քայլ որ անում է գիւղական կեանքը աւելի բովանդակալի դարձնելու համար։

Լ. ՈՒԱՏԻՆԻ։

ՆԱԻԹԱՐԴԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

ՖՐԻԴՈՆ ՄԱՐՏԱՆԵԱՆԻ

ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Մեր առաջին նամակով նաւթարդիւնաբերական գործի վիճակը աչքառեալ էինք ներկայացնել այնպէս, ինչպէս նա մեզ կերեւում էր ներկայ թուականի սկզբներին մինչեւ մարտ ամիսը։ Սակայն այն ժամանակից անցել է աւել քան կէս տարի։ Եւ ահա մեր ներկայ նամակի առարկան պիտի լինեն այն փոփոխութիւնները, որոնք տեղի ունեցան այդ ժամանակամիջոցին։

«Սինգիկատ» ընկերութիւնը, որի մասին մեր ընթերցողները արդէն գիտեն մեր նախկին նամակից, այլ ևս գոյութիւն չունի։ Նա միայն թղթի վրայ էր ծնունդ առացել և թղթի վրայ էլ մնաւ։ Ահա թէ գործը ինչպէս է։ Այդ ընկերութեան մասնակցել էին և այն մեծ ֆիրմաները, որոնք երկու տարուց ի վեր կազմում են Բաղուայ Սառնդարտ ընկերութիւնը։ Այդ ֆիրմաներն են՝ Մանթաշեան, Թաղիեւ, Լիանոզեան և ուրիշ։ Բուզաղեաններից պայմանաւորելիս խոստացել էին չանձնել Սինգիկատ ընկերութեանը Բաքուայ Սառնդարտի բոլոր գործերը և հաշիւները մինչեւ ներկայ թուականի ապրիլ ամսի 10, հակառակ դէպքում այդ ֆիրմաների մասնակցութիւնը օրինական չի համարվիլ և ընկերութիւնը կը քանդվի։

Սակայն երբ Պետերբուրգից վերադառնում են՝ սկսում են աւելի լուրջ և խորը քննել իրանց գործը։ Աւաղ, գոյա մասնաժողովները բերում է այն եզրակացութեան, թէ Նոբելի ձեռքին չարաչար կերտով խաբուած են։ Բայց ուշին։ Նոքա ազատութեան յոյսերը չեն կտրում։ Առանց երկար մտածելուս, ապրիլ ամսի 10 ին Սառնդարտ ընկերութեան գործերը և հաշիւները չանձնելուց հրաժարւում են և այդպիսով «Սինդիկատ» ընկերութիւնը քանդւում է՝ նմանելով այն ծաղկին, որը դեռ չբացուած՝ թառա-

մեց։ Այդ մասին ավելորդ ենք համարում, որովհետև չարժէ խօսել այն հիմնարկութեան մասին, որի գործը աչնչով չ'երևաց։

Այժմ տեսնենք թէ ինչ բաղդի արժանացաւ Կասպեան Սև-ծովեան Առևտրական և Նաւթային ընկերութեան առաջարկը։ Պէտք է խոստովանել, որ այս անգամ ևս ընկերութիւնը չկարողացաւ դէմ մասամբ հասնել իր նպատակին։ Մեր վաճառականները կարծես թէ հմտացել են և փորձուել, նոցա խաբել այժմ այնքան էլ հեշտ բան չէ, ինչպէս մտածում է ընկերութիւնը։ Այսպէս թէ այնպէս, սակայն ութ ամիս գործեց և ահա թէ ինչպէս։

Ընկերութեան պայմանագիրը, ինչպէս հաղորդել էինք, օրինական ձև ստացել էր ներկայ տարւայ յունուարի 1-ից։ Յունուար և փետրուար ամիսներին նա կանոնաւոր կերպով ընդունում էր իւր կոնտրագենտներից թէ կերոսին և թէ դեսուլատ, և վճարում նրանց իւրաքանչիւր փութ կերոսինի համար 9 կոպէկ և դեսուլատի՝ 7 կոպէկ։

Սակայն տարւայ սկզբներից կերոսինի գները արդէն սկսել էին ընկնել, այնպէս որ մարտ ամսին $6^1/_2$ կոպէկով կարելի էր առնել վագոնների մէջ իւրաքանչիւր փութը։ Այդ հանգամանքը ըստ երևութին ազդեցութիւն էր արել ընկերութեան վերայ, որովհետև մարտի սկզբին նա իւր կոնտրագենտներին ժողովի հրաւիրից և առաջարկից զոլորին՝ արտահանելիք կերոսինի քանակութիւնը պակասցնել մինչև 30%, պատճառաբանելով՝ թէ ընկերութեան Բաքուում զոլոր պահեստները լի են, պահանջ չկայ, այնպէս որ ուղարկած կերոսինը Բաքուում վագոնների մէջ պիտի մնայ և այդպիսով ընկերութիւնը ստիպուած կը լինի վճարել երկաթուղու վարչութեանը անպէտ տուգանքներ՝ վագոնները իւր ժամանակին չդատարկելու համար։ Կոնտրագենտները, հաւատ ընծայելով ընկերութեանը և չկամենալով նեղ դրութեան մէջ դնել նորան, համաձայնւում են և կատարում իրանց խոստումը։ Իսկ կերոսինի գները գնալով աւելի և աւելի իջնում էին, այնպէս որ մայիս ամսին հասել էին մինչև $5^1/_2$—$5^1/_4$ կոպէկ փութը։ Ամբողջ ամառը համարեա թէ այդ գներն էին տիրում։ Սակայն սեպտեմբեր ամսին աւելի իջան—մինչև $4^3/_4$—$4^1/_2$ կոպ., և այժմ էլ այդ գներն են տիրում։

Այդ հանգամանքից Կասպ-Սև-ծովեան Առևտրական և Նաւթային ընկերութիւնը ամենաճարպիկ կերպով կարողացաւ օգտուել։ Եւ ահա թէ ինչպէս։ Նա չբաւականացաւ՝ առաջարկելով իւր կոնտրագենտներին պակասցնել մարտ ամսին ուղարկելիք քանակութիւնը մինչև 30%։ Ապրիլից նա սկսեց ներկայացնել իւր կոնտրագենտներին արտառահանման առևտրի հաշիւները, որոնցից երևում է՝ թէ նա իւր կոնտրագենտներին տալով իւրաքանչիւր փութ կերոսինի համար 9 կոպ.՝ կրել է միայն իւրաքանչիւր ծախած փութից՝ մարտին 1,915 կ. ($1^1/_{10}$), ապրիլին՝ 8,608 կ., մայիսին՝

7,52 կոպ., լուծիսին՝ 13,83 կոպ. և լուվիսին՝ 11,105 կոպ.. Նա լայտնեց իւր ֆոնատագէնտներին, թէ այդ պատճառով ստիպւած է մի առ ժամանակ Բաֆումից իւր արտահանելիք կերոսինի քանակութիւնը պակասցնել։ Պակասցնելով այն, պիտի իջեցնել և այսուհետև ուղարկելիք քանակութիւնը։ Այնպէս պատճառաբանելով նա ձեռք բերաց իւր կոնտրագէնտների համաձայնութիւնը՝ Բաքւից ուղարկելիք կերոսինի քանակութիւնը պակասցնել ապրիլ ամսին 30%, մայիսին—40%. լուծիսին, լուվիսին և օգոստոսին 50%, միևնոյն ժամանակ իրաւունք տալով նոցա կողմնակի կերպով ծախել աւելորդ կերոսինը ուրիշ առնողներին, որովհետև կոնտրագէնտները առանց ընկերութեան թոյլատւութեան իրաւունք չունին պակասնին համաձայն կերոսին ծախել։ Հէնց այդ ժամանակներին հանդէս եկան Պոլոլիատ եղբայրները և ոսկեայ մեծ քանակութեամբ կերոսին առնել՝ մօտ 2500—3000 վագոն իւրաքանչիւր ամիս մինչև սեպտեմբեր։ Ի դէպ ասել, որ Պոլոլիատ եղբ. մինչև օրս ոչ մի տեղ կերոսինի առևտուր չեն արած և այժմ էլ չեն անում։ Այդ հանգամանքը մեր վաճառականների ուշադրութիւնը գրաւեց և նոքա յանկացան անպատճառ իմանալ արդեօք ում կամ ինչու համար են առնում նոքա այդքան կերոսին։ Բանը չատ չուտով պարզւեց։ Նոցա առած կերոսինը դատարկում են Կասպեան-Սև-ծովեան ընկերութեան պահեստաների մէջ Բաֆումում։ Արդեօք ինչ էր նշանակում այդ հակառութիւնը։ Ընկերութիւնը դանդաղում է «թէ Բաֆումում տեղ չունի», իսկ Պոլոլիատ եղբ. ընդունում են իւրաքանչիւր ամիս մօտ 2500—3000 վագոն կերոսին։ Փաղաքշանքի չատերը պնդում էին, թէ Պոլոլիատ եղբ. այդ կերոսինը առնում էին ընկերութեան համար։ Եթէ այդ ճիշդ է, մենք միմիայն կասենք, թէ Կասպեան-Սև-ծովեան Առևտրական և Նաւթային ընկերութեանը բոլորովին պատիւ չէր բերում դիմել այդպիսի խորամանկ և վերին աստիճանի անազնիւ միջոցների։ Եւ միթէ այդպիսի ֆիրմաները ևս պիտի արդարացնեն այն վատ կարծիքը, իբր թէ առևտուրը պէտք է անբարոյական սկզբունքների վրայ կանգնած լինի։ Այդպէս, թէ այնպէս, բայց կոնտագէնտները համոզած էին, որ ընկերութիւնը իրանց վատթար կերոսով խաբել է։ Շատ տանջային, ախտեցին, նայն իսկ հայհոյեցին, բայց դարձեալ հանդստացան և լռեցին։ Նամանաւանդ որ ընկերութեան Բաքւայ կառավարչի օգնականը իւր ժամանակ խոստացութեան ժամանակ համոզեց նրանց թէ այդպիսի բան երբէք չի պատահել, իսկ ինչ վերաբերում է արտահանելիք կերոսինի քանակութեան պակասցնելուն, այդ սեպտեմբերին այլ ևս չի լինիլ։ Հասաւ և սեպտեմբեր ամիսը։ Այդքան եղաւ կոնտրագէնտների պարմանքը, երբ նոքա ընկերութիւնից պաշտօնական նամակ ստացան, որով ընկերութիւնը պահանջում է նոցանից տալ կերոսին համաձայն պայմանագրի § 16։ Այդ յօդւածի էութիւնը հետևեալն է. «Ընկերութիւնը իւրաքանչիւր

տարի երկու անգամ իրաւունք ունի պահանջել իւր կոնտրագէնտներից ուղարկելիք կերոսինի քանակութիւնը պակասցնել կիսու չափ այն քանակութեան, որը կոնտրագէնտը ուղարկել է նախորդ տարուայ ձմեռուայ որ և է ամսին։ Ամեն ընտրութիւնը ընկերութեան կամքից է կախուած»։ Այդ յօդուածի անյարմարութիւնը կոնտրագէնտների համար նորա մէջ է կայանում, որ ձմեռուայ ամիսներին համեմատաբար քիչ կաթսաներ են տաքնում, որովհետև ծովով այլ ևս դէպի Ռուսաստան կերոսին չի ուղարկուում։ Ուրեմն այն 10,000 վագոններից, որ իւրաքանչիւր ամիս երկաթուղու վարչութիւնը յանձնում է վագոնների կարգադրիչ մասնաժողովին՝ գործարանատէրերի մէջ բաժանելու համար՝ համաձայն նոցա գործարանների արդիւնաբերութեան, համեմատաբար չատ քիչ է հասնում այն գործարանատէրերին, որոնք ամառուայ ամիսներին ծովով դէպի Ռուսաստան կամ Անդրկասպեան երկիր կերոսին չեն ուղարկում։ Իսկ ընկերութեան կոնտրագէնտների մեծամասնութիւնը հէնց այդպիսիներն են։ Ամառուայ ամիսներին ծովով ուղարկուած կերոսինի քանակութիւնը դուրս են գալիս բոլոր գործարանների արդիւնաբերութիւնից, և ապա պատասխում այն 10,000 վագոնները գործարանատէրերի մէջ։

Այդպիսի ակնյայտնի մի խարէութեան առաջ կոնտրագէնտները զգալ իրանց բարկութիւնը այլ ևս չկարողացան. «Պարզեալ խաբէութիւն», գոչում էին կատաղած կոնտրագէնտները, «մեր կերոսինը ուրիշի ձեռքով էժան ձեռք է բերում կոմմիսակի կերպով, իսկ մեզ ասում, թէ բաժում տեղ չկայ։ Այդ բոլորը դեռ բաւական չէ, առաջարկում է նաև կատարել պայմանի § 16։ Այդ արդէն չափից դուրս է։ Վերջ տալ այդ պայմանին, վերջ... Մեր տունը մեր պլխին քանդեցին» և այլն... Ընկերութիւնը տեսնելով, որ արդէն իւր դիմակը պատռուել է, չկամեցաւ գործը երկար ձգձգել և վերջացրեց պայմանը ցանկացողների հետ, առանց որ և է տուգանքի ենթարկելու նրանց։ Իսկ պայմանը վերջացնել ցանկանում էին համարեա թէ բոլորը։

Ընթերցողը գուցէ հարցնի, թէ ինչ եղաւ այն ասանաի հետ, որ ընկերութիւնը խոստացել էր իւր կոնտրագէնտներին պայմանը սատարելիս։ Այդ մասին ունենք հետևեալ տեղեկութիւնները։ Ընկերութիւնը մինչև ապրիլ ամիս ցանկացողներին ասանս տալիս էր, բայց ոչ այնքան մեծ գումարներով։ Իսկ ապրիլ ամսից նա ընդհատեց ասանների տալը, համաձայն Պարիզի գլխաւոր կառավարչի հեռագրին, այնպէս որ ապրիլից յետոյ ասանս ոչ ոք չի ստացել։ Այժմ, երբ չատերը վերջացրել են պայմանը, մեզ յայտնի չէ՝ արդեօք ինչ պայման է առաջարկել ընկերութիւնը իւր նախկին կոնտրագէնտներին ասանների վերադարձնելու համար, որովհետև հասատա գիտենք, որ կոնտրագէնտներից ոչ մէկը չէ վերադարձրել ստացած ասանը։

Այդպէս ուրեմն Կասպեան—Սև-ծովեան Առևտր. և Նաւթ. ընկերութիւնը ութ ամիս գործելուց յետ սեպտեմբեր ամսի 13-ին դադարեց։ Մեր այդ վոքրիկ տեսութիւնից, որի ճշդութիւնը կատարեալ երաշխաւորում ենք, ընթերցողը կարծամ ինքը կ'եզրակացնի, թէ ընկերութեան այդ առաջարկը ոչ թէ արտաոհմանեան մեր կերսոնին առևտուրը բարելաւելու կամ համակերպելու նպատակով էր, այլ ուղղակի մեր քաչքաչած վաճառականներին վերջնականապէս փորձելու և նոցա իւրաքանչիւրի կարիքների չափը իմանալու նպատակով էր, որպէս զի ապագայում նոր որոգայթ սարքելուց՝ ուժեղ հիմնաւորը սարքի, որ ընկածից ոչ ոք չկարողանայ ազատուել։ Մենք առաջ էլ ասել ենք, այժմ էլ կրկնում ենք, թէ Կասպեան—Սև-ծովեան Առևտր. և Նաւթ. ընկերութիւնը նաւթային աշխարհի թագաւոր լինելու անսահման ցանկութիւն ունի և դորա համար ոչ մի միջոց չէ խնայում։ Կը կարողանայ արդեօք նորան իրագործել իւր նպատակը, այդ ապագան ցոյց կը տայ։ Այնու ամենայնիւ պէտք է խոստովանել, որ մեր վաճառականները արդէն հասկացել են իրանց գործառութիւնը և լուրջ կերպով են սկսել նայել դէպի իրանց վիճակը, դէպի իրանց ապագան։

Այսպէս թէ այնպէս մեր վաճառականների ներկայ վիճակը պիտի արժանանայ կառավարութեան լուրջ ուշադրութեան և նաւթարդիւնաբերական գործի բարենորոգման հարցը պիտի համարվի հերթական ամենափափուկ և չտատիպուիթ լուծման կարօտ հարցերից մէկը, որովհետև այսօր նորանով ապրում են բազմաթիւ ծառայողներ և մշակներ, ոչ միայն նաւթահանքերում և կերոսինապօծարաններում, այլ և ամբողջ Ռուսաստանում։ Նորանով են ապրում հարիւրաւոր և հազարաւոր վաճառականներ, որոնք իրանց առևտրի առարկայ ընտրել են նաւթը և նորանից պատրաստած գանազան իւղերն և նիւթերը. նորանով է ստեղծած այն անագին և մեծ նաւախումբը (флотъ), որը այսօր լողում է Կասպեան ծովի, Վոլգա գետի և մասամբ էլ Սև-ծովի վերայ։ Նորա նիւթերով են ուզում լուսաւորել փարոսները և չեզուացանել (отопливатъ) պատերազմական բոլոր չոգենաւերը։ Նորա նիւթերն են կամենում այսօր գործադրել ամբողջ Ռուսաստանի գործարաններում, որպէս անհնաժան վառելիք։ Վերջապէս նաւթարդիւնաբերական գործի որ մէկ ճառայութիւնը լինի, բազմաթիւ են նոքա...

Ես միթէ մի այդպիսի արդիւնաբերութիւն անուշադիր պիտի թողնվի կառավարութեան կողմից, նամանաւանդ այն ժամանակ երբ ամերիկացիները, լաղմութեան դրօշակը ձեռքներին՝ իջում են մեր վաճառականների ձեռքից արտաոհմանեան վաճառանոցները մէկը մեսի յետևից—ոչ եր-

քէք։ Վերջին ժամանակները կառավարութեան բարձրաստիճան մարդիկ վերին աստիճանի համակրանքով էին վերաբերւում գէպի նաւթարդիւնաբերողների և կերոսինագործարանատէրերի վիճակը։ Հէնց այդ բանը նորից ոգևորեց մեր լուսահատած վաճառականներին, նամանաւանդ որ նոքա արդէն բոլորն էլ համոզւել են՝ թէ նոցա բաժան-բաժան գործելը և իրար դէմ մրցելը թէ այստեղ և թէ արտասահմանում վատ ազդակ է խոստանում և առնում նոցա դէպի վերջնական անկումն։ Եւ այդպէս էլ կայ։ Այսօր ամբողջ Եւրոպան համարեա թէ ձրիապէս է օգտւում մեր կերոսինից։ Ի հաստատումն մեր խօսքերի առաջ ենք վերում պաշտօնական տեղեկութիւններից քաղած հետևեալ դները, որոնց հիման վրայ Բագւի գործարանատէրերը ստացել են Լոնդոնում և Ամստերդամում վաճառած ամեն մի փութի կերոսի համար, չհաշւած նորան կցորդ ծախքերը։

		Լոնդոն		Ամստերդամ	
1888	թ.	47,3	կոպ.	61,	կոպ.
1889	»	31—29	»	32,2—30,2	»
1890	»	21,	»	25,9	»
1891	»	14,5	»	15,4	»
1892	»	10,2	»	13,	»
1893	»	յունուարին	4,3	»	6,	»
»		փետրուարին	2,	»	3,3	»
»		մարտին	2,	»	4,	»
»		ապրիլին	0,	»	4,2	»
»		մայիսին	0,	»	3,9	»

Հետևեալ ամիսների (յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր) մասին պաշտօնական տեղեկութիւնը դեռ մեզ չատոնի չէ, սակայն հաստատ աղբիւրներից գիտենք, որ գները գնալով աւելի պակասել են, այնպէս որ հասել են մինչև—5, այսինքն 5 կոպէկ ֆունտի։

Ամփոփում էլ նախատեսւում է մխիթարն գների իջումն, որովհետև նկատւում է արդիւնաբերութեան առատութիւնը մի կողմից և արտահանութեան գործի լաւ կազմակերպութեանը միւս կողմից, իրանց բնական և անխուսափելի հետևանքներով, այսինքն մրցումն Բագւայ գործարանատէրերի մէջ, Բաթում՝ առևտրականների, կոմիսիոներների և սպեկուլեանտների մէջ. իսկ արտասահմանում—Բագւայ և Ամերիկայի կերոսին վաճառողների մէջ։

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ իրերը այդ դրութեան մէջ երկար մնալ չեն կարող. և չատ մօտիկ ապագայում նախատեսւում է արդիւնաբերութիւնը պահպանելու խիստ պահանջ՝ թողնելով արտասահմանեան վաճառականների ամերիկացիների ձեռքին և սահմանափակելով տեղային արդիւնաբերութեան զարգացումը միմիայն ներքին գործածութեան չա-

փոխ. Այդպիսի սարսափելի ապագայ չունկալի չէ ոչ զործարանատէրերի համար, ոյնց սպառնում է մօտալուտ և անխուսափելի անկումն, և ոչ էլ կառավարութեան, որի համար նաւթարդիւնաբերական գործի չայողուվթիւնը և զարգանալը կապած է ոչ միայն ֆիսկալ քնաւորութիւն ունեցող նպատակների իրագործման հետ, այլ և այն խնդրի հետ, որ եթէ չայելացնել այն արդիւնքը, որ ներկայումս տալիս է Անգրկովկասեան երկաթուղին կառավարութեան, գոնէ պահպանել արդիւնքի այժմեան չափը։

Ինչպէս վերը վիճեցինք, մեր գործարանատէրերի մէջ արդէն հասունացել է այն գաղափարը, թէ միակ ուղղը, որ կարող է գործը այդ նեղ դրութիւնից դուրս հանել, - բոլոր գործարանատէրերի միանալն է և ըստ կարելոյն նաւթի արտասահմանեան առևտուրը մի անձնաւորութեան ձեռքում կենտրոնացնելը [1]։ Այդպիսով կը թուլացնէր մրցումն Բագուայ գործարանատէրերի մէջ և նոյ կը պատրաստուէր ամերիկացիների հետ միանալու համար։ Այդ ուղղութեամբ եղել են մի քանի փորձեր, սակայն ոչ մէկը ոսյանից չի հասել իւր նպատակին։ Միանալու անցեալ փորձերի անյաջողութիւնը բացատրւում է մասամբ իրանց անկատարելութեամբ և անհամապատասխանութեամբ նախագծած նպատակներին, և մասամբ էլ նորա նով, որ ընդհանուր միութիւն չէր ստեղծում, այլ կազմւում էին խմբեր, որոնց կարպատրութեան սակ գնում էր Բագուայ ամբողջ արդիւնաբերութեան չատ փոչ մասը։ Փորձերի անյաջողութիւնը ստիպեց նաւթարդիւնաբերական գործի ներկայացուցիչներին որոնել նոր ճանապարհներ նախագծած նպատակներին համապատասխանող և մչակել աւելի կատարեալ ծրագրը կամ տեսակը։ Ահա թէ ինչ է ասում այդ դաշնակցութեան կատարեալ ծրագրի մասին պրն. Պ. Ց. Պուկասեանը, Կասպեան Ընկերութեան նախագահը, իւր զեկուցման մէջ ուղղած արդիւնաբերութեան և մանուֆակտուրալի դեպարտամէնտի դիրեկտորին. «Նաւթարդիւնաբերութեան գործի բոլոր մեծ ներկայացուցիչները արդէն հասել են այն եզրակացութեան, թէ արտահանութեան գործի կազմակերպութիւնը կը յաջողվի, եթէ ընդունվին հետևեալ պայմանները. ա) Դաշնակցութիւնը պիտի ունենայ զուտ օրինական կերպարանք. բ) Նպատակները կառավարութեան

---

[1]) Այդ խնդրի լուծումը, ըստ մեզ, չի կարող կախուած լինել միմիայն Ամերիկայի հետ մրցելու և կամ նորա հետ միանալու չայողութեան պայմաններից։ Եւ ոչ իսկ նորբին մրցման անյարմարութիւնները չեն կարող վճռական համարվել՝ նաւթի ամբողջ առևտուրը մի երկրում մէկի ձեռքը կենտրոնացնելու համար, եթէ այդ կենտրոնացումը այն բռնակալական բնաւորութիւնը պիտի ունենայ, որպիսին ներկայացնում է Ամերիկայի Standard Oil C° հռչակաւոր ընկերութիւնը, որի դէմ նոյն իսկ ոչ մի բանից չդադրող Հիւսիսային Ամերիկան այժմ բարձրաձայն բողոքում է։

Խմբ.

կողմից պաշտօնապէս պիտի ընդունուին օգտակար և միջոցները օրինական, գ) Դաշնակցութիւնը կատարելապէս պիտի ապահովացնի իւր մասնակցողին ամենայն տեսակ զեղծումներից և օգտի սխալ բաշխումից և դ) Նա պիտի կազմակերպուի այնպէս, որ իսկապէս կարողանայ հասնել նախագծած նպատակներին»։ Ներկայ հանգամանքներում ուրիշ կերպ էլ չէ կարող լինել։ Այժմ տեսնենք, թէ այդ հիմքերի վերայ կազմած դաշնակցութիւնը որ աստիճանի ուղիղ է գուա առևտրական տեսակէտից, այսինքն որ աստիճանի այն ազնիւկական պայմաններին, որոնցով կը կարգադրի դաշնակցութիւնը, կարող կը լինին նպատակ ենթադրեալ նպատակներին հասնելուն և քիչ թէ շատ չաջող մրցման ամերիկացիների հետ։

Նախ և առաջ հարկաւոր է ընդունել այն պատճառները, որոնցից յառաջացել է Ներկայ ձգնաժամը։ Պատճառները շատ են և գոյա դէպքերի մասին մենք արդէն խօսել ենք մեր նախորդ նամակում։ Բայց այդ բոլորը համախմբուած են մէկի, այն է՝ արդիւնաբերութեան առատութեան ֆակտի չուրջը՝ ոչ միայն մեզանում այլ և Ամերիկայում։ Գորանից են բղխում և մնացեալները—գործարանատէրերի մրցումն իրար մէջ, սպեկուլեանտների ու էկսպլոատեօրների գործունէութեան եղանակը, որոնք այդ մրցումն չարաշահում են Բաթում և արտաստանում, և վերջապէս կատարի մրցումն մեր և ամերիկացիների մէջ։

Արդիւնաբերութեան առատութիւնը բացատրուում է ոչ միայն նրանով, որ մեր գործարանատէրերը բաժան բաժան գործելով չեն կարողանում ձեռք բերել ճիշդ տեղեկութիւններ արտաստանում գործածուղ կէրոսինի քանակութեան մասին, և ոչ էլ միջոց ունին համաձայնելու արդիւնաբերութիւնը պահանջի հետ, այլ և նորանով, որ մի քանիների պակասացնելը առանց ընդհանուրի՝ երբէք չի կարող փոխել վաճառքի եղանակը։

Այսպէս՝ ձգնաժամից աղատուելու ելքերից դժուարն է՝ համաձայնել պահանջը առաջարկութեան հետ։ Այդ ելքը չատով կը բացուի։ Նա կը լինի հետևեալը—ա) կամ գործարանատէրերի մի մասը անկման, որոնք՝ այլ ևս չկարողանալով դիմանալ այդ կատարի մրցման՝ ոտիպատ կը լինին կամայ ակամայ թողնել նաւթարդիւնաբերական գործը և հեռանալ և բ) կամ թէ արտահանելիք կերոսինի քանակութեան չափաւորութեան, այսինքն հաւասարեցնելով նորան պահանջի հետ։ Ինքն ըստ ինքեան պարզ է, որ արտահանելիքի չափաւորութեան հարցը գործնականութիւն կըսատանայ, երբ արդէն պաշտակցութիւն կապած կը լինենք ամերիկացիների հետ, որովհետև մինչ այն ժամանակ արտահանելիքի քանակութեան պակասացնելը կը լինի ոչ թէ չօգուտ մեզ, այլ ամերիկացիների, որոնք պակասի վախանակ կառաջարկեն իրանց կերոսինը։ Ասելիս՝ արտահանելիքի չափաւորութիւնը ներկայանում է մեզ մի կողմից՝ որպէս մի

պէնք, որով կը կարողանանք համահաւասարել պահանջը առաջարկութեան հետ, իսկ միւս կողմից ամերիկացիների հետ հոմաձայնութիւն կայացնելու ամենապէտքաւոր պայմաններից մէկը։ Առանց չափաւորութեան համաձայնութիւն կը դուռնայ՝ ճիշդ որչափով արտահանելիք ապրանքի քանակութիւնը, որվհետև մեծ առգանքի պիտի ենթարկուի այն կողմը, որի ապրանքի քանակութիւնը որչափից աւելի կը լինի վաճառանոցներում։

Անկարելի է, որ մի առժամանակ պաշնակցութիւնից զատ ուրիշները չդարապուեն մեր կերոսինը վաճառելով։ Ուրեմն հարկաւոր է խախտել նոցա մէջ մրցումն։ Դարա համար անհրաժեշտ է, որ մեր կերոսինի վաճառելու գործը կենդրոնանայ մի մարմնի ձեռքում։ Այստեղից ծագում է այն միտքը, որ պաշնակցութեան ամենապէտքաւոր նպատակը պիտի լինի այն, որ աշխատի ինքը ձեռք բերել բաղաձ գործարանատէրերից նոցա արտահանման ուզարկելիք բոլոր կերոսինը։ Պաշնակցութիւնը այդ կարող է անել, եթէ կարողանայ պարզապէս ցոյց տալ թէ իւր ձեռքով ծախած կերոսինը աւելի օգտաւէտ է, քան ուրիշների ձեռքով վաճառածը։ Եւ իսկապէս, պաշնակցութիւնը կամ պէտք է առնի, կամ թէ կոմիսիաւով վերցնի մեր գործարանատէրերի կերոսինը։ Այդ երկու դէպքերից մէկն էլ կատարելու է և պաշնակցութեան ախոյեանը։ Կենթադրենք, թէ ապրանքը առզում առնում է որչեաղ դնեղով, որպէս զի արտահանի վաճառելու նպատակով։ Այդ դէպքում պաշնակցութիւնը միշտ կարող է գործարանատէրերին աւելի թանդ դներ առաջարկել, քան ուրիշը—արտահանողը։ Այդ վերջինը, բացի նորանից, որ պիտի իւր ծախսերը հանի, նա պիտի քիչ թէ շատ օգուտ։ Պաշնակցութիւնը կարող է առաջարկել գործարանատէրերին զուտ, մաքուր գինը, որ ստացում է արտահանմանեան վաճառքից դուրս գալով ճանապարհածախսը և սրան կցորդ մանր ծախսերը։

Այդ հանգամանքում ուրեմն ախոյեաններից դիմադրել պաշնակցութեան այլ ևս չեն կարող և կամաց ակամայ կը թողնեն կերոսինի առևտուրը։ Պաշնակցութիւնը իւր նպատակին հասած կը լինի եթէ նա լինի առևտրական ներկայացուցիչ արտահանմանեան վաճառանոցներում Բագվի բոլոր գործարանատէրերի, կամ թէ նոցա գէթ 80 տոկոսի։ Միմիայն այդ դէպքում կարելի է յուսալ համաձայնութիւն կազմել ամերիկացիների հետ, առանց որի արտահանութեան գործի բարելաւելը, եթէ կարելի է ապահով, այն էլ շատ հեռու ապագայում։

Այդ տեսակ պաշնակցութիւն կազմել ցանկացողները միևնոյն իրանց նպատակին հասնելը անչուշտ պիտի հանդիպին այնպիսի խոչնդոտների, որոնց հեռացնելը առանց կառավարութեան աջակցութեան կատարելապէս անհնարին է։ Բաղուի գործարանատէրերը ներկայացնում են մի բազմաչերտ ամբոխ, որի իւրաքանչիւր անդամը էապէս տարբերւում է միւսից թէ իւր ընդհանուր զարգացողութեամբ, թէ առևտրական սկզբունք-

ներով, թէ նպատակներով, որոնց հասնելուն նոքա ձգտում են, և վերջապէս իրանց գործունէութեան զուտ արդիւնաբերական պայմաններով։ Ոչ մի դաշնակցութեան ծրագիր չի կարող կատարելապէս բաւարարութիւն տալ այն բոլոր կարծիքներին, ցանկութիւններին և նեղութիւններին, որոնք կը յայտնվին ծրագիր մշակելու ժամանակ։

Անհամաձայնութիւններ կը լինեն։ Եւ նոքա կը լինեն կամ հետևանք նեղագրկեալ դաշնակցութեան քաղաքին օգտաւէտ կողմերն ըմբռնելու անընդունակութեան կամ թէ իւր ազատութիւնը պահպանելու ցանկութիւնից, չուսալով ամէն օգուտներ ստանալ իւր չգոյ դրութիւնից և այլն...

Այդ իսկ պատճառով ընդհանուր միութիւն կարող է կայանալ, եթէ դաշնակցութեան հետ միանալու օգտաւէտ կողմերը կը լինեն ակներև և հասկանալի ամեն մէկի համար։ Այդպիսի մի պարզ, ակնայայտնի և դիւրըմբռնելի օգուտ կարող է լինել որ և է արտօնութիւնը կառավարութեան կողմից, օրինակի համար փրահատի պակասցնելը միմիայն այն նաւթալին արդիւնքների համար որոնք կը յանձնուին դաշնակցութեան։

Անտարակոյս այդ բոլոր պարագաները ի նկատ առնելով մշակած է կազմելիք ակցիոներական ընկերութեան կանոնագրութեան պրոէկտը, որի հեղինակն է սեղիս յայտնի երդուեալ-հաւատարմատար Ե. Կ. Շոնը։

Այդ պրոէկտի և արդէն միմիայն թուղթի վերայ (առայժմ գեռ ևս) կազմած ընկերութեան պայմանագրի մասին մենք մանրամասնօրէն կը խօսենք մեր յաջորդ նամակում։

ՇԱՐԼ ԳՈՒՆՕ

(Chales Gounod)

Մ. Դ.-ցի։

Մի հռչակ հեռայայս, մի լուսավառ աստղ օպերային երկնքում խաւարեց։ Գունօն՝ այնքան չատ սիրուած և ոճուած կոմպոնիստը ալ ևս չկայ։ Այդ տխրեցնող անցքը աւելն տեղ ցաւ կը պատճառի։ Որովհետև ոչ միայն Ֆրանսիայում, այլ և այժմեան գեղարուեստական ստեղծագործութիւնն ամբողջ տարածութեան մէջ՝ նա այն փոքրաթիւ նշանաւոր անձնաւորութիւններից էր, որոնք համաչխարհային անուն են վաստակել։ Եւ հեշտութեամբ չկար նրան այդ անունը. երկար, մեղաջան աշխատանքով նա այդ ձեռք բերեց։ Ճիշդ է, ինչպէս միշտ այդպիսի դէպքերում, մի փոքր բաղդ մէջը խաղաց, բայց անարժան տեղով չէր որ նորա ճակատին դափնիք կիպչեց։ Երաժշտութեանը կպած էր նա դեռ մանուկ հասակից, երբ նորա մայրը, որ մի սրի դաշնահար էր, նորա արթնացող տաղանդի առաջին տաղմերն էր խնամում։ Բայց, չնայած իւր երաժշտական կարողութեանը, քիչ էր պակաս որ թատրոնը կորցնէր նորան։ Հերկուլէսի պէս նաև Գունօն մի անգամ կանգնած էր երկու սրի միջտեղ։ Վերադառնալով Հռոմից, ուր նա հին իտալական եկեղեցական երաժշտութիւնն էր ուսել, ամենայն լրջութեամբ նա տատանուեց թէ ինչին արդեօք նուիրուի՝ եկեղեցուն թէ աշխարհին։ Ինչ էր մնում որ օձումն ընդունէր, երբ նորա աստղը այդ վերջին վճռական քայլից չետ կանգնացրեց նրան։ Քրիստոնէական եկեղեցուն, սակայն, նա իւր ամբողջ կեանքում հաւատարիմ մնաց։ Նա քարեպաշտ էր՝ նուիրքին պահանջից, և միայն այդպէս տրամադրուած երաժտագէտը կարող էր գրել «Ցիտաս Նազովրեցի» հրաշալի երգը։ Նա գրեց նաև հոգևորական երաժշտական մեծածաւալ գործքեր, օրինակ՝ պատրագի վեց երաժշտութիւն, մի Requiem, Te Deum, Stabat mater, և իւր մուղիկային կեանքի վերջերքում, երբ նորա փառատրիան արդէն թուլանալ էր սկսել, նա հանդէս եկաւ կրօնական ուղղութեամբ մի քանի թոյլ

արտապրութիւններով («Փրկութիւն», „Mors et vita“)։ Բայց ոչ մէկը այդ դործքերից փառքի չհասաւ Նորան։ Որ ամբողջ երաժշտական աշխարհի ուշադրութիւնը դէպի ինքը գրաւեց, դորա համար նա պարտական է միմիայն իւր օպերաններին. սոցանից մի քանիսերի մէջ թէ նախկին և թէ այժմ ապրող սերնդին, իւր լարերի քաղցր հնչիւններով, սրտի թելերը նա ամուր բռնեց։

Նորա կրթութիւնը այլ և այլ ազդեցութիւններ ենթարկեց։ Հալեվի՛ առաջնորդութեամբ նա կոնտրա-պունկտային ուսումնասիրութիւններ արաւ և Paër-ից (Պաէր) և Le Sueur-ից կոմպոզիցիայի դասեր առաւ։ Հալեվի՛ միջոցով, որը ձգտում էր դէպի Մայերբեեր և Հերոլդ, նա մերձեցաւ նոր լուսնոտիք կոչած ուղղութեան։ Պաէր՛ի միջոցով († 1839), որ կապող կամուրջն էր Յիմարոլա՛ի և Ռոսինի՛ի մէջ և որը մոյարտական էր այն ժամանակւայ իտալացիների մէջ, Գունօն թերևս ծանօթացած լինի հին իտալական ոճի սկզբունքների հետ։ Իսկ Լը Սիւեօրը՝ Գլուքի ամենահաւատարիմ հետևող էր, դեզարբեռատական ընկեր Խերուբինի՛ և Մէհիւլ՛ի, որոնց հետ նա միացում էր փրանսիական մեծ լեզուախոխեան սարիներում։ Այսպիսով Հալեվին նորան սովրեցրած կը լինի նորագոյն էֆֆեկտը, Պաէրը՝ ազդեցիկ երգը, Լը Սիւեօրը՝ ճաշակը նկարչականի համար։ Դորա վրայ վեռոյ ևեռոյ աւելացաւ Պալեստրինայի († 1594) ուսումնասիրութիւնը, ծանօթութիւնը Շուբանի († 1856) և Բերլիոզի († 1869) նոր գործքերի հետ, որոնցից նա խորը տպաւորութիւններ առացաւ։

Այսքան զանազան ազդեցութիւնների տակ նա սակայն վերի չգաւաւ, այլ նոցա ճնշումից նա դուրս պրծաւ։ Մի քանի մանր գրւածներից զատ նա գրեց իւր Սաֆո՛ն, որ նորա առաջին օպերան էր և որով նա կոխեց Պարիզի օպերային ասն չէ՛ք։ Վորանից կարճ ժամանակ առաջ հրատարակեց մի լոյսած Athenæum թերթում, որի հոդիսակը մեծ յարգանքով էր վերաբերւում դէպի Գունօ՛ի բանաստեղծական-երաժշտական ընտրութիւնը։ Եւ ինչպէս (այժմ ապրող) Բրահմսի համար Շուբանն էր, նոյնպէս և Գունօի համար՝ յայտնի երգչուհի Վիարդօ՛ի ամուսինը մարգարէացաւ, դուշակելով նորա համար մեծ ապագայ։ Սաֆո՛ն սակայն, որ 1851 թուականին ներկայացուեց, շատ էլ չհամապատասխանեց հասարակութեան պոռներին։ Պարսիսաւորը ցոյց տուեց հետքեր իսկական տաղանդի, բայց դրւածքի մէջ բեմական շատ պակասութիւններ կային։ Աւելի չէր յաջողում նորա երկրորդ օպերան՝ «Արիւնշաղախ կոյսը», որ 1854-ին ներկայացուեց։ Եւ Գունօն դեռ ևս միայն լոյսեր արձնեցնող տաղանդ էր ճանաչած— ոչ աւելի։

Սակայն բաղդի ժամը չուտով պիտի զարնէր։ 19 մարտի 1859 թ. «Ֆաուստը» առաջին անգամ ներկայացուեց Պարիզի Théatre Lyrique թատ-

թնում։ Սպասած չաջողութիւնը իսկոյն և եթ չունեցաւ այդ օպերան, բայց մի քանի ամսից յետոյ այդ չաջողութիւնը անցաւ ամեն սպասելիք։ Մի քանի տարիներից յետոյ «Ֆաուստը» դառաւ ընդհարաւր սեփականութիւն Եւրոպայի և Ամերիկայի բոլոր օպերային անների։ Այդ ժամանակից սկսած Գունօն հաչըւում էր ապրող երաժշտագէտների մէջ առաջինների մէկը։

Բայց երբ ամբողջ աչխարհը ոգևորւած ողջունում էր նորան, գերմանական կրիտիկայի քրթմնջոցին վերջ չկար։ Թէ իբր Գունօն աղաւաղել է Գեօթէի «Ֆաուստը», քնագիրը։ Անարդար էր այդ։ Ալ բան է օպերան, ալ բան է դրամա։ Դրամայի հիմքը կազմում է բացառապէս բանաստեղծականը, օպերայի հիմքը՝ պօէտիկական-երաժչտականը։ Մի օպերային լիբրետոն ալ նպատակներ ունի, քան արտատանող դրաման։ Եւ երբէք չպիտի արգելել որ մի դրամա երաժչտութեան համար չարմարեցնուի։ Ամեն բանաստեղծութիւն, որը երաժչտութեան համար չարմարութիւններ ունի, կարող է կամպոզիցիայի համար բանեցնուել և այդ նպատակով նաև փոխոխութիւնների ենթարկուել։ Եւ այստամենայնիւ «Ֆաուստ» օպերայի լիբրետոն վատ չէ և ոչ էլ հակառակ է Գեօթէի բնագրին։ Օպերայի գլխաւոր անձերը չատ լաւ պծապրւած են։ Եւ գերմանական բանաստեղծի ստեղծած պէմքերը նաև երաժչտական կողմից փոխադրել են ֆրանսերէնի, և հասկանալի էլ է։ Հակառակը վարւեց Վ. Բերը «Euryanthe» օպերայով, ուր ֆրանսիական տիպերը երաժտական ապէս գերմանացրել է։ Այդ սխինչ։ միայն թէ ընդհանուր մարդկայինը պահպանած լինի։ Եւ Գունօին այդ չաջողել է։ Որքան հիանալի կարողացել է Գունօն արտայայտել չափաւորման չնորհութիւնը, մտերմականը, երջանկացնողը սիրոյ զգացմունքի մէջ. որքան զեղեցկութիւններ է նա տալիս մեզ օպերայի միւս մասերում՝ սկզբից ասպարէզից սկսած մինչ վախրը, որ ամենավարթաման է ինչ երբ և իցէ օպերային լեզուի վրայ լսել է. այդ գիտեն ամենքը։ Իսկ է, գործքի գլխաւոր չնչառը դրած է սիրոյ ուրախութիւնների և ցաւերի նկարագրութեան վրայ, ինչպէս յետոյ այդ արաւ Գունօն նաև «Ռոմէօ»-ի մէջ։ Բայց նոյն իսկ Ռիխարդ Վագների բացարձակ խոստովանւել է թէ՝ «ես չեմ կարող մուղիկայի ոգին այլ տեղ սրսկել քան եթէ սիրոյ մէջ»։

Գունօն համեմատապէս ուչ հասակում հանրածանօթ դարձաւ, այն է 41 տարեկանում. մինչդեռ այդ հասակում Մոցարտ, Վեբերը, Շոպէն, Բելլինի և Բիզէ վախճանած էին, Ռոսսինի, Շարոն, Մարչներ և Վլինկ՝ արդէն իրանց ամբողջ փառքը վաստակած էին։ 49 տարեկան հասակում Գունօի երաժչտական նչանակութիւնը արդէն վերջացած էր, մինչդեռ այդ այն հասակն է, երբ Վերդի, Պիչինի, Սաչինի, Վերդի և Էրկել միայն սկսեցին իրանց ամբողջ ոյժերը հաւաքել և երբ Ռամօ, Շուց, Հենդել և

Հայդն ստեղծելին իրանց ամենահասուն գործերը։ Այդ հասակում Գունոն արդէն դադարել էր զարգանալ և սպառած էր քաղցր հնչիւններից։

Գունոյի ստեղծագործութեանը կարճատև դարձն էր վիճակուել։ Ընդ 8 տարին, որոնք սկսում են «Faust»-ով և վերջանում «Romeo et Julie» օպերայով—կազմում են նրա տաղանդի ծաղկման միջոցը։ Այդ ութ տարւայ ընթացքում նրա ստեղծած օպերաներից՝ նրա լաւագոյն օպերաներն են։ Եւ սակայն նոքա բոլորն էլ լաւեր չեն և չատ տարբեր ազանիք ունեն։ «Ադաւնին» (1866 թ.) մի նշանաւոր բան չէ. «Սաբայի թագուհին» (1862 թ.) նորանից չատ չի բարձր, չնայած սիրոյ մեծ դուէտներ։ Խոքա ոչ մի արձագանք չգտան։ Խոյա հակառակ՝ Միրէյլ (Mireille), 1864 թուականից, արժէ որ պատուով վերչի, չնորհիւ գեղեցիկ մանրամասնութիւնների, ինչպիսիք են՝ Մագալի-դուէտը, Անդրելուձի հովւական մելոդիայով չրջանակած երգը, և չնորհիւ թարմ պրովանսական գոյնի, որ այնքան տպաւորիչ կերպով արտայայտւում է առաջին գործողութեան մէջ։ Բայց մնացանդ այդ օպերայի վերջը չատ անաչող է։

Անհամեմատ աւելի չատ բաղդատուր եղաւ Գունոն „Philemon et Boucis“ օպերայով, որ «Ֆաուստ»-ին անմիջապէս յետոյ յաջորդեց և 18 փետր. 1860 թ. նոյն թատրոնում տրուեց։ Այստեղ մենք հանդիպում ենք մի սիրելի նիւթի, պարփակուած քաղցրահնչիւն գծերի մէջ, մի նրբաշուրթեան, որը չի զարմացնում մեծ ինքնուրոյնութեամբ, բայց որը հրապուրիչ է, սիրելի, նուրբ տպած և անուշ մելոդիայի ծաղիկներով զարդարած։

Ցօթը տարի անցած այս համեստ բայց իւր պարզութեամբ գրաւիչ գրուածքից, Գունոն նոր մէկից չատ «Ֆաուստի» մէջ ցոյց տւած բարձրութեան՝ «Romeo et Julie» օպերայում։ Իւր կատարելութիւնը նա ցոյց տւեց այդ գործով, որը այնքան թարմ չէ որքան Ֆաուստը, բայց աւելի ևս խորն է։ «Ֆաուստը» Գունոյի գլուխ գործն է ֆանտաստիական գիւտերի փայլով, «Ռոմէո և Ժիւլիէն»—զգալուն մտերմութիւնով և խորութիւնով։ Նա ժողովել էր իւր ամբողջ ոյժը և լուսի թափել էր վերնացի սիրոյ զոյգի վրայ ազնիւ մելոդիաներ։ Նոյն նիւթի վրայ չատերն էին փորձել, բայց Գունոն նոցա բոլորին իւր ետևից տեսու թողեց։ Որպէս «Ֆաուստը», նոյնպէս և «Ռոմէո և Ժիւլիէն» օպերան բոլոր օպերաների ռեպերտուարի մէջ ընդունուած է։

Բայց դորանից յետոյ Գունոյի համար եկաւ իւր աչունը։ Նա իւր անուան արժանի բաներ չստեղծեց այլ ևս. Cinq-Mars (1817), «Polyeucte» (1878), վերջապէս «Le tribut de Zamora» (1881) օպերաներում նրա ոյժը թուլացած էր և կոտրուած։ Այդտեղ նա միայն իւր նախկինի տպերն է երևում։ Այդ գործերը թխած են, ներչնչուած տեղի է տւել այն բանին, որ raffinement է կոչւում։

Տարօրինակ կարող է թուալ, որ մահտարօն այդքան արագ սպառւեց։

Մօարիից նախևառ սկզբում զարմանալին հանկանալի կը գտնուի. Գունօի բանը չէ ոչ ոյժը և ոչ խորութիւնը և ոչ մինչև անգամ կիրքը. Այդ կապմից նա չի կարող համեմատուիլ ոչ Մալէբրանչի հետ, ոչ Վոլտէրի և ոչ Վերլիի հետ։ «Ֆաուստի» և «Համլէտի» երկուքը նոցանից չէր, որ հարուած հարուածի վրայ են տալիս, ոչ նոցանից, որոնք կրքեր են յուզում և վիճարկի գագաթնակէտների հասցնում։ Գունօն մի տեղ ընդհատութիւն էր, որը կարողանում էր տաքացնել, պրուկել և զգացնել, բայց տանջողը վարպետ չէր, որը մի հոգեվարքին իր հանճարի կնիքը դնէր. նա չէր մի զօրեղ ողբերգու ինչպէս Վոլտէրը կամ Վերլին. բայց նա էր մի նուրբ և բնական ձևեր հանկացող առաջին, որը իր ճանապարհն էր պատրաստել և գտել։ Նորա հանճարի մէջ չկար վիճարկութիւն, բայց կար նրբութիւն, քնքշութիւն և տիշտականութիւն, որին նա զգայարանքներ չտրող բայց միևնոյն ժամանակ և իդէալականի արտայայտութիւն տալ կարէր։ Այդ էր նորա գեղարուեստական ամբողջութեան վիպապիրը։ Վէպի արտիկականը նա հակումն չունէր, և նրան պակասում էին հնչիւնները ուրախութեան և հաճոյութիւնականի համար. նորա մուսան սիրում էր զգայողականը և նուրբը։ Նորա հրաժշտութեան մէջ միշտ կայ անհամեմատական տոն։ Ահա ինչու նորա մուզիկան վախճուկ է, մի բան որ շատ վտանգաւոր է դրամատիկական սիւժէների համար։ Այդ կողմից Գունօն նմանում է Շարդինին և Բելլեներին։ Ու ինչպէս այս երկուքը՝ Գունօն ևս քնարերգակ է (լիրիկ)։ Ու իր բազմազոյն օրքեստրի դիւթականութեամբ հանդերձ՝ նա ամենից առաջ մնջորդիկ էր, ուրեմն կախուած լսելի արտայայտութեան բաղկից։ «Ֆաուստի», «Համլէտ և Ժիւլիէտ» և «Ֆիլէմոն և Բոսիս» ստեղծելու ժամանակ լսելի այդ արտայայտութիւնը նորա մուսան բարևհաճ է եղել։ Այդ երեք օպերաներով նա մի այնպիսի պատուար անուն ստեղծեց, որ ժամանակիս չորքոտնութիւններից կամ թշնամանքներից վեր բարձրանալով՝ պիտի կարանէ։

Դաւիդի և Ամբրոազ Թոմա՛ի հետ Գունօն չարունակեց զարգացնել լիտական և վոկալական թատրոնների ֆրանսիական օպերան՝ խոհականի, նկարչականի և պրոցիօզի ուղղութեամբ։ Յամենայն դէպս նորա մահը թողնում է ֆրանսիալի կոմպոնիստների չարքում մի զգալի պակասութիւն։ Նորան փոխարինել դժուար է լինելու։ Թոման 82 տարեկան է արդէն. Բիզէ, Դաւիդ, Գնիլիք, որպէս նաև Մասսէ, Դիրօ, Լալօ—վախճանած են. Ռէյէ և Սէն-Սաոնս կարծես այլ ևս չեն ուզում նոր բաներ արտադրել։ Միայն Մասսընէն չարունակում է ստեղծագործել. բայց ով գիտէ՝ իր գագաթնակէտը նա իր եռանդ չէ թողած արդեօք։ Կարծես թէ այդ այդպէս է։

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՏՕՆ ԳՐԻՒՏԼԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

(Fête fédérale de Grutli)

Յունիս ամսի սկզբներին Շէյցարական դեղեցիկ քաղաքներից մէկը, Նեօշատէլը, մի տեսակ անդադրին չարժման և պատրաստութեան մէջ էր։ Փողոցները կենդանացել, անց ու դարձ անողներով լցել էին։ Փոքրիկ քաղաքի կեանքը փոխուել էր. նա այժմ նմանում էր եւրոպական բազմաքնակիչ և ազգակից քաղաքների կեանքին։ Յուլիսի 12-ից սկսած (նոր տոմարով) տների կատարները, պատուհանները, փողոցները զարդարում էին դաշնակցական և ազգային կանաչ-կարմիր-սպիտակը՝ Նեօշատէլ կանանչն նշխարական գոյները։

Այս պատրաստութիւնները մի ոգեղ ոգեղով էր, դաշնակցական տօնը—Գրիւտլի սուրբ ընկերութեան. մի ընկերութեան, որը իւր բազմաթիւ ճիւղերով սփռուած է ամբողջ Շէյցարիայում՝ թէ գերմանական և թէ ֆրանսական։

Այդ ընկերութիւնը Շէյցարիայի ամենահին չրանաւորական ընկերութիւններից մէկն է։ Նրա նպատակն է լսմի խրել, զուարճել բանաւորներին, բարելաւել, բարւոքել նրա վիճակը. ընթանալ դէպ առաջ՝ նորից և նորից առաջադիմական չաղթանակներ կանդնեցնելով։ Այդ սերտ կապերով միացած ընկերութիւնները այժմ ունին մօտ 15,000 անդամներ—մի քաւականին խոշոր բանակութիւն, ևթէ աչքի առաջ ունենանք փոքրիկ Շէյցարիայի ազգաբնակութեան թիւը, որ այժմ հասնում է 2,910,000 հոգու։ Եւ իրօք «Գրիւտլին» Շէյցարիայի ոգեղալ-դեմոկրատիկական պարտիայի ամենահին, ամենաուժեղ և ամենաճիւղաւոր ծառերն է, կարելի է ասել, նրա ամբողջ մարմինը և ոգին է։ Նա ունի երկու պաշտօնական օրգաններ. մէկը „Grütlianer“ գերմանական լեզուով, որը հրատարակւում է Շէյցարիական Գերմանիայում, միւսը „Grutli“ վերնագրով ֆրանսական լեզուով, որ հրատարակւում է Շէյցարիայի ֆրանսական մասում՝ Լոզան քաղաքում։

Այդ դաշնակցական սուրբ ծառը, որ կատարում է իւրաքանչիւր

Երկու տարբեր ընթացքում մի անգամ, այս առաջին անգամն է, որ տեղի է ունենում Շէյլյարիալի Ֆրանսիական մասի հողի վրայ։ Մինչև այժմ նա կատարելիս է եղել գերմանական մասում, որովհետև վերջնումս նա աւելի մեծ ոյժ ունի, քան թէ առաջինում [1])։

Եւ պիտի խոստովանած, որ այդ տօնը վատատար կերպով անցաւ։ Դեռ երկու ամիս առաջ կազմուել էր մի կոմիտէ՝ հարկաւոր պատրաստութիւնները տեսնելու։ Այդ յանձնաժողովի գլուխն էին անցած կառավարութեան ներկայացուցիչները (Նեօշատէլ կանտոնի նախագահը—Conseiller d'Etat,—պոլիցիալի պիրեկտորը և այլն և այլն) և մասնաւոր անձինք։ Որովհետև տօնը դաշնակցական էր, այդ պատճառով իւրաքանչիւր կանտոն վաղօրօք մի որոշ գումար էր յատկացրել տօնի համար անելիք ծախսերը ծածկելու։

Քաղաքի ձեմարանի մօտ, լճի ափին կառուցել էին մի անագէն փայտեայ չինուածքն՝ մօտ 4000 հոգու համար։ Շինուածքի մէջ երկար նստարաններ և սեղաններ. մի քանի բեմեր՝ երաժշտական և երգեցիկ խմբերի համար, իսկ չինուածքի մէջտեղը բանել էր մի փոքրիկ բեմ (la tribune) առաջնորդների համար։ Այս վերջինը պատրաստած էր շատ գեղեցիկ ձևակով։ Շինուածքի տարաւային կողմից թողած էր մի բաւականին մեծ բացուածք, որտեղից ալեկոծի ամբողջ բացում էր մի հիանալի տեսարան Նեօշատէլ լճի և Ալպեան լեռների։ Դեռ ամսից մի քանի օր առաջ այդ ամբողջ չինուածքը զարդարած էր զանազան գոյնի և մեծութեան դրօշակներով և փիրլանդներով։ Դրօշակների մէջ թազած այդ անագէն բարձր չինուածքը իր վեհութեամբ խոր տպաւորութիւն էր թողնում այցելի վրայ։

Տօնը պիտի սկսվէր ուրբաթ օրը՝ ամսի 14-ին։ Պիտի տևէր չորս օր։ Ծրագիրը կազմած էր հետևեալով։ Այդ օրը, ժամի 4-ին (կէսօրից յետոյ) նշանակած էր ընկերութեան կենտրոնական դրօշակի և ներկայացուցիչների ընդունելութիւնը։ Հանդիսաւոր պնդպք (Cortège) երթաղաղ կ՚ապարանից պիտի Տօնի չինուածքը. հասնելո «քարի պալատական» առաջին, ընտանեկան երեկոյթ և հանգիստ։ Մեռ օրը առաւօտեան ժամի 7-ին պատգամաւորների ընդհանուր ժողով էր նշանակած։ Ժողովը բացուեց ճեմարանի Aula աւտած դահլիճում։ Ժողովին ներկայ էին 107 բաժանմունքների ներկայացուցիչները թուով 172 հոգի։ Այդ օրուայ նիստը տևեց հանգիստ թէ 13 ժամ՝ մի փոքրիկ ընդհատմամբ ճաշելու համար։ Տօնի ընթացքում այդ ընդհանուր ժողովն ունեցաւ էլի մի քանի նիստեր։ Այդ ընդհանուր ժողով-

---

[1]) 2,910,000 բնակիչներից շէյլյարիական գերմանացոց թիւն է՝ 2,083,000, Ֆրանսիացիք—634,000, իտալացիք—155,000, մնացեալ 38,000 կազմում են ռոման աւտած ցեղը և հրէայք։

ները մեծ նշանակութիւն ունին. պրանք էին կազմում ռոնի բուն նպատակը։ Այդ ժողովներում քննւում էին ազգային, քաղաքական և սոցիալական կարևոր խնդիրները։ Այս անդամակ ընդհանուր ժողովը, ի միջի այլ բազմաթիւ իրավունքների, ունեց իր ինչ դիրք պիտի բռնէ Դրիւալի պարոնան դաշնակցական առաջնորդ ընտրութիւնների, որոնք տեղի պիտի ունենան հոկտեմբեր ամսին։ Դրիւալին պիտի աշխատի, որ նախկին դիւանագիտական անձնաւորութիւններն էլ չկարողանան ընտրել որպէս պատգամաւորներ Conseils des Etats-ի [1]) համար։ Այս այն նպատակով, որ պահպանեն դիւանագիտական ծախսերը, որոնք, չնորհիւ այդ կարգի պատգամաւորների, ամեն էլ են կամաց կամաց աւելանում և ծանր բեռն դառնում... Նա, Դրիւալի ընկերութիւնը, մեծ ջանք և եռանդ պիտի դործ դնի, աշխատի այն պատգամաւորների համար, որոնք համաձայն են Դրիւալիացիների դաղափարներին՝ այսինքն սոցիալ-դիմոկրատական են։

Այդ օրը (շաբաթ) երեկոյեան ժամի 10-ին տեղի ունեցաւ հանդիսաւոր գնացքը ջահերով (Cortège aux flambeaux)։ Գնացքը կազմեց ռոնի չինութեան մօտ գտնղգոյն լա պեռրնեթով, ջահերով, բարձրացրած դրօշակներով, առջևից ունենալով քաղաքի Musique militaire անուանած դեղեցիկ օրկեստրը, որ անցաւ քաղաքի զլխաւոր փողոցներով. ճանապարհին նրան ընդունում էին լուսալուսան կրակներով և ուրախ բացականչութիւններով։

Միւս օրը առաւօտեան ժամը 5-ին տեղ քննիչ զարթեցնում են դեղեցիկ մուզիկայի հնչիւնները։ Նշում էր օրւայ ծրագրին — ժամը 5-ին նշանակած է Diane — այդպիսի մրցակ։ Այդ դեղեցիկ մուզիկայի հնչիւնները առաւօտեան այդ ժամին աւելի քաղցր, աւելի զմայլեցուցիչ էին հնչում մարդու ականջին — ժամը 6-ին մրցումն է հրացանաձգութեան և մարմնամարզութեան։

Անպատեղ պիտի վիշած, որ Դրիւալի անունով Շուէյցարիայում կան երեք ուրիշ սեռակ ընկերութիւններ՝ մարմնամարզների, հրացանաձիգների և երկչների։ Այս ընկերութիւնները էլ էին մասնակցում ցոնին։ Նրանք էլ ունեցան իրանց նիստերը և այլն և այլն։ Մրցանակաբաշխութեան համար նշանակած էին քննիչ մասնաժողովներ (Jury)։

Ժամի 7-ին կատար ընդհանուր ժողովի նիստերի չարունակութիւնը ճեմարանի Aula դահլիճում։ Այդ մի և նոյն ժամանակ ցոնի չինութեան չարկի տակ օրհնում էին Դրիւալի ընկերութեան նոր կազմած ձիւղերի դրօշակները։ Մի այլ տեղ մարմնամարզների մրցանակաբաշխութեան խաղերի չարունակութիւնն էր։ Բացի այս բոլորը լմի ամին տարածած էր հաղար ու մի բան՝ կարուսէլներ, անասնական թատրոն, մի քանի ցիրկեր, պանորամաններ և այլն և այլն... Եւ այդ բոլոր տեղերը լցած էր ժո-

---

[1]) Կառավարական խորհրդարաններ, պարլամենտներ։

զօրքի խուռն բազմութիւն։ Լճի ափի ահագին տարածութեան վրայ, ինչպէս ասում են, ասեղ դցելիր, տաիը չէր ընկնիլ, այնքան մեծ էր բազմութիւնը։

Բայց այդ օրուայ ամենահանդիսաւոր դէպքը պաշտօնական հանդիսաւոր գնացքն էր—Cortège officiel. Այդ կորտէժը չատ լաչող անցաւ. պա իսկապէս մի վեհ հանդէս էր։ Ամսիսի մեծ կորտէժ դեռ Նեօչատէլը չի տեսել։ Հանդիսին հէնց մէրմէն պաշտօնապէս մասնակցողների թիւը հասնում էր 2300 հոգու, 5 երաժշտական խումբ և 130-ից աւելի դրօշակներ։

Հանդիսի առաջին տեղը բռնել էին 3 անձնաւորութիւն հին չէյցարիացիների զանազան տարազի հագուստներով։ Իրանք ներկայացնում էին երեք ազգութիւններից կազմած չէյցարական դաշնակցութիւնը։ Երկրորդ տեղը բռնել էին Նեօչատէլի Գրիւտլի ընկերութեան ձիւզերի ներկայացուցիչները։ Երրորդ տեղը բռնեց վերը յիշած Musique militaire. չորրորդ տեղը դրօշակների առաջին դրուպան, յետոյ մրա ձիւզերի ներկայացուցիչների մի այլ խումբ, դրօշակների մի այլ գրուպա և այլն և այլն։ Մի խօսքով, մեծ ճաշակով կազմած մի հանդիսաւոր գնացք։ Յիշենք այստեղ, որ Բերն քաղաքի ներկայացուցիչները չեն մոտացել իրանց նախկան «արջը»։ Մի մարդու հագցրել էին արջու մորթի, գլուխն անցկացրել արհեստական կերպով չինած արջի գլուխ։ Եւ այդ «արջը», բերնցիների գլուխը անցած, գնում էր կորտէժի մէջ բաւականին ծիծաղ պատճառելով հանդիսատեսներին։ Եւ այդ կերպով կազմած հանդէսը գեղեցիկ մուզիկալի դաշնակցութեամբ անցաւ քաղաքի մի քանի փողոցներով։ Այդ միևնոյն ժամանակը լճի ափից 22 անգամ թնդանօթ ձգեցին՝ իւրաքանչիւր չէյցարիական դաշնակցութիւն կազմող 22 կանտոններին։ Փողոցներում, տներում, կարմներին խռնուած ժողովրդի ներկայութիւնը, նրանց ուրախ բացականչութիւնները „Vive la Suisse“ (կեցցէ Շէյցարիան)... այդ բոլորը հանդիսատեսի վրայ մի խոր, ամենախոր տպաւորութիւն էր գործում։

Մենք այլ ևս չենք ուզում ընդարձակել Ֆօնի միւս պարագաների, Գրիւտլի երդեցիկ ընկերութիւնների տած կոնցերտի մասին, ուր բոլոր խմբերը միացած մի ահագին խումբ կազմած երգում էին, և իբ մարմնամարզական խմբերի մասին... Յիշենք միայն այն բազմաթիւ ճառերը, որոնք արտասանուեցան ճաշի (Banquet officiel) ժամանակ։ Այդ ոգևորուած ճառերը, որոնք ամբողջապէս նուիրուած էին բանաւորական հարցերին, իսկը տպաւորութիւն գործելով այդ ահագին բազմութեան վրայ, ընդունւում էին բուռն ծափահարութեամբ։

Մի բան՝ որ աստիճ աչք էր զարնում, որ ուրիչ երկիրներում երբէք չէք պատահիլ, այդ այն հանգամանքն է, որ չնայած զանազանութեան, որ նկատւում էր կառավարութեան և Գրիւտլի ընկերութեան ներկայացուցիչների մէջ, կառավարութիւնը ինչ-

պէս վերև էլ յիշեցինք, ոչ թէ միայն աջակցում, այլ նոյն իսկ կարգադրիչ յանձնաժողովն էր կազմում, որը ամենայն կերպ աշխատում էր Տօնին ազգի չքեղութիւն, ազգի աջողութիւն տալ։ Ո՛չ պակաս մանակցութեամբ աջակցեցին յանձնաժողովին Նոյեմբերի բնակիչները։ Նրանք յոժարակամ, առանց բացառութեան, զարդարել էին իրանց տները, վողոցները դրօշակներով. հանդիսին հանդիպում էին բենգալեան կրակներով և այլն և այլն...

Կարգադրիչ յանձնաժողովը միմիայն իր յայտարարութիւններով հրաւիրում էր բնակիչներին՝ զարդարել իրանց տները դրօշակներով, կորտիժի ժամանակ վառել բենգալեան կրակ և այլն նոյնն։ Նա իր հրաւիրագրերով՝ բացատրելով քաղաքիս ազգաբնակութեանը այդ տօնի նշանակութիւնը, Վրիւալի ընկերութեան ձգտումները, խնդրում էր իրան օգնել այդ տալ իր այդ գործին, աշխատանքը առաջ տանել ըստ կարելւոյն աջող կերպով։

«Թերէք, ուրեմն, աւազ էր հրաւիրագրի մէջ, այս Տօնին, որ ահա բացւում է, ձեր անձնական և բարեօժար մասնակցութիւնը։ Եւ աշխատեցէք, որ այս օրերը լինեն ամենագեղեցիկ և ուրախալի օրերից, նեբրած Հայրենիքին, Միաբանութեանը և Յոյսին»։ Այդ իմաստալից հրաւիրագիրը վերջանում էր այսպէս.

«Սիրելի համաքաղաքացիներ.

Թող ուաւանի Վրիւալիի վիշտակը [1]) այս մի քանի օրւայ ընթացքում մեր քաղաքի վրայ ուր Հելւեցիայի որդիքը բնակւելու են Նոյեմբերի տակ. թող բարձրանայ մեր լճի, ընչպէս երբեմն Զուրւկանտոնների լճի ափերից, սիրոյ երդում Հայրենիքի համար և երդում միութեան նրա բոլոր զաւակների»։

Եւ իրօք՝ Նոյեմբերի բնակիչները ցոյց տուին, որ կարող են ըստ պատշաճին ընդունել իրանց գաշնակից եղբայրներին։ Եւ այդ չորս օրը՝ յուլիսի 14, 15, 16 և 17-ը տօն էր ոչ միայն սոցիալ-դիմոկրատիական պարտիայի, այլ կարելի է ասել, մի ընդհանուր ազգային տօն իւրաքանչիւր չէխցարիացու համար։

Իսկապէս նախանձելի երկիր է Շէխցարիան։

Ս. ՇԻՒԱՆՑ։

---

[1]) Ասւենքն 1291 թուականի վիշտակը, երբ Վրիւալի հովտում կացաւ Շուից, Ուրի, Ունտերվալդէն կանտոնների միութիւն-դաշնակցութիւնը, որից յետոյ կամաց-կամաց միացան միւս կանտոնները։ Եւ այդպիսով սկիզբը դրուեց չէխցարական դաշնակցութեան։

Ս. Շ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ ԱԻՍՏՐԻԱՅՈՒՄ

ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Նոր մինիստրութիւններ Աւստրիայում, Ֆրանսիայում, Իտալիայում։ Ինչ վերաբերում է Ֆրանսիային և Իտալիային—դա՝ անսովոր երեւոյթ չէ, բայց Աւստրիայում դա մի ամբողջ անցք է, որովհետև 14 տարի է, ինչ Աւստրիայի մինիստրութիւնների գլուխ կանգնած էր կոմս Տաաֆէէ։ Այդքան երկար կառավարութիւն հասկանալի է միայն այն երկիրներում, ուր մինիստրութիւնները այնքան մեծ կախուածի չունին պարլամէնտից։ Իսկ այդպիսիներից է Աւստրիան, ուր կայսերական արքունիքը ամենաառաջին տեղն է բռնում մինիստրութիւն պահպանելու գործօնների մէջ։ Եւ եթէ կոմս Տաաֆէէն կարողացաւ այդքան երկար ժամանակ երկիր կառավարել, այդ նրանից էր, որ անսահման էր հաւատը կայսեր դէպի այդ անձը, որի հետ կայսրը կապուած է նաև ազգակցական կապով։ Բայց այդ էս բաւական չէր լինել, եթէ կոմս Տաաֆէէն չունենար ամէն բանի յարմարելու քաղաքականութիւնը, մի քաղաքականութիւն սակայն, որը պահպանէ պահպանողական հեղինակին։ Ընդունած իր դիմակութեան՝ կոմս Տաաֆէէն չթողեց մեծ մինիստրի անուն, և ընկաւ առանց ժողովրդականութիւն ունենալու, չնայած որ նա ընկաւ՝ մի ժողովրդական գաղափար պաշտպանելիս — այն է որ պարլամենտական ընտրութիւնները մանակցեն աւելի մեծ ժողովրդական խաւեր քան մինչ այժմ է։

Բայց հանգամանքը այն է, որ կոմս Տաաֆէէին սրտի մօտ չէին այն խնդիրները, որ նա կարողանում էր անցկացնել իւր մինիստրա-

կան պաշտօնավարութեան երկար ընթացքում: Նորա սիրտը չէր բաբախում խնդիրների համար. նորա հոգսը աւելի այն էր, որ կարողանայ դժւարութիւններից դուրս գալ, բաւարարութիւն տալով և սրան և նրան. նորա հոգսն էր ճնշել իւր տեղում:

Տաֆֆէի մինիստրութեանը յաջորդեց այսպէս ասած՝ պաշնոկցական մինիստրութիւնը, ոչ իսկոյն, այլ բաւական երկարատև կոմբինացիաներից ու բանակցութիւններից յետոյ: Մինիստրութիւնը կազմւած է երեք-չորս տարրերից, որոնց միասին գանւելը գարմանալի կը թւայ ուրիշ երկիրներում, բայց ոչ Աւստրիայում: Աւստրիայի ներքին հանգամանքները շատ տարբերւում են ուրիշ երկիրների ներքին հանգամանքներից, և եւրոպական ներքին քաղաքականութեանը հետեւողներից շատերը նոյն իսկ դժւարութիւն կը զգան լաւ ըմբռնել աւստրիական բոլոր ներքին կռիւների իմաստը: Ամենից առաջ գիտենալու է որ, թէև Աւստրիան և Ունգարիան մի պետութիւն են կազմում, բայց միայն նրանով, որ նոքա միացած են թագաւորական անով. Աւստրիայի կայսրը է միևնոյն ժամանակ նաև Ունգարիայի թագաւորը. ապա նոքա միացած են արտաքին քաղաքականութիւնով, հետևապէս ունեն մի միակ մինիստր արտաքին քաղաքականութեան համար. ընդհանուր է նաև պատերազմական մինիստրը և պետական ֆինանսների մինիստրը: Բայց այդ ընդհանուրից դուրս՝ այդ երկու երկիրները կառավարւում են իւրաքանչիւրը իւր սեպհական մինիստրութիւնով և պարլամէնտով: Աւստրիան ունի իւր մինիստրութիւնը և իւր պարլամէնտը, Ունգարիան ունի իւր մինիստրութիւնը և իւր պարլամէնտը, որոնցից և, կայսրի կամ թագաւորի հետ ի միասին, կախւած է իւրաքանչիւրի ներքին քաղաքականութիւնը: Այսպիսով ամեն մէկը ունի իւր սեփական մինիստրները՝ ներքին գործերի համար, ֆինանսների, ժողովրդական լուսաւորութեան, առևտրի, արդարադատութեան համար և այլն:

Կոմս Տաաֆֆէի մինիստրութիւնը վերաբերում էր միայն Աւստրիային և ոչ նաև Ունգարիային, և կոմս Վինդիշգրեցի ներկայ մինիստրութիւնը միայն աւստրիական խնդիր է և ոչնչով չի շօշափում Ունգարիային:

Բայց Աւստրիա ասածդ ինքը մի բարդ բան է, և նորա ներ-

քին քաղաքականութիւնը շատ բարդ գործօնների ազդեցութեանն է ենթարկուած. հետևապէս նաև աւստրիական մի մինիստրութիւն, որը կամենում է պարլամէնտի տրամադրութիւններին համապատասխանել, անհնարին է որ միակերպ մտածող մարդկանցից կազմուած լինի, քանի որ նոյն ինքն պարլամէնտը մի խայտաճամուկ ժողով է ներկայացնում։ Այդ նրանից է, որ Աւստրիան բաղկացած է ազգայնական կողմով ոչ մէկ այլ մի քանի ազգերից։ Երկրորդ՝ այդ նրանից է որ այլ և այլ ազգերի մէջ չկայ մէկը որ մեծ գերակշռութիւն ունենայ միւսների վրայ և իւր ուսերի վրայ միայն կրէ երկրի ամբողջ կուլտուրական յառաջդիմութեան ծանրութիւնը։ Այդպիսի դէպքում պէտք է, մի պետութիւն կազմելու համար, շէյցարիայի նման դաշնակցութիւն կազմէր, ուր ամեն մէկ դաշնակցող իւր առանձին ներքին կեանքն ունենար։ Բայց Աւստրիայում նոքա կապուած են իրար հետ Հաբսբուրգեան միապետների ոտնձգին քաղաքականութեամբ միայն, այդ միութիւնը պատմականապէս հիմնուած է նուաճումների վրայ, նուաճումներ, սակայն, որոնք ոչ թէ յաղթութիւններ են եղած մի ազգի, (որ պիտի լինէր գոյութիւն չունեցող աւստրիական մի ազգ), այլ մի թագաւորական զօրեղ տոհմի, որը ճիշդ է՝ գերմանական է և հիմնուած է եղել իւր պետութեան գերմանական տարրի վրայ։ Ի զուր չեն կոչւում Աւստրիայի երկիրները՝ թագի (արքունիքի) երկիրներ (Kronländer)։ Այդ երկիրներն են՝ բուն Աւստրիան (ներքին և վերին Աւստրիա), դքսութիւնները՝ Զալցբուրգի, Շտայէրմարկի, Կէրնտէնի և Կրաինի, ապա աւստրիական-իլլիրիական ծովափը, Տիրոլ, Բոհեմիա, Մարաւիա, Շլեզիա, Գալիցիա, Բուկովինա և Դալմատիա։ Այդ բոլոր երկիրների ազգաբնակութիւնները մի միատարր մասսա չեն կազմում, և դոցա մէջ առնուազն երեք ազգութիւններ կան, որոնք իրանց ինքնուրոյնութիւնը պահպանել են և զարգացրել՝ աւստրիական գերմանացիք, բոհեմացիք (չէխեր) և գալիցիացիք (լեհեր)։ Գերմանացիք, չէխեր և լեհացիք — դոքա ոչ միայն կամենում են իրանց ինքնուրոյն զարգացումն ունենալ, այլ և դոցա ներքին ընդհարումները կազմում են աւստրիական ներքին քաղաքական կեանքի գրեթէ ամբողջ բովանդակութիւնը։ Դոցանից Բոհեմիայի չէխերը իրանց ձգտումը հասցրել են մինչև անգամ այն

ասոիճանի, որ կ՚ընդիր են չարուցել որ աւսարիական կայսրը ոչ միայն ինքն ըստ ինքեան ճանաչի որպէս թագաւոր Բոհեմիայի, այլ և առանձին թագադրութիւն կատարի, ինչպէս այդ կ՚ինուում է Ունգարիայի նկատմամբ, հետևապէս որ Բոհեմիան ապագայում բոնի ընդհանուր պետութեան մէջ Ունգարիայի նման դիրք։

Աւսարիական ամեն մինիսարութիւն հարկադրուած է առնուազն այդ երեք տարիների չատուկ ձգտումները հաշուի առնել։ Կոմս Տաաֆէն 14 տարի մինիսարութեան դլուխ կանգնել կարողացաւ շնորհիւ այն բանի, որ նրան չաջողուում էր պարլամէնտի մէջ ներկայացուցչութիւն ունեցող այլ և այլ ազգայնական կուսակցութիւնների պահանջներին այսպէս կամ այնպէս բաւարարութիւն տալ, բայց ոչ որպէս այդ ուղղութեան պետական անձն, այլ աւելի միայն որպէս ճարպիկ դործիչ։ Արնորանից շատ դժգոհ էին աւսարիայի պերմանացիք—այդ շատ պարզ է, որովհետև աւսարիայի պերմանացիք կ՚ուզէին դերիշխող տարր ճանաչել և այլ ազգերին իրանց քաղաքական և կուլտուրական թևերի տակ պահել։ Բայց իրանց թիւ տակաւութիւնը մի այդպիսի պերի համար՝ տեսնում է նոցա հաշուել այլ ազգերի պահանջների հետ, ինչպէս նոքա պէտք է հաշուէին Տաաֆէի պէս «հաշտարար» մինիսարութեան հետ։ Մենք շուտով կը տեսնենք թէ ազգայնական տարրը ինչպիսի ներկայացուցչութիւն ունի Վ.ինդիշդրէցի ներկայ մինիսարութեան մէջ։

Բայց մեր դայժմ պարզաբանած հանդամանքը պետ է ևս միակը չէ դեր խաղում աւսարիական մինիսարութեան կազմակերպութեան, հետևապէս նաև աւսարիական ներքին քաղաքականութեան մէջ։

Սա մի ողորմելի բան կը լինէր եթէ մի մինիսարութիւն ուրիշ ոչինչ չներկայացներ բայց եթէ միայն այս ու այն ազգի ներկայացուցչութիւն։ Ոչ, Աւսարիան ունի նաև ողջութեան կենդրոններ, որոնք նշանաւոր պեր են խաղում մինիսարական կոմբինացիաների մէջ։ Գուցէ աւելի լաւ չատկանած լինեմ միտքս, եթէ ասեմ թէ՝ բացի ազգայնութեան ներկայացուցչութիւնից՝ աւսարիական ամեն մինիսարութիւն կրում է մի որոշ գոյն, որը աւսարիական սոցիալական կազմակերպութեան արտայայտութիւնն է։ Աւսարիան առ հասարակ մեծ կալուածատիրութեան երկիր է. հին ֆէոդալականութիւնը պետ է ևս ահագին ոյժ ունի այդ երկրում, և իմ

խօսքը ոչ միայն աւստրիական գերմանացոց մասին է, այլ և Բոհեմիայի, Գալիցիայի և այլն։ Բազմաթիւ են մեծ կալուածատէրերը, որոնք ահագին սոցիալական ոյժ են կազմում շնորհիւ այն բանի, որ նոքա յիմացել են իրանց պահել ազնուականութեան բարձր մակերևոյթի վրայ և փայլել պետական ծառայութեան մէջ, որպէս նաև իրանց կալուածների լաւ կառավարութեան մէջ։ Այդ բարձր կալուածատէր ազնուականութիւնն ունի իւր առանձին ներկայացուցչութիւնը—և կազմում է այսպէս կոչած Herrenhaus, այսինքն տէրերի ժողով, բաղկացած 188 ազնուականներից։ Բայց բացի այդ՝ կայ և ժողով պատգամաւորների, որոնց ընտրողը ընդհանուր ժողովուրդն է, բայց միայն ընտրելու իրաւունքը այնքան ընդհանուր չէ, որքան Գերմանիայում, Ֆրանսիայում և այլն։ Արդ՝ նաև պատգամաւորների ժողովում այդ հին կալուածատէր-ազնուական պատակարգից շատ պատկառելի թիւով պատգամաւորներ են ընտրւում։ 353 անդամից է բաղկացած պատգամաւորների ժողովը, և նոցանից այժմ 85 հոգի մեծ կալուածատէրերից են։ Մի խօսքով կալուածատէր-ազնուականութիւնը ահագին ոյժ է Աւստրիայում, շատ սերտ կապած թէ կայսերական տան հետ, որը մեծ հեղինակութիւն ունի պետական ամեն կարգի խնդիրներում և թէ կաթոլիկ եկեղեցու հետ։

Դորա հետ կապած է պահպանողական ոգին, որ այնքան բնորոշում է Աւստրիային առ հասարակ, մանաւանդ Մետտեռնիխի շրջանը, որը չանք էր անում թագի և ազնուականութեան՝ սրա պատմական, բայց հնացած հիմունքների վրայ պահպանած՝ նահապետական իշխանութիւնը պաշտպանել մինչև վերջին ծայր։ Բայց ոչ միայն Մետտեռնիխի շրջան ծայրայեղ պահպանողական էր, այլ և աւստրիական ազատամիտներին՝ լիբերալներին՝ անհնարին է որ ուրիշ երկիրներում ազատամիտ անուանը տան, այնքան նաև նոքա պահպանողական են։ Բայց ամեն ինչ համեմատականն է, նոյն իսկ պահպանողականութիւնը և ազատամտութիւնը և վաղեմի մինիստր Մետերլինդի լիբերալ ուղղութիւնը այնքան արաւ միայն, որ գոնէ բուրժուազիային կեանքի կոչեց ազնուականների հետ միասին կառավարելու՝ դատաստանի, համոյնքում, կաթոլիկ եկեղեցւոյ ազատած ուսումնարանում, երկրաչների դատարաններում, պարլամէնտում։ Իսկ այդ լիբերալ սահմանադրութիւնը ոչնչով էապէս չշոշա-

փեց առանձնաշնորհումները միապետության, ազնվականության և կաթոլիկ եկեղեցու։

Բայց չնայած դրան, կռիվը Մեատերնիխի և Շվերլինգի շկոլաների մէջ այնքան սաստիկ էր, որ մի ժամանակ թուաց թէ նոքա ընդհանուր այլ ևս ոչինչ չունեն։ Շվերլինգի ծրագրած սահմանադրութիւնն էլ, որ Աւստրիայի բաժան բաժան ինչ որ 17 երկիրները միացրած են կենդրոնացնող ընդհանուր օրէնքների ներքոյ։ Բայց այդ սահմանադրութիւնը ինքը, որպէս սեռանք, շատ պահպանողական է, որպէս պոհպանողական է և Աւստրիայի սահմանադրական կոչուած կուսակցութիւնը։

Կոմս Տաաֆէի ներքին քաղաքականութիւնը չէր կարում ոչ մէկի և ոչ միւսի ուղղութեան, այլ ներկայացնում էր մասամբ կղերական մասամբ պաշնակցական (ֆեդերալիստ) հետևապէս և հակագերմանական ուղղութիւն։

Մեատերնիխի շկոլայի աշակերտը ներկայումս կոմս Հոհենվարտն է, գլխաւոր ներկայացուցիչը այսպէս կոչուած կայսերութեան կուսակցութեան (ռայխսպարտայ—Reichspartei), որը իւր մեծ ծերութեան պատճառով հրաժարուեց մինիստր-նախագահ լինելու առաջարկից, Շվերլինգինը՝ Ջոն Պլենէր—գլխաւոր ներկայացուցիչը գերմանական-սահմանադրական կուսակցութեան։

Ահա այդ երկու մարդիկ՝ կոմս Հոհենվարտ և Ջոն Պլենէր, միացած լեհական կուսակցութեան կամ, ինչպէս ասում էր լեհական կլուբի պարագլուխ Ցաւորսկի՝ հետ՝ նեղդործել են այժմեան մինիստրութիւնը կազմելու համար, որի գլուխ է անցնում բոհեմական (բայց ծննդով և կրթութեամբ գերմանացի) մեծ կալուածատեր իշխան Ալֆրէդ Վինդիշգրէց։ Այդ, ուրեմն, ամենից առաջ կոալիցիական մինիստրութիւն պիտի լինէր, ուր ներկայացուցչութիւն պիտի գտնէին աւստրիական պահպանողական տարրերը գերմանացիներից և լեհացիներից։ Դեմոկրատիկական տարրը այդպիսով դուրս է մնում։

Այդ մտքով մինիստրութիւնը կազմուեց այսպէս. Վինդիշգրէց՝ մինիստր-նախագահ, Օլիւիէ մարկիզ Ջոն Բաքհէմ (Bacquehem—ֆրանսիական ծագումից)՝ ներքին գործերի մինիստր (Տաաֆէի մինիստրութեան մէջ նա էր աւէտարի մինիստր), կոմս

Ֆալկենհայն՝ երկրագործութեան մինիստր, կոմս Շեօնբորն՝ արդարադատութեան մինիստր (խիստ պահպանողական, խիստ կաթոլիկ և հակա-պերմանական). Ֆոն Մադէյսկի (լեհացի)՝ կրթական մինիստր (որքան տեղեակ ենք, դա առաջին դէպքն է Աւստրիայում, որ կրթական մինիստրը գերմանացի չէ). Ֆոն Եաւորսկի (լեհացի)՝ մինիստր Գալիցիայի համար (նոյնպէս խիստ պահպանողական). Ֆոն Պլենէր՝ ֆինանսական մինիստր. կոմս Վ. ուրմբբրանդ՝ առևտրական մինիստր (Ֆոն Պլենէրի կուսակցութիւնից):

Նոր մինիստրութեան գլխաւոր հոգսը կազմելու են երեսի հարկերի բեֆորմը և ընտրողական բեֆորմը:

Ձ.

Ֆրանսիայի և Իտալիայի նոր մինիստրութիւնների մասին շատանում ենք առ այժմ հետևեալով.

Դիւպիւյի մինիստրութիւնը ընկաւ նորա արմատական երեք անդամների (Պէյտրալ, Տերրիէ և Վիեա) հրաժարականի պատճառով: Նոր մինիստրութեան գլուխ անցաւ ցայժմ պատգամաւորների ժողովի նախագահ Կազիմիր-Պերիէ, որի մինիստրութիւնը կազմուած է միմիայն չափաւոր հանրապետականներից, առանց արմատականների: Յիշենք մինիստրներից՝ Սպիւլլէրին, հանգուցեալ Գամբետտայի բարեկամը, որ ստանձնել է կրթական մինիստրի պաշտօնը:

Աւելացնենք որ պատգամաւորների ժողովի նախագահ ընտրուեց նախկին մինիստր-նախագահ Դիւպիւյի, չափաւոր հանրապետականների թեկնածուն, ընդդէմ արմատականների թեկնածու Բրիսսոնի, որ մի ժամանակ նոյն ժողովի նախագահ էր ընտրուած:

Իտալիայում, Ջիօլիտտի՛ի ընկած մինիստրութեան տեղ՝ երկար չանքերից յետոյ յաջողուեց կազմակերպել ներկայ մինիստրութիւնը յայտնի Կրիսպի՛ի նախագահութեամբ: Իտալիայի ամենամեծ ցաւը՝ նորա ֆինանսական ողորմելի վիճակն է, հետևապէս և Կրիսպիի մինիստրութեան ամենամեծ հոգսը — այդ կողմն է ուղղած լինելու:

Ձ.

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒԲԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ բացած լինելով, ինդրեմ ենք ցանկացողներին՝ չտապեն բաժանորդ գրուել որքան կարելի է չուտ։ Այս անգամ ևս ուղարկում ենք ամենքին բաժանորդագրական ծրարներ։

ՓԷՈՐԳ ԵՊ. ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻՆ Վեհափառ կաթողիկոսը նշանակած է կառավարիչ Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի մինչև նորա հաստատուելը իբր նոյն թեմի առաջնորդ։

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊ. ԱՂԻԱՆԵԱՆՑ, անգամ սինոդի, Վեհ. կաթողիկոսի հրամանով ճանապարհուել է պարսից Ատրպատականի թեմը Սահակ վ. Այվազեանի հետ։

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ պատուել է պ. Բարսեղ Թամամշեանին, հրաւիրելով նորան ս. Էջմիածին՝ Վեհափառի գիւղատնտեսական ձեռնարկութիւնների և վանական կալուածների կառավարութեան վերաբերեալ խնդիրների մասին կարծիք յայտնելու։ Պրն. Բ. Թամամշեանը մեկն է մեր երկրի կրթուած գիւղատնտեսներից. ստացել է Նէրսեսեան դպրոցը 60-ական թուականներին, ուղարկուել է Նէրս. դպր. հոգաբարձութեան կողմից Գերմանիա՝ իբր օրպեկիր Լֆինդեանցի—բարձրագոյն գիւղատնտեսութիւն ուսանելու։ Հայրենիք վերադառնալու ժամանակից ի վեր նա մինչ օրս, երկու տասնեակ տարի չլրանակ, նուիրուած է գիւղատնտեսութեան գործին։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ վերակազմուած է հետեւեալ կերպ. նախագահ՝ խորէն ծ. վարդ. Սահակեանէ, անդամներ՝ Լևոն վրդ. Խոջայեան, միաբան Գալուստ ՏԷր-Մկրտչեանց, Ճեմարանի տեսչի օգնական Յովհաննէս Սաղաթելեանց, Ճեմարանի ուսուցիչ Եղիշէ Մաղաքեանց։

Այդ առիթով մենք հարկ ենք համարում յիշեցնել որ, քննելով մեր ուսումնարանական կառավարութեան մէջ մտցնելիք բարեփոխութիւնների խնդիրը, դեռ ևս անցեալ տարի («Մուրճ» 1892 թ. № 7—8 և 9, «Պարտականն վարչական

բեֆորմ» լօգւածը) մենք այն եզրակացութեանն էինք եկել, որ մեզ հարկաւոր է ներկայ «Ռուսական մատաժողովից» աւելի կատարեալ մի հատատուկութիւն, այն է «Ռուսական հոգաբարձութիւն», որի անդամները ընտրուած կը լինեն առնուազն բոլոր թեմական դպրանոցների հոգաբարձութիւններից, նախապատուութեամբ վէհափառ կաթողիկոսից նշանակուած մի անդամի։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ 1893—1897 չորսամեակի համար ընտրուց նոյեմբերի 7-ին պ. Պօղոս Իզմայլեան՝ խորհրդարանի 80 հոգի անդամներից ներկայ էին 71 հոգի, որոնցից պ. Իզմայլեանին թերթիկներով առաջարկեցին 55 հոգի։ Գաղտնի քւէարկութեան ենթարկուց միայն պ. Իզմայլեան, որ ստացաւ 62 ապիտակ և 8 սև ձայն, իսկ ինքը մնաց ձեռնպահ։ Պր. Իզմայլեանը երկուսասարեայ կան հասակից է վեր ծառայել է քաղաքին, նախ որպէս խորհրդարանի քարտուղար, ապա որպէս քաղաքային վարչութեան անդամ և դորա հետ միասին՝ տեղապահ քաղաքագլխի։ Նորա ծառայութեան մէջտեղին Թիֆլիսի քաղաքագլուխները եղել են պ. Ալ. Մատինեան (12 տարի) և իշխ. Նիկ. Արղութեան (2 տարի)։ Քաղաքային նոր կանոնադրութեան գործադրութիւն տուաւ լուսոյ, ներկայ թէ. տմոանը, իշխան Աբղութեանը հրաժարական տուց, թողնելով տակայն այնքան լաւ յիշատակներ, որ խորհրդարանը բազմիցս թախանձեց նորից քւէարկել, բայց նախկին քաղաքագլուխը հաստատ մնաց իւր հրաժարականի վրայ։ Պրն. Իզմայլեանը, որ ամենադիւրաւար ոյժն էր նախկին վարչութիւնների, վերջին քաղաքային ընտրութիւնների ժամանակ ոչին էր «Պատրիոտների համբար» կոչուած կուսակցութեան, որ միակ չաղխող եղաւ ընդդէմ այժմ պրեմէ ամբողջապէս չանչանուած օպոզիցիայի։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ մէջ կայացած է համաձայնութիւն, որի զօրութեամբ պարսկական հողից մի կար՝ Ֆերիզ (Խորասանի նահանգում) անցնում է Ռուսաստանին, որի փոխարէն Ռուսաստանը զիջել է Պարսկաստանին Հիսար և Աբաս-Աբատ կոչուած հողի կտորները։ Այդ փոխարինութիւնը կատարուած է Ռուսաստանի նախաձեռնութեամբ, միջոց տալու համար որ Անդրկասպեան երկրի բնակիչները ամառանոց գնան վիշալ Ֆերիզ տեղը։ Ֆերիզէն մի պիւղ է որ արօտատեղեր ունի Անդրկասպեան երկրի բնակիչների համար չատ յարմար։—Ռուսաստանից Պարսկաստան անցնող հողերից՝ Հիսարը (хисарскій участокъ) Անդրկասպեան երկրումն է, իսկ Աբաս-Աբատեան

հողը երևանեան նահանգի Սուրմալուի գաւառումն է, Ալաքա գետի աջ ափին։ Երկուսն ևս անբնակ են և աւօտատեղեր ունին։

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԿՈՒՉԱՆ (կամ Վուչան) քաղաքում Նոյեմբերի 6-ին Պարսկաստանի Խորասան նահանգի Կուչան քաղաքում պատահեց մի սաստիկ երկրաշարժ, որից քաղաքի ½ մասը կործանուեց։ Նորագոյն տեղեկութիւնների համաձայն՝ մարդ փչացաւ աւելի քան 11,000 հոգի, խեղաթիւրուած են 2,300 հոգի, անասունների կոտորեցին մինչ 40,000 հատ։ Երկրաշարժը չարունակեց կրկնուել չորս օրերը։

ՀՐԴԵՀ ԲԱԹՈՒՄԻ ՄԷՋ.—Նոյեմբերի 10-ին Բաթումը նորակազմուեց մի դժուխային տեսարան։ Կատարելապէս ապրեցին հետևեալ կեղրոնական գործարանները և ամբարները՝ Աբրամովիչի, Բիխովսկի'ի Սէյդ Շահբազեանի, Բալֆրոա'ի, Սիդլերիդես'ի (նախկին Անդելիդիսի), Կրևսին'ի, Կազարովի և Նեհանցի։

ԲԱԼԱԽԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԼԺԱՆԱԳԻՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ վարչութիւնը, խնդրելով մեզնից «Մուրճի» մի օրինակը նէր ուղարկել այդ ճաշարաններին կից գտնուղ ընթերցարաններին, յայտնում է միաժամանակ «Մուրճ»-ում յայտնել այդ հիմնարկութեան հասցէն, միջոց տալու համար ցանկացողներին՝ իրանց գրական գործերը նէր ուղարկել բանտերի ընթերցարաններին։ Հասցէն այս է՝ Балаханы. Дешевымъ столовымъ.

Սիրայօժար ենք՝ լեռնային-լնժենէր Աստուածատուր Վաչեանից, քժ. Բ. Իզգբաչեանց, լնժ. Յ. Ադամեանց, լեռն.-լնժ. Բաստամեան և ուրիշներ։

«ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱՋ» ԹԵՐԹԵՐը, որ անցեալ 1892 թ. նոյեմբերից, համաձայն այդ թերթերի արտօնատէր պ. Տիգրան Նազարեանցի հետ կապած մի պայմանի, վարում էին պ. պ. Գ. Մելոյեան և Ստ. Լիսիցեան, այժմ նորից անցնում են պ. Նազարեանցի կարգադրութեան ներքոյ։ Ցաւալի է որ այդ հանգամանքը կապուած է հրատարակութեան առժամանակեայ ընդհատման հետ։ Սակայն բարոյական պարտք ենք համարում յայտնել, թէ որքան մենք տեղեակ ենք գործին, այդ ընդհատումը մի խաղ չէ բաժանորդների հետ, ոչ պ. պ. Մելոյեանի և Ստ. Լիսիցեանի և ոչ պ. Նազարեանի կողմից, այլ հետևանք է բարդ և այժմեայ վեր ծանր նիւթական հանգամանքների։ Ցաւելեալ դէպս մենք կարծում ենք լաւ խորհուրդ տուած լինել «Տարազ»-ի և «Աղբիւր»-ի բաժանորդներին, յորդորելով, որ նոքա իրանց թերահաւատութիւնը չյայտնեն այն առիթանի, որ խախտեն այդ

թերթերի հիմքը։ Մենք սրտանց կը ցաւենք եթէ «Աղբիւր»-ին, որը մեծ ծառայութիւն է մատուցել մինչ այժմ մեր մանուկ սերունդներին, որ և է վտանգ սպառնայ։ Այդ առիթով մենք ստացանք Լոնդոնից մի նամակ պ. Տ. Նազարեանից, որով նա մեզ հաստատացնում է թէ լուծարից նա ստանձնելու է իւր թերթերի գործակալութիւնը։

ԽՈՒՆԵՐՅԻ հատ-հատ դէպքեր դեռ ևս չարաշահում են պատահել թիֆլիսում։

ԱՐՁԱՆ ԴԻՒՐԱՐ ԱՐՏԱՐՈՒՆՈՒՆ։ «Մշակ»-ի խմբագրութիւնը նէրեր է ընդունում հանդուցեալ Գրիգոր Արծրունեան արձան կանգնեցնելու համար և նորա գրութիւնները ընտրողաբար նոր հրատարակութեամբ լոյս ընծայելու համար։

ՆԻՒԹԱՏՈՒՒԹԻՒՆՆԵՐ։ Բազէի Մարզասիրական Ընկերութիւնը ստացաւ նէրեայ .1) Ապրի սիկին Ն. Ի. Պատկանեանից, իւր ամուսին հանդուցեալ վաճառական Պատկանեանցի կտակով՝ 20% թողած կարողութեան, այն է 20,000 ռուբլի, որից կանխիկ ստացած է դեռ ևս 7000 ռուբլի։

2) Կրասիլնիկեան եղբայրներից՝ 10,000 ռուբլի։

ԱՆՅԱՑՏ ԳՈՒՄԱՐ։ «Մուրճ» խմբագրութիւնը սրտանով յայտարարում է, որ սոյն նոյեմբերի ամսի 8-ին ստացած է վեսեն (50) ռուբլի մի գումար, բայց դրամական ծրարի մէջ չկար նամակ և ոչ էլ վիճառակութիւն թէ ում և կամ ինչու համար ուղարկած է։ Ծրարի վրայ կնքած է Օդեսայի պատատան դրոշմը, որպէս նաև այս կնիքը՝ Одесской главной конторы Русскаго Общества пароходства и торговли.

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ «ԱՐԱՔՆ ԴԻՄԱՔՍԱՆ» վէպը նոյեմբ է կազմում մի քանասիրականի, տպուած «Նովոյե Աբազրէնիյե» ռուսաց լրագրում № 3418, ստորագրած „Т. О.“։ Ուրախ ենք, որ կարող ենք վկայել թէ յօդուածագիրը ճիշդ է ըմբռնել վէպի բնաւորութիւնը և արժանիքը։ Մենք այդ բանի վրայ մանաւանդ այն պատճառով չենք տում, որ չատերին յայտնի է, թէ ինչ թէև խոչ մտածոց բարձրացաւ, երբ այդ վէպը սկսեց տպուել «Մուրճ»-ում, և այն էլ նոյն իսկ մեզ մօտ չրջաններում։ Մենք լիապէս չնորհաւորում ենք հեղինակին արդարութեան այն ձայների համար, որ ցայժմ լուել են պարբերական թերթերից՝ «Հայրենիք»-ից, «Տարազ»-ից, «Նովոյե Աբազրէնիյե»-ից նորա «Արաքն Դիմաքսեան» վէպի համար։

ԱՆԱՄԵԼ ԴԱՍ ՕԻՂՂԱՊՐՈՒԹԻՒՆԻՑ։ «Հալածիք» լրագրում լայտնի պ. բառանապատ պ. Մնակեանը մի կարճ պրօբլեմն է տալել այն բանի մասին, թէ հալածիչները արդեօք են դործածւում վ ո՞ւ, ո՞ ձայնաւորները վ հնչիւնի համար։ Բայց այդ դասը արդէն է այնքան միամիտ ձեով, իբր այդ մասին ոչինչ լայտնի չլիներ։ Մինչդեռ նորա ասածը հազար անդամ կրկնուած է և հազար անդամ էլ հերքուած։ Օրինակներ։ Ըստ պ. Մնակեանի՝ «քաղաքացի՞ն էն մը հոգը ո՞ւ կը պրծի, ինչպէս պատ՛ո՞ւաւոր, ան՛ո՞ւանի»։ Իսկ եկեղեցու բարեկ և այլն, այդ մասին նա չի մտածում. և կամ օրինակի համար ուռւսաց Мервъ (Merv)։ քաղաքի անունը ինչպէս պիտի գրէ պ. Մնակեան։ Համաձայն իւր կանոնի նա պիտի գրէր՝ Մեր՛ո՞ւ, չէ որ ասում «քաղաքացի՞ն է մը հոգը կուգայ»։

Յետոյ։ «Ձայնաւորէ մը վերջը ո՞ կուգայ, ասում է պ. Մնակեան, ինչպէս ա՞ստ, ա՞նկի, հա՞ և այլն»։ Հապա որ այդպէս է, ինչու՞ ուրեմն բառերում կամ անուններում՝ ո՞ւ տեղ վ տառն են դործ ածում նոքա, որոնք իբր թէ հաւանում են ձեր ասած կանոնը. օրինակ ինչու՞ գրում են ամիրալ Ավրան, Լվելինա և այլն։

Վ տառի համար գրում է՝ «վ կը գրվի բառին սկիզբը և ո ձայնաւորէն վետոյ, օրինակ վարդ, կով։ Բարդութեանց մէջ ալ այս դործածութիւնը կը պահուի, ինչպէս անվարժ և այլն»։

Շատ լաւ։ Հապա որ ձեր կանոնը հաւանողները գրում են վ նաև ոչ միայն բառի սկզբում և ոչ միայն ո-ից վետոյ և ոչ էլ միայն բարդութեանց մէջ, այլ ինչպէս միայն քէֆները կը տայ ? Ձանուն որ կանոնի գրում են Արվեստար, Սարուվէ և այլն, ուր վ տառը սկզբում չէ, ո-ից վետոյ չէ և ոչ էլ բարդութեանց մէջ է։ Էլ չխօսած այն բանի մասին, որ մեզանում կան գրողներ, որոնք արտասպում են ձեր կանոնները, ուրիշներին խրատելու համար, որոնք սակայն իրանք են հերքում ձեր կանոնը գրելով՝ տանվում, կը բերվի և այլն, ուր վ տառը նմանապէս ոչ սկզբումն է, ոչ ո-ից վետոյ է, ոչ էլ բարդութեանց մէջ է, բայց միայն իրանց ուղղումն է իբր ցից ընկած մեխ։

Ախպիսով եթէ ուզենալու լինէք կանոններ տանդնել բոլոր այն դէպքերի համար, ուր (հարկաւ ոչ մենք այլ) ուրիշները վ ո՞ւ և ո՞ նշաններն են գործ ածում մի պարզ հնչիւնի համար, ձեզ հարկաւոր կը լինի մի ամբողջ տրակտատ գրել։ Եւ դժբաղդութիւնը նրանումն է՝ որ այդ տրակտատը ուսուցիչները պարտաւոր կը լինեն մանուկների գլխում նստացնել, որի հա-

մար ամիսներ կը հարկաւորուին, և դեռ պիտի պարծենան թէ արդիւնաւէտ գործով են զբաղուել. և, ի լրումն բոլորին, այդ չափար ժամանակաւորութեան համար էլ պէտք է ժողովրդի գըրպանից փող արուի, ինչպէս այժմ էլ տրւում է։

Գրաբառի բոլոր կանոնները մի կապիկ ներկայ աչխարհաբառի վրին. և ձեր տւած կանոնը նոր չէ, ամենքը գիտեն, բայց փորձը ցոյց է տալիս, որ այդ կանոնին խիստ հետեւողները այժմ այլ ևս չկան։ Գիտեն և չեն հետեւում։ Ապ ևս ինչ աւելի մեծ ապացոյց էք ուզում, որ ներկայ աչխարհաբառը, որպէս առհասարակ ներկայ աւելի գործնական դարը, չի հաչտւում v-ի հնչման համար հնարած սխոլաստիկական կանոնների հետ։ Ամենքը խոյս են տալիս այդ կանոնից. բայց մէյն ոք ինչպէս կարողանում է։ Մէկի կարողացածը այն է, որ ստեղծում է մի նոր ուղղագրութիւն, որի մէջ պահպանւած է հնի ամբողջ բեռը (хвамъ), ալեվնդն երեք տառերը՝ ѣ, ѳ, ѣ, բայց միայն առանց հնի արժանաւորութեան, որ կանոնաւորութեան մէջն էր կայանում. այդպէս են վարւում «Մշակ», «Արձագանք», որոնք իրանց առնւած կանոնների համար մի նոր սխոլաստիկական պետականի են ստեղծում. իսկ միւսները աւելի խելացի են գտնում՝ բաւականանալ երկու տառով վոչնչակ երևքի՝ գործածութիւնից հանելով ѣ և թողնելով միայն վ և ե

ՂԱԼԱԹԻԱ հրկիզնալների օգտին տկած հանգանակութիւնները բաւականին չաջող արդիւնք տւեցին։ Համագումարը բոլոր նեղրատուներին կը հաղորդենք, երբ Բաքւի մատնաժողովը հաչիւը կը հրատարակի։

ՎՐԱՑ ՀՈՒԵԻՈՒ ԱԵՄԻՆԱՐԻԱՑՈՒՄ, Թիֆլիսում, դեկտեմբերի 1-ից պատատւթիւնը դադարեցրած է և բոլոր աչակերտներն արձակւած են ցնոր կարդադրութիւն։ Այդ մասին վրատտանի էկզարխ Վլադիմիրը հեռագրով յայտնել է Պետերբուրգ ռուսաց սինոդին։

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ։ «Մուրճ»-ի անցեալ № 10 ում, պ. Ե. Դաղրաչեանի պրոֆեսսորական չռչաւածի առիթով պ. Տէր-Միքելեանի գրքի մասին (Հայաստանեայց եկեղեցի» և այլն), մենք ծանօթութեան մէջ պարագ էինք համարել նկատել, թէ պ. Դաղրաչեանը ի նկատի է ունեցել պ. Տէր-Միքելեանի գրքի միայն գեղարուեստական մասերն և ոչ նորա հանելուն թարգմանութիւնը։ Այդ ծանօթութիւնը կարևոր էր այն պատճառով, որ պ. Դաղրաչեանի չռչածից մենք դէն էինք գցել գրքից տակաւ բերած

պերմաներէն կոպէնները, պահպանելով միայն նոցա հայերէն թարգմանութիւնը։ Իսկ այդ թարգմանութիւնը արել էր պ. Դաղբաշեանը ինքը և ոչ թէ վերցրած էր պ. Տէր-Մինքելեանի դրքի հայերէն հրատարակութիւնից։ Մեր այդ ծանոթութիւնը հիմնւած էր պ. Դաղբաշեանի խոստովանութեան վրայ։ Այժմ պ. Տէր-Մինքելեանը «Նոր-Դար»-ում տպած մի գրութեան մէջ կասկածի է ենթարկում մեր վկայութիւնը, հիմնւելով այն հանգամանքի վրայ, որ իւր դրքի հայերէն վերնագիրը դրած է դրախօսութեան ճակատին և որ իրա՝ Տէր-Մինքելեանի՝ հայերէն լեզուից սխալների օրինակներ են բերած։

Մեր պատասխանը այս է. Ձեր դրքի հայերէն վերնագիրը պ. Դաղբաշեանը վերցրել է ոչ թէ ուղղակի ձեր դրքից, այլ «Մուրճ»-ից, ուր այդ վերնագիրը տպւած էր նոր տարւայ գրքերի չարքում (տես «Մուրճ» 1893 թ. № 6, էջ 1030)։ Իսկ ձեր անհնարին լեզուից նմուշներ նա քաղել էր ոչ թէ ձեր գրքից, այլ «Արարատ»-ում տպւած յօդւածներից, և այդ մասին կայ լիչատակութիւն յօդւածի մէջ (տես «Մուրճ» 1893 թ. № 10 էջ 1551, առաջին սիւնակի վերջին տողը)։

Իսկ գալով պ. Ա. Տէր-Մինքելեանի գրութեանը, որը իբր թէ մի հերքումն պիտի լինէր «Մուրճ»-ում տպւած յօդւածին, նրանից այնքան անախորժ հոտ է բուրում, որ մենք այժմ ամենևին էլ արդարացնւած ենք պ. Դաղբաշեանի յօդւածի յարձակողական տոնը, որը, ասկայն, «Մուրճ»-ում ամենևին մեղմ է դարձրած եղել քան ձեռագրումն էր։

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ» (Кавказское Сельское Хозяйство) չարաթաթերթը նպատակ ամենից սկսել հրատարակվել, բայց կանոնաւոր ընթացք կառանալ՝ մինիստերութիւնից օրինական թոյլտւութիւն ստանալուց յետոյ։

«ՄՈՒՐՃ» 1893 թ. №№ 1-ից, 3-ից և 9-ից ամենայն օրինակներ ունեցողներին խնդրում ենք բարեհաճին իսկոյն ուղարկել, վոհարէնը ստանալով «Մուրճ»-ի հրատարակած որ և է մի գիրք։ Մենք պակասում են լիչատակարաններից հինգ հատ։

ԹԱՏՐՈՆ ԲԱԳԻՈՒՄ։ Նիկոլայ թագաւորն մեզանում երկու կազմակերպւած թատրոնական խմբեր են գործում, որոնցից մէկը Թիֆլիսում միւսը Բաքւում։ Թիֆլիսի խմբի կազմակերպութեան մասին արդէն գիտեն մեր ընթերցողները։ Բաքւինը կազմած է, նման Թիֆլիսինի՝ Ա. Պոլսից եկածներից և կովկասցիներից։ Ա. Պոլսից են՝ օր. Վարթիթեր, օր. Մարի-Հրանուշ և պ. Ալիք-

սահման. տեղացիներից են՝ տ. Փառանձեմ և պ. պ. Սաֆրազեան, Վրոյր, Աւետեան և Մանուէլեանց։ Տեղացիներից պ. Սաֆրազեան և Աւետեանը մշտապէս Բաքու են, իսկ օր. Փառանձեմ և պ. Վրոյր ցայժմ դարձել են Թիֆլիսի դերատանական խմբի հետ։ Պր. Մանուէլեանց նոր սկսող է։

† ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՏՏԵՆԲԵՐԳ, նախկին իշխան Բուլգարիայի, վախճանուեց իբր աւստրիական սպայ։ Նորա մարմինը իւր առաժամանակեայ գամբարանից տեղափոխուելու և ամփոփուելու է Բուլգարիայի մայրաքաղաք Սոֆիայում։

† ՋՈՆ ՏԻՆԴԱԼ։ Նորերս վախճանուեց երեւելի ֆիզիկոս Տինդալը։ Հանգուցեալը ծագումով իռլանդացի էր, ազգատ ծնողներից։ Իւր մեծ ուսումը նա լրացրեց Մյունզէնի և Մագնուսի լեկցիաները Բերլինում և Մարբուրգում։ Այդտեղ նա սկսեց իւր գիտական գրաղմունքները մագնիսականութեան, պոլարիզացիայի և կրիստալօ-ֆիզիկայից։ Այդ աշխատութիւնները նա վաստ չալուններկ Անգլիայում, ուր նա գրանով պրոֆեսորութիւն ստացաւ։ Այդ ժամանակից և սկսում է նորա բուռնեռ գործունէութիւնը որ չարունակուեց մինչ նորա մահը։ Նա անցկացրեց ֆիզիկայի բոլոր ինդիրների էնեղդիայի (ալժի) պահպանութեան սկզբունքը, որ այժմ բոլոր գիտնականների կողմից ընդունած է։ Կարեւոր են նորա աշխատութիւնները ձառագայթային ջերմութեան մասին, և, հեքսլի հետ միասին՝ սառցակոտորի բնութեան մասին։ Տինդալը փայլեց նաև որպէս դասախօս և ժողովրդականացնող։ Նորա անունը աշխարհահռչակ դառաւ հանրամատչելի դասախօսութիւններով ջերմութեան, ձայնի, լոյսի մասին և այլն, որոնք թարգմանուեցին բոլոր եւրոպական լեզուներով։

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 10 պ. Գ. Աղայեանցի յօդուածում, էջ 1485—86 տպուած է՝ օրկասի, ուղիղն է՝ օրքհատրի։

Պ. Գ. Գարագեանի յօդուածում, էջ 1545, տող 9-րդ պէտք է կարդալ՝ «նրա միայն չառաջադիմութիւնը կը մնայ տպագրելի համար և նոյն օրէնքը, ինչպէս որ նա եղել է անցեալի համար» և այլն։

Պրն. Պաղբաչեանի յօդուածում, էջ 1551, առաջին սիւնակ, տող 23-երորդ տպուած է՝ կարեւոր է. ուղիղն է՝ կարօտ է։

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐ

1) ԿԱՆԱՅԵԱՆՑ, Սահակ.—Յուցակ հայերէն ձեռագրների Թիֆլիսի Ներ-

սխեման Հոգևոր Գալրանոցի։ Թիֆլիս, 1893, տպ. Շարաձէ։

2) ՔԱՄԱԼԵԱՆ, Բարսեղ.—*Աիրահարը սեղանի առակ (վոդեվիլ մէկ արարածով)։ Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1893, գինն 20 կ.*

3) ՍԱՀԱԿԵԱՆՑ, Սահակ քահ.—*Գառագիրք կրօնի. ուղեցոյց հայ կրօնուսուցիչների համար։ Նոր սխեմի նիւթի մշակութիւնը, հատոր Բ. մասն II, տետր Բ. և Գ։ Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1893, գինն է 70 կոպ.։*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՈՒՐՃ" ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառատուն հետեւեալ գներով

(Նշանակուած գները առաջին երեք տարիների համար անփոփոխ պահպանելու են մինչեւ վերջը 1895 թ.)

«ՄՈՒՐՃ» 1889 թ. անկազմ. . . . . 4 ո. — կ.
«ՄՈՒՐՃ» 1890 թ. անկազմ. . . . . 5 » — »
«ՄՈՒՐՃ» 1891 թ. (սակաւաթիւ) անկազմ . . . . 10 » — »
«ՄՈՒՐՃ» 1892 թ. անկազմ . . . . . 9 » — »

ՎՃԱՐԸ ԿԱՆԽԻԿ

Ձանազարհաճախքի համար ուղարկուում է մի-մի ռուբլի ամեն տարուայ համար։

Կազմի համար վճարուում է վերադիր 60 կոպ. ամեն կիսամեակի համար։

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ".
Tiflis, Rédaction de la Revue „Mourtch".

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐ

ԱՐՏԱՏՊՒԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

		Ր.	Կ.
	«ՄՈՒՐՃ» *ամսագիրը, 1889 թ., երկու հատորով*	12	—
	Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . .	7	—
2.	«ՄՈՒՐՃ» *ամսագիրը, 1890 թուականի, երկու հատորով* .	12	—
	Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . .	7	—
3.	ՊԻՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«ՅԵՅԵՐ» (*վէպ*)	1	—
4.	ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ (*Ղազարցի*)՝ «*Մանուկների մարսողութ. գործարանների հիւանդութիւնները*» . .	—	05
5.	ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.—«ԽԵՒ-ԿԱՐԱՊԱՏ», *վէպ հայ-կաթոլիկների կեանքից*	1	—
6.	Լ.Է.Օ.—«ԿՈՐԱԾՆԵՐ» (*վէպ*)	—	50
7.	Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ս.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՒ ՍԵՒ ՕՐԸ»: (*կեանքից պատկեր*)	—	40
8.	ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» .	—	60
9.	ՊԻՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«ՐՊԴԻԿ», *վէպ*	1	20
10.	ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.—«ԽԱՖ-ՍԱՖԱ» (*հայ բոշան. կեանքից*	—	15
11.	ՄԱՐԻՍԵԱՆ, *սիկիլեան* Մ.—«ՀԵՂԻՆԷ» (*մեծ վէպ*), *ա. մասը*	—	50
12.	» » » » *բ. մասը*	—	75
13.	ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ, Յ.—«ՍԵՒ-ԼԵՌՆՅԻՒ» (*տոնմազ. պատկ.*)	—	15
14.	ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ»	—	03
15.	» » «ՄԻՆԱՍԻ ԵՋԸ»	—	03
16.	» » «ԵՋԻՊ ԱՂՋԻԿԸ» . .	—	05
17.	» » «ԾԱՆՐ ՔԱՐԸ» . .	—	03
18.	» » «ՆԻԱՁԻԱՅ ԿԵԱՆՔԸ» . .	—	03
19.	» » «ՄԵՐ ԻՆՁԸ ԿՐ ՊԱԿԱՍԻ . .	—	03

20. ՓԻՇՄԻՇԵԱՆՑ, Ա.—«ԲՈՅՍԵՐԻՄԵԾԱՐԱՆՔԸ» . . . — 1ջ
21. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.—«ՄԻԿՐՈՒՆԵՐԸ» . . . . . — 10
22. ՄԱՆՈՒԿԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ՉԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ». — 10
23. ՏՈՒՀՆ, ՄԱՐԿ.—«ՉԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» . . — 15
24. Վ,ՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ». . . . . — 20
25. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊՆՈՏԻՄ» . . . . . — 50
26. ՄԱՆՈՒԿԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ». . . . . — 50

Դիմել՝ Въ Редакцію журнала „МУРЧЪ". *Վճարել կարելի և նաև պոստի մարկաներով։*

ВЫШЛА И ПРОДАЕТСЯ

ИСТОРІЯ АРМЕНІИ

Моисея Хоренскаго

НОВЫЙ ПЕРЕВОДЪ

Н. О. Эмина

(съ примѣчаніями и приложеніями)

Цѣна 2 р. съ пересылкою 2 р. 25 коп.

МОЖНО ПОЛУЧАТЬ

въ Канцеляріи Лазаревскаго Института восточныхъ языковъ. Москва.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1894 ГОДЪ

НА ГАЗЕТУ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(одинадцатый годъ изданія).

Въ 1894 г. „Новое Обозрѣніе“ будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки: съ пересылкою и доставкою: на годъ—10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р 50 к., *За границу*: на годъ—17 р., на полгода—9 р. на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ перваго числа любого мѣсяца).

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА** на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка и объявленія принимаются: въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Головинскій проспектъ, домъ Читахова, № 12; въ Баку, у К. И. Ярченко, Балаханская ул., д. № 19, рядомъ съ ремесл. училищ.; въ Батумѣ, у М. И. Николадзе, въ газетномъ агентствѣ: въ Кутаисѣ, у бр. Чиладзе; въ Елисаветполѣ, въ аптекарск. складѣ Альтгаузена.

Объявленія изъ внѣ-кавказскихъ городовъ принимаются исключительно въ „центральной конторѣ объявленій“, бывш. Л. Метиль, въ Москвѣ, на Мясницкой улицѣ, въ д. Спиридонова.

Лица, подписавшіяся (безъ разсрочки) на годовое изданіе „Новаго Обозрѣнія“ 1894 г. въ текущемъ году, будутъ безплатно получать газету въ этомъ году со дня подписки.

ՏՊԱԳՐՈՒՄՔ Է ԵՒ ՄԻՆՉԵՒ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 —10

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՓԱՅԾԱԾ

1894 Թ.

ՄԵԾ ԳԻՐՔՈՎ, ԳԵՂԵՑԻԿ ԹՂԹԻ ՎՐԱՅ, ՇՔԵՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ,
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ՇԱՏ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ

Ի միջի այլոց Օրացոյցի մէջ զետեղած կը լինեն. I, *Վիճակագրական մանրամասն տեղեկութիւններ Անդրկովկասեան բոլոր նահանգների մասին (ազգաբնակութիւն, տնտեսութիւն, կրթութիւն և այլն):*—II, *Բարեւ մասին վիճակագրական և պատմական տեղեկութիւններ:*—III, *Գրական բաժին.* 1) *Վեհափառ Խրիմեան Հայրիկի կենսագրութիւնը.* 2) *Մահացուցակ Կրիդոր Արծրունու, Ռափայէլ Պատկանեանի, Փարեզին Եպիսկոպոս Սրուանձտեանի, Խորէն Նարբէյի.* 3) *Մեր երկրի հնութիւններից. Տաթեւի վանքի և Անիի աւերակների պատկերազարդ նկարագրութիւնները.* 4) *Պատմական տեսութիւն. Հայաստանում քրիստոնէութեան առաջին ժամանակները փայլած հոգևոր մեծ գործիչների մասին:*—IV, *Բժշկական և տնտեսական խորհուրդներ:* —V, *Այլ և այլ տեղեկութիւններ:*—VI, *Յայտարարութիւններ:*

Հրատարակութիւն „ԱՐՕՐ“ տպարանի

Օրացոյցի մէջ զետեղելու համար ընդունւում են ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ բոլոր լեզուներով: Գները շատ չափաւոր են:

«ԱՐՕՐ» տպարանը (Բաքու, Կլուբի դիմաց, Ագամեանի տանը, տեառաքսս **№ 253**) *ընդունում է տպարանական ամէն տեսակ պատւէրներ, ապահով է չքիզ հրատարակութիւններ, հրաւէրներ, ալբեռմներ, բլանկներ:*

Նոր ստացել է հալերէն, ռուսերէն, ֆրանսերէն, թուրքերէն տառերի և զարդերի մեծ քանակութիւն:

ԳՆԵՐԸ ԱՆՀԱՄԵՄԱՏ ԷԺԱՆ ԵՆ.

Հասցէ՝ Баку, Типографія „**Аборъ**“.

Լազարեան Ճեմարան Արևելեան Լեզուաց, Մոսկուա.

ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ

Առաջիկայ սակաւաթիւ հեղինակութիւնները և հրատարակութիւնները.

1) *Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկուա 1861 թ.* . . .	պրիվիլեգիական	2 50
2) *Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, 1861 թ.*	պրիվիլեգիական	3 —
3) *Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմ. հայոց 1860.*	պրիվիլեգիական	1 —
4) Всеобщая Исторія Вардана Великаго (XIII в.), переводъ съ армянскаго съ объясненіями и приложеніями, 1861 г. Москва.		4 —
5) Всеобщая Исторія Степаноса Таронскаго Асохика по прозванію (XI в.), пер. съ армянскаго съ объясненіями и приложеніями, 1864 г. .		4 —
6) Синодальное слово Нерсеса Ламбронскаго (XII в.) пер. съ армянскаго, 1864 г.		2 —
7) Шараканъ (*Շարական*) богослужебные каноны и пѣсни Армянской Восточной Церкви. Полный переводъ 1879 г. (*Հատիկ ի մի քանի օրինակ*).		6 —
8) Армянскія надписи въ Карсѣ и Ани и въ окрестностяхъ послѣдняго, текстъ и пер., 1881 г.		1 50
9) Очеркъ Исторіи Арм. Восточной Церкви, 1864 г.		— 65
10) Очеркъ религіи языческихъ армянъ (изслѣдованіе) 1864 г.		1 50
11) Отвѣтъ на замѣчанія г. Патканова, 1874 г. . .		— 65
12) Моисій Хоренскій и древній эпосъ армянскій (изслѣдованіе) 1881 г.		1 —
13) Династическій списокъ Хайкидовъ, изслѣд. 1884 г.		— 65
14) Сказаніе о Романѣ и Давидѣ (Борисѣ и Глѣбѣ) по Арм. Четьи-Минеямъ (пер. съ армянскаго)		— 75

15) Сказаніе о Св. Ѳаддеѣ у Варѳоломеѣ апостолахъ Арменіи (пер. съ армянскаго) . . . . . — 75

Դրքերի գները հաշուած են ճանապարհածախքսով հանդերձ։ Այս գրքերից գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել իրանց պատուէրներով ձեմարանի կառավարութեանը այսպիսի հասցէով՝ Въ Правленіе Лазаревскаго Института восточныхъ языковъ, Москва.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Ա. Արամեանեանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՋԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարդարուած հին եգիպտական, փիւնիկական և ասորական գրութիւններով և Արևելքի հին պետութիւնների քարտէզով)։

281 *երես, յառաջաբան եւ նիւթերի ցանկ*

ոպտած է 800 օրինակ, փոյլոն Լազիի վերայ

Գինն է ճանապարհածախսով միասին **1** *րուբլի*

Պէտք է դիմել կամ հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію **журнала „МУРЧЪ“**, *և կամ՝* Въ центральный книжный магазинъ. *Առեւտուրականներին անուամ է 20% զիջում։*

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՉԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՅԱՔ

այխարհի մէջ կարեմեքենաներուն բոլոր յատկահանդէսներուն

ԱՄԵՆԱՒԵՒԱՐՁԻ ՊԱՐԳԵՒՆԵՐԻՒ

Կարնոր բնակիներ սան ալիլենների և աղնիւ օգնականներ բոլոր արհեստաւորներուն համար

ԳՏՆՒՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում Չինգերի ընկերութեան գլխաւոր պահեստում, Փոռվինոկի պրօսպեկտի վերայ, Ալբիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ։

Բաղում՝ Մեքայելեան փողոցում, Մերզո Ասադեանի տ.
Քութայիսում՝ Բուլվարի գլխ. Չերեկովի տ.
Բաթում՝ Լոռիս Մելիքեան փո-
ղոցում, Կուզոսրի տ.
Ախալցխում՝ Փոստային գրասենեակ № 2, Տ. Ափտոնասեի։
Երևանում՝ իմ Ճամբրդ. գործակատարների մօտ։

Եւ նրանց ճանապարհորդող գործակալներից մօտ

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ՉԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ. ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱՒԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԷՅԳԼԻՆԳԵՐ

Գնողները կարող են, եթէ կամենում են, գումար հետզհետէ վճարել սակաւ բանակութիւամբ, այն է՝ չափաւոր կամ աւելի և կամ ժամանակամիջոց սահմանել գրամական գումարը վճարելու համար։

Յ. Գ. Չինգերի և ընկ. բոլոր պատեհանոցում պահում են մեքենաների պահանջի գործիքները, ինչպէս են ասեղները, թել, մետաքս և այլ մեքենայի պահանջի իրերը ամենաչափաւոր գնով։

„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԻԱԾ Է

Տարեկան գինն է 10 ր.

Բաժանորդագրութեան համար դիմել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ { Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ.—*Կենտրոնական գրավաճառանոց։*
» *պ. Յովհաննէս Թումեանց, Սիոնի փողոց № 27։*
ԲԱԹՈՒՄ.—*պ. Աւետիս Սուվլանեանց, ապտեկ „Надежда“ ընկ.։*
» *պ. Նիկ. Աբրահամեան։*
ԵՐԵՒԱՆ.—*պ. Աւետիս Ազամիրզեանց։*
ԷՋՄԻԱԾԻՆ.—*Արսէն աբեղայ Ղլտճեան։*
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ.—*Սահակեան Վահագեան։*
ԲԱԹՈՒՄ.—*պ. Սարգիս Մակարեանց (գրաս. նկր. Մովսիաններէ)։*
ԹԱՒՐԻԶ.—*պ. Աատուր-բէկ Միքայէլեանց։*
ՌՈՍՏՈՎ և ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.—*Եղբ. Պ. և Դ. Ուհանեանցներ։*
ՄՈՍԿՎԱ.—*պ. Վարդան Թումանեանց* (Чистые Пруды, д. Тупицына·
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—*պ. Գրիգոր. Բաշինջաղեան,* Гостинный дворъ.
ՕԴԵՍԱ.—*պ. Միքայէլ Մուրադեանց (գրասեն. նկր. Մովսիաններէ)։*
ՄԱՐՍԷՅԼ.—*պ. Սիմէօն Միրզայեանց։* Rue St Jacques № 86։
ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ *գտանուում է Թիֆլիս, Վեհաւմինեան փողոց, տուն № 8*